Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1459 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Աշտարակ– 2014թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ	**5**
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՐՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	**7**
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	**8**
2. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	**22**
3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ	**27**
4. ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	**40**
4.1.ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	41
5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ,ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ	**42**
5.1Արդյունաբերության ներկա իրավիճակի վերլուծություն	42
5.2 Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները, առաջնահերթությունները և գերակայությունները	51
5.3. Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը	64
6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	**66**
6.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	66
6.1.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն	66
6.1.2. Կրթության ոլորտի զարգացման և ռազմավարությունը	76
6.1.3. Կրթության ոլորտի տրամաբանական հենքը	83
6.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ	**88**
6.2.1. Մշակույթ	88
6.2.1.1.Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեական ստեղծագործական կենտրոնների գործունեությունը	88
6.2.2. Երիտասարդության հարցեր	95
6.2.3.Սպորտ	97
6.2.4. Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի ֆինանսավորումը	101
6.2.5. Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի տրամաբանական հենքը	101
6.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	**103**
6.3.1. Առողջապահական ոլորտի իրավիճակի վերլուծություն	103
6.3.2. Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	109
6.3.3. Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը	112

6.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**109**
6.4.1. Ոլորտի իրավիճակի վերլուծություն	114
6.4.2. Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ	114
6.4.3. Սոցիալական պաշտպանության համակարգի տարրերը	138
6.4.4. Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը	142
6.4. 5. Սոցիալական պաշտպանության ոլորտի տրամաբանական հենքը	145
7. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ	**145**
7.1. Մարզում արդյունաբերության և էներգետիկայի իրավիճակը և ներկա ցուցանիշները	149
7.2. Էներգետիկա	155
8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	**158**
8.1 Գյուղատնտեսության ոլորտի իրավիչակի վերլուծությունը	158
8.2. Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը	168
8.3. Գյուղատնտեսության ոլորտի տրամաբանական հենքը	173
9.ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**175**
9.1. Ոլորտի իրավիճակի վերլուծություն	175
9.2 Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը	185
9. 3. Բնապահպանության ոլորտի տրամաբանական հենքը	188
10. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ	**193**
10.1. Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը	193
10.2.Զբոսաշրջության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը	199
11.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ	**203**
11.1. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում	205
11.2.Բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ	208
11.3. Բնակֆոնդի և վաչական շենքերի հիմնանորոգուումներ	209
11.4. Բազմաբնակարան շենքերի կառավարում և մարմինների ձևավորում	209
12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՎԱԾՔՆԵՐ	**210**
12.1. Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն	210
12.2. Ճանապարհաշինություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ	210
12.3 Գազամատակարարում.	211
12.4. Ջրամատակարարում	212
12.5. Ենթակառուցվածքների ոլորտի տրամաբանական հենքը	214
13. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ	**215**
13.1. Տարածքային կառավարում	**215**

13.1.1. Վարչատարածքային բաժանում	215
13.1.2. Գերակայություններ և հիմնախնդիրներ	219
13.1.3. Մարզպետարանի կառավարում	221
13.1.4. Քաղաքացիական ծառայություն	222
13.1.5. Էլեկտրոնային կառավարում	223
13.2. **Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում**	225
13.2.1. Վարչատարածքային բաժանում և համայնքային խնդիրներ	225
13.2.2. Համայնքային ծառայություն	228
13.2.3. Տեխնիկական ապահովվածություն	229
13.2.4. Համայնքային զարգացման ծրագրեր	230
13.2.5. Քաղաքացիական հասարակություն	233
13.2.6. Տարածքային կառավարման և ՏԻՄ ոլորտի տրամաբանական հենքը	236
14. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	**244**
14.1. Քարաթափերի կանխարգելում	244
14.2. Բնական աղետներ	244
14.3. Տեխնածին աղետներ	246
14.4. Բնածին և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցում	247
15. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	**252**
15.1 ՄԶԾ մոնիթորինգի և գնահատման ընթեցակարգը	**261**
16. ՀՀ. ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	**267**

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՀ Արագածոտնի մարզն իր սոցիալ-տնտեսական, արտադրական և բնակլիմայական պայմաններով, ձեռք բերած ցուցանիշներով էապես առանձնանում է երկրի մարզերի շարքում:

Արարատյան դաշտավայրին հարող շրջաններում, համեմատած լեռնային և բարձրլեռնային գոտիների հետ, առավել բարձր են աշխատանքի արդյունավետությունը, ունեն զարգացման ուրույն հեռանկարներ ու այդ ամենին համահունչ մոտեցումներ, որոնց դիտարկումներն էլ հանդիսացել են մարզային զարգացման հանձնաժողովի և այս գործընթացին իրենց մասնակցությունն ունեցած բոլոր պետական, հասարակական, փորձագիտական կազմակերպությունների ու անհատների աշխատանքի կազմակերպման հիմնական ուղենիշն ու ելակետը:

Մարզի զարգացման ծրագիրը կնպաստի ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում առկա հիմնախնդիրների լուծմանը և այս ու նմանատիպ այլ ծրագրերի իրականացման շնորհիվ կապահովվի Արագածոտնի մարզի զարգացման շարունակականությունը:

ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018թթ. զարգացման ծրագիրը նպատակ ունի կանոնակարգել այս իրավիճակը: Ծրագրում սահմանված են մարզի զարգացման առաջնահերթություններն ու գերակայությունները, տրված են դրանց լուծման ուղիները, ճշտված են ֆինանսավորման աղբյուրները: Հսկայական աշխատանք է կատարվել փաստերի հավաքագրման, վերլուծության, հասարակակական պահանջմունքների ուսումնասիրման նպատակով: Ծրագրի առանձին ոլորտների քննարկումներն իրականացվել են առավել թափանցիկության մթնոլորտում: Հաշվի են առնվել նաև մարզի զարգացման ուղղությամբ գիտական և հասարակական կազմակերպությունների նկատառումները: Մարզի բոլոր համայնքները մշակել և գործողության մեջ են դրել համայնքների զարգացման քառամյա ծրագրերը, մարզի գործարարները ներկայացրել են իրենց բիզնես պլանները և առաջարկները:

Առաջիկայում մենք հսկայական աշխաատանք ունենք անելու: Մեր նպատակն է ամբողջովին կատարել մեր առջև դրված խնդիրները, հիմքեր ստեղծել մարզի կայուն և արագ առաջընթացի համար: Մարզպետարանը դրա համար ստեղծել է բոլոր անհրաժեշտ պայմանները:

ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018թթ. զարգացման ծրագիրն ամբողջությամբ մաս է կազմում մեր երկրում ընթացող բարեփոխումների տրամաբանությանը, ՀՀ Նախագահի ու կառավարության՝ մարզերում դրական զարգացումներ ապահովելու ծրագրային մոտեցումներին և դիրքորոշումներին, ինչպես նաև ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության և խնդրի հետ կապված այլ կարևորագույն փաստաթղթերի հիմնական դրույթներն ու գերակայությունները:

Ոլորտային աշխատանքային խմբերն իրենց գործունեությունը կազմակերպել և վերլուծություններն իրականացրել են համապատասխան նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ համագործակցության արդյունքում: Մենք պատրաստ ենք այդ առթիվ լսել ցանկացած դիտողություն և առաջարկ, աշխատել բոլորի հետ, ում համար ծրագրի իրականացումը լուրջ նշանակություն ունի: Մարզի զարգացման ծրագիրը մեր հետագա քայլերի և անելիքների ուղեցույցն է, և մենք վճռական ենք դրանք կյանքի կոչելու գործում:

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԽ- Աշխատանքային խումբ
ԱՄԳ -Աղքատության մասնակցային գնահատում
ԱՍՀՆ- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ -Ազգային վիճակագրական ծառայություն
ԱԾԽՄ -Առանց ծնողական խնամքի մնացած
ԳՁՄՀ- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
ԵՄ- Եվրամիություն
ԿՁԾ – Կայուն զարգացման ծրագիր
ՀԿ -Հասարակական կազմակերպություն
ՀՀՈԲԾ- Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր
ՀՊԾ -Համաշխարհային պարենի ծրագիր
ՀՏՁԾ- Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր
ՀՕՖ -Հայ օգնության ֆոնդ
ՄԱԿ -ՁԾ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԱՄՀ- Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԳ -Մոնիտորինգ և գնահատում
ՄՁԱՀ -Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄՁԾ -Մարզի զարգացման ծրագիր
ՄՁՀ -Մարզային զարգացման հանձնաժողով
ՄՁՄԿ- Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄՁՆ -Միջազգային զարգացման նախարարություն
ՄԺԾԾ -Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄՄՈՒՀ -Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱԽ -Ոլորտային աշխատանքային խումբ
ՊՈԱԿ- Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԾՏԳ- Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն
ՍՄՎ -Սոցիալական մոնիտորինգ և վերլուծություն
ՏԱՊ -Տարեկան աշխատանքային պլան
ՏԻ -Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ -Տեղական ինքնակառավարման մարմին
ՈՒԹՀՎ- Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՓՄՁ Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ՁԱԿ -ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ ՁՄԽ -ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ
ՕՈՒՆ- Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՀՃԾ – Հակաճգնաժամային ծրագիր

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Արագածոտնի մարզային զարգացման ծրագրի գաղափարախոսությունը ձևավորվել է ՀՀ կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի, ԿԶԾ-ի, մարզի մարդկային, մասնագիտական, բնական, ավանդույթային և մյուս առանձնահատկությունների, հանրապետության տնտեսական և տարածաշրջանային զարգացման ռազմավարական հեռանկարային նպատակների համատեքստում: Մարզի սոցիալ-տնտեսական իրական վիճակը ճշտելու և հիմնախնդիրները բացահայտելու նպատակով լուրջ ուսումնասիրություններ են կատարվել, հավաքվել և վերլուծվել են վիճակագրական տվյալները, համադրվել են ցուցանիշները, բնակչության, գործարարների և համայնքապետերի շրջանում անց են կացվել հարցումներ:

2. ՀՀ Արագածոտնի ՄԶԾ-ի մշակման գործընթացը սկսվել է 2008թ. հոկտեմբերից՝ համաձայն ՀՀ կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի նիստի որոշման: Այդ որոշման իրականացման համար ՀՀ Արագածոտնի մարզպետարանում կային բոլոր անհրաժեշտ հիմքերը: Ստեղծվել էր վիճակագրական բազմամյա տվյալների, մարզի և համայնքների հիմնախնդիրները բնութագրող ցուցանիշների, ուսումնասիրությունների արդյունքների և գնահատման հարուստ բազա: Նախօրոք ուսումնասիրություններ էին իրականացվել համայնքներում, բացահայտվել էին հիմնախնդիրները, կազմվել էին համայնքների զարգացման եռամյա և քառամյա ծրագրեր և դրանց վրա հիմնված հիմնախնդիրների լուծման ժամանակացույցեր և միջոցառումների ցանկեր: Անցկացվել էին նաև մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն առնչվող հարցումներ և սոցիոլոգիական ուսումնասիրություններ: Մարզում իրականացվել է աղքատության մասնակցային գնահատում՝ աղքատության մասին բնակչության տեսակետները հավաքագրելու նպատակով:

3. ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերի, մարզի զարգացման ՄԺԾԾ-ի և գոյություն ունեցող այլ ծրագրերի հետ դրանք դրվել են ՄԶԾ-ի ռազմավարության, գերակայությունների և առաջնահերթությունների սահմանման և ծրագրի կազմման հիմքում: Ծրագրի կազմման և իրականացման նպատակով անհրաժեշտ հրահանգավորումներ ստանալու նպատակով մարզպետի, նրա տեղակալների և աշխատակազմի ղեկավարի մոտ հրավիրվել են մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների և մասնագետների խորհրդակցություններ, որտեղ բացատրվել են ՄԶԾ-ի կազմման հիմնախնդիրները, տրվել են հանձնարարականներ, նշվել են գործունեության ուղղությունները և ոլորտները:

Մարզային զարգացման ծրագրում ընդգրկված ոլորտներում տիրող վիճակի, ուսումնասիրման, վերլուծության, գնահատման և ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպման նպատակով մշակվել են աշխատանքային պլաններ և գործողությունների ժամանակացույցներ:

4. Ձևավորվել է նաև Մարզային զարգացման հանձնաժողովը՝ Արագածոտնի մարզպետի նախագահությամբ: Դրա կազմում ընդգրկված է մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների և ՀԿ-ների 28 ներկայացուցիչ: Մարզային զարգացման հանձնաժողովի նպատակն է եղել ուսումնասիրել և քննարկել աշխատանքային խմբերի մշակած փաստաթղթերը, լուծել հարցերը, ծրագիրը ներկայացնել մարզային խորհրդին: Հանձնաժողովի, ինչպես նաև մարզի համայնքների, ոչ պետական հատվածի, ՀԿ-ների, մարզում գործող դոնոր կազմակերպությունների և բանկերի ներկայացուցիչների համար մարզպետարանում հրավիրվել է սեմինար-խորհրդակցություն, որտեղ մանրամասն բացատրություններ են տրվել ՄԶԾ-ի, մարզի զարգացման ռազմավարական ուղղությունների, աշխատանքների կազմակերպման ձևերի և մեթոդների, հիմնախնդիրների, դրանց առաջնահերթությունների և գերակայությունների, իրականացվելիք գործընթացի փուլերի, պահանջների և արդյունքների մասին: Ոչ պետական հատվածի կազմակերպություններին առաջարկվել է գործուղել իրենց ներկայացուցիչներին՝ խմբերի աշատանքներում ընդգրկվելու համար: ՄԶԾ-ի մոտեցումները, սկզբունքները, կազմն ու գործունեությունը կարգավորող տեխնիկական առաջադրանքը, ձևավորման աղբյուրները հաստատվել են ՄԽ նիստում:

5. Արագածոտնի մարզպետի կարգադրությամբ մարզում ստեղծվել է 8 ՈԱԽ.

1) Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման,
2) Գյուղատնտեսության և բնապահպանության,
3) Մարզային ենթակառույցների,
4) Քաղաքաշինության,
5) Սոցիալական ապահովության և սոցիալական ծառայությունների,
6) Կրթության, մշակույթի և սպորտի,
7) Առողջապահության,
8) Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման, քաղաքացիական հասարակության:

6. Յուրաքանչյուր աշխատանքային խումբ բաղկացած է 6-12 հոգուց, որոնք ներկայացնում են մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, մասնագիտացված կառույցները, հասարակական կազմակերպությունները, համայնքային միավորումները: ՈԱԽ-ները ղեկավարում են մարզպետարանի

համապատասխան վարչությունների պետերը: Մարզպետարանի տրամադրության տակ եղած բոլոր անհրաժեշտ նյութերը, ինչպես նաև «Մարզային զարգացման ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցը» մարզպետարանը մշակել և տրամադրել է ՈԱԽ-ներին: Խմբերը կազմել են տարեկան աշխատանքային պլաններ, որոնք հաստատել է ՄԶՀ –ն:

7. Ձևավորվել է նաև ՄԳ խումբ՝ բաղկացած 7 հոգուց: Խմբում ընդգրկված քաղծառայողների պաշտոնների անձնագրերում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ: Մշակվել է խմբի գործունեության կանոնակարգը և հաշվետվությունների ցանկը: Խմբի համակարգողը փոխմարզպետն է:

8. ՄԶՀ-ն 2015-2018թթ. ՄԶԾ-ի համար սահմանել է հետևյալ գերակայությունները.

1) Մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն- Գործարար միջավայրը մարզում կայացած է: Գործում են գործարարությանն աջակցող մարզային և տարածաշրջանային կառույցներ, այդ թվում՝ Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության մարզային կենտրոնը: Մասնավոր հատվածը և փոքր ու միջին ձեռնարկատիրությունը մարզում լուրջ դեր են կատարում ինչպես իրենց տնտեսական գործունեությամբ, այլև՝ սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում: Նոր ստեղծվող կազմակերպություններում, համաձայն մարզի հարկային տեսչության տվյալների, ամեն տարի աշխատանքի է տեղավորվում 125-155 մարդ: Մարզում մեծ հնարավորություններ կան ՓՄՁ զարգացման համար: Դրանք կարևոր դեր կարող են խաղալ արդյունաբերական արտադրանքների արտադրության, զբոսաշրջության, գյուղմթերքների արտադրության և վերամշակման, մանրամեծածախ ապրանքաշրջանառության, սպասարկման և այլ ոլորտներում: Արտադրությունների և ծառայությունների մոտեցումը բնակչությանը, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը ՓՄՁ հիմնական խնդիրներից է: Խնդիր է դրվում ավելացնել ծառայությունների քանակը, այն հավասարաչափ՝ ըստ կարիքի, բաշխել մարզի տարածաշրջաններում և բնակավայրերում, դրանք բնակչության համար դարձնել ավելի մատչելի:

2) **Գյուղատնտեսություն և բնապահպանություն-** Գյուղատնտեսությունը մարզի առաջատար ճյուղն է: Այն տալիս է մարզի համախառն տարեկան արդյունքի մոտ 70 տոկոսը, և ոլորտում զբաղված է

մարզի գյուղական բնակչության շուրջ 90 տոկոսը: Բնագավառը լուծում է մարզի համար առավել կարևոր տնտեսական և սոցիալական խնդիրներ: Առաջիկա 4 տարում գյուղատնտեսությունը մնալու է մարզի զարգացման հիմնական գերակայությունը: Կբարելավվեն սերմնաբուծությունն ու տոհմային գործը, կշարունակվի ոռոգման համակարգի կատարելագործումը, կթարմացվի գյուղատնտեսական տեխնիկայի հավաքակայանը, կբարելավվեն մատակարարման և մթերքների իրացման պայմանները: Դրա հետևանքով գյուղացիական տնտեսությունները կամրապնդվեն, կբարձրանա աշխատանքի արդյունավետությունը, կավելանան ֆինանսական միջոց: Գյուղում կշարունակվի նաև արտադրական ենթակառույցների զարգացումը, կավելանա առևտրի, սպասարկման, արտադրությունների և ծառայությունների մատուցող կազմակերպությունների թիվը, կմեծանան ծավալները: Մարզի բնությունը բավականին հարուստ է, և դրա պահպանումն ու վերականգնումը կարևոր խնդիրներ են: Մարզում գործում են հանքարդյունաբերության զգալի թվով կազմակերպություններ, զարգանում է զբոսաշրջությունը, ընդարձակվում է հանգստյան և ժամանցի գոտիների ցանցը: Դրանք առաջացնում են բնապահպանական լուրջ խնդիրներ, որոնց լուծումը նույնպես կարևոր է: Կավելանան բնապահպանությանը հատկացվող միջոցները, կակտիվացվի ոլորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների և բնակչության դերը: Կգործի իրազեկման համակարգ: Միաժամանակ, կշարունակվեն բնապահպանական միջոցառումները՝ անտառների տնկումները, աղբավայրերի գործունեության կանոնակարգումը, կսկսվի աղբի արդյունաբերական վերամշակումը:

3) **Կրթական, մարզական, մշակութային, առողջապահական և սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացում-** Գերակա ուղղություն են մնում կրթության, առողջապահության և սոցիալական ոլորտները: Կլուծվեն բնագավառների վիճակի բարելավման, դրանց որակի և մատչելիության բարձրացման հիմնախնդիրները: Կբարելավվի մարզական կյանքը, կգործեն մարզական և մշակութային կազմակերպություններ և խմբեր: Մարզում առաջիկա 4 տարում կշարունակվի ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, ուսումնակրթական բազայի հարստացման, ուսուցման և ուսման որակի բարձրացման գործընթացը, կկատարելագործվեն դպրոցների ինքնակառավարման կարողությունները, կզարգանան ներառական

կրթության և նախադպրոցական կրթության համակարգերը, կաշխուժանա մարզամշակութային կյանքը և այլն: Կբարելավվեն նաև բուժական հաստատությունների շենքային պայմանները, սպասարկումը կմոտեցվի բնակչությանը և կցուցաբերվի առավել մատչելի և որակյալ բուժօգնություն: Կարևոր խնդիր է համարվում առաջնային բուժօգնության առավել արդյունավետ կազմակերպումը, պայքարը, հատկապես՝ մանկական, վարակիչ և այլ հիվանդությունների դեմ: Կարևոր խնդիր է նաև կրծողների դեմ հետևողական պայքարի կազմակերպումը, քանի որ մարզում առկա են տուլերեմայի և ժանտախտի տեսակետից անապահով բնակավայրեր: Մարզի բնակչությունն առավել տեղեկացված կլինի մարզում իրականացվող սոցիալական ծրագրերի մասին, կբարելավվի սոցիալական ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատանքը, առավել բազմազան կդարձվեն ծրագրերը և կընդգրկվեն առավել շատ մարդիկ՝ նամանավանդ, սոցիալապես խոցելի խավերից:

4) **Քաղաքաշինություն և համայնքային ենթակառուցվածքների կատարելագործում-Ծրագրավորվող տարիներին քաղաքաշինության և համայնքային ենթակառույցների կատարելագործման ուղղությամբ ծրագրվում է շարունակել նախորդ տարիների աշխատանքները:** Կբարեկարգվեն ինչպես հանրապետական, այնպես էլ միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհները, կշարունակվի բնակավայրերի գազաֆիկացումը, կնորոգվեն համայնքների խմելու ջրագծերը, կկառուցվեն նորերը, կիրականացվեն ենթակառույցների հիմնական և ընթացիկ նորոգումներ: Դրանք կբարելավեն բնակչության կենսապայմանները, կկրճատեն անարդյունավետ ծախսերը, կհեշտացնեն և առավել մատչելի ու հասանելի կդարձնեն սպասարկման պայմանները: Բնակարանաշինության ոլորտում կշարունակվեն նախորդ տարիների աշխատանքները: Կնորոգվեն և կամրացվեն բազմաբնակարանոց շենքերը: Կիրականացվի անհատական բնակարանաշինություն:

5) **Տարածքային կառավարման քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացում, տեղական ինքնակառավարման ուժեղացում և քաղաքացիական հասարակության ակտիվության խրախուսում-**ՄԶԾ-ի ինստիտուցիոնալ բաղադրիչն առաջարկում է շարունակել մարզպետարանի աղքատամետ ռազմավարական պլանավորման կարողությունների բարձրացումը, ՄԶԾ-ի ինստիտուցիոնալ համակարգի

կենսունակության ապահովումը, մարզպետարանի աշխատակազմի տեխնիկական և մասնագիտական կարողությունների հզորացումը, տեղեկատվության կառավարման և կառուցվածքային կառավարչական համակարգի բարելավումը, համայնքային ծառայության համակարգի զարգացումը, միջհամայնքային միավորումների ձևավորումը, ՏԻՄ-երի տեխնիկական և մասնագիտական կարողությունների, մարզի բնակչության իրազեկության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև հասարակության մասնակցության ապահովումը հանրային կարևորության ծրագրերի մշակմանը, իրականացմանը և մշտադիտարկմանը:

9.ՄԶԾ-ի կազմման գործընթացն ուղորդվել է հետևյալ սկզբունքներով.

1) ծրագիրը համահունչ է պետական քաղաքականության հետ-ՄԶԾ-ի հիմքում դրվել են ԿԶԾ-ի, ՄԺԾԾ-ի, հանրապետության ԿԶԾ-ի, հակաճգնաժամային ծրագրերի ոլորտային ռազմավարությունները, նախարարությունների և գերատեսչությունների՝ մարզին վերաբերող ծրագրերը: Այդ ենթատեքստում հաշվի են առնվել մարզին բնորոշ զարգացման առաջնահերթությունները:

2) ՄԶԾ-ն ամբողջական է և ընդգրկում մարզի զարգացման բոլոր ոլորտները-Դրանք դիտարկվել են ՀՀ կառավարության ծրագրերի, մասնավորապես՝ ԿԶԾ ենթատեքստում: Ծրագրի կազմումը սկսվել է փաստերի հավաքագրումով, վիճակի իրական գնահատմամբ, գերակայությունների և առաջնահերթությունների որոշակիացմամբ, կազմակերպական ու կառուցվածքային հնարավորությունների բացահայտմամբ և ավարտվել է ֆինանսական աղբյուրների ճշտմամբ ու նախանշմամբ:

3) ապահովվել է մարզի պետական ու ոչ պետական կառույցների և բնակչության առավելագույն մասնակցությունը գործընթացին-Ծրագրի կազմմանը հնարավորինս շատ մասնակցություն է ապահովվել, այդ աշխատանքներում ընդգրկվել են առավելագույն թվով շահառուներ, որոնց վերաբերում է ՄԶԾ-ն: Դա նպաստել է, որ ծրագիրը դառնա ավելի ամբողջական և համապատասխանի հիմնախնդիրների ներկայացման հարցերին՝ ըստ գերակայությունների և առաջնահերթությունների: Առավել ճշգրիտ են կազմվել ծրագրի իրականացման ժամանակացույցը և աշխատանքային գրաֆիկը: Դա ապահովել է նաև ծրագրի վրա անհրաժեշտ վերահսկողության իրականացումը:

ՄԶԾ-ի մշակման հիմքերն են նաև համայնքների զարգացման եռամյա և քառամյան ծրագրերը, ինչպես նաև բնակչության տարբեր խավերի կարիքները:

4) ծրագիրը նպաստում է կառավարման համակարգի ժողովրդավարության խորացմանը և զարգացմանը-Ծրագրին լայն մասնակցության ապահովումը հնարավորություն է տվել, որպեսզի ՄԶԾ-ում հաշվի առնվեն այն բոլոր առաջարկները, որոնք շոշափում են համայնքների, նրա բնակիչների, մասնավոր հատվածի, տեղական ինքանակառավարման և պետական կառավարման ոլորտների շահերն ու հետաքրքրությունները: Ծրագրի կազմման ընթացքի լայն հրապարակայնության ապահովումը հնարավորություն է ընձեռել մարզի բնակիչներին՝ առավել տեղեկացված լինել կատարվող աշխատանքների մասին, գնահատել կատարվող գործի կարևորությունը և զգալ իրենց մասնակցությունն այդ աշխատանքներին: Ծրագիրը մշակվել է Արագածոտնի մարզի իշխանությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, փորձագետների և շահագրգիռ այլ կազմակերպությունների մասնակցությամբ:

5) ծրագիրն ապահովում է մարզպետարանի դերի բարձրացումը- Ծրագրի իրականացման գործում մարզպետարանի դերի բարձրացման նպատակով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված շրջանակներում արվել են առաջարկություններ, կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, քաղծառայողների պաշտոնների անձնագրերում կատարվել են անհրաժեշտ ճշտումներ, որոնք բարձրացնելու են մարզպետարանի դերը մարզի զարգացման ծրագրերի կազմման, իրականացման և վերահսկողության գործում, առավել արդյունավետ և նպատակային են իրականացվելու մոնիթորինգի և վերահսկողության գործառույթները: Մարզպետարանն ստանձնել է բյուջետային ու տեխնիկական կարողությունների և որոշումների ընդունման, մարզում իրականացվելիք ծրագրերի իրականացման և դրանց թափանցիկության ապահովման պարտականությունները:

6) հստակ սահմանազատված են ՄԶԾ–ների մշակման և իրականացման մասնակիցների դերերը և զարգացվել են մասնակիցների կարողությունները- Ծրագրի կարևորությունը թելադրում է գործընթացի մասնակիցների կարողությունների զարգացում, նրանց պատասխանատվության և գիտելիքների անընդհատ բարձրացում, պարտականությունների և լիազորությունների ամբողջական իրականացում: Այդ նապատակով մարզպետարանում հրավիրվել են խորհրդակցություններ, անց կացվել են սեմինարներ և քննարկումներ, ընդունվել են

ներկայացված բոլոր առաջարկները և դրանք քննարկվել են առավել թափանցիկության պայմաններում: Ծրագրի կազմման մասնակիցներին ցույցաբերվել է անհրաժեշտ մեթոդական և գործնական օգնություն, ուղորդվել է նրանց աշխատանքը:

7) ստեղծվել է ՄԶԾ-ների ՄԳ կայուն համակարգ: Աշխատանքի ընթացքում համակարգը հետևողականորեն զարգացել է: Առավել ակնհայտ են դարձել ծրագրի հիմնախնդիրները, հիմնադրույթները, ներ դրվել են աշխատանքի նոր ձևեր ու մեթոդներ-ՄԶԾ-ի կազմման, ուսումնասիրությունների, վերլուծությունների, գնահատման ասպարեզներում առավել կարևոր տեղ է հատկացվել մոնիթորինգի և գնահատման համակարգին: ՄԳ համակարգն ունեցել է երկու ուղղություն.

10. Կառուցվածքային–ՄԳ խմբում ընդգրկվող մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնների անձնագրերում կատարվել են անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ: Դրանցում ամրագրվել է մոնիթորինգի գործառույթը:

11.Գործառութային - այն բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

1) քաղաքականության վերլուծություն,
2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում,
3) մասնակցային ՄԳ,
4) ազդեցության գնահատում:

12. Առաջին երկուսը ներառված են մարզպետարանի ՄԳ խմբի անդամների պարտականություններում: Մասնակիցների կարողությունների վերապատրաստումն ու զարգացումն ապահովվել է մարզպետարանի կարողությունների զարգացման պլանի և տարեկան աշխատանքային պլանի շրջանակներում: ՄԶԾ մոնիթորինգի և գնահատման համակարգը համահունչ է հակաճգնաժամային ծրագրի գնահատման համակարգին և ընդգրկում է այն հիմնական չափորոշիչները, որոնք հնարավորություն կտան մարզային մակարդակում գնահատում իրականացնել: Այն ներառում է նաև ԿԶԾ-ին հատուկ չափորոշիչներ:

8) մարզային զարգացման ծրագրերի և գերակայությունների սահմանման գործընթացին տրվել է առավելագույն հրապարակայնություն, ապահովվել է թափանցիկությունը-Ծրագրի մշակման և իրականացման փուլերում մեծ ուշադրություն է դարձվել մասնակցային մոտեցումների կիրարկմանը՝ ֆոկուս խմբային քննարկումների, աշխատանքային խմբերի, մարզային զարգացման հանձնաժողովի, մարզի ՀԿ-ների ցանցի հետ քննարկումների, մասնակցային մոնիթորինգի, միջոցառումների ազդեցության անկախ գնահատման միջոցով: Մասնավորապես՝ մարզի սոցիալ-տնտեսական վիճակը բացահայտելու,

բնակչությանը մտահոգող և նրանց առաջադրած հարցերը քննարկելու և ՀՏԶԾ-ի գործունեության վերաբերյալ իրազեկության մակարդակը բարձրացնելու նպատակով մարզի գյուղական և քաղաքային համայնքներում ՀՏԶԾ-ն և մարզպետարանը համատեղ կազմակերպել են ֆոկուս խմբային քննարկումներ: Այս նպատակով գործընթացում ներգրավվել են հանրապետությունում և մարզում գործող զանգվածային լրատվության միջոցները, հասարակական կազմակերպությունների հնարավորությունները: Մարզի կայքէջում տեղադրվել են բոլոր անհրաժեշտ նյութերը: Ստեղծվել է ծրագրի կոորդինացման և հրապարակայնության ապահովման հանձնախումբ:

13. Սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ուղղությունները ՄԶԾ-ում ներկայացված են հետևյալ կառուցվածքով՝

1) ներկա իրավիճակի վերլուծություն՝ 2010-2013թթ.-ին ոլորտներում իրականացված աշխատանքների նկարագրություն և վերլուծություն, հիմնախնդիրների և դրանց միջև պատճառահետևանքային կապերի բացահայտում,

2) 2015-2018թթ.-ի ոլորտային նպատակների և զարգացման ռազմավարության մշակում,

3) ռազմավարական ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորում,

4) համապատասխան ոլորտի զարգացման ծրագրերի տրամաբանական հենքի պատրաստում:

14. Վերջինս ոլորտային նպատակները, խնդիրները, միջոցառումների կենսագործումից ակնկալվող արդյունքները շաղկապում է միջանկյալ և վերջնական ցուցանիշներին, ինչպես նաև նկարագրում է նպատակներին հասնելու կարևոր նախապայմաններն ու հնարավոր խոչընդոտները, ռիսկերը: Տրամաբանական հենքը կազմում է ՄԶԾ-ի տարեկան աշխատանքային պլանի բաղկացուցիչ մասը, որը տարին երկու անգամ կենթարկվի մոնիթորինգի:

15. Մոնիթորինգի և գնահատման համակարգը ներառում է հետևյալ գործառույթները.

16. Քաղաքականության վերլուծություն - Այս բաղադրիչը մշակել և իրականացրել է **մարզպետարանի ՄԳ խումբը**: Կատարվել է աշխատանքների և արդյունքների ուսումնասիրում և վերլուծություն: Նյութերը ներկայացվել են ՄԶՀ-ին: Տարին երկու անգամ քննարկվելու է ՏԱՊ-ի տրամաբանական հենքում սահմանված միջոցառումների իրականացման ընթացքը, որը կարտացոլվի կիսամյակային ու տարեկան հաշվետվություններում: Մոնիթորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը պատրաստելու համար տարվա ընթացքում կթարմացվի ՄԶԾ-ի ցուցանիշների ցանկը, որի հիմնական աղբյուրներն են ՏԱՊ-ի տրամաբանական

հենքում ամրագրված ՄԶԾ-ի հատուկ ցուցանիշները, և ԿԶԾ-ի մոնիթորինգի համակարգում ընդգրկված ցուցանիշները:

17. Ոչ պետական բաղադրիչը. Տարվա վերջում մարզի ՀԿ-ները մասնակցային մոնիթորինգ և գնահատում են իրականացնելու: Միջոցառումը հատկապես նշանակալի է այն առումով, որ իրականացվելու է քաղաքացիական հասարակության կողմից վերահսկում՝ մարզպետարանի մոնիթորինգի և գնահատման խմբի հետ սերտ համագործակցությամբ: Մասնակցային ՄԳ-ն հնարավորություն կտա ՏԱՊ-ով սահմանված միջոցառումների իրականացումը գնահատել ուղղակի շահառուի տեսանկյունից, որը հիմք է ծառայել արդյունավետության ու ազդեցության որակական գնահատականների ձևակերպման համար: Այս բաղադրիչով քաղաքացիական հասարակությանը հնարավորություն է տրվում ՄԶԾ-ի վարչարարության նկատմամբ իրականացնել հանրային հսկողություն: Նման մեխանիզմի միջոցով ուժեղանալու է հասարակության համագործակցությունը մարզպետարանի ՄԳ խմբի հետ: Բացի այդ, մասնակցային մոնիտորինգը և գնահատումը թույլ է տալիս քննության առնել ՏԱՊ-ի միջոցառումները մարզի բնակչության տեսանկյունից, ինչպես նաև արձանագրել դրանց արդյունավետության ու իրական ազդեցության որակական գնահատականները:

18. ՄԶԾ-ի ցուցանիշների և թիրախների վերանայում- Նույնպես իրականացնելու է ՄԳ խումբը: Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ՄԶԾ-ում արվելու են անհրաժեշտ փոփոխություններ և ճշտումներ:

19. Մասնակցային մոնիթորինգ և գնահատում- Իրականացնելու են ՀԿ-ներն ու անկախ փորձագետները: Ուսումնասիրվելու և գնահատվելու է մասնակցային գործընթացի կազմակերպումը, ՄԶՀ-ին արվելու են դրանց արդյունավետությունը բարձրացնելու առաջարկներ:

20. Ոլորտային ազդեցության գնահատում - Աշխատանքը նույնպես իրականացնելու են ՀԿ-ները և անկախ փորձագետները: Գործընթացում ընդգրկված են նաև մարզպետարանի ստորաբաժանումների մասնագետներ: Խումբը ղեկավարում է փոխմարզպետը: Խումբը գնահատելու է կատարված աշխատանքների արդյունքները, դրանց ազդեցությունը աղքատության հաղթահարման և մյուս ծրագրերի իրականացման ընթացքի վրա: Յուրաքանչյուր տարվա վերջում իրականացվելու է «Ազդեցության գնահատում» ուսումնասիրությունը, որի հաշվետվությունը դառնալու է մոնիթորինգի և գնահատման տարեկան հաշվետվության մեկ բաժինը: Այս ուսումնասիրությունն ընդգրկում է ՄԶԾ-ով սահմանված որևէ բնագավառ (օր. 2015 թ.-ին՝ գյուղատնտեսության ոլորտը, 2016 թ.-ին՝ դպրոցաշինության ոլորտը): Ուսումնասիրությունն իրականացնելու են անկախ

փորձագետները, որոնք կատարում են համապատասխան ոլորտում ձեռնարկված միջոցառումների որակի մասնագիտական գնահատում:

21. ՄԶԾ-ի ֆինանսական աղբյուրների ճշտում և ֆինանսավորման ապահովում -Ֆինանսավորման աղբյուրները հինգն են (կարիքները գնահատվել են 60 միլիարդ 312.2 միլիոն դրամ). պետական բյուջե, համայնքների բյուջեներ, վարկային միջոցներ, այլ աղբյուրներ և դոնոր կազմակերպություններ:

22. ՄԶԾ-ի առաջնահերթություններն արտացոլված են միջնաժամկետ ծրագրային հայտերում՝ այսինքն՝ ՄԶԾ միջոցները կառավարվում են պետական գործող ընթացակարգերով: Այս ռազմավարական մոտեցումը որոշիչ նշանակություն ունի այն տեսանկյունից, որ ՄԶԾ-ները և դրանց իրականացմանն ուղղված ֆինանսական միջոցները դառնում են միջնաժամկետ ծախսերի ամբողջ գործընթացի անբաժանելի մաս:

23. ՄԶԾ-ում սահմանված ծրագրերի մեծ մասը ներկայումս չունի ֆինանսավորման աղբյուր: Դրանք նախատեսվում է հայթայթել ծրագրի իրականացման ընթացքում: Այդ նպատակով մարզպետարանը Հայաստանում գործող դոնոր կազմակերպություններին ներկայացնելու է ՄԶԾ-ներով սահմանված այն ծրագրերը, որոնք ֆինանսավորման կարիք ունեն:

24. Աշխատանքային խմբերի գործունեության արդյունքում մշակված ոլորտային ռազմավարությունները քննարկել և հավանության է արժանացրել Մարզային զարգացման հանձնաժողովը: Ռազմավարությունները միավորվել են մարզի զարգացման ընդհանուր փաստաթղթում:

25. Մարզային զարգացման հանձնաժողովը, որը գործում է որպես Արագածոտնի մարզային խորհրդին առընթեր խորհրդակցական մարմին, ստեղծվել է ՀՀ Արագածոտնի մարզպետի 2009թ. ապրիլի 10-ի N 32-Ա կարգադրությամբ: ՄԶՀ-ն նպատակ ունի համակարգել ՄԶԾ կազմման գործընթացները, այդ թվում՝ քննարկել ռազմավարությունները, հավանություն տալ դրանց և միավորել մեկ համապարփակ փաստաթղթում: Մարզային զարգացման հանձնաժողովը նույնպես մասնակցային միավոր է: Նրա 25 անդամները ներկայացնում են մարզպետարանը, ՏԻՄ-երը, համայնքների միությունները, հասարակական և մասնավոր հատվածները:

26. ՄԶԾ-ն գնահատվում է հետևյալ չափանիշներով.

1) ՄԶԾ-ն աղքատամետ է,

2) համահունչ է պետական ռազմավարություններին և քաղաքականություններին, ազգային և ԿԶԾ-ի նպատակներին և սկզբունքներին,

3) ընդգրկված է ՄԺԾԾ-ում և տարեկան բյուջետային ընթացակարգերում, համայնքների զարգացման եռամյա և քառամյա ծրագրերում,

4) արտացոլում է մարզի իրական կարիքները, որոնք բացահայտվել են մասնակցային գործընթացների արդյունքում,

5) հիմնված է լուրջ ուսումնասիրությունների վրա,

6) ապահովված է մոնիթորինգի և գնահատման համակարգով,

7) իրատեսական է:

27**.** Այս փաստաթղթում սահմանվել են տարբեր ոլորտներում միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական կարիքները: ՄԶԾ-ի իրականացմանն աջակցելու նպատակով մշակվել են տարեկան աշխատանքային պլաններ, որոնք սահմանում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու են մարզային իշխանությունները և ներկայացնում են այն բազան, որի հիման վրա հնարավոր է վերահսկել իրականացման ընթացքը:

28. Մոնիթորինգի և գնահատման խումբը ձևավորվել է մարզպետարանի կազմում: Այն բաղկացած է 13 ոլորտային մասնագետներից և վերահսկում է ՄԶԾ-ի իրականացումն ու ազդեցությունը, ինչպես նաև ՄԶԾ-ով սահմանված նպատակների շրջանակում ընդհանուր առաջընթացը:

29.Խումբը ղեկավարում է Արագածոտնի փոխմարզպետը: Այս խիստ կարևոր օղակը, որը ձևավորվել է մարզպետի կարգադրությամբ, կգործի նաև հետագայում: ՄԳ համակարգը կազմված է երեք բաղադրիչներից, որոնցից ստացվող տվյալների համադրմամբ հնարավոր է ստանալ ՏԱՊ-երի իրականացման համապարփակ ու վստահելի պատկերը:

30. Հիմնավորված. ՄԶԾ-ում արձանագրվող առաջնահերթություններն ու միջոցառումները հիմնված են իրական տվյալների և դրանց վերլուծությունների վրա, այդ թվում՝

1) Հակաճգնաժամային ծրագրի դրույթներն ու մոտեցումները և դրանցով նախատեսված առաջնահերթություններն ու ռազմավարությունները,

2) 2008-2010 թվականներին անցկացված Աղքատության մասնակցային գնահատում,

3) ՄԶԾ-ի մոնիթորինգի և գնահատման հաշվետվությունները,

4) 2010թ., 2011թ., 2012թ. Տարեկան աշխատանքային պլանները,

5) Վիճակագրական տվյալների բազաները,

6) ԱՎԾ-ի, բանկերի, դոնոր, ՀԿ և միջազգային կազմակերպությունների հաշվետվությունները և ուսումնասիրությունները,

7) ՀՀ կառավարության, նախարարությունների և գերատեսչությունների հաշվետվությունները, ծրագրերը, հայեցակարգերը:

31. Գնահատելի. ՄԶԾ-ում առաջարկվող միջոցառումները չափելի են, ունեն ցուցանիշներ և թիրախներ: Բոլոր բաժիններն ունեն ոլորտային տրամաբանական հենք:

32. Իրականանալի. ՄԶԾ-ում առաջարկված միջոցառումներն իրատեսական են: Ծրագրում արտացոլված են և այն միջոցառումները, որոնց համար արդեն իսկ կան ֆինանսական միջոցներ և այն, որոնց համար ֆինանսավորման աղբյուրները պետք է գտնվեն:

33. Աշխատանքային խմբերն իրենց գործունեությունն սկսել են փաստահավաքմամբ, հիմնարար փաստաթղթերի, հաշվետվությունների և սոցիալ-տնտեսական տվյալների, եզրակացությունների քննարկումով, ինչպես նաև առաջնահերթությունների վերաբերյալ իրենց կարծիքների ձևավորումով:

34.Ոլորտային աշխատանքային խմբերի գործունեության երկրորդ փուլում համաձայնություն է ձեռք բերվել ոլորտի խնդիրների և առաջնահերթությունների վերաբերյալ, քննարկվել են ընթացիկ վիճակն ու հիմնախնդիրները: Ոլորտի խնդիրներն ու ռազմավարություններն ամրագրվել են տրամաբանական հենքի ձևաչափով: Տրամաբանական հենքը կառավարման մի գործիք է, որտեղ հստակորեն ներկայացվում են միջոցառումների, խնդիրների ու նպատակների միջև գոյություն ունեցող և հնարավոր կապերը:

35. ՄԶԾ-ի կազմման համար կիրառվել է տրամաբանական հենքի պարզեցված տարբերակը, ինչը.

1) Նկարագրում է ոլորտի հիմնական խնդիրը, որը պետք է լուծել: Սա «քաղաքական ու ռազմավարական մակարդակի» նպատակ է, որն ամրագրված է ընդհանուր ձևակերպումներով և պարտադիր չէ, որ այն լիարժեքորեն իրականացվի ՄԶԾ-ի գործողության քառամյա ժամկետում:

2) Նկարագրում է առաջնահերթ ծրագրերը, որոնք ուղղված են ոլորտի խնդրի իրականացմանը:

3) Սահմանում է այն ցուցանիշները, որոնց միջոցով կատարվելու է ծրագրի իրականացման և ոլորտային խնդիրների լուծման մոնիթորինգ:

4) Նկարագրում են բոլոր այն հնարավոր ռիսկերը, որոնք կարող են ազդեցություն ունենալ ծրագրերի մշակման ու կատարման կամ ոլորտի ավելի լայն խնդիրների լուծման վրա:

36. Տրամաբանական հենքի նպատակն է առանձին միջոցառումների մակարդակում ավելի մանրամասն պլանավորման հիմքեր ապահովել: Այս աշխատանքները պետք է կատարվեն տարեկան կտրվածքով՝ ՄԶԾ-ի իրականացման

ամբողջ ընթացքում: Ավելի մանրամասն պլանավորման ընթացքում բացահայտվելու են միջոցառումների արդյունքների ու անելիքների մանրամասները, ինչպես նաև գտնվելու են դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

37. Համաձայնեցնելով ոլորտային խնդիրներն ու գերակայությունները՝ ՈԱԽ-ները պատրաստեցին ոլորտային ռազմավարությունների նախագծերը: Սրանց հիմքում համապատասխան ոլորտների տրամաբանական հենքերն են, որոնք կազմված են համաձայն հետևյալ կառուցվածքի.

1) ոլորտի իրավիճակի վերլուծություն,

2) ոլորտի ռազմավարություն,

3) ոլորտի ֆինանսավորում:

38**.** Վերջին բաժնում ներկայացված են ոլորտային ռազմավարությունների իրականացման ֆինանսավորման մանրամասները, ինչպես նաև միջնաժամկետ ծախսերի ծրագրի համաձայն տեղեկատվություններ՝ առկա ֆինանսական աղբյուրների ու միջոցների մասին:

2. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

39. ***Մարզկենտրոնը*** ք. Աշտարակ
Տարածաշրջանները՝ Աշտարակ, Ապարան, Արագած, Թալին
Քաղաքները՝ Աշտարակ, Ապարան, Թալին

Տարածքը	**2 756 քառ. կմ/**
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	**9.3 %**
Քաղաքային համայնքներ	**3**
Գյուղական համայնքներ	**111**
Քաղաքներ	**3**
Գյուղեր	**117**
Բնակչության թվաքանակը 2012թ. տարեվերջին	**133.0 հազ. մարդ**
այդ թվում՝	
քաղաքային	**30.6 հազ. մարդ/**
գյուղական	**102.4 հազ. մարդ/**
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2012թ.	**4.4 %**
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	**23.0 %**
Գյուղատնտեսական նշանակության հողեր	**218 239.8 հա/**
այդ թվում՝ վարելահողեր	**54152.7 հա**

40.ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտոխճուղիները՝ Երևան–Աշտարակ–Թալին–Գյումրի, Երևան–Աշտարակ–Սպիտակ և Երևան–Արմավիր–Քարակերտ–Գյումրի: Մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին (միայն ծայր արևմտյան հատվածով և մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի

թողնում): Մարզում են գտնվում Բյուրականի նշանավոր աստղադիտարանը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտները:

2012թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

• արդյունաբերություն՝	1.7 %,
• գյուղատնտեսություն	10.2 %,
• շինարարություն՝	4.9 %,
• մանրածախ առևտուր՝	0.9 %,
• ծառայություններ՝	0.8 %

41. Մարզի տնտեսության հիմքն արդյունաբերությունը և գուղատնտեսությունն են՝

1)Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և ըմպելիքի, թանկարժեք իրերի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

2) Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն) և անասնաբուծության մեջ:

42.Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

43. Մարզկենտրոն Աշտարակ քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 18.8 հազ. բնակիչ) գտնվում է Քասախ գետի ափին, Երևանից 19 կմ հյուսիս-արևմուտք: Քաղաքը հանդիսանում է Երևան-Գյումրի, Երևան–Սպիտակ ճանապարհների հանգույցը:

44.Աշտարակ-Ապարան ճանապարհին կառուցվել է 33 մ բարձրություն ունեցող խաչ, որը բաղկացած է 1 712 հատ փոքր խաչերից: Փոքր խաչերը խորհրդանշում են հայ ազգի քրիստոնեության ընդունման 1 712 ամյակը:

45. Քաղաքը զարգացել է որպես Երևան քաղաքի արբանյակ քաղաք: Այն մարզի վարչաքաղաքական, տնտեսական, գիտական ու կրթամշակութային կենտրոնն է:

46. Աշտարակ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունն է:

47.Ապարան քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 6.5 հազ. բնակիչ) մարզում մեծությամբ և նշանակությամբ երկրորդ քաղաքն է: Գտնվում է Քասախ գետի ափին

(Երևանից 60 կմ հեռավորությամբ): Ապարան քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի արտադրությունն է:

48. Թալին քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 5.3 հազ. բնակիչ) գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան լանջին (Երևանից 65 կմ հեռավորությամբ): Քաղաքի տնտեսության հիմքը թանկարժեք իրերի արտադրությունն է:



49. Մարզն իր անվանումը ժառանգել է պատմական Այրարատ աշխարհի Արագածոտն գավառի անունից: Արևմուտքում մարզը ձգվում է մինչև Թուրքիայի պետական սահմանը: Արագածոտն մարզի տարածքն ընկած է հյուսիսային լայնության 43^{0} 12’ և 43^{0} 45’, արևելյան երկայնության 43^{0} 35' և 44^{0} 32' միջև: Արագածոտն մարզի տարածքը Արարատյան գոգավորության արևմտյան լեռնալանջն է, որի շնորհիվ սառնամանիքներն ավելի թույլ են, քան Արարատյան դաշտում, իսկ ամռանը լանջերի և հարթավայրերի միջև զարգանում է օդի լեռնահովտային շրջանառություն (քամիներ):

50. Մարզի լանդշաֆտները կրում են ինչպես բարեխառն, այնպես էլ մերձարևադարձային կլիմայական գոտիների ազդեցությունը: Այս պատճառով ամառները մարզի ստորին գոտում (1000-1600 մ) տաք և չորային են, ձմեռները՝

չափավոր ցուրտ: Մարզում հունվարին օդի միջին ջերմաստիճանը փոփոխվում է -5 - 8 – ից մինչև -12 աստիճան, իսկ հուլիսին՝ 25-30 աստիճան:

Արագած լեռը

51. Տարածքի ստորին գոտում նկատվում են ուժգին և միջակ ուժի երաշտներ: Հաճախ են նաև կարկտահարությունները:

52. Տարածքով անցնում է Արզնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը: Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ: Գործում են Ապարանի, Հալավարի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավաձորի, Շենիկի, Աշնակի ջրամբարները: Դրանցից ամենախոշորը Ապարանի ջրամբարն է, որի հայելու մակերեսը 780 հա է, իսկ ծավալը՝ 91 միլիոն խմ: Գոյություն ունեն գրունտային և արտեզյան ջրերի խոշոր պաշարներ:

53. Կլիմայական գոտիներից հանդիպում են չոր ցամաքային, չափավոր տաք-չոր, բարեխառն տաք ամառով, չափավոր ցուրտ, ցուրտ լեռնային գոտիները: Բնական լանդշաֆտային գոտիներից հանդիպում են կիսաանապատային, չոր լեռնատափաստանային, ալպյան և նիվալ գոտիները:

54. Օգտակար հանածոներից մարզում շռայլորեն տարածված են շինանյութերը՝ տուֆ, բազալտ, կրաքար, կավահող, խարամ, պեմզա և պեռլիտ:

55. Արագածոտնի մարզում են գտնվում Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (4090 մ.) և Ծաղկասար (2219 մ.), Իրինդ (2050 մ.), Արտենի (2047 մ.) հանգած հրաբուխները:

Բյուրականի աստղադիտարանը

56. Գետային ցանցը թույլ է զարգացած: Մարզի գլխավոր գետը Քասախն է, որի ընդհանուր երկարությունը 89 կմ-է: Քասախի վտակներն են Գեղարոտը (25 կմ), Ամբերդը (36 կմ), Շաղվերդը (28 կմ) և Քարաղբյուրը (20 կմ): Մարզում կան ժամանակավոր հոսք ունեցող մի քանի գետակներ: Դրանցից ամենամեծը Մաստարայի սելավատարն է (90 կմ.):

57. Մարզում կա 8480 հա անտառաշերտ: Մարզի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակության 3 ավտո-մայրուղիները՝ Երևան Աշտարակ-Թալին–Գյումրի,Երևան–Աշտարակ–Սպիտակ և Երևան–Արմավիր–Քարակերտ–Գյումրի: Մարզի տարածքը հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին (միայն ծայր արևմտյան հատվածով և մարզի տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն չի թողնում):

58. Մարզը հանրապետության գիտական խոշոր կենտրոններից է: Աշտարակի տարածաշրջանում գործում են ՀՀ Գիտությունների ակադեմիայի 6 գիտահետազոտական ինստիտուտ և կոնստրուկտորական բյուրո: Դրանց թվում է նաև Բյուրականի աշխարհահռչակ աստղադիտարանը: Մարզն նաև ունի հանգստյան գոտիների լայն ցանց, որոնք հիմնականում տեղավորված են Բյուրականի անտառային գոտում: Զբոսաշրջության զարգացման համար կան նպաստավոր պայմաններ:

59. Մարզում կան Հայոց պատմության գրեթե բոլոր ժամանակներին բնորոշ մեծ թվով պատմական հուշարձաններ: Լավ պահպանված են կիկլոպյան ամրոցներ, մ.թ.ա. 3-1-ին հազարամյակի բնակատեղի (Գեղարոտ),

Ամբերդ

Ուրարտական ամրոցներ (Հնաբերդ, Ծաղկահովիտ), Արշակունյաց թագավորների դամբարանը Աղձքում (4-րդ դար), Ագարակի, Ավանի, Քասաղի, Փարպիի բազիլիկները (5-րդ դար), Հովհանավանքը (5-8-րդ դար), Օշականում Մ. Մաշտոցի դամբարանի վրա կառուցված եկեղեցին (5-րդ դար), Սաղմոսավանքը, (13-18-րդ դարեր), Տեղերի վանքը (13-15-րդ դարեր) Աստվածընկալ վանքը (13-15 րդ դարեր), Շենիկի (5-7-րդ դարեր), Մաստարայի (6-րդ դար), Գառնահովիտի (6-7-րդ դար), Ներքին Սասնաշենի եկեղեցիները, Քրիստափորի վանքը (7-րդ դար), Աշտարակի կամուրջը (17-րդ դար), Աշտարակի Ականատեսի առուն (ուրարտական ժամանակաշրջան):

3. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ

60. Աղքատության վերացմանը նպատակամղված պայքարն ամրագրված է ՀՀ կառավարության կողմից ընդունված ԿԶԾ-ում, ԿԶԾ-ի միջոցառումների պլանում, ինչպես նաև Կառավարության հաստատած միջին ժամկետ ծախսային ծրագրում:

61. ԿԶԾ-ի քաղաքականությունների փաթեթն ընդհանուր առմամբ ներառում է ամբողջ երկրի մասշտաբով նախանշված գերակա ուղղությունները, որոնք հիմնականում վերաբերում են կայուն տնտեսական աճի ապահովմանը, հանրային կառավարման բարեփոխումներին, ներառյալ կոռուպցիայի դեմ պայքարին, մարդկային զարգացման հիմնախնդիրներին, հանրության մասնակցության ու մոնիթորինգի մեխանիզմների ներդրմանը: Այն ռազմավարական ծրագիր է, որի մարտավարությունը, այսինքն, իրականացվելիք միջոցառումների ուղղվածության որոշումը, պահանջում է ռազմավարական խնդիրների տեղայնացում՝ ըստ երկրի

առանձին տարածքների սոցիալ-տնտեսական զարգացման և աղքատության դրսևորման առանձնահատկությունների:

62. Տարածքի տնտեսական ներուժի սահմանափակություններով- Տվյալները վկայում են, որ ինչպես հարապետությունում, այնպես էլ Արագածոտնի մարզում աղքատ և ծայրահեղ աղքատ բնակիչների ամսական եկամուտներն ավելի արագ տեմպերով են աճում, քան ոչ աղքատ բնակչության շրջանում: Համաձայն ՏՏԿԱՀ տվյալների, աղքատության մակարդակը ավելի բարձր է հատկապես աղետի գոտու, հեռավոր, սահմանամերձ ու գյուղատնտեսության վարման համար առավել անբարենպաստ պայմաններ ունեցող տարածքներում: ՀՀ Արագածոտնի մարզում աղքատության բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է վերջին գործոնով: Թալինի, Ապարանի և Արագածի տարածաշրջանների գյուղատնտեսական հողերի մի մասն է ընդամենը ոռոգվի: Շատ են քարքարուտները և անօգտագործելի, մեքենայական մշակության համար անհարմար փոքր հողակտորները: Հիմնականում լեռնային և բարձրլեռնային տարածքներում ցածր է գյուղատնտեսության արդյունավետությունը:

63. Ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքների թերզարգացած ցանցով - Հիմնականում փոքր համայնքներում չկան բուժսպասարկման կետեր, առևտրի օբյեկտներ, բավարար չեն կրթական և մշակութային պայմանները: Այդ գյուղերի բնակչությունը ստիպված իր կարիքները հոգում է ավելի մեծ բնակավայրերում, հիմնականում՝ նախկին շրջկենտրոններում: Անմխիթար վիճակում են գյուղամիջյան և դաշտամիջյան ճանապարհները, շատ բնակավայրերում հեռուստահաղորդումների և կապի որակը բարձր չէ: Չնայած ավելացել են գյուղացիական տնտեսությունների վարկավորման հնարավորությունները, սակայն բանկային և վարկային ծառայությունը բնակչության մեծամասնության համար անհասանելի է մնում:

64. Բնակչության անբարենպաստ սոցիալ-ժողովրդագրական կազմով- Բավականին էական են աղքատության մակարդակների գենդերային և տարիքային տարբերությունները: Հիմնականում առավել ծանր սոցիալական վիճակում են բազմանդամ ընտանիքները: Հինգ և ավելի հոգանոց ընտանիքներում աղքատության կրճատումը տեղի է ունեցել առավել ցածր տեմպերով, քան 1-4 հոգանոց ընտանիքներում: Համաձայն վիճակագրական տվյալների, 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների աղքատության մակարդակը զիջում է միայն գործազուրկների կենսական մակարդակին: Այս տվյալները վկայում են, որ կատարվող տնտեսական և սոցիալական բարեփոխումները առավել քիչ են անդրադառնում այդպիսի ընտանիքների կենսամակարդակի վրա: Այն փաստը, որ Արագածոտնի բնակչությունը մեծ մասամբ գյուղաբնակ է, արդեն կանխորոշում է մարզում

աղքատության հաղթահարման հիմնախնդրի լուծման հետ կապված առավել բարդ իրավիճակը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մարզում բնակվում են մեծ թվով եզդի ազգաբնակչության ներկայացուցիչներ, որոնք, ավանդաբար, ունեն բազմանդամ ընտանիքներ, այս բնակիչների վիճակն աղքատության տեսակետից առավել վատ է: Դա ապացուցվում է նաև ժողովրդագրական և արտաքին միգրացիայի տվյալներով. արտագնա աշխատանքի մեկնողների թիվը եզդի բնակչության շրջանում առավել մեծ է, քան հայերի: Հատկապես գյուղատնտեսական աշխատանքների շրջանում այդ ընտանիքների ճնշող մեծամասնության տղամարդիկ մեկնում են արտագնա աշխատանքի՝ տնտեսությամբ զբաղվելու հոգսը թողնելով կանանց և երեխաներին: Իսկ նրանց աշխատանքը պակաս արդյունավետ է: Շատ ընտանիքներ ընդհանրապես, ընդմիշտ հեռանում են մարզից և երկրից:

65. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տնային տնտեսությունների կենսամակարդակի իրականացված հետազոտությունների արդյունքները, աղքատության հիմնական ցուցանիշները 2012 թվականին և աղքատության ցուցանիշների դինամիկան 2008-2012 թվականներին ըստ մարզերի և Երևան քաղաքի, ներկայացված են աղյուսակ 3.1-ում: 2012թ.-ին աղքատության մակարդակի տարբերությունն ըստ մարզերի և ք.Երևանի՝ միջին հանրապետական մակարդակի համեմատ տատանվում է: Արագածոտնի մարզի ցուցանիշը բարձր է միջին հանրապետական ցուցանիշից: 2008-2012թթ.-ին աղքատության մակարդակի ցուցանիշներն աճել են բոլոր մարզերում և ք.Երևանում:

Աղյուսակ 3.1.Աղքատության հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի և ք. Երևանի, 2008 և 2012թթ.

(տոկոսներով)

Մարզեր	2008թ.		2012թ.			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	% -ն աղքատների մեջ	% -ն առկա բնակչության մեջ
ք. Երևան	1.1	20.1	2.2	25.6	26.8	33.9
Արագածոտն	**0.5**	**20.3**	**0.9**	**21.2**	**2.2**	**3.4**
Արարատ	1.6	31.3	2.1	34.6	8.8	8.2
Արմավիր	0.7	24.5	3.4	34.3	9.4	8.9
Գեղարքունիք	0.4	32.0	1.4	35.5	7.8	7.1
Լոռի	2.8	34.2	3.4	38.7	11.6	9.7
Կոտայք	2.1	39.5	5.7	42.5	13.1	1.0
Շիրակ	4.6	42.4	5.5	46.0	12.2	8.5
Սյունիք	1.3	20.3	0.7	25.6	3.2	4.1

Վայոց Ձոր	1.9	21.1	0.5	20.7	1.2	1.8
Տավուշ	1.9	23.2	1.9	27.5	3.7	4.4
Հանրապետա-կան միջինը	**1.6**	**27.6**	2.8	32.4	100	100

Աղբյուրը՝ 2008թ. և 2012թ. ՏՏԿԱՀ

66. Աղքատության մակարդակի տարբերությունները հանրապետության տարբեր տարածաշրջաններում պայմանավորված են մի շարք գործոններով.

1) տարածքների տնտեսական ներուժի տարբերությամբ
2) ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման տարբեր մակարդակներով
3) բնակչության խիստ տարբեր ժողովրդագրական վիճակով
4) տարբեր բնակլիմայական պայմաններով:

Գրաֆիկական պատկեր 1. Խոցելի խմբերի հարաբերակցությունը Արագածոտնի մարզում



67. Խոցելի բնակչության տեսակարար կշիռն ավելի մեծ է փոքր համայնքներում (մինչև 500 բնակիչ ունեցող): Փաստորեն, որքան փոքր է համայնքը, այնքան մեծ է այնտեղ խոցելի բնակչության տեսակարար կշիռը և որքան մեծ է փոքր համայնքների տեսակարար կշիռը մարզի համայնքների ընդհանուր թվում, այնքան բարձր է խոցելի բնակչության միջին մակարդակը մարզում: Ըստ Հայաստանի աղքատության առանձնահատկությունների, գյուղական բնակչությունը առավել դանդաղ տեմպերով է հաղթահարում աղքատությունը, քան քաղաքայինը (տես՝ Աղյուսակ 3.2): Միաժամանակ, անհավասարության աստիճանը գյուղական

բնակավայրերում նկատելիորեն բարձր է քաղաքային բնակավայրերի համեմատ, ինչն իր հերթին հանդես է գալիս որպես չափազանց լուրջ աղքատածին գործոն:

Աղյուսակ 3.2. ՀՀ Արագածոտնի մարզի մշտական բնակչությունը (հունվարի 1-ի դրությամբ)

N	Տարածաշրջան	2012թ.	այդ թվում՝		2013թ.	այդ թվում՝		2014թ.	այդ թվում՝ այդ թվում՝	
			քաղաքային	գյուղական		քաղաքային	գյուղական		քաղաքային	գյուղական
1	Աշտարակ	67.7	20.9	46.8	64.1	18.8	45.3	63.4	18.7	44.7
2	Թալին	37.5	5.7	31.8	33.4	5.3	28.1	33.3	5.2	28.1
3	Ապարան	22.7	6.7	16.0	22.2	6.5	15.7	22.0	6.4	15.6
4	Արագած	15.1	-	15.1	13.4	-	13.4	13.4	-	13.4
	Ընդամենը մարզում	**143.0**	**33.3**	**109.7**	**133.1**	**30.6**	**102.5**	**132.1**	**30.3**	**101.8**

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը» 2012, 2013, 2014

68. Բնակլիմայական խիստ պայմաններով - Արագածոտնում աղքատությունն առավել տարածված է հատկապես բարձրլեռնային (ծովի մակարդակից ավելի քան 1700 մ բարձրությամբ) գոտիներում: ՀՀ կառավարության 1998 թ. նոյեմբերի 27-ի N 756 որոշմամբ ՀՀ Արագածոտնի մարզում լեռնային բնակավայրերի շարքին են դասվել 16, իսկ բարձրլեռնայինինների շարքին՝ 23 բնակավայր: Այդ ցուցանիշով Արագածոտնը զիջում է միայն Գեղարքունիքի և Շիրակի մարզերին: Աղքատությունը բարձր է հատկապես սամանափակ հողային հնարավորություններ ունեցող համայնքներում: Այսպես, միայն 1996-1999 թթ. ընթացքում ծովի մակարդակից 1701 մ և ավելի բարձր գոտում բնակվողների շրջանում աղքատությունն աճել է 15 %-ով:

69. Համայնքների աղքատության վրա ազդում է նաև վերջիններիս մեծությունը: Որքան փոքրաթիվ է համայնքի բնակչությունը, այնքան մեծ է աղքատության հակվածությունն ու գրեթե «անտեսանելի» համայնքային զարգացման հեռանկարները: Այն փաստը, որ Արագածոտնի մարզի համայնքների 34.2%-ը (39 համայնք) ունեն մինչև 500 բնակիչ, իսկ 31.6%-ը (36 համայնք)՝ 501-ից 1000 բնակիչ, արդեն իսկ վկայում է մարզի համայնքների կեսից ավելիի համար համայնքային զարգացման ծրագրերի իրագործման հարցում օբյեկտիվորեն առկա խոչընդոտների մասին:

Աղյուսակ 3.3. Արագածոտնի մարզի մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքների թիվն ըստ համայնքների մեծության

	Մինչև 300 բնակիչ ունեցող գյուղական համայնքների թիվը	301-500 բնակիչ ունեցող գյուղական համայնքների թիվը	501-1000 բնակիչ ունեցող գյուղական համայնքների թիվը	Ընդամենը
Արագածոտն	30	9	36	75
ՀՀ	200	75	163	438

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան

70. Աղքատության գնահատումը Արագածոտնի մարզում պարզորոշ վկայում է այդ երևույթի մարզային յուրովի պատկերի մասին: ԿԶԾ-ում ընդունված աղքատության հասկացության սահմանման հիման վրա, Արագածոտնում աղքատությունը գնահատվել է երեք հիմնական ուղղություններով՝ մարզի բնակչության կենսաբանական, սոցիալական և հոգևորմշակութային պահանջմունքների բավարարման իրավիճակի վերլուծության միջոցով:

Աղյուսակ 3.4. Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթվերը ՀՀ մարզերում ու դրանց դասակարգումն ըստ մարդկային աղքատության

Մարզերի դասակարգումն ամենափոքր մարդկային աղքատության համաթվից ամենամեծը		ՄԱՄՀ	Կրթական ծառայությունների անմատչելիություն	Առողջապահական ծառայությունների անմատչելիություն	Խմելու ջրի անվտանգ աղբյուրների ու մշտական կացարանի անհասանելիություն
1	Երևան	0.325	0.096	0.225	0.005
2	Սյունիք	0.361	0.106	0.220	0.036
3	Կոտայք	0.414	0.084	0.263	0.067
4	Վայոց Ձոր	0.438	0.136	0.256	0.047
5	Արմավիր	0.517	0.125	0.212	0.181
6	Շիրակ	0.520	0.092	0.256	0.172
7	Լոռի	0.575	0.176	0.248	0.151
8	Տավուշ	0.624	0.169	0.263	0.195
9	Արարատ	0.626	0.178	0.285	0.163
10	Գեղարքունիք	0.634	0.211	0.242	0.182
11	**Արագածոտն**	**0.753**	**0.215**	**0.283**	**0.256**

Աղբյուրը՝ «Հայաստանի սոցիալական միտումները» թիվ 5

71. Երկրում և մարզում, ընդհանուր տնտեսական աճի պայմաններում դրսևորվում են նաև աղքատության հաղթահարման անցանկալի միտումներ: Նախ՝ եկամուտների բացարձակ աճը դեռևս անբավարար է նորմալ կենսապայմաններ ապահովելու համար: Երկրորդ՝ աղքատության հաղթահարումը Երևանում թե բացարձակ, թե հարաբերական ցուցանիշներով առավել արագ է ընթանում, քան ամբողջ երկրում: Այդ ճեղքվածքն առավել զգալի է հատկապես գյուղական բնակավայրերի համեմատ: Այլ խոսքով՝ խորանում է հարաբերական աղքատությունը քաղաքային և գյուղական բնակչության շրջանում:

72. Խոցելիությունը պայմանավորող գործոնների շարքում առանձնանում է բազմազավակ ընտանիքների, միայնակ ծերերի և ծնողազուրկ երեխաների, փախստականների, նպաստառուների, հատկապես լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի մեծ թիվը: Արագածոտնի մարզում ժամանակին բնակություն են հաստատել շուրջ 4400 փախստականներ և ներքին տեղահանվածներ: Փախստականների թիվը 1996-2008թթ. ընթացքում պարբերաբար նվազել է՝ պայմանավորված նատուրալիզացիայի և արտագաղթի գործոններով:

73. Գյուղական բնակավայրերի շարքում խոցելիության ամենաբարձր համաթիվը բնորոշ է փոքր համայնքներին (մինչև 500 բնակիչ ունեցող և 501 – 1000 բնակիչ ունեցող): Եթե դիտարկենք համայնքներն ըստ ժողովրդագրական բեռի համաթվի, ապա քաղաքային համայնքներից ամենաբարձր համաթիվն առկա է Ապարան (0.58) և Թալին (0.47) քաղաքներում: Ինչ վերաբերում է գյուղական համայնքներին, ապա դարձյալ այստեղ նկատվում է նույն միտումը. փոքր համայնքներում. ժողովրդագրական բեռի համաթիվը համեմատաբար բարձր է, քան մեծ համայնքներում, ինչը վկայում է նաև փոքր համայնքների «ծերացման» միտումի մասին:

74. Ի տարբերություն քաղաքային տնային տնտեսությունների, գյուղական տնային տնտեսությունները մարզում ավելի բազմանդամ են: Մեկ տնային տնտեսությանը բաժին ընկնող անդամների միջին թիվը գյուղերի համար կազմում է 3.15, մինչդեռ քաղաքների համար միջինում՝ 3.00: Համաձայն ԱՎԾ տվյալների՝ ընտանիքի բազմանդամությանը զուգընթաց, ավելանում է աղքատության ռիսկը: Բազմանդամ ընտանիքները, որոնք բաղկացած են մեծ թվով երեխաներից և ավելի քիչ թվով կերակրողներից, ավելի աղքատ են, քան փոքր ընտանիքները:

75. Հատկանշական է, որ այն տնտեսությունները, որոնց գլխավորը կանայք են, ավելի աղքատ են, քան այն տնտեսությունները, որոնց գլխավորը տղամարդիկ են: Սրանք հիմնականում միգրանտների ընտանիքներն են, որոնց ամուսինները չեն կարողանում կամ չեն օգնում ընտանիքներին, իսկ կանայք ներգրավված են ցածր վարձատրվող աշխատանքներում: 2008թ. այդպիսի ընտանիքները կազմել են

աղքատ ընտանիքների 20 %-ը և ընդհանուր բնակչության 15 %-ը: Ընդհանուր առմամբ, Արագածոտնի մարզն աչքի է ընկնում միգրացիայի բարձր մակարդակով. Երևանից, աղետի գոտու մարզերից և Գեղարքունիքից հետո Արագածոտնը հինգերորդն է միգրացիայի բարձր ցուցանիշով: Ընդ որում, միգրացիայի դինամիկայի վերլուծությունը վկայում է, որ եթե եկողների թիվը նվազում է, ապա մեկնողներինը շարունակում է աճել: Համաձայն մարզի համայնքապետերի պաշտոնական տեղեկությունների, մարզից մշտական բնակության նպատակով այլ վայրեր է տեղափոխվել 2095 մարդ: Դրա փոխարեն այլ բնակավայրերից և արտերկրից մարզում մշտական բնակություն է հաստատել 478 մարդ: Տարբերությունը կազմում է 1617 մարդ: Ամեն տարի մարզից արտագնա աշխատանքի է մեկնում 5500-6000 մարդ՝ մոտ 5000 ընտանիքներից: Բացարձակ թվերով ամենաշատը բնակավայրերից մեկնում են մարզի մեծ համայնքներից: Սակայն հարաբերականորեն՝ փոքր, բարձրլեռնային և գյուղատնտեսության վարման համար աննպաստ բնակավայրերից, միգրանտների տոկոսային հարաբերությունն ավելի մեծ է:

76. Արագածոտնի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնց լուծումները ազգային, այսինքն ամբողջ երկրի մակարդակի վրա են և, հետևաբար, պահանջում են համընդհանուր պետական վերաբերմունք, առնչվում են.

1) գյուղի զարգացմանը,

2) փոքր համայնքների զարգացմանը,

3) բարձրլեռնային և սահմանամերձ գոտիների սոցիալ-տնտեսական աջակցությանը,

4) բազմազավակ (երեք և ավելի երեխա ունեցող) ընտանիքների սոցիալական օժանդակության պետական ծրագրերի մշակմանը և իրագործմանը:

77. Տնտեսական զարգացման առանձնահատկություններով պայմանավորված՝ աղքատության գործոնները հիմնականում առնչվում են առանձին ընտանիքների և անհատների կողմից համախառն եկամուտներ ստեղծելու սահմանափակ հնարավորություններին: Արագածոտնի մարզի ներկայիս վարչական տարածքում ընդգրկված նախկին երեք՝ Ապարանի, Թալինի և Արագածի շրջանները դեռ խորհրդային ժամանակաշրջանում համարվում էին տնտեսապես թույլ զարգացած: Դրանց բարձրլեռնայնությունը, բնական ռեսուրսների սակավությունը, բնակավայրերի գերակշռող մասի հեռավորությունը ոչ միայն մայրաքաղաքից, այլև շրջկենտրոններից, ենթակառույցների անկատարությունը, Արագածի լեռնալանջերի հյուսիսային և արևմտյան մասերում գտնվող բնակավայրերի գրեթե մեկուսացվածությունը հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական

իրադարձություններից, կանխորոշել էր այդ համայնքների ցածր տնտեսական ներուժը: Նախկինում ինչպես այդ տարածաշրջաններում, այնպես էլ Աշտարակի շրջանում խոշոր արդյունաբերական կազմակերպություններ չափազանց քիչ են եղել: Բյուրականի աստղադիտարանի գործունեության առանձնահատկություններով պայմանավորված, Արագած լեռանը հարող տարածքներում մթնոլորտն աղտոտող արտադրություններ չեն կառուցվել: Արդյունաբերական կազմակերպությունները հիմնականում աշխատում էին Խորհրդային Միության տարբեր հանրապետություններից ստացվող հումքի հիման վրա կամ տարբեր վայրերում պատրաստված հանգույցներից հավաքում էին երկրի տնտեսական կարիքների համար անհրաժեշտ մեխանիզմներ և սարքավորումներ (Ապարանի ,,Նիգ,,, ,,Արև,, , Ն. Սասնաշենի, Քուչակի հաստոցաշինական, Արագածի ,,Արհեստական ալմաստների,, գործարաններ, Գառնահովիտի և Մաստարայի կոշիկի ֆաբրիկաներ): Գիտական հաստատությունների Հատուկ կոնստրուկտորական և Հատուկ կոնստրուկտորա-տեխնոլոգիական բյուրոներն արտադրանք էին թողարկում Միության ռազմական կարիքների համար:

78. Խորհրդային Հայաստանի տնտեսապես ամենաբարվոք ժամանակաշրջանում՝ 1988թ.-ին, Արագածոտնի մարզի նախկին շրջանների բաժինը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում չէր գերազանցել 2%-ի սահմանագիծը:

79. Շուկայական տնտեսակարգի հաստատմամբ և պետական ունեցվածքի սեփականաշնորհմամբ Արագածոտնի մարզի տնտեսության կառուցվածքն էապես չփոխվեց: Դեռ ավելին, հիմնականում գյուղատնտեսական կողմնորոշվածություն ունեցող մարզը հետզհետե վերածվում է զուտ ագրարայինի (տես Աղյուսակ 3.5):

Աղյուսակ 3.5. Մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում 2008 թ.- %

1	արդյունաբերական արտադրանքի	1. 8
2	գյուղատնտեսության համախառն արտադրանքի	7.6
3	շինարարություն	0.78
3	մանրածախ առևտրի շրջանառության	0. 58
4	ծառայությունների	0.42

80. Արագածոտնի մարզի գյուղական գրեթե բոլոր համայնքների գյուղատնտեսական ուղղվածությունը անասնապահությունն է և բուսաբուծությունը: Որոշ համայնքներ զբաղվում են նաև այգեգործությամբ և գյուղատնտեսական

մթերքների վերամշակմամբ: Ընդ որում, ըստ ՏՀԻ տվյալների, այգեգործությամբ և գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ զբաղվելու ներուժ ունեցող համայնքների թիվն ավելի մեծ է, քան գործունեության այդ տեսակներով զբաղվող համայնքների փաստացի թիվը: Մարզում ներկայումս գործում են 37800 գյուղացիական տնտեսություններ: Այդ ցուցանիշով մարզը երկրում չորրորդն է: Ամեն տարի ավելանում են 100-120 տնտեսություններ: Սակայն, հաշվարկները վկայում են, որ գյուղատնտեսության ընդլայնումը չի զուգակցվում արդյունավետության բարձրացմամբ: Այսպես, ԱՎԾ-ի տվյալները վկայում են, որ մեկ հեկտար գյուղատնտեսական նշանակության հողի տնտեսական արդյունքը Արագածոտնի մարզում 2012 թվականին կազմել է ընդամենը 457.2 հազար դրամ: Կարելի է փաստել, որ գյուղատնտեսության էքստենսիվ զարգացումը, չնայած ապահովում է մարզի բնակչության զբաղվածության մոտ 80%-ը, այնուամենայնիվ չի խթանում մարզի գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճը:

81. Գյուղատնտեսական նշանակության հողերի մի զգալի մասը բնակչությունը չի կարողանում արդյունավետ կերպով օգտագործել: Ընդ որում, փոքր համայնքներն են աչքի ընկնում հողերի չմշակվածության բարձր տոկոսով (տես Աղյուսակ 3.6):

Աղյուսակ 3.6. Մարզի գյուղական համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը ըստ համայնքի մեծության առանձնացված խմբերի (%)*

Ըստ համայնքապետերի համայնքի բարեկեցության գնահատականը	Խմբում նե-րառված համայնք-ների թիվը	Սեփա-կան գ/տ հողա-տարածք չունեցող SS տ/կ	Տնա-մերձ հ/տ չունեցող SS տ/կ	Հող վարձ ա կալող SS տ/կ	Ամենա-մեծ գ/տ հողա-տարածք ունեցող SS տ/կ	Ամենա-փոքր գ/տ հողա-տարածք ունեցող SS տ/կ	Չմշակ-վող հողատ արածք-ների տ/կ
մինչև 500 բնակիչ ունեցող	32	23.9	32	19.6	15.6	21.8	19.7
501-1000 բնակիչ ունեցող	28	20.7	2.7	19.3	6.8	17.4	10.6
1001-1500 բնակիչ ունեցող	10	12.4	1.8	10.3	5.6	21.7	11.4
1501-3500 բնակիչ ունեցող	14	1.2	2.1	18.7	5.5	21.0	15.7
3501-5000 բնակիչ ունեցող	12	2.8	2,9	5.5	13.5	15.4	12.3
5000-ից ավելի բնակիչ ունեցող	18	2.1	3.0	7.3	10.2	29.1	13.7
Ընդամենը գյուղ	86	5.2	2.7	10.7	9.5	21.9	14.5

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան.

82. Մյուս կողմից, փոքր համայնքների բնակիչների 23.9%-ը չունի սեփական գյուղատնտեսական հողատարածք և դա է պատճառը, հավանաբար, որ նրանց գրեթե 20% հողը վարձակալում է: Հողի չմշակման պատճառների մեջ գերակշռում են ոռոգման հնարավորությունների (38.5%), նյութական միջոցների (28%) բացակայությունը, ինչպես նաև հողերի հեռավորությունը (20.9%), վատ որակը և քարքարոտությունը (21.7 %):

83. Մարզում բնակչության սեփականության գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են 50072.1 հեկտար, որից ոռոգովի է 21853.4 հեկտարը: Սակայն փաստացի ոռոգվում է 16182.3 հեկտարը: Փաստացի ոռոգվող հողատեսքերը կազմում են սեփականաշնորհված հողատեսքերի ընդամենը 32.3 %-ը: 39 համայնքում ոռոգման ջուր ընդհանրապես չկա: 23 համայնքում ոռոգվում է ընդամենը 10-40 հեկտար հողատարածք: Դրանք հիմնականում Թալինի և Արագածի տարածաշրջանների բարձրլեռնային բնակավայրերն են, որտեղ գյուղատնտեսության վարման հնարավորությունները սահմանափակ են: Ոռոգման ջրի բացակայությունն այդ բնակավայրերում ոլորտն առավել անարդյունավետ է դարձնում: Փաստորեն, բնակչության սեփական հողերի գրեթե 68-70 %- ը չի կարող կայուն եկամտի աղբյուր լինել: Տարիների ընթացքում կատարված հետազոտությունները վկայում են, որ գյուղատնտեսության ոլորտում հիմնախնդիրները շարունակում են մնալ.

1) բնական աղետները (երաշտ, կարկուտ) և համապատասխան ծառայությունների բացակայությունը,

2) ոռոգման ցանցի և պայմանների անբավարարությունը,

3) սերմացու, քիմիկատներ, պեստիցիդներ և դիզելային վառելիք գնելու անկարողությունը,

4) գյուղատնտեսական մեքենաների պակասը,

5) գյուղատնտեսական վարկերի անմատչելիությունը,

6) ճանապարհների անբարեկարգ վիճակը,

7) իրացման ցածր գները և տեղական շուկաների սահմանափակ ծավալները,

8) վերամշակման արտադրության սահմանափակությունը,

9) անասնաբուժական ծառայությունների անմատչելիությունը,

10) տեխնիկական տեղեկատվության և տեխնոլոգիաների անհասանելիությունը:

Աղյուսակ 3.7. Աղքատության կրճատման նպատակային ցուցանիշները

	2011	2012
Աղքատության ընդհանուր մակարդակը, %	13.6	11.2
այդ թվում՝		
քաղ. Երևան	8.2	6.4
այլ քաղաքներ	18.5	15.1
գյուղական բնակավայրեր	14.2	12.0
Ծայրահեղ աղքատության մակարդակը %	1.9	1.6
այդ թվում՝		
քաղ. Երևան	1.0	0.8
այլ քաղաքներ	2.8	2.3
գյուղական բնակավայրեր	1.9	1.7

84. Աղքատությունը պայմանավորող գործոնների շարքում առանձնանում են հատկապես գործազրկությունը, աշխատանք փնտրող քաղաքացիների մեծ թիվը:

85. Գործազրկություն Չնայած պաշտոնապես գրանցված տվյալներով գործազրկության մակարդակը Արագածոտնի մարզում ամենացածրն է Հայաստանում, այնուամենայնիվ, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ իրական գործազրկությունն ավելի բարձր է: Գործազուրկ չեն համարվում այն անձինք, ովքեր սեփականաշնորհման արդյունքում հող են ստացել: Բայց բնակչության շուրջ 60 տոկոսի համար այդպիսի սեփականատիրությունը չի կարող կայուն և բավարար եկամտի աղբյուր լինել: Հողերից և գյուղատնտեսական կենդանիներից ստացվող հասույթը չափազանց ցածր է և չի կարող ապահովել ընտանիքների նորմալ կենսագործունեությունը: Սեփականատերերի շուրջ 20-22 տոկոսն ընդհանրապես չի օգտագործում հողերը: Նրանք իրենց ընտանիքների համար գումարը վաստակում են վարձու աշխատանքի միջոցով կամ մեկնում են արտագնա աշխատանքի: Այս փաստը վկայում է, որ Արագածոտնի մարզում, հատկապես՝ լեռնային և բարձրլեռնային բնակավայրերում, իրական գործազրկության մակարդակը համեմատելի է Գեղարքունիքի և Շիրակի մարզերի նույն ցուցանիշների հետ:

86. Աշխատանք փնտրող քաղաքացիներ - Լուրջ է նաև աշխատանք փնտրող քաղաքացիների հիմնահարցը: ՀՀ Արագածոտնի մարզային զբաղվածության ծառայության տվյալներով, 2008 թ. դեկտեմբերի 31-ի վիճակով մարզում հաշվառված է աշխատանք փնտրող 2428 քաղաքացի, որոնցից 1399-ը կամ 57.6 % - ը կանայք են: Նախորդ տարվա համեմատությամբ նրանց թիվն ավելացել է 40 մարդով: 2011թ. ընթացքում հաշվառումից դուրս է եկել 185 մարդ: Ընդ որում, նրանցից աշխատանքի

է տեղավորվել ընդամենը 70-ը: 63 մարդ հաշվառումից հանվել է՝ 6 ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ կենտրոն չհաճախելու պատճառով: Հատկանշական է, որ աշխատանքի են տեղավորվում հիմնականում երիտասարդ տարիքի մարդիկ: Եթե նվազել է 16-45 տարիքային խմբի գործազուրկների թիվը (0,1-1.4 տոկոս), ապա 46-54 և 55 տարեկանից բարձր տարիքային խմբերում գործազրկությունն ավելացել է համապատասխանաբար 2.5 և 5.4 տոկոսով:

87. Արագածոտնի մարզի աղքատության հաղթահարման այն գերակա խնդիրները, որոնք պետք է լուծվեն մարզի տնտեսական զարգացման համալիր ծրագրի շրջանակում և, հետևաբար, պահանջում են տարածքային առանձնահատուկ վերաբերմունք, առնչվում են.

1) մարզի տնտեսության ճյուղային կառուցվածքի վերափոխմանը,

2) ոչ գյուղատնտեսական ոլորտում փոքր և միջին բիզնեսի խթանմանը,

3) գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը,

4) գյուղատնտեսության տեխնիկական վերազինմանը և ինտենսիվ զարգացմանը:

88. Արագածոտնի մարզի համայնքներում վերջին երեք տարում որոշ ծրագրեր են իրականացվել ճանապարհաշինության, սոցիալական ենթակառուցվածքների, գազաֆիկացման և բնակարանաշինության բնագավառներում: Մարզային զարգացման ծրագրի շրջանակում ևս մարզում նորոգվել և բարեկարգվել են համայնքային ճանապարհներ, դպրոցներ, պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ, խմելու ջրի և ոռոգման համակարգեր:

89. Արագածոտնի մարզի աղքատության գնահատման վերլուծությունից բխող եզրահանգումների հիման վրա նախանշվում են մարզի տնտեսության հետևյալ գերակա ոլորտները, որոնց առաջանցիկ զարգացումը էապես կնպաստի աղքատության հաղթահարմանը .

1) մասնավոր ոլորտի և ՓՄՁ զարգացում,

2) գյուղատնտեսության զարգացում,

3) սոցիալական ոլորտի ծառայությունների մատչելիության և որակի բարձրացում,

4) մարզային ենթակառուցվածքների բարելավում,

5) մարզային զարգացման պլանավորման և իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքի ամրապնդում և հետագա զարգացում,

6) բնապահպանական խնդիրների արդյունավետ լուծում:

4. ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

90. Հասարակական նոր հարաբերությունների հաստատման պայմաններում ինչպես երկրում, այնպես էլ ՀՀ Արագածոտնի մարզում տնտեսական համակարգը, փաստորեն, կազմալուծվեց: Տեղի ունեցան հասարակական և տնտեսական, անցանկալի ներքին խոր փոփոխություններ: Նախկին արտադրական և սոցիալական կապերի փլուզման հետևանքով շատ արտադրություններ դադարեցին գործելուց: Որպես հետևանք, տեղի ունեցավ բնակչության զանգվածային աղքատացում, սկսվեց արտագաղթը մարզից: Նոր արտադրահարաբերությունների պայմաններում նվազագույնի հասցվեց ինչպես պետության, այնպես էլ պետական մարզային կառույցների միջամտությունը առաջին հերթին՝ արտադրական ոլորտներում իրականացվող գործընթացներին: Դրա հետևանքով մարզի տնտեսությունն սկսեց զարգանալ տարերայնորեն՝ ենթակա ոչ թե մեկ ընդհանուր նպատակի, այլ անհատների և կազմակերպությունների անձնական և խմբակային շահերին: Դա հասցրեց այն բանին, որ հասարակական ամբողջական արդյունքում, եկամուտների ավելացման պայմաններում, դրանք սկսեցին խիստ անհավասարաչափ բաշխվել: Հասարակությունը ենթարկվեց անվերահսկելի բևեռացման: Դա հանգեցրեց ոչ միայն հասարակական տարբեր շերտերի՝ միմյանցից օտարացման, այլև օտարացման հենց պետությունից, անվստահություն պետության և պետական ձեռնարկումների հանդեպ: Սկսվեց երկրի և հասարակական շահի գիտակցության աստիճանական տեղատվությունը: Որպես հետևանք, ամբողջությամբ չկայացան քաղաքացիական հասարակությունը և քաղաքացիական համաձայնությունը: Երկիրը, նրա կազմում և մարզը, չկարողացան հասնել ժողովրդավարության նախանշված բնագծերին՝ դրա բոլոր բացասական հետևանքներով հանդերձ: Այնուհանդերձ, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, 1990-ական թվականների կեսերից սկսվեց որոշ առաջընթաց գրանցվել ինչպես երկրում, այնպես էլ մարզի տնտեսությունում:

91. Մարզում տնտեսական աճը սկսվել է 1995 թ-ից և շարունակվում է մինչև այժմ: Սակայն այդ աճին դեռևս բնորոշ են տնտեսական ճգնաժամ ապրող երկրներին բնորոշ որակներ: Անկանխատեսելի վերելքներին հետևում են նույնքան անկանխատեսելի անկումները, գրեթե յուրաքանչյուր տարի հաստատվում է որոշակի գերակայություն, որը հաջորդ իսկ տարում կտրուկ փոխվում է: Դա իր հետ բերում է սոցիալական և տնտեսական զգալի ցնցումներ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում արտադրական և հասարակական կյանքի վրա: Որոշ արտադրություններ ընդհանրապես փակվում են, շատերը կրճատում են ծավալները: Որպես հետևանք, տեղի է ունենում արտադրական անձնակազմի աշխատանքից զանգվածային ազատում, արտադրական պրոֆիլի փոփոխման պայմաններում մարդիկ

հնարավորություն չեն ունենում արագ վերաորակավորվել և դառնում են ցածր որոկավորման աշխատուժ, որն առավել մեծ չափերով է ենթակա գործազուրկ դառնալու վտանգին: Այդ պայմաններում հասարակության մեջ աղքատության նվազումը նույնպես անվերահսկելի է: Չնայած ուսումնասիրվող տարիներին մարզում կրճատվել է աղքատ և շատ աղքատ ընտանիքների թիվը, սական առավել մեծ չափերի է հասել հարաբերական աղքատացումը, հասարակության բևեռացումը: Դա հետևանք է հասարակական ամբողջական արդյունքի և եկամուտների խիստ անհավասարաչափ բաշխման:

4.1. ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

92. Հայեցակարգի հիմքում այն գաղափարն է, որ օգտագործելով մարզի առավելությունները, ուժեղ կողմերը և հնարավորությունները, ֆինանսական, տեխնիկական և տեխնոլոգիական ներդրումների միջոցով հնարավոր կարճ ժամանակում ստեղծել արագ զարգացող և հզոր տնտեսություն, ապահովել երկրի կազմում մարզի լիարժեք ինտեգրացումը:

93. Ծրագրի մշակման ընթացքում հաշվի են առնվել այն բոլոր գործոններ, որոնք կարող են որոշակի ազդեցություն թողնել մարզի տնտեսության զարգացման հեռանկարների ձևավորման, առաջնահերթությունների և գերակայությունների ճշտման վրա: Հայեցակարգի հիմնական սկզբունքն այն է, որ մարզում պետք է ընտրվեն նոր գերակայություններ: Դա թելադրված է մի շարք իրողություններով:

94. Այսօր մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, որը տալիս է մարզում արտադրվող համախառն ներքին արդյունքի գրեթե 70 %- ը: Սակայն այդ ոլորտը հիմնականում լուծում է ինքնապահովման խնդիր: Ճյուղից ստացվող ֆինանսական միջոցները ուղղվում են արտադրողի ներքին կարիքների բավարարմանը և արտադրության հետագա կազմակերպմանը: Ընդ որում, հնարավորություններ չկան ընդլայնված վերարտադրության կազմակերպման համար: Գյուղատնտեսության ոլորտը հիմնականում ներկայացնում են փոքր տնտեսություններ, որոնց համար արտադրության արդյունավետ զարգացման հնարավորությունները չափազանց սահմանափակ են: Դրանք ներկայումս չեն կարող խոշոր ծավալի դրամական, նամանավանդ, արտարժութային մուտքեր ապահովել, միջոցներ ստեղծել ոչ միայն ոլորտի, այլև տնտեսության մյուս ճյուղերի արագ և դինամիկ զարգացման համար:

95. Չնայած վերջին տարիներին ճյուղի եկամտաբերությունը համեմատաբար բարձրանում է, այնուամենայնիվ, այն մնում է բավականին ցածր մակարդակի վրա: Ներկայումս վարվող տնտեսական քաղաքականության պայմաններում ճյուղը անկարող է ռազմավարական խնդիրներ լուծել: Մարզի սահմանափակ հողային հնարավորությունների պայմաններում բնագավառի ռազմավարական խնդիրը ոլորտի լիարժեք ինքնապահովումն է և մթերքների արտադրության ավելացումն այն հաշվով, որպեսզի հնարավորինս սեփական արտադրությամբ ապահովվի մարզի, ինչպես նաև՝ նաև երկրի բնակչության ներքին պահանջները: Մարզի տնտեսության մյուս ճյուղերը ևս՝ զբոսաշրջությունը, կապը, տրանսպորտը, շինարարությունը, ծառայությունները կարող են լուծել միայն բնագավառային խնդիրներ: Սակայն դրանք չեն կարող գերակա ուղղություն դառնալ մարզի զարգացման ռազմավարության մեջ՝ առկա բազմաթիվ հիմնախնդիրների պատճառով: Զարգացման նման միտումների շարունակության դեպքում մարզը մնալու է որպես ցածր արդյունավետությամբ գյուղատնտեսական շրջան և հնարավորություն չի ունենա լուրջ տնտեսական առաջընթաց ապահովել:

96. Բազմաթիվ գործոնների վերլուծությունները, քննարկումները, հետազոտությունները, տեղական և համաշխարհային շուկայի պահանջմունքների ուսումնասիրությունը, հեռանկարները և թիրախների համադրումները ծրագրի հեղինակներին բերել են այն համոզման, որ մարզը հեռանկարում ունի բոլոր հնարավորությունները՝ գյուղատնտեսության հետ միասին որդեգրել նոր գերակայություն. **դառնալ գիտաարտադրական համալիրի համապետական կաևոր կառույց:** Զարգացման առաջարկվող հայեցակարգը կազմավորվել է բնագավառում տարիների ընթացքում կազմավորված ավանդույթների, փաստացի վիճակի, ճյուղից մարզին մնացած ժառանգության, զարգացման հեռանկարների վերլուծության արդյունքների հիման վրա:

5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

5.1. Արդյունաբերության ներկա իրավիճակի վերլուծություն

97. 1997թ. ստեղծված ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության ՓՄՁ հիմնախնդիրներով զբաղվող ենթաոլորտի, ինչպես նաև մի շարք հասարակական, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների իրականացրած ուսումնասիրություններն ու փորձագիտական հետազոտությունները հնարավորություն տվեցին ամբողջական պատկերացում կազմել Հայաստանի ՓՄՁ

ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրների մասին: Նկատի ունենալով վերոհիշյալ ուսումնասիրությունների արդյունքները, կարելի է առանձնացնել Հայաստանում ձեռնարկատիրության, և հատկապես փոքր բիզնեսի գլխավոր խնդիրները և զարգացման նախադրյալները.

98. Արդյունաբերությունը հանդիսանում է Արագածոտնի մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Անկախության տարիների ընթացքում մարզի արդյունաբերությունը ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների: Ներկայումս Արագածոտնի մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության ու ոչ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ: Մարզում 2013 թվականին, ընթացիկ գներով, մարզում թողարկվել է **25,112.7** մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, 2012 թվականի նույն ժամանակահատվածում՝ **19,555.5** մլն. դրամ, աճը կազմել է **5,557.2** մլն.դրամ: 2013 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին պատրաստի արտադրանքի իրացումը (ընթացիկ գներով) կազմել **21217.6**մլն. դրամ, 2012 թվականի նույն ժամանակահատվածում՝ **19,120.5** մլն. դրամ, աճը կազմել է **2,097.1** մլն.դրամ: Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է **117.1**%, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելի է **33.3**%-ով Ընդհանուր առմամբ վերջին երեք տարիների ընթացքում մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի **1.7-1.8**%-ը:(աղյուսակ 5.1):

Աղյուսակ 5.1. Արդյունաբերական արտադրանքի ծավալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2012-2013թ.)

Մարզեր	**Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով** (մլն. դրամ)			**Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով** (մլն. դրամ)			**Արդյունաբերական արտադրանքի ինդեքսը, %**		
	2012թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբեր	տարբերություն	2012թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբեր	տարբերություն	2012թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբեր	տարբերություն
Ընդամենը ՀՀ	1,120,475.8	1,240,578.7	120,103	1,116,886.5	1214412.7	97,526.2	108.8	106.8	-2.0
այդ թվում՝									
ք. Երևան	450,039.	506,816.1	56,776.	451,290.2	493589.5	42,299.	105.6	106.1	0.5

	5		6			3			
Արագածոտն	**19,555.5**	**25,112.7**	**5,557.2**	**19,120.5**	**21217.6**	**2,097.1**	**83.8**	**117.1**	**33.3**
Արարատ	104,463.5	123,593.8	19,130.3	118,457.8	137513.0	19,055.2	116.8	114.3	-2.5
Արմավիր	44,043.4	50,225.6	6,182.2	45,443.8	50,891.2	5,447.4	98.8	104.8	6.0
Գեղարքունիք	21,657.7	23,665.5	2,007.8	13,167.8	14737.8	1,570.0	118.1	105.6	-12.5
Լոռի	80,043.7	75,260.1	-4,783.6	77,551.7	74580.5	-2,971.2	113.7	102.9	-10.8
Կոտայք	144,864.5	166,063.7	21,199.2	144,882.7	164966.6	20,083.9	124.9	104.7	-20.2
Շիրակ	40,671.6	42,628.5	1,956.9	37,140.7	41633.8	4,493.1	88.2	96.6	8.4
Սյունիք	198,577.8	204,911.3	6,333.5	193,037.9	192825.4	-212.5	110.5	108.1	-2.4
Վայոց Ձոր	9,151.1	12,002.8	2,851.7	9,319.1	12400.9	3,081.8	113.5	122.7	9.2
Տավուշ	7,407.5	10,298.0	2,890.5	7,474.3	10056.4	2,582.1	106.6	122.1	15.5
Մարզի տեսակարար կշիռը հանրա-պետությունում արտադ. Արտադ. նկատմամբ, %	**1.74**	**2.0**	**4.6**	**1.71**	**1.74**	**2.1**	**77.0**	**109.6**	**-1.6**

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012, 2013թթ. հունվար-դեկտեմբերին

99. Արագածոտնի մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ հանրապետության մարզերի և ք.Երևանի (2013թ. հունվար-դեկտեմբեր) հետևյալն է.

Գրաֆիկական պատկեր 2.



100. Հայաստանում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի նշված հիմնախնդիրների հաղթահարմանը և նպաստի ձեռնարկատիրության զարգացման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: ՓՄՁ հիմնախնդիրների լուծումը զգալի քայլ կլինի երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացի գործում: Արտադրության ոլորտը և, մասնավորապես, արդյունաբերությունը՝ որպես երկրի տնտեսության զարգացման հիմնական ուղղություններից մեկը, պետք է արտացոլվի ՓՄՁ քաղաքականության մեջ և իրականացվի առանձին ծրագրերի և միջոցառումների ճանապահով:

101. ՓՄՁ քաղաքականության իրականացման հիմնական ուղղություններից մեկը հանդիսացող արտադրական ոլորտի ընդլայնումն ու զարգացումը կնպաստի ՓՄՁ քաղաքականության հիմնական նպատակների իրագործմանը, այն է՝ արտադրության ծավալների աճ, առևտրային հաշվեկշռի պակասորդի կրճատում, տեղական հումքի արդյունավետ օգտագործում, արտահանման ծավալների մեծացում, պարապուրդի մատնված արտադրական հզորությունների վերագործարկում, արտադրական հզորությունների և արտադրվող ապրանքների դիվերսիֆիկացիա և այլն:

102. Արդյունաբերական քաղաքականության տարբեր ուղղություններով արված առաջարկությունները հնարավորություն են տալիս բացահայտելու խոշոր և փոքր ու միջին ձեռնարկությունների միջև համագործակցության հետագա զարգացման, դրանց փոխադարձ կապերի ընդլայնման հնարավորությունները և

տնտեսական զարգացման գերակայությունները: Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ ՓՄՁ զարգացման մակարդակով մարզը երկրում հետ է մնում: Մարզում գործում են հիմնականում առևտրի փոքր և գերփոքր օբյեկտներ: Սպասարկման ծառայությունները համեմատաբար քիչ են: Առավել քիչ են արտադրական կազմակերպությունները: Դրանք հիմնականում գյուղմթերքներ վերամշակող փոքր կազմակերպություններ են և տեղական հումքի բազայի վրա շինանյութեր արտադրող կազմակերպություններ: Զարգացած չէ տուրիստական բիզնեսը: Միաժամանակ, ՓՄՁ-ների գործունեության բարելավմանն ուղղված միջոցառումները դեռևս բավարար չեն՝ էականորեն նպաստելու համար մարզի մասնավոր հատվածի կայուն և մրցունակ զարգացմանը:

103. Արդյունաբերական քաղաքականության տարբեր ուղղություններով արված առաջարկությունները հնարավորություն են տալիս բացահայտելու խոշոր, փոքր ու միջին ձեռնարկությունների միջև համագործակցության հետագա զարգացման, նրանց փոխադարձ կապերի ընդլայնման հնարավորությունները և տնտեսական զարգացման գերակայությունները: Արտադրական ոլորտի արդյունավետ գործող ՓՄՁ-ների թվի և գործառույթների շրջանակի ընդլայնման համար անհրաժեշտ է պետական աջակցություն՝ այդ քաղաքականության իրականացման բոլոր հնարավոր մեխանիզմներով: Մասնավորապես, պետական գերակա ուղղություններում արտադրական ՓՄՁ-ներին տրվող վարկերի երաշխավորումը այդ մեխանիզմներից է: Մարզում հիմնադրվող վերամշակող արտադրությունների համար անհրաժեշտ է ստեղծել առավել բարենպաստ ռեժիմ, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ օգտագործել տեղական հանքահումքային ռեսուրսները: Արտադրական ՓՄՁ-երի ընդլայնումը մարզում կլուծի ևս մի կարևոր հիմնահարց, այն է՝ գյուղմթերքների վերամշակման արտադրության զարգացում և երկրի պարենային ապահովության հիմնախնդրի մեղմացում: Արդեն այսօր նկատելի են սննդի վերամշակման փոքր և միջին արտադրությունների զարգացման հեռանկարները և դրա ազդեցությունը գյուղատնտեսությունում առկա հիմնախնդիրների լուծման և մեղմացման գործընթացին (գյուղատնտեսական մթերքների գնումների ապահովում, դրանց արդյունավետ վերարտադրություն, ճյուղի ամրապնդում և այլն): Արտադրական ոլորտի զարգացման համար կարևորվում է նաև պարապուրդի մատնված և (կամ) անարդյունավետ աշխատող խոշոր կազմակերպությունների վերակազմավորումը (ռեստրուկտուրիզացիան):

104. ՀՀ Արագածոտնի մարզպետարանում Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1) **մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ, որի կազմում են մարզպետարանի պատասխանատու աշխատակիցներ, համայնքապետեր, գործարարներ: Յուրաքանչյուր տասնօրյակ խորհուրդը նիստեր է գումարում և ամփոփում կատարած աշխատանքները, տալիս հանձնարարականներ և որոշակիացնում հետագա անելիքները,**
2) **մարզպետարանում հրավիրվել է խոշոր համայնքների համայնքապետերի, դրանցում գործող ՓՄՁ-ների ղեկավարների հանդիպում և քննարկվել են ՓՄՁ զարգացման հեռանկարները, նրանց դերը համայնքների զարգացման գործում,**
3) **ստեղծվել է ՓՄՁ զարգացման ոլորտային աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկված է 18 մարդ,**
4) **ստեղծվել է ՓՄՁ տվյալների բազա, որն անընդհատ թարմացվում է,**
5) **ՓՄՁ ԶԱԿ մարզային կենտրոնի հետ ամփոփվել են ՓՄՁ զարգացման նպատակով մարզում անցած տարիներին իրականացված աշխատանքները, թարմացվել են տվյալները:**

105. Յուրաքանչյուր ամիս մարզպետարանի պատասխանատու աշխատակիցները հանդիպում են ՓՄՁ այն սուբյեկտների և հասարարական կազմակերպությունների հետ, որոնց գործունեությունը մեծ նշանակություն ունի մարզի տնտեսության զարգացման համար: Նրանց ներկայացվել են ՓՄՁ զարգացման՝ ՀՀ կառավարության ծրագրերը: ՓՄՁ ներկայացուցիչներից ստացվում են համագործակցության առաջարկություններ, որոնք ամփոփվում են մարզպետարանի աշխատակազմի ՖՍՏՋ վարչությունում: Մեթոդական օգնություն և աջակցություն է տրվում ՓՄՁ սուբյեկտներին՝ բիզնես պլանների կազմման գործում: Նրանց տրամադրվում են նաև երկրում գործող բիզնես կենտրոնների հետ կապ ստեղծելու հնարավորություններ:

106. Վարկավորման համար մարզի 1 կազմակերպության ներկայացրած հայտը բավարարվել է: ,,Թամարա Ֆրուտ,, կազմակերպությանը տրվել է 280 միլիոն դրամի վարկային երաշխիք: Մարզպետարանի ՖՍՏՋ վարչությունում ներկայումս քննարկման ընթացքում են 10 բիզնես ծրագրեր: Աշխատանքների ավարտից հետո դրանք կներկայացվեն համապատասխան կառույցներին: Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերում նախատեսվում են նաև ՓՄՁ զարգացման և աջակցության աշխատանքներ:

107. ՓՄՁ զարգացման ուղղությամբ խնդիրների, անելիքների և մարզպետարանի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ հաղորդագրություն է տպագրվել մարզում գործող թերթերում: Նյութերը տեղադրվում

են մարզպետարանի կայքէջում: Մարզպետարանի պատասխանատու աշխատակիցները եղել են ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում կազմակերպված հանդիպումներին, հանդես են եկել առաջարկներով:

108. Երկրի տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունները սոցիալական ու տնտեսական զարգացման մակարդակների շեղումներն են, որոնք որպես արդյունք խոչընդոտում են տնտեսական աճն ու կայուն մարդկային զարգացումն ինչպես տարածքներում, այնպես էլ ամբողջ երկրում: Հայաստանի տարածքների բնակլիմայական առանձնահատկությունները, արտադրողական ուժերի ու բնական ռեսուրսների անհամաչափ բաշխումը, տնտեսական զարգացման, սոցիալական, ժողովրդագրական ու մշակութային տարբերությունները պայմանավորել են տարածքային միավորների զարգացման մակարդակների անհամաչափություններ: Շուկայական տնտեսությանն անցման փուլում, սկսած 2000-ականներից, այդ անհամաչափություններն էլ ավելի են խորացել և շարունակում են անընդմեջ խորանալ՝ հասնելով մտահոգիչ մակարդակի: Տնտեսական զարգացումը կենտրոնացել է Երևանում և որոշակի, խիստ սահմանափակ թվով մարզերում (հիմնականում՝ Սյունիք, Կոտայք), որպես արդյունք՝ առաջացնելով երկրի տարածքներում բնակչության կենսամակարդակի/աղքատության ու մարդկային զարգացման բնութագրիչների խիստ արտահայտված տարբերություններ:

Աղյուսակ 5.2. ՀՀ մարզերում և Երևանում արդյունաբերական արտադրանքի ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով, ընթացիկ գներով, 2004-2012թթ., հազար դրամ

	2004	2011	2012
Երևան	217.0	399.4	424.2
Արագածոտն	**45.4**	**152.0**	**147.0**
Արարատ	153.3	288.4	401.8
Արմավիր	96.6	146.4	167.1
Գեղարքունիք	81.3	74.1	92.0
Լոռի	113.2	260.5	339.7
Կոտայք	213.5	370.4	569.3
Շիրակ	46.1	151.7	161.5
Սյունիք	582.6	1,166.6	1,401.4
Վայոց ձոր	84.2	138.7	173.7
Տավուշ	32.8	47.0	60.8
Միջինը՝ մարզերի և Երևան քաղաքի համար	151.5	288.5	358.1
Ինդեքս, 2004թ. =100	100.0	190.5	194.7
Տարածքային անհամաչափության բնութագրիչներ			
Անհամաչափության միջակայք	549.9	1,119.5	1,340.6
Ինդեքս, 2004թ. =100	100.0	203.6	243.8

Միջին բացարձակ գումարային շեղում	101.9	192.7	248.1
Ինդեքս, 2004թ. =100	100.0	189.1	243.4

Աղբյուրը՝ «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով», ՀՀ ԱՎԾ, 2010, 2012, 2013,

109. Մարզերի և Երևան քաղաքի տնտեսական զարգացման անհամաչափություններն աճում են ըստ տնտեսական բոլոր հիմնական ցուցանիշների: Այսպես. բնակչության մեկ շնչի հաշվով արդյունաբերական արտադրանքի ծավալի մարզային (ներառյալ՝ Երևանը) միջին ցուցանիշը 2004-2012թթ. աճել է 1.9 անգամ: Սակայն նույն ցուցանիշի անհամաչափության միջակայքն ու միջին բացարձակ շեղումն այդ ընթացքում աճել են շուրջ 2.4 անգամ: Արդյունաբերական արտադրանքի շնչային ծավալի ցուցանիշն ամենաբարձրն է Երևանում, Սյունիքի և Կոտայքի մարզերում:

110. Նմանատիպ պատկեր է դիտվում նաև գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի ցուցանիշի պարագայում: Մեկ շնչի հաշվով այս ցուցանիշի մարզային միջինը 2004-2012թթ. աճել է 1.6 անգամ: Սակայն տարածքային անհամաչափության ցուցանիշներն ավելի արագ են աճել: Մարզային անհամաչափության միջակայքն աճել է 1.7, իսկ միջին բացարձակ շեղումը՝ 2.1 անգամ: Արդյունաբերական արտադրանքի շնչային ծավալների համեմատ, գյուղատնտեսական արտադրանքի շնչային ծավալների մարզային անհամաչափություններն ավելի փոքր են և դանդաղ են աճում:

111. Տնտեսական մյուս հիմնական ցուցանիշների տարածքային անհամաչափության բնութագրիչների վերլուծությունը վկայում է, որ դրանք բոլորն էլ աճել են, սակայն ամենամեծ աճն ունեցել են բնակչությանը մատուցվող ծառայությունները: Այս ցուցանիշի անհամաչափության միջակայքն ու միջին բացարձակ գումարային շեղումը մարզային կտրվածքով 2004-2012 թթ. աճել են շուրջ 5.6 անգամ, իսկ մարզային միջին ցուցանիշն աճել է 3.4 անգամ: Այս ցուցանիշների կտրվածքով նույնպես ամենաբարենպաստ դիրքում Երևանն է:

112. Ըստ ՀՀ տարածքային կառավարման նախարարության գնահատականների, բոլոր աղբյուրներով մեկ շնչի հաշվով իրականացված կապիտալ ներդրումները Երևանում 2012-2013թթ. 2.2 անգամ գերազանցել են նույն ցուցանիշը՝ ՀՀ բոլոր մարզերի համար: Սակայն, 2010-2011թթ. համեմատ այս տարբերությունը շուրջ վեց անգամ կրճատվել է, ինչը նշանակում է, որ բարելավվել են այս ցուցանիշի գծով տարածքային անհամաչափության բնութագրիչները:

Աղյուսակ 5.3. ՀՀ մարզերում և Երևան քաղաքում 2008-2012թթ. բոլոր աղբյուրներով 1 շնչի հաշվով իրականացված կապիտալ ներդրումները (հազ. դրամ) և դրանց տարածքային անհամաչափության բնութագրիչները

	2008	2009	2010	2011	2012
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ	234.6	142.5	153.6	123.2	126.2
Ընդամենը մարզեր	44.9	79.4	98.9	87.2	89.5
Երևան	595.6	262.5	257.6	191.7	196.0
Արագածոտն	**46.6**	**51.7**	**217.0**	**89.1**	**156.1**
Արարատ	36.6	62.8	75.1	72.4	31.9
Արմավիր	23.1	35.3	48.5	60.7	50.2
Գեղարքունիք	21.6	77.8	54.9	70.8	50.5
Լոռի	22.5	50.5	72.3	79.8	47.5
Կոտայք	57.7	104.6	122.5	99.3	144.4
Շիրակ	38.6	154.2	92.3	89.4	85.4
Սյունիք	130.8	106.1	200.9	93.3	104.2
Վայոց ձոր	173.8	80.5	86.1	119.4	95.4
Տավուշ	31.4	60.4	119.4	167.2	255.6
Մարզային միջին՝ ներառյալ Երևանը	107.1	95.1	122.4	103.0	110.7
Մարզային միջին՝ առանց Երևանի	58.3	78.4	108.9	94.1	102.1
Անհամաչափության բնութագրիչներ					
Անհամաչափության միջակայք	574.0	227.2	209.1	131.0	223.7
Ինդեքս, 2004թ. =100	127.6	50.5	46.5	29.1	49.7
Միջին բացարձակ շեղում	105.2	44.9	56.1	30.8	56.3
Ինդեքս, 2004թ. =100	135.4	57.7	72.1	39.6	72.4

Աղբյուր՝ ՀՀ Տարածքային կառավարման նախարարություն, ՀԶԾ

113. Հայաստանում մարզային մակարդակով ՀՆԱ-ի ցուցանիշներ պաշտոնապես չեն հրապարակվում: Այնուամենայնիվ, մարզային ՀՆԱ-ների փորձագիտական գնահատականների վերլուծությունը վկայում է, որ տնտեսական զարգացումը կենտրոնացած է հիմնականում Երևանում ու Սյունիքի մարզում: Արագածոտնի մարզում այն ցածր է եղել միջին հանրապետական մակարդակից՝ կազմելով դրա 65%-ը:

Աղյուսակ 5.4. Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հարաբերակցությունը միջին հանրապետականի նկատմամբ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում, 2009-2012թթ.,%

	2009	2010	2011	2012	2012թ. շնչային ՀՆԱ-ի ինդեքս (2009թ. = 100)
Ընդամենը, ՀՀ	**100.0**	**100.0**	**100.0**	**100.0**	**133.5**
Երևան	172.3	162.3	148.7	151.7	117.6
Արագածոտն	**65.0**	**85.4**	**78.6**	**82.6**	**169.8**
Արարատ	68.2	74.2	73.8	71.1	139.2
Արմավիր	67.4	62.1	70.6	67.0	132.9
Գեղարքունիք	63.9	68.2	74.6	69.7	145.7
Լոռի	42.4	47.5	59.3	52.7	166.1
Կոտայք	66.9	65.3	70.5	78.4	156.5
Շիրակ	57.6	54.4	65.0	59.7	138.4
Սյունիք	97.1	133.9	140.2	133.5	183.6
Վայոց ձոր	52.1	55.1	59.5	57.7	147.8
Տավուշ	39.5	46.4	54.8	62.6	212.0

Աղբյուր՝ Հաշվարկված և գնահատված է՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա

5.2. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները, առաջնահերթությունները և գերակայությունները

114. Մարզի մասնավոր հատվածի զարգացման հայեցակարգը ներառում է երկու բաղադրիչ: Դրանք են.

1) **Զարգացման առաջնահերթություններ**
2) **Զարգացման գերակայություններ:**

115. Զարգացման առաջնահերթությունները որոշելիս որպես մեկնակետ ընդունվել է այն իրողությունը, որ մարզում կան արտադրական կազմակերպություններ, որոնք կարող են, որոշակի, համեմատաբար քիչ ներդրումների և լուրջ շուկայավարության պայմաններում, դառնալ լիակատար մրցունակ և արդյունավետ տնտեսվարող սուբյեկտներ, ապահովել մարդկանց զբաղվածությունը և բարելավել նրանց սոցիալական պայմանները: Առաջին հերթին դրանք տեղական հումքով աշխատող այն կազմակերպություններն են, որոնք սեփական տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրություններ են մշակել և

իրականացնում: Դրանց վերագործարկման ծախսերը համեմատաբար փոքր են և արագ փոխհատուցվող:

116. գերբարձր հաճախականության տիրույթում մշակվող ռադիոէլեկտրոնային կապի և հաղորդակցության միջոցների արտադրություն և իրացում.- ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում մշակված գերբարձր հաճախականությունների կիրառմամբ ներքին կապի համակարգերն իրենց տեխնիկական և տնտեսական ցուցանիշներով լիովին համապատասխանում են համաշխարհային ստանդարտներին: Դրանց նմուշներն արդեն մի քանի տարի է, փորձաշրջան են անցնում արտերկրում:

117. Ֆիզիկայի դպրոցական փորձասարքերի արտադրության կազմակերպում. -«Միկրոմ» ՍՊԸ-ն արտադրում է ֆիզիկայի փորձասարքեր, որոնք չեն զիջում արտասահմանյան նմանատիպ արտադրանքներին և բավարարում են իրենց նկատմամբ ներկայացվող բոլոր պահանջները: Յուրաքանչյուր փորձասարքի հավաքածուի միջին գինը մոտ 900.0 հազար ՀՀ դրամ է: Ապահովում է 10-12 % շահութաբերություն: Ձեռնարկության արտադրամասում հնարավոր է տարեկան արտադրել մինչև 500 հավաքածու: Տարեկան շահույթը կկազմի 8-10 մլն ՀՀ դրամ: Ճյուղում ներդրումներ չեն կատարվել: Կարիք կա 150.0 մլն ՀՀ դրամի ներդրման: Ներդրումները հետ են գնվելու չորս տարում: Աշխատանքի կտեղավորվի մոտ 100 մարդ: Արտադրանքը կիրացվի մեր և այլ երկրներում:

118. Անկյան թվային փոխակերպիչների արտադրություն. - Հայաստանի ԳԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի Հատուկ կոնստրուկտորական բյուրոյում արտադրվում են անկյան փոխակերպիչներ, որոնք մեծ պահանջարկ ունեին նախկին ԽՍՀՄ–ում և մինչև հիմա այլ արտադրատեսակներով չեն փոխարինվել: Ճյուղում ներդրումներ չեն կատարվել: ՀՀ 270-300 մլն դրամի ներդրման դեպքում տարեկան արտադրությունը կարելի է հասցնել 1400.0 միլիոն դրամի՝ 12-15 % շահութաբերության միջին մակարդակով: Կբացվի 150-160 նոր աշխատատեղ: Ներդրումները հետ են գնվելու 4-4.5 տարում:

119. Հիդրոպոմպերի և հիդրոտուրբինների արտադրություն.- Նույն հիմնարկությունում մշակված են հիդրոպոմպերի և հիդրոտուրբինային համակարգերի արտադրության նոր տեխնոլոգիաներ: Արտադրանքի օգտակար գործողության գործակիցը 5-6 % -ով ավելի բարձր է, քան եղածներինը: Աշտարակում տեղադրված է այդպիսի մի հիդրոպոմպ, որն, առանց էլեկտրաէներգիայի օգտագործման ջուր է մատակարարում քաղաքի Նարեկ թաղամասին: Բյուրոյի արտադրամասում տարեկան կարելի է արտադրել մինչև 55-60 հիդրոպոմպ և հիդրոտուրբին: Արտադրություններ հնարավոր է կազմակերպել նաև այլ կազմակերպություններում: Կբացվի մինչև 300 աշխատատեղ: Դրանց հիման վրա

կարելի է կազմակերպել նաև փոքր ՀԷԿ-երի արտադրություններ: Անհրաժեշտ է կատարել 152-155 մլն ՀՀ դրամի ներդրում, որը հետ է գնվելու 3-4 տարում:

120. Թանկարժեք քարերի մշակման և ոսկերչական իրերի արտադրության ծավալների ընդլայնում.- Մելիքգյուղի ադամանդի գործարանը զբաղվում է բնական ալմաստի վերամշակմամբ և թողարկում է բարձրորակ արտադրանք: Գործարանը հաճախակի է պարապուրդներ տալիս հումքի բացակայության պատճառով: Ձեռնարկությունն ամբողջ հզորությամբ աշխատեցնելու դեպքում կապահովվի 300 մարդու զբաղվածություն: Այն հնարավորություն ունի մարզում լիարժեք փոխարինել «Դայմոթեք» ընկերությանը, որով կլուծվի հիշյալ ձեռնարկության՝ հետագայում վերագործարկման խնդիրը: Երևանի ոսկերչական գործարանի մասնաճյուղը գործում է Թալինում: Այն նույնպես բարձրորակ արտադրանք է թողարկում, ապահովված է անհրաժեշտ սարքավորումներով և մասնագետ կադրերով: Գործարանի հաճախակի պարապուրդները հումքի անկանոն մատակարարման և ֆինանսական ոչ բարվոք վիճակի հետևանք են: Անհրաժեշտ վարկավորման և հումքով ապահովվածության պայմաններում գործարանում լրացուցիչ կբացվի ևս 250 աշխատատեղ:

121. Հայաստանի քարերից ֆենոպլաստի /մամլանյութ/, գունանյութերի /պիգմենտ/ և ներկերի արտադրության ընդլայնում. - Մարզում մշակված տեխնոլոգիայով ստացված արտադրանքն աչքի է ընկնում բարձր որակով և, որոշ առումներով, գերազանցում է արտասահմանյան նմանատիպ արտադրանքներին: Գները շուկայականի համեմատ էժան են 30-40 %-ով: Հումքի 80 %-ը քարն է, որի պաշարներն անսպառ են: Մամլանյութերի և ներկերի արտադրության Աշտարակի ձեռնարկությունը հնարավորություն ունի տարեկան թողարկել մինչև 2000 տոննա արտադրանք: Մասնաճյուղեր կարելի է բացել նաև մարզի մյուս բնակավայրերում և երկրի այլ մարզերում: 30 մլն ՀՀ դրամի ներդրման դեպքում տարեկան կարելի է արտադրել մինչև 5000 տոննա արտադրանք, կբացվի 300-350 նոր աշխատատեղ: Շահութաբերության մակարդակը կկազմի 12-15 %:

122. Թեթևարդյունաբերական կազմակերպությունների վերագործարկում.

Մարզում կա տրիկոտաժի արտադրության 32 ձեռնարկություն և կոշիկի արտադրության երկու ֆաբրիկա: Դրանցից այսօրվա դրությամբ աշխատում է միայն Ապարանի տրիկոտաժի ֆաբրիկան, որը հաճախակի պարապուրդներ է տալիս պատվերների բացակայության հետևանքով: Սակայն ինչպես դրա, այնպես էլ մյուս կազմակերպությունների տեխնոլոգիան հնացած է: Որոշ կազմակերպություններում մեխանիկական պարկ ընդհանրապես չկա: Այսօրվա դրությամբ այդ կազմակերպությունների վերագործարկման համար մի շարք պայմաններ են անհրաժեշտ: Այս ձեռնարկը նպատակահարմար է այնքանով, որ կապահովվի մինչև 1200 մարդու զբաղվածություն:

123. Գորգարտադրության ընդարձակում. - Մարզում տարեկան արտադրվում է 350-400 տոննա բուրդ, որի իրացումը բարդ խնդիր է: Գորգագործական արտադրամաս է գործում միայն Ապարանում, որի արտադրողականությունը չափազանց սահմանափակ է: Եղած հումքով այժմ կարելի է արտադրել 10000 գորգ: Գորգարտադրությունը տարեկան կարելի է հասցնել 3500-4000 հատի: Մեծ կապիտալ ներդրումների կարիք չկա: Գորգագործությունը կարելի է կազմակերպել տնայնագործական եղանակով՝ ինչպես Ապարանի, այնպես էլ, մյուս տարածաշրջաններում: Անհրաժեշտ է լուծել արտադրանքի իրացման խնդիրը: Այդ դեպքում աշխատանքի մեջ կներգրավվի 2000-2500 ընտանիք:

124. Պեռլիտի արդյունահանում և վերամշակում. - Մարզի Արագած գյուղի հարևանությամբ կան պեռլիտի հանքավայրերի մեծ պաշարներ: Պեռլիտն իր ֆիզիկաքիմիական հատկանիշներով անփոխարինելի շինանյութ է: Ջերմային մշակման ենթարկելիս այն փքվում է և մի քանի անգամ ավելացնում է ծավալը: Պեռլիտի վերամշակումից ստացված հումքն օգտագործվում է շինարարական թեթև կոնստրուկցիաների պատրաստման համար: Պեռլիտից ստացված պանելները, միջնորմային սալերը թեթև լինելով հանդերձ, սովորական շինանյութերից ստացված կոնստրուկցիաների համեմատ բավականին էժան են: Դրանք մեծ պահանջարկ ունեն մեր հանրապետությունում և արտերկրում: Այժմ մարզում գործում է պեռլիտի արտադրության 3 ձեռնարկություն, սակայն դրանք ամբողջ պահանջարկը բավարարել չեն կարող: Կազմակերպություններից մեկի սեփականատերը ԱՄՆ-ի քաղաքացի է, որը նույնպես դադարեցրել է արտադրությունը: Արագածում պեռլիտի գործարան հիմնելու համար պահանջվում է կատարել 300000 ԱՄՆ դոլարի ներդրում: Այս պայմաններում տարեկան կարտադրվի 100 մլն ՀՀ դրամի արտադրանք: Շահութաբերության մակարդակը կկազմի 15-20%: Կապիտալ ներդրումները հետ են գնվելու 3-4 տարում, կբացվի մինչև 800 աշխատատեղ:

125. Փոքր ՀԷԿ -երի կառուցում և շահագործում. - Մարզում կան մշտական հոսք ունեցող 20-ից ավելի ջրագծեր, որոնց վրա, աշխատանքային և նյութադրամական համեմատաբար քիչ ծախսերով կարելի է ստեղծել փոքր հզորության ՀԷԿ-եր, որոնք հնարավորություն կունենան լուծելու տեղական նշանակության էլեկտրամատակարարման խնդիրներ: Մարզում մշակված են փոքր ՀԷԿ-երի կառուցման նախագծեր, կան դրանց հանգույցների արտադրությամբ զբաղվող կառույցներ: Դրանց աշխատանքը ենթարկվել է լուրջ գիտական և փորձարարական փորձաքննության և ստացել են բարձր գնահատականներ: Մարզում հնարավոր է կառուցել 50-ից ավելի նման ՀԷԿ-եր, որոնք կարող են էլեկտրաէներգիա մատակարարել ինչպես բնակավայրերի առանձին թաղամասերի,

այնպես էլ արտադրական օբյեկտների: Պահանջվում է 150.0 մլն դրամի ներդրում: Դրանք հետ են գնվելու 4 տարում: Կբացվի 150-200 աշխատատեղ:

126. Գյուղատնտեսական մթերքների վերամշակում.

127. Մրգի պահածոների արտադրություն - Մարզում տարեկան արտադրվում է 40-45 հազար տոննա պտուղ: Դրանից վերամշակվում է ընդամենը 10-12%- ը: 2012թ.-ին մարզում արտադրվել է ընդամենը 242400 պայմանական տուփ պահածո: Պահածոների արտադրությունը մարզում կարելի է հասցնել մինչև 10-15 միլիոն պայմանական տուփի: Այս արտադրության մեջ միջին տարեկան շահութաբերությունը հասնում է մինչև 15-20%-ի, տարեկան շահույթը կկազմի 80-100 միլիոն դրամ: Լրացուցիչ կբացվի 800-1000 աշխատատեղ: Մարզում այդ նպատակին հարմար արտադրական տարածքներ կան, որտեղ կպահանջվի 90-100 մլն. դրամի ներդրում: Ներդրումները հետ են գնվելու 3-4 տարում:

128. Ջերմոցային տնտեսության կազմակերպում. - Մարզում ջերմոցային տնտեսության վարման ուղղությամբ մեծ փորձ կա: Տարիներ շարունակ ջերմոցային տնտեսությունը տվել է ձմեռվա ժամանակաշրջանի գյուղատնտեսական արտադրանքի մինչև 40%-ը: Ջերմոցներում արտադրվել են բանջարեղեն և մերձարևադարձային մշակաբույսեր: Մարզի գործարարների փորձերը ցույց են տվել, որ ոլորտը կարելի է ընդարձակել: Հնարավորություն կա ոչ միայն ձեռնմուխ լինել ավանդական մշակաբույսերի արդյունաբերական արտադրությանը, այլև մշակել և արտադրել ոչ ավանդական մշակաբույսեր: Ներկայումս մարզում գործում են 10-ից ավելի ջերմոցային տնտեսություններ: Սակայն դրանց թիվը հնարավոր է բազմապատկել: Կարիք կա 200.0 մլն դրամի ներդրման: Աշխատանքով կապահովվի 1200 մարդ: Բանջարեղենի և մյուս մշակաբույսերի արտադրությունը կարելի է եռապատկել:

129. Չրերի արտադրություն - Այժմ մարզում չիր արտադրվում է միայն տնայնագործական եղանակով: Կա նաև մի քանի արևային ջերմոց: Տարեկան կարելի է արտադրել մինչև 1-2 հազար տոննա ծիրանի, դեղձի, խնձորի, սալորի տանձի չիր: Չրի յուրաքանչյուր կիլոգրամը շուկայում վաճառվում է 500-600 դրամով: Այդ դեպքում տարեկան համախառն արտադրանքը կհասնի 0.5-1 միլիարդ դրամի կամ 1.7-2 միլիոն ԱՄՆ դոլարի: Արտադրության գործընթացին կմասնակցի մինչև 2000 ընտանիք: 10-15 % շահութաբերության մակարդակ ապահովելու դեպքում կստացվի 60-80 մլն. դրամի զուտ եկամուտ: Անհրաժեշտ է կատարել 120-130 մլն. ՀՀ դրամի ներդրում: Դրանք հետ են գնվելու ներդրման 2-րդ տարում:

130. Մսի վերամշակում - Մարզի շուրջ 39000 գյուղացիական տնտեսություններում պահվում է 48.8 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն,

66.2 հազար գլուխ ոչխար և այծ, 6000 գլուխ խոզ: Տարեկան արտադրվում է 3000-4000 տոննա միս: Այն հիմնականում վաճառվում է նախկին շրջկենտրոնների և Երևանի շուկաներում: Մարզում գործում է մսի վերամշակման երկու ձեռնարկություն, որոնք, ֆինանսական սահմանափակ հնարավորությունների պայմաններում անկարող են իրականացնել աշխատանքի ամբողջ ծավալը: Հնարավորություն կա միայն մսի վերամշակումից ոլորտի համախառն արտադրանքի հավելաճը հասցնել մինչև 200-220 միլիոն դրամի, անասունների գլխաքանակն ավելացնել 10-15 հազարով: Գյուղական յուրաքանչյուր ընտանիքի տարեկան եկամուտները կաճեն 350-400 հազար դրամով, կբացվի 200-220 նոր աշխատատեղ՝ ամսական 150 հազար դրամ միջին աշխատավարձով:

131. Պանրի արտադրություն - Ներկայումս մարզում տարեկան արտադրվող 65-70 տոննայի փոխարեն հնարավորություն կա արտադրելու 300-350 տոննա տարբեր տեսակի պանիրներ: Թալինում խորհրդային տարիներին արտադրվել են բարձրորակ ռոքֆոր, հոլանդական, ոչխարի և այլ պանիրներ, որոնք մեծ պահանջարկ են ունեցել Խորհրդային Միությունում: 10-15 մլն. ՀՀ դրամի ներդրման դեպքում կսկսվի տեսակավոր պանրի արտադրությունը, չանախ պանրի արտադրությունը կկրկնապատկվի: Լրացուցիչ կստեղծվի 150-200 աշխատատեղ՝ ամսական 130-140 հազար դրամ աշխատավարձով: Ներդրումները հետ կգնվեն 3 տարում, շահութաբերության մակարդակը կկազմի 10-12 %: Կզարգանա անասնաբուծությունը:

132. Գինու և գինեհումքի արտադրություն – Մարզում գործում են Օշականի և Արագածի գինու գործարանները: Արտենիի գործարանը սնանկ է հայտարարված: Օշականի գինու գործարանում թողարկվում են երկրում եզակի «Խերես» տիպի գինիներ, մի քանի կազմակերպություններ թողարկում են շամպայններ, գինիներ և օղիներ: Սակայն ֆինանսական միջոցների անբավարարության և շուկայավարության բացակայության պայմաններում ձեռնարկությունը ներկայումս գործում է հնարավորությունների 10-15 տոկոսով: Գինու արտադրության ծավալների ընդլայնումը զարկ կտա խաղողագործության զարգացմանը:

133. Կան նաև այլ արտադրություններ և կարողություններ, որոնց ծավալները համեմատաբար փոքր են: Դրանք փոքր, հիմնականում՝ 3-10 աշխատող ունեցող կազմակերպություններ են, որոնց արտադրանքը մարզի տնտեսության համար մեծ նշանակություն չունի: Այնուամենայնիվ, դրանց թիվը առաջիկայում պետք է ավելանա: Կարևոր խնդիր է նաև այդ կազմակերպությունների ֆինանսական վիճակի բարելավումը: Դրանք ունակ են արագորեն վերակառուցել իրենց արտադրությունները, առավել ճկուն են և կարող են ապահովել մարզի բնակչության մինչև 5-6 % զբաղվածություն:

134. Հիմնականում վերը թվարկածներն են մարզի արդյունաբերության առաջնահերթությունները: Առաջնահերթությունները որոշելիս, նկատի է առնվել, որ այդ կազմակերպություններն արդեն կայացած են, գոյություն ունեցող արտադրական և տնտեսական բազայի վրա, որոշակի տնտեսական գործունեություն են ծավալում, շուկայում ունեն իրենց տեղը, մի մասն աշխատում է տեղական հումքով, մյուսների հումքն ապահովվում է պետական ծրագրերով, կան կազմավորված ենթակառուցվածքներ: Դրանք ունեն քիչ թե շատ հաստատուն աշխատակազմ ու ֆինանսական միջոցներ և կարողանում են ինքնուրույն գործունեություն ծավալել: Միաժամանակ, շենքերի, շինությունների ու կառույցների ձեռքբերման համար լրացուցիչ ներդրումների կարիք չկա, քանի որ բոլորն էլ ապահովված են դրանցով: Կա հիմնական միջոցների նորացման, նոր տեխնոլոգիայի ներդրման խնդիր, որը կարելի է լուծել ձեռնտու պայմաններով վարկավորման կամ համատեղ կազմակերպությունների կազմակերպման միջոցով:

135. Մարզի արդյունաբերության առաջնահերթությունների որոշման համար կարևոր է համարվել այն հանգամանքը, որ կատարվող կապիտալ ներդրումներն անմիջապես, գործունեության առաջին իսկ տարում կսկսեն դրամական հատույց ապահովել: Համեմատաբար քիչ են կատարվող ներդրումների ծավալները և դրանց հետգնման ժամկետները՝ համեմատաբար կարճ: Մեծ չէ նաև ռիսկի գործոնը: Մոտավոր հաշվումներով մարզում առաջիկա 5 տարում 1.5 մլրդ. ՀՀ դրամի ներդրումները արդեն գործող կազմակերպություններում աշխատանքով լրացուցիչ կապահովեն 3500-4000 մարդու՝ ամսական 250-300 հազար դրամ միջին աշխատավարձով: Կապիտալ ներդրումները որոշ արտադրություններում հետ են գնվելու անմիջապես առաջին տարում, մյուսներում՝ 2-5 տարում, տարեկան միջին շահութաբերությունը կկազմի 18-20 %: Հիմք կստեղծվի մարզի արդյունաբերության նոր որակական կողմնորոշումների համար, էականորեն կբարձրանա մարզի ներդրումը երկրի տնտեսության մեջ, որոշակիորեն կթուլանա սոցիալական լարվածությունը, կավելանան տեղական և պետական բյուջեների մուտքերը, կիրականացվեն խոշորածավալ բարեգործություններ:

136. Ահա հիմնականում սրանք են մարզի արդյունաբերության բնագավառին ներկայացվող առաջնահերթ խնդիրները, այլ խոսքով՝ կարճաժամկետ ծրագիրը: Ծրագրի իրականացման օպտիմալ ժամկետն ընդունվում է 4 տարին՝ 2015-2018 թվականները:

137. Մարզի արդյունաբերության զարգացման կարճաժամկետ ծրագիրը հող է նախապատրաստելու մարզում ճյուղի գերակայությունների ծրագրի իրականացման համար:

138. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը վկայում է, որ շարունակելով ցուցաբերվող աջակցությունը առանձին ՓՄՁ-ների մակարդակով, մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը:

139. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումների խրախուսման համար:

140. Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման հանրապետական և մարզային հայեցակարգերի ընդունում: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումներն արդարացված լինեն և նվազի դրանց ռիսկայնությունը անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

141. Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա կձևավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և, հատկապես, մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները:

142. Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ օտարերկրյա ներդրողներ: Սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրականացվում՝ տեղերում գործուն ծրագրի, պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պատճառով: Այս առումով, մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և օտարերկրյա ներդրողների համար: Այստեղ որոշիչ է մարզպետարանի, Մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը,

ընդ որում՝ ինչպես տարածքաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

143. Այդ արտադրությունների միաժամանակյա տեխնիկական կատարելագործում՝ գիտական մշակումների հիման վրա: Աշտարակում գործող գիտահետազոտական հիմնարկներն ի վիճակի են թանկարժեք քարերի, ոսկու և կարծր նյութերի վերամշակման, կիսահաղորդիչների արտադրության և մեծ ճշգրտություն պահանջող այլ բնագավառներում ստեղծել ավտոմատ թվային ծրագրավորմամբ կառավարվող համակարգեր, օգտագործել լազերային տեխնիկան: Դա հնարավորություն կտա հասնել աշխատանքերի մեծ ճշգրտության, բարձր որակի, բացառել խոտանը, իջեցնել արտադրանքի ինքնարժեքը: Կստեղծվի բարձր մասնագիտական կարողություններ ունեցող ինժեներատեխնիկական և բանվորական անձնակազմ: Միաժամանակ, նույն սկզբունքով ավտոմատ թվային ծրագրավորմամբ համակարգեր կստեղծվեն Հայաստանի և արտերկրի հաստոցաշինական, ճշգիրտ և լազերային սարքավորումների արտադրական բազայի կատարելագործման համար: Դրանով երկիրը կունենա սեփական տեխնոլոգիական բազա, որը չի զիջի զարգացած երկրների նմանակներին, սարքավորումների ձեռքբերման համար լրացուցիչ միջոցներ չեն ծախսվի, կապահովվի երկրի տեխնիկական առաջընթացը: Հիմնարար գիտությունը հնարավորություն կստանա ինտեգրվել համաշխարհային գիտական կառույցում: Փաստորեն, այս գործընթացն իրականացնելու արդյունքում մարզում կստեղծվի գիտության և արտադրության փոխլրացնող համակարգ, յուրահատուկ գիտաարտադրական միավորման մարզային ցանց, որը լուծելու է գիտության և արտադրության առաջադրած համատեղ, նաև՝ համապետական մասշտաբի խնդիրներ:

144. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է 2-րդ գծապատկերում:

Աղյուսակ 5.5. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման

	Տարածաշրջանային/ համայնքային մակարդակ	Մարզային մակարդակ

Փուլ 1	Գործարարության զարգացման ռեսուրսների հաշվառում և գնահատում	Գերակա ոլորտների ապրանքների և ծառայությունների իրացման շուկաների ուսումնասիրում
Փուլ 2	Մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային/ համայնքային ծրագրերի մշակում և ընդունում	Գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի մշակում և ընդունում
Փուլ 3	Տարածաշրջանային/համայն-քային մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկների մշակում	Գերակա ոլորտներում մասնավոր ներդրումների ներգրավման մարզային առաջարկների մշակում
Փուլ 4	Ներդրումային առաջարկների փաթեթների կազմում և առաջմղման միջոցառումների իրականացում	

145. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է 4.1 գծապատկերում: Ծրագրավորվող 4 տարիների ընթացքում ՓՄՁ ոլորտի ֆինանսավորման համար անհրաժեշտ կլինի 11 000.0 միլիոն դրամ (հավելված 2):

146. Ըստ ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից հրատարակված 2007-2009թթ. «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում» տեղեկագրի, 2009 թվականին գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց ներկայացված է **Աղյուսակ 5.6.** -ում:

Աղյուսակ 5.6. ՓՄՁ սյուբեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց

	ՓՄՁ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ					
	ԱՁ		ԻԱ		Ընդամենը	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
Ընդամենը ՀՀ	**73,693**	**100.0**	**59,230**	**100.0**	**132,923**	**100.0**
ք. Երևան	30,209	41.0	31,647	53.4	61,857	46.5
Ընդամենը մարզեր	**43,484**	**59.0**	**27,583**	**46.6**	**71,066**	**53.5**

Արագածոտն	**2,949**	**4.0**	**1,647**	**2.8**	**4,596**	**3.5**
Արարատ	5,394	7.3	2,763	4.7	8,157	6.1
Արմավիր	6,187	8.4	2,597	4.4	8,784	6.6
Գեղարքունիք	3,369	4.6	3,334	5.6	6,703	5.0
Լոռի	5,904	8.0	4,248	7.2	10,152	7.6
Կոտայք	6,223	8.4	4,522	7.6	10,745	8.1
Շիրակ	4,046	5.5	2,899	4.9	6,945	5.2
Սյունիք	3,872	5.3	2,872	4.8	6,744	5.1
Վայոց Ձոր	1,841	2.5	795	1.3	2,636	2.0
Տավուշ	3,698	5.0	1,906	3.2	5,604	4.2

147. 2013 թվականին աջակցություն ստացած ՓՄՁ-ների 5.2**%**-ը գործում է Երևան քաղաքում, 94.8**%-**ը՝ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Տրամադրված աջակցության մարզային բաշխվածքը ներկայացված է աղյուսակ 5.7.-ում:

Աղյուսակ 5.7. Աջակցություն ստացած ՓՄՁ-ների թիվը՝ ըստ մարզերի և ք.Երևանի

	2013թ.
Երևան	795
Արագածոտն	**1361**
Արարատ	1529
Արմավիր	1489
Գեղարքունիք	1210
Կոտայք	2476
Լոռի	1645
Շիրակ	1489
Սյունիք	1376
Վայոց Ձոր	2348
Տավուշ	1525

Աղբյուրը՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի կողմից 2013թ. ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն

Աղյուսակ 5.8. Աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտներն ըստ մարզերի, 2013թ.

	Քանակ	Վարկի գումար	Երաշխավորություն
Երևան	81	321.299.665	324.833.961
Գեղարքունիք	26	77.090.000	77.937.990
Արագածոտն	**10**	**77.937.990**	**30.148.446**
Արմավիր	25	95.038.600	96.084.025
Լոռի	4	12.459.500	12.604.455
Սյունիք	8	20.340.500	20.564.245
Կոտայք	9	28.500.500	28.838.542
Շիրակ	16	42.137.000	42.607.787
ՎայոցՁոր	13	49.367.980	49.896.070
Տավուշ	22	79.735.500	80.612.590
Արարատ	10	33.603.000	33.998.244
Ընդամենը	**224**	**789.363.245**	**798.126.355**

Աղբյուրը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2013 թվականի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվություն, էջ 25

Աղյուսակ 5.9. Տրամադրված երաշխավորություններն ըստ մարզերի

Մարզ	Քանակ	Վարկ	Երաշխավորություն	Ապահով-վածության %	Վարկի տոկոս (միջին)	Միջին ժամկե-տայնություն (ամիս)
Գեղարքունիք	3	27.850.000	14.880.000	54%	15%	60
Արագածոտն	**1**	**16.000.000**	**9.000.000**	**56%**	**15%**	**60**
Արմավիր	3	50.000.000	27.400.000	53%	14%	52
Լոռի	0	0	0	0	0	0
Սյունիք	1	4.500.000	1.091.253	24.25%	15%	36
Կոտայք	0	0	0	0	0	0
Շիրակ	1	23.400.000	14.475.000	61.85%	15%	60
Վայոց Ձոր	2	105.000.000	23.000.000	35.1%	13%	60
Տավուշ	1	5.000.000	699.813	13.9%	12%	36
Արարատ	2	21.000.000	11.509.098	56%	13.5%	54
Երևան	4	54.000.000	18.300.000	39%	15%	60
Ընդամենը	**18**	**306.750.000**	**120.355.164**	**45%**	**14.2%**	**55**

Աղբյուրը՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրոյթան զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից 2013 թվականի ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվություն, էջ 26-27

Գծապատկեր 1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեմա



5.3. Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը

Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Ցուցանիշներ	Ռիսկեր/Նախադրյալ-ներ
Ռազմավարական նպատակ 1. Մշակել ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրեր՝ այդ գործընթացներում ներգրավելով ՏԻՄ և գործարար համայնքի ներկայացուցիչներին:	ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը պլանավորվում և կառավարվում է տարածաշրջանի մակարդակով: Քաղաքապետարաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի պատասխանատուներ են նշանակվել	ՏԻՄ ղեկավարների աջակցությունը և մասնակցությունը ծրագրերի մշակման գործընթացում
Ծրագիր 1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Առաջնահերթ միջոցառումներ. • Ծրագրերի մշակման խորհրդատվական աջակցություն • Տարածաշրջանային և համայնքային ծրագրերի ընդունում	- Խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթները կազմակերպված և ֆինանսավորված են: - ՏԻՄ և մասնավոր հատվածի ներկայացուցիչները ներգրավված են ծրագրերի մշակման գործընթացում: - Ընդունված են մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային 5 և համայնքային 20 ծրագիր: - Հստակեցված են գործարար ծրագրերի իրագործման համար տեղական ռեսուրսների օգտագործ-ման հնարավորությունները:	Մրցույթների կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությունը
Ռազմավարական նպատակ 2. Աջակցել գերակա ճյուղերի, մասնավորապես զբոսաշրջության, գյուղմթերքների վերամշակման և իրացման կազմակերպություններ ի մրցունակության բարձրացմանը:	*Գերակա ոլորտների ձեռնարկու-թյունների եկամուտների աճ: *Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աճ: *Հյուրընկալության և հարակից ծառայությունների որակի բարելավում: *Զբոսաշրջիկների և այցելուների թվաքանակի աճ:	Գյուղմթերքների իրացման և զբոսաշրջության շուկայում մրցակցային միջավայրի անբարենպաստ պայմանները մարզի համար
Ծրագիր 2. Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: **Առաջնահերթ միջոցառումներ.** • Զբոսաշրջության և գյուղմթերքների շուկաների հետազոտում	- Տեղական ապրանքների և ծառայությունների իրացման շուկաները և պահանջարկի ծավալները հստակեցված են - Հետազոտության արդյունքները ներկայացված և ընդունված են գործա-ռար համայնքի	* Շուկաների հետազոտման գործընթացում որակյալ մասնագիտական կադրերի ներգրավում: * Մարզի գերակա ոլորտների զարգացման

• Գյուղմթերքների վերամշակման և իրացման մարզային հայեցակարգի մշակում • Մարզում զբոսաշրջային կենտրոնների ձևավորման հայեցակարգի մշակում • Գերակա ոլորտներում գործող կազմակերպությունների աշխատուժի պահանջարկի ուսումնասիրում • Գերակա ոլորտներում մասնագետների և կառավարիչների վերապատրաստման կոորդինացում	ներկայացուցիչների կողմից - Գյուղմթերքների վերամշակման և իրացման համակարգի զարգացման միջոցառումների պլանը ընդունված է - Զբոսաշրջային կենտրոնների զարգացման միջոցառումների պլանը ընդունված է - Աշխատուժի պահանջարկն ըստ մասնագիտությունների և տարածաշրջանների գնահատված է - ՓՄՁ աջակցման տարեկան ֆինանսա-կան պլաններում նախատեսված են գումարներ գերակա ոլորտների մասնագետների և կառավարիչների վերապատրաստման համար	միջոցառում-ների պլանը համահունչ է ճյուղային նախարարություն-ների քաղաքականությանը: * Օտարերկրյա և իջազգային կազմակերպությունները պատրաստ են համաֆինան-սավորել վերապատրաստ-ման ծրագրերը:
Ռազմավարական նպատակ 3. Նպաստել տեղացի արտագնա, ինչպես նաև այլ արտաքին ներդրողների ներգրավմանը մարզում մասնավոր հատվածի զարգացման ներդրումային ծրագրերում:	Տարածաշրջաններում և առանձին համայնքներում մասնավոր ներդրումների ծավալների աճ	Գործարարության զարգացման տեղական ռեսուրսների և ենթակառույցների անբավարար վիճակը
Ծրագիր 3. Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Առաջնահերթ միջոցառումներ. • Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում • Ներդրումային հնարավորու-թյունների ներկայացման միջոցառումների կազմակերպում	- Տարածաշրջանային և/կամ ոլորտային ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերը հրապարակված են - Տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների իրազեկման նպատակային միջոցառումները իրագործված են	Ներդրումային առաջարկների և դրանց իրագործման պայմանները համապատասխանում են պոտենցիալ ներդրողներին ակնկալիքներին:

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

6.1. Կրթություն

6.1.1. Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն

148. Կրթության բնագավառը տնտեսության առաջընթացն ապահովող առաջնային գործոն է: Կրթության որակի և մատչելիության բարձրացումը միջնաժամկետ և կարժամկետ հատվածում պետության և հասարակության առաջընթացի, զարգացման, ինչպես նաև աղքատության և անհավասարության հաղթահարման կարևորագույն գործոններից է:

149. Նախադպրոցական կրթություն - Նախադպրոցական կրթությունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Ըստ նախադպրոցական կրթության հայեցակարգի և ռազմավարության՝ պետք է ապահովվի բազմաֆունկցիոնալ նախադպրոցական կրթական հաստատությունների գործարկումը տարբերակված ծրագրերով (այլընտրանքային ծառայություններով), ինչպես նաև խթանվի տարաբնույթ նախադպրոցական ծախսարդյունավետ կրթական ծառայությունների ներդրումը քաղաքային և գյուղական համայնքներում: Նախադպրոցական կրթության որակը բարելավելու նպատակով կառավարությունը կապահովի նաև նախադպրոցական կրթության չափորոշիչներին համապատասխան ծրագրային նյութերի մշակումն ու ներդնումը: Նախադպրոցական կրթության ոլորտում միասնական քաղաքականություն ապահովելու և մատուցվող ծառայությունների որակը բարելավելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մարտի 30-ի N257-Ն հրամանով հաստատվել է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը: Համաձայն վիճակագրության տվյալների, Արագածոտնի մարզում մանկապարտեզների, հետևաբար նաև երեխաների թիվը մանկապարտեզներում նվազում էր Հայաստանի անկախության առաջին տարիներին: Հետագայում նույնպես, թեև երկրի տնտեսական վիճակը սկսեց կայունացման միտումներ դրսևորել, նախադպրոցական հաստատությունների թիվը շարունակում էր նվազել: ՀՀ Արագածոտնի մարզում գործում է համայնքային ենթակայության 25 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որտեղ ձևավորվել է 79 խումբ՝ 2133 երեխայով: Նախադպրոցական հաստատությունները հիմնականում գործում են համայնքային ենթակայությամբ, և նշված ոլորտում մինչև 2011 թվականը ՀՀ պետական բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվել, այլ դրանք իրականացվել են համայնքային հատկացումներից, ծնողական վճարներից,

երբեմն նաև՝ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված աջակցություններից: Նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով ՀՀ տարբեր մարզերին հատկացվել են միջոցներ՝ ծախսարդյունավետ մոդելների կիրառմամբ փորձնական ծրագիր իրականացնելու համար: Արագածոտնի մարզում նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելներ ներդրվել են 2010 թվականին: Միաժամանակ նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով 2011 թվականին ՀՀ պետական բյուջեում նախատեսվել են միջոցներ ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ընթացիկ ծախսերի մասով՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: Սկսած 2011 թվականից այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից համապատասխան հատկացումներ տրվում նաև Արագածոտնի մարզին:

150. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015թթ. ռազմավարական ծրագրի իրականացման հետագա ընթացքի մասին» թիվ 29 արձանագրության որոշմամբ՝ ծրագրային ժամանակահատվածում մարզի տարբեր համայնքներում շուրջ 20 հաստատություններում «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում դրամաշնորհային ծրագրերով և համայնքերի աջակցությամբ կգործարկվեն նախադպրոցական խմբեր՝ ապահովելով 5-6 տարեկանների նախադպրոցական կրթության հասանելիությունը և մատչելիության բարձրացումը: ՀՀ Արագածոտնի մարզի 34 հանրակրթական դպրոցում գործում է նախակրթարան՝ 541 երեխայով, որտեղ իրականացվում է նախադպրոցական կրթություն՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: Շարունակական աշխատանքներ է տարվում նախակրթարաններ բացել այն համայնքներում, որտեղ չկան մանկապարտեզների շենքեր:

Աղյուսակ 6.1 ՆԴՀ-ների քանակն ըստ տեսակի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2012թ.

միավոր

	Ընդամենը	այդ թվում՝	
		համայնքային և գերատեսչական	ոչ պետական

	մսուր-մանկա-պարտեզ	մանկա-պարտեզ	դպրոց-մանկա-պարտեզ	մսուր-մանկա-պարտեզ	մանկա-պարտեզ	դպրոց-մանկա-պարտեզ	մսուր-մանկա-պարտեզ	մանկա-պարտեզ	դպրոց-մանկա-պարտեզ
ք.Երևան	41	153	13	38	125	1	3	28	12
Արագածոտն	**16**	**4**	**-**	**16**	**4**	**-**	**-**	**-**	**-**
Արարատ	9	60	5	9	60	5	-	-	-
Արմավիր	24	32	-	24	32	-	-	-	-
Գեղարքունիք	14	28	-	14	28	-	-	-	-
Լոռի	10	51	-	10	51	-	-	-	-
Կոտայք	45	7	-	45	7	-	-	-	-
Շիրակ	26	18	1	20	17	-	6	1	1
Սյունիք	15	37	-	15	37	-	-	-	-
Վայոց ձոր		18	-	-	18	-	-	-	-
Տավուշ	14	32	10	13	32	10	1	-	-
Ընդամենը ՀՀ	**214**	**440**	**29**	**204**	**411**	**16**	**10**	**29**	**13**

151. Մանկավարժական կադրեր: Եթե հանրակրթության բնագավառում վերջին տարիներին իրականացվում են լայնածավալ միջոցառումներ մանկավարժների վերապատրաստման ուղղությամբ, ապա նախադպրոցական ոլորտում կադրերի վերապատրաստման խնդիրը չափազանց արդիական է: WORLD VISION բարեգործական կազմակերպության կողմից Թալինի տարածաշրջանի 17 ՆՈՒՀ մանկավարժ վերպատրաստվել է /ծրագիրը արժե 2 336.6 դրամ/:

Աղյուսակ 6.2. ՆԴՀ-ների մանկավարժդաստիարակչական անձնակազմի թվաքանակն ըստ աշխատանքային ստաժի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2012թ.

մարդ

	Մանկավարժդաս-տիարակչական անձնակազմը		այդ թվում՝ ըստ աշխատանքային ստաժի							
	ընդա-մենը	նրանցից՝ կանայք	մինչև 6 տարի	նրանցից՝ կանայք	6-10 տարի	նրանցից՝ կանայք	11-15 տարի	նրանցից՝ կանայք	16 և ավելի	նրանցից՝ կանայք
ք.Երևան	2 048	2 029	419	417	449	446	340	339	840	827
Արագածոտն	**199**	**199**	**49**	**49**	**44**	**44**	**35**	**35**	**71**	**71**
Արարատ	497	496	152	152	82	82	57	57	206	205
Արմավիր	387	387	104	104	84	84	57	57	142	142
Գեղարքունիք	237	236	59	59	50	50	29	29	99	98
Լոռի	325	324	73	72	61	61	30	30	161	161

	Մանկավարժական-տիարակչական անձնակազմը		այդ թվում՝ ըստ աշխատանքային ստաժի							
	ընդամենը	նրանցից՝ կանայք	մինչև 6 տարի	նրանցից՝ կանայք	6-10 տարի	նրանցից՝ կանայք	11-15 տարի	նրանցից՝ կանայք	16 և ավելի	նրանցից՝ կանայք
Կոտայք	419	419	146	146	94	94	61	61	118	118
Շիրակ	354	354	57	57	64	64	44	44	189	189
Սյունիք	455	455	107	107	55	55	65	65	228	228
Վայոց ձոր	108	108	9	9	11	11	19	19	69	69
Տավուշ	264	264	82	82	49	49	54	54	79	79
Ընդամենը ՀՀ	**5 293**	**5 271**	**1 257**	**1 254**	**1 043**	**1 040**	**791**	**790**	**2 202**	**2 187**

152. Հանրակրթություն: ՀՀ Արագածոտնի մարզում մարզպետարանի ենթակայությամբ գործում է 119 հանրակրթական դպրոց, որից 79-ը՝ միջնակարգ, 40-ը՝ հիմնական, 1 հատուկ, 1 մարզադպրոց: Վերջին տարիներին հանրակրթության ոլորտում ՀՀ կառավարության իրականացրած միջոցառումները (հանրակրթության կառավարման ապակենտրոնացում, հաստատությունների ինքնավարության աճ, անցում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի) ուղղված են համակարգի կառավարման բարեփոխմանը, արդյունավետության բարձրացմանն ու հանրակրթության որակի բարելավմանը: Բարձրացել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման:Վերջին տարիներին ներդրվել է մանկավարժական կադրերի շարունակական վերապատրաստման համակարգը, որը հնարավորություն է տալիս ապահովել ուսուցչական համակազմի վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջանը և տարեկան վերապատրաստել նրանց շուրջ 20%-ը: Միաժամանակ, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն, հանրակրթական դպրոցների ուսուցիչների թափուր տեղերը համալրվում են մրցույթով: Ներդրվել է ուսուցիչների ատեստավորման կարգը:

<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն հանրակրթական դպրոցների տնօրենները անցել են համապատասխան վերապատրաստում և հավաստագրում: Այսուհետ հանրակրթական դպրոցների տնօրենների թափուր տեղերը կարող են համալրվել միայն մրցութային կարգով՝ սահմանված կարգով վերապատրաստում անցած և ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք՝ հավաստագիր ունեցող անձանց կողմից:

2014 թվականին ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի Արագածոտնի մասնաճյուղի կողմից մարզի 513 ուսուցիչի համար կազմակերպվել են նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներ: 2011-2013թթ. պարզ ընթացակարգով /փաստաթղթային/ ատեստավորվել է 1459 ուսուցիչ: 2014 թվականի հունիսի 23-28-ը մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչները մասնակցել են ֆրանսերեն դասավանդողների 12-րդ ամենամյա սեմինարին, որը կազմակերպվել է ,,Հայկական Ալիանս Ֆրանսեզ,, կրթամշակութային կազմակերպությունը և ,,Ֆրանսերեն դասավանդողների հայկական ասոցիացիան,, համատեղ, ՀՀ կրթության և գիտության նախարարության և Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ:

Աղյուսակ 6.3. Հանրակրթական դպրոցների քանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2012/2013 ուս. տարի

միավոր

	Ընդամենը	այդ թվում՝		Քաղաքային համայնքներ			Գյուղական համայնքներ		
		Պետական	ոչ պետական	Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝	
					Պետական	ոչ պետական		Պետական	ոչ պետական
ք.Երևան	253	216	37	253	216	37	-	-	-
Արագածոտն	**122**	**122**	**-**	**13**	**13**	**-**	**109**	**109**	**-**
Արարատ	112	112	-	21	21	-	91	91	-
Արմավիր	123	121	2	28	26	2	95	95	-
Գեղարքունիք	126	126	-	27	27	-	99	99	-
Լոռի	168	167	1	65	64	1	103	103	-
Կոտայք	105	104	1	39	39	-	66	65	1
Շիրակ	173	168	5	59	54	5	114	114	-
Սյունիք	121	121	-	36	36	-	85	85	-
Վայոց ձոր	51	50	1	11	10	1	40	40	-
Տավուշ	81	81	-	18	18	-	63	63	-
Ընդամենը ՀՀ	**1 435**	**1 388**	**47**	**570**	**524**	**46**	**865**	**864**	**1**

153. Աշակերտների թվաքանակ և բաշխվածություն: 2014-2015 ուսումնական տարում մարզի հանրակրթական դպրոցներում ձևավորվելու է 202 դասարան, 16745 աշակերտով և 118 առաջին դասարան, որտեղ հաճախի 1815 աշակերտ:

Աղյուսակ 6.4. Հանրակրթական դպրոցների աշակերտների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և
Երևան քաղաքի, 2012/2013 ուս. տարի

մարդ

	Պետական դպրոցներ			Ոչ պետական դպրոցներ			Ընդամենը		
	աղջիկ	տղա	ընդամենը	աղջիկ	տղա	ընդամենը	աղջիկ	տղա	ընդամենը
ք.Երևան	51 610	54 502	106 112	2 695	3 376	6 071	54 305	57 878	112 183
Արագածոտն	**8 584**	**9 916**	**18 500**	**-**	**-**	**-**	**8 584**	**9 916**	**18 500**
Արարատ	15 714	17 138	32 852	-	-	-	15 714	17 138	32 852
Արմավիր	16 334	18 611	34 945	167	183	350	16 501	18 794	35 295
Գեղարքունիք	14 908	16 509	31 417	-	-	-	14 908	16 509	31 417
Լոռի	15 267	16 362	31 629	38	66	104	15 305	16 428	31 733
Կոտայք	16 387	17 417	33 804	55	97	152	16 442	17 514	33 956
Շիրակ	15 071	16 357	31 428	379	394	773	15 450	16 751	32 201
Սյունիք	8 390	8 595	16 985	-	-	-	8 390	8 595	16 985
Վայոց ձոր	3 222	3 654	6 876	15	15	30	3 237	3 669	6 906
Տավուշ	8 282	8 398	16 680	-	-	-	8 282	8 398	16 680
Ընդամենը ՀՀ	**173 769**	**187 459**	**361 228**	**3 349**	**4 131**	**7 480**	**177 118**	**191 590**	**368 708**

154. Ուսուցիչների թվաքանակ և բաշխվածություն: 2012/2013 ուսումնական տարում հանրակրթական դպրոցներում դասավանդել են 40830 ուսուցիչներ:

Աղյուսակ 6.5. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2012/2013 ուս. տարի

մարդ

	Ուսուցիչների թվաքանակը		այդ թվում՝			
			պետական դպրոցների		ոչ պետական դպրոցների	
	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	10 450	9 312	9 416	8 468	1 034	844
Արագածոտն	**2 920**	**2 251**	**2 920**	**2 251**	**-**	**-**
Արարատ	3 292	2 804	3 292	2 804	-	-
Արմավիր	3 837	3 259	3 775	3 214	62	45
Գեղարքունիք	3 699	2 925	3 699	2 925	-	-
Լոռի	3 796	3 244	3 774	3 225	22	19
Կոտայք	3 270	2 784	3 252	2 767	18	17
Շիրակ	3 991	3 351	3 872	3 243	119	108
Սյունիք	2 420	1 968	2 420	1 968	-	-

	Ուսուցիչների թվաքանակը		այդ թվում՝			
	ընդամենը	նրանցից՝ կանայք	պետական դպրոցների		ոչ պետական դպրոցների	
			ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
Վայոց ձոր	1 084	807	1 075	804	9	3
Տավուշ	2 071	1 700	2 071	1 700	-	-
Ընդամենը ՀՀ	**40 830**	**34 405**	**39 566**	**33 369**	**1 264**	**1 036**

155. 2013-2014թթ. մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է 2347 մանկավարժ: Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտն ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես, 2013թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում զուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում կազմել է 99.7%: Այնուամենայնիվ, մարզի բնակչության սակավ ապահովվածության պատճառով կրթական ծառայությունների մատչելիությունը դեռևս խնդրահարույց է: Ծնողների անվճարունակության պատճառով երբեմն դասագրքերի նույն համակազմից օգտվում է մի քանի աշակերտ, չեն բավականացնում գրենական պիտույքները: Աշակերտները միշտ չէ, որ կարողանում են օգտվել հասարակական տրանսպորտից և հաճախել արտադպրոցական հաստատություններ, որոնք հիմնականում նախկին վարչական կենտրոններում են: Արագածոտնի մարզում 2008թ.-ին մեկ աշակերտին ընկնող տարեկան միջին գումարը 176.100 դրամ է, որը գրեթե 1.6 անգամ ավելի է 2006 թ. նույն ցուցանիշից:

156. ՀՀ մարզերը մանկավարժական կադրերով համալրելու նպատակով փոխհատուցում է տրվում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցներ գործուղվող մանկավարժներին՝ ճանապարհածախսի, բնակարանի վարձի և կեցության ծախսերի համար: Մարզի դպրոցական շենքերը և շինությունները գտնվում են ՀՀ կառավարության և մարզպետարանի ուշադրության կենտրոնում և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալն ավելացվում է: Դպրոցների մարզադահլիճները և խաղահրապարակները նույնպես կարիք ունեն վերանորոգման: 2010-2014թթ. իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք անշուշտ դրական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի վրա: Մարզի 37 դպրոց ստանում է լոկալ ջեռուցում, որից 9-ը հեղուկ վառելիքով, 28-ը բնական գազով: 81 դպրոց ջեռուցվում է էլեկտրականությամբ, հեղուկ վառելիքով, կան դպրոցներ, որոնք ջեռուցվում են և՝ էլեկտրականությամբ, և՝ հեղուկ վառելիքով/: Ջեռուցման խնդիրը

շարունակվում է լուծում ստանալ դպրոցաշինության ծրագրերի իրականացման արդյունքում: 2014թ. պետական միջոցների հաշվին վերանորոգվել է Եղնիկի հիմնական, Դավթաշենի, Ձորագլխի, Վերին Բազմաբերդի միջնակարգ դպրոցները, որոնք սեպտեմբերի 1-ն իրենց հյուրընկալ դռները կբացեն աշակերտների առջև: 2014թ վերանորոգվել է աղետի հետևանքով վնասված Բազմաղբյուրի Ն. Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոցի տանիքը: 2013 թվականին Փարպիի միջնակարգ դպրոցում պետական միջոցների հաշվին շինարարական աշխատանքներ է կատարվել, որը շարունակվում է 2014 թվականին: 2014 թվականի սեպտեմբերի 1-ին կգործի Լեռնապարի միջնակարգ դպրոցի նոր շենքը: 2014-2015 ուստարում մարզի 38 դպրոց ներգրավելու են ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի կողմից տրամադրվող ,,Դպրոցական տաք սնունդ,, ծրագրի մեջ: 2014-2015 ուսումնական տարում ,,Դպրոցական տաք սնունդ,, ծրագրից կարող են օգտվել ավելի մեծ թվով դպրոցներ, որոնք կունենան անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմաններ:

157. Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդում գույքագրված գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության գրեթե կեսը հնամաշ է, իսկ 20%-ն օգտագործման պիտանի չէ՝ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ: Մարզպետարանի կատարած կարիքի գնահատման արդյունքների համաձայն, այսօր մարզի դպրոցներին անհրաժեշտ են.

1) 5200 աշակերտական սեղան-նստարան,

2) 11700 աթոռ,

3) 1100 գրատախտակ,

4) 1200 գրապահարան,

5) 280 համակարգչային սեղան:

158. Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը պայմանավորված է ոչ միայն նյութատեխնիկական բազայի առկայությամբ, այլև մանկավարժների պատրաստվածությամբ: Մարզի կրթության համակարգի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին: Այս առումով կարևորվում է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը:

159. Մարզի կրթական ոլորտում գործունեություն են ծավալում նաև ՀԿ-ները: Ստեղծվել են համայնքային ռեսուրս կենտրոններ, որտեղ, համայնք-դպրոց կապի ամրապնդման նպատակով, իրականացվում են ուսուցողական ծրագրեր: Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Մարզի 119 հանրակրթական և 1 հատուկ դպրոցները ապահովված են ինտերնետային կապով, 84 դպրոցներում գործում են համակարգչային դասարաններ: Ներկայումս դպրոցներում կա 800-ից անելի

համակարգիչ: 2014թ. ապրիլ ամսից ՀՀ Արագածոտնի մարզի բոլոր հանրակրթական դպրոցները ընդգրկվել են dasaran.am կայքում: Բավականին լուրջ աշխատանքներ են տարվում մարզում գործող հանրակրթական դպրոցների հետ, իրականացվում են դասավանդման և ուսումնառության որակի բարելավման, մասնագիտական կարիքներին ուղղված վերապատրաստման դասընթացներ, նպաստում են հանրակրթության բնագավառում համակարգի զարգացան հեռանկարների և գերակա ուղղությունների միջոցառումների մշակմանը, ուսումնասիրությունների միջոցով բացահայտում, վերլուծում են կրթական հիմնախնդիրը և կարիքները, նպաստում են մանկավարժների մասնագիտական վարկանիշի բարձրացմանը, աջակում են կառավարման հմտությունների զարգացմանը ուղղված դպրոցների վարչական անձնակազմի վերապատրաստումների իրականացմանը, խթանում դպրոցական նորարարությունների տարածման և իրականացման գործընթացին:

160. Հատուկ ընդհանուր կրթության բնագավառում պետական ռազմավարությունը նպատակաուղղված է հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը և այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը: Մարզում գործում է 1 հատուկ դպրոց, որտեղ սովորում են հիմնականում մտավոր զարգացման շեղումներ ունեցող երեխաներ: Հանրակրթական դպրոցներում հատուկ ուսուցման կարիք ունեցող երեխաներին ներառելու համար ներկայումս պայմաններ և հնարավորություններ չկան: Մարզկենտրոնից համայնքների հեռավորության և ընտանիքների սոցիալական ոչ բարվոք վիճակի պատճառով այն ներկայումս լուրջ խնդիր է: Հանրակրթական դպրոցները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հասանելի դարձնելու նպատակով դպրոցների նախահաշիվներում կնախատեսվեն թեքահարթակների կառուցում:

161. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն-2012/2013 ուսումնական տարում հանրապետությունում գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագիր իրականացնող 43 պետական ուսումնական հաստատություններ, որոնցից 25-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և 18-ը՝ միջին մասնագիտական: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների թվաքանակը կազմել է 6853: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 92.1%-ը, իսկ վճարովի՝ 7.9%-ը: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 4.1%: ՀՀ Արագածոտնի մարզում գործում են Աշտարակի և Արագածի նախնական (արհեստագործական) և միջին

մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնցում սովորում են 258 և աշխատում են 17 մանկավարժներ:

Աղյուսակ 6.6. Ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակն անվճար և վճարովի ուսուցման համակարգերում ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2012/2013 ուս. տարի

մարդ

	Ընդունվածների թվաքանակը		այդ թվում՝			
			անվճար		վճարովի	
	ընդա-մենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	1 108	351	927	255	181	96
Արագածոտն	**50**	**3**	**50**	**3**	**-**	**-**
Արարատ	51	-	51	-	-	-
Արմավիր	122	34	122	34	-	-
Գեղարքունիք	210	30	210	30	-	-
Լոռի	261	44	249	44	12	-
Կոտայք	317	111	317	111	-	-
Շիրակ	650	228	631	223	19	5
Սյունիք	163	68	150	55	13	13
Վայոց ձոր	62	22	62	22	-	-
Տավուշ	117	17	117	17	-	-
Ընդամենը ՀՀ	**3 111**	**908**	**2 886**	**794**	**225**	**114**

162. Միջին մասնագիտական կրթություն Հանրապետության 99 միջին մասնագիտական պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ) 2012/2013 ուսումնական տարում ընդունվել է 10399, սովորել՝ 29307, ավարտել՝ 7933 մարդ: Ուսումնառությունն իրականացվել է հիմնական և միջնակարգ կրթության հիմքի վրա: Ուսանողների թվաքանակը կազմել է 6853: Անվճար ուսուցման համակարգում սովորել է ուսանողների 92.1%-ը, իսկ վճարովի՝ 7.9%-ը: Ուսանողների համախառն ընդգրկվածության ցուցանիշը կազմել է 11.0%: Գործում է Թալինի պետական քոլեջը որտեղ սովորում են 211 ուսանող և աշխատում են 30 մանկավարժներ: 2015-2018թթ. ընթացքում նախատեսվում է վերանայել ՀՀ Արագածոտնի մարզի ուսումնական հաստատություններում ուսուցանվող մասնագիտությունները և անհրաժեշտության դեպքում ներդնել նոր մասնագիտություններ, հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը, միաժամանակ դադարեցնելով ուսուցումն այն մասնագիտություններով, որոնք

աշխատաշուկայում պահանջարկ չունեն: Մարզում ներառական կրթության կարիք ունեցող և համապատասխան վկայագրեր ունեցող երեխաների ուսուցումը կազմակերպվում է Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցում: Նախատեսվում է 2015 թվականին ներառական կրթության կարիք ունեցող երեխաների հետ իրականացնել համապատասխան կրթություն Աշտարակի Պ. Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական և Մաստարայի միջնակարգ դպրոցներում:

Աղյուսակ 6.7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների թվաքանակի շարժն ըստ ուսուցման ձևի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2012/2013 ուս. տարի

	ՄՄՈՒՀ-ների քանակը, միավոր	Ընդունվել են, մարդ		Ուսանողների թվաքանակը, մարդ		Ավարտել են 2012թ., մարդ	
		ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
ք.Երևան	35	5 753	3 260	16 579	9 237	4 164	2 803
Արագածոտն	**1**	**96**	**33**	**166**	**58**	**56**	**15**
Արարատ	6	529	295	1 402	650	349	171
Արմավիր	5	507	275	1 480	776	479	299
Գեղարքունիք	8	595	244	1 442	678	482	272
Լոռի	10	727	422	2 217	1 241	542	328
Կոտայք	6	511	216	1 414	560	364	212
Շիրակ	12	858	437	2 436	1 263	760	510
Սյունիք	7	444	251	1 187	599	306	197
Վայոց ձոր	3	112	67	259	157	104	55
Տավուշ	6	267	130	725	276	327	185
Ընդամենը ՀՀ	**99**	**10 399**	**5 630**	**29 307**	**15 495**	**7 933**	**5 047**

6.1.2. Կրթության ոլորտի ռազմավարությունը

163. Ներկայումս կրթության ոլորտում առաջնահերթ է համարվում նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման, հանրակրթական համակարգի արդյունավետության բարձրացման, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնաձրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավման,

մասնագիտական կրթության բովանդակության արդիականացման և որակի բարձրացման ռազմավարական ուղղությունները և համապատասխան միջոցառումները: Այդ միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է նկատի ունենալ մարզային առանձնահատկությունները: Ելնելով Արագածոտնի մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից, կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Հատկապես ուշադրություն է դարձվելու հանրակրթության համակարգում կատարվող բարեփոխումներին, որոնք նպատակաուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ինչպես նաև 12-ամյա կրթության, ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի: Անհրաժեշտ է նաև իրականացնել համակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթության մեջ ուղղված համապատասխան միջոցառումներ: Կարևոր պայման է դպրոցներում համակարգչային կենտրոնների ստեղծումը: Դրա միջոցով ակնկալվում է դպրոցը վերափոխել ինտերնետային կապով ապահովված համակարգչային, հեռահաղորդակցման, կրթական համայնքային կենտրոնի՝ ամրագրելով տեղեկատվություն ստացող և փոխանակող, մշակութային և կրթական բազմապիսի ծառայություններ մատուցող, ինչպես նաև համայնք-դպրոց շարունակական կապի ամրապնդման հնարավորությունները: Մարզի կրթության ոլորտի զարգացման առումով չափազանց կարևորվում է նաև նախադպրոցական կրթության համակարգի կատարելագործումը, այլընտրանքային ծառայությունների մշակումը և մատուցումը: Ստորև ներկայացվում են կրթության ոլորտի զարգացման ռազմավարական ուղղությունները /տես Գծապատկեր 4/:

Գծապատկեր 2.Կրթության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները



164.Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը- Հայաստանի կրթության զարգացման հեռանկարը դիտարկվում է հետևյալ հիմնական նպատակադրումների համատեքստում.

1) անկախ պետականության ամրապնդում և քաղաքացիական հասարակության զարգացում,
2) աղքատության հաղթահարում և բարեկեցության ապահովում,
3) կայուն տնտեսական աճի և մրցունակության ապահովում,

165. Հայաստանի կրթության համակարգի ներկա փուլի ռազմավարական նպատակն է՝ ընդունելով ժամանակակից մարտահրավերները, արձանագրել հիմնախնդիրների

լուծման և առաջընթացի այնպիսի արդյունքներ, որոնք կվերականգնեն կրթության և գիտելիքի վարկանիշը և կամրապնդեն Հայաստանի՝ որպես գիտակրթական տարածքի հեղինակությունը: Կրթության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր քաղաքացի իր հակումներին և ընդունակություններին համապատասխան ստանա որակյալ կրթություն և հանրապետության տնտեսությունը ապահովվի մրցունակ մասնագետ-ներով: Պետությունը յուրաքանչյուր քաղաքացու համար ստեղծելու է կրթության հնարավորություն՝ անկախ նրա սոցիալական վիճակից և տարիքից: ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագրի (ՀՕ-246-Ն օրենք) համաձայն՝ մինչև 2015 թվականը կրթության որոլտի զարգացումն ապահովելու նպատակով սահմանվել են հետևյալ նպատակները՝

1) բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուր ոք ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան,
2) բարելավել կրթության որակը՝ այն համապատասխանեցնելով միջազգային ընդունված չափանիշներին,
3) ապահովել պետական բյուջեից կրթությանը հատկացվող միջոցների շարունակական աճ և դրանց արդյունավետ օգտագործման մեխանիզմներ:

166. Գերակայությունները. Կրթության զարգացման գլխավոր նպատակների իրականացումը պահանջում է էականորեն բարձրացնել կրթության կառավարման համակարգի արդյունավետությունը, զարգացնել կառավարման օղակների և մանկավարժների մասնագիտական ներուժը, արդիականացնել կրթության բովանդակությունը՝ ապահովելով դրա համապատասխանությունը արդի պահանջներին: Միաժամանակ, հաջողության կարևոր նախապայման են միջոցների օգտագործման նպատակայնության բարձրացումը և նոր ռեսուրսների բացահայտումն ու ներգրավումը: Կրթության ոլորտի գերակայություն է համարվում հանրակրթությունը, որին էլ առաջիկա տարիներին կուղղվի կրթության բնագավառին նախատեսվող պետական հատկացումների գերակշիռ մասը:

167. ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթության ոլորտի գերակայություններն են.

1) կրթության բովանդակային բարեփոխումը՝ ըստ առարկայական չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների, արտաքին գնահատման և վարկանիշավորման արդյունքների,
2) կրթության որակի նկատմամբ արդյունավետ վերահսկողության մեխանիզմների մշակումը,

3) առանձին գործող ավագ դպրոցների կայացումն ու հաստատությունների շենքային պայմանների բարելավումը, ուսումնանյութական բազայի հարստացումն ու մանկավարժական կադրերի մասնագիտական կատարելագործումը,
4) 12-ամյա պարտադիր կրթության անցումն ապահովող նյութերի և նորմատիվային փաստաթղթերի ներդնումը,
5) տարրական դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացումը և հավասար մեկնարկային հնարավորությունների ստեղծումը՝ նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածության մեծացման միջոցով,
6) կրթության մատչելիության ապահովումը, հատկապես խոցելի խմբերի երեխաների համար, այդ թվում՝ նախադպրոցական կրթության,
7) ազգային փոքրամասնությունների սովորողների համար իրենց մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորության ընդլայնումը,
8) աշխատավարձերի բարձրացումը, մանկավարժական կադրերի ատեստավորման համակարգի գործարկման միջոցով նրանց մասնագիտական առաջընթացի հնարավորությունների ստեղծումը,
9) ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության ընդլայնումը, այդ թվում նաև առաջին դասարանցիներին ուսումնական համակարգիչներով ապահովումն ու ինտերնետի հասանելիության ապահովումը,
10) կրթական հաստատությունների ուսումնական շենքերով ապահովվածության, դրանց հիմնանորոգման, կաթսայատների միջոցով ջեռուցման կազմակերպման աշխատանքների շարունակական իրականացումը,
11) հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգային բարեփոխման ծրագրի իրականացումը,
12) հանրակրթության համակարգում կրեդիտային (չափանիշային) համակարգի ներդրումը,
13) հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգի ներդրումը:

168. ՀՀ Արագածոտնի մարզի Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում գերակայություններն են՝

1) մասնագիտական կրթության և ուսուցման հաստատությունների ինտեգրումը կրթության գլոբալ համակարգերին,

2) մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) որակավորումների համակարգի համապատասխանեցումը որակավորումների եվրոպական շրջանակին,
3) կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդնումը,
4) Կոպենհագենյան հռչակագրին միանալը,
5) մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ստեղծումը,
6) սոցիալական գործընկերության և երկխոսության խթանումը,
7) ՄԿՈՒ հաստատությունների արդյունավետ ցանցի ձևավորումը,
8) նախնական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով ՀՀ տնտեսության գերակայություններից, և մասնագետների պահանջարկի ձևավորման արդյունավետ համակարգի նեդրումը,
9) ՄԿՈՒ հաստատությունների ուսումնանյութական բազայի բարելավել,
10) հաստատությունների հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովումը:

169. Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրեր. 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում կրթության ոլորտում իրականացվող ծրագրերը կնպաստեն տարածքային զարգացման ընդհանուր նպատակների և գերակայությունների իրագործմանը: 2015-2018թթ. շարունակվելու են հանրապետության ողջ տարածքում համընդհանուր բնույթ կրող կրթական ծրագրերը, մասնավորապես՝ տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, ինչպես նաև արտադպրոցական դաստիարակության ծրագրերը: Նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով 2014 թվականից ՀՀ պետական բյուջեից նախադպրոցական կրթության գծով համապատասխան միջոցներ կհատկացվեն ՀՀ բոլոր մարզերին: «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով Համաշխարհային բանկի աջակցությամբ կմեկնարկի նոր՝ «Կրթության բարելավում» ծրագիրը: Նոր վարկային ծրագրի՝ «Հանրակրթության որակի բարելավում» ենթածրագրի բաղադրիչներն են՝

1) **դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում,**
2) **աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը,**

3) **հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների հզորացումը՝ ապահովելով սովորողների ուսման և կրթական վերջնարդյունքի մշտադիտարկումը,**
4) **աջակցություն կրթության որակի բարելավմանը՝ կրթակարգի և չափորոշիչների վերանայման միջոցով:**

170.Այս ծրագրի շրջանակներում կշարունակվեն ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայությունների ներդրման միկրոծրագրերը՝ դպրոցին երե-խաների պատրաստվածության մակարդակի բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման ուղղությամբ: ՀՀ մարզերից ստացված հայտերի հիման վրա, կշարունակվի գործուղվող մանկավարժներին ճանապարհածախսի, բնակարանի վարձի և կեցության ծախսերի համար փոխհատուցումների տրամադրման ծրագիրը: 2015-2017 թվականներին շարունակվելու են համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների գծով պետական բյուջեից տրվող հատկացումները: Ժամանակակից կրթական համակարգերում ՏՀՏ-ն անչափ գործունակ միջոց է, որն օգնում է աշակերտներին խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների ավելի ընդգրկուն ընկալման, ստանալ ավելի բազմազան և շատ դեպքերում անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան տեղեկատվություն, կիրառել ժամանակակից ինքնագնահատման և ինտերակտիվ ուսուցման մեթոդներ: Եվ որպես նոր նախաձեռնություն և ՏՀՏ-ի կիրառությունն ուսումնական գործընթացում ընդլայնելու նպատակով նախատեսվում է իրականացնել «Յուրաքանչյուր առաջին դասարանի աշակերտին համակարգչի անվճար տրամադրում» ծրագիրը:

171. Հանրակրթական դպրոցի դասավանդվող առարկաների ցանկում նախատեսվում է ավելացնել «Ազգային երգ ու պար» առարկան: Նախաձեռնության նպատակն է նպաստել հանրակրթության համակարգում սովորողների կողմից ազգային մշակույթի հիմունքների ընկալմանն ու յուրացմանը, ազգային պարերի, ազգագրական ինքնագիտակցության ձևավորմանը, անհատի մտավոր, հոգևոր, ստեղծագործական անհատականության զարգացման համար նախադրյալների ապահովմանը:

172. Միաժամանակ նախատեսվում է ՀՀ բոլոր դպրոցներում ստեղծել ռոբոտոտեխնիկայի խմբակներ: Այս նախաձեռնության նպատակն է նպաստել աշակերտների մոտ ժամանակակից բարձր տեխնոլոգիաների, մասնավորապես ռոբոտոտեխնիկայի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, վաղ տարիքից ճարտարագիտական մտածելակերպի զարգացմանը, դեպի բարձրագույն կրթություն նպատակադրված է որակյալ ուսանողների մուտք գործելուն: Խմբակներում

աշակերտները կսովորեն նախագծել, հավաքել ծրագրավորել ռոբոտներ: խմբակային աշխատանքը թույլ կտա աշակերտներին ուսումնասիրել մեխանիկայի, էլեկտրոնիկայի, ծրագրավորման և ռոբոտոտեխնիկայի հիմունքները: Աշակերտների մոտ կզարգանա ճարտարագիտական և համակարգային մտածողությունը, թիմային աշխատաոճն ու համագործակցության ձգտումը:

173. Շարունակվելու են նաև ուսումնական հաստատությունների հիմնանորոգման աշխատանքները: Կշարունակվեն մինչ այժմ իրականացվող ծրագրերն ու միջոցառումները նաև արտադպրոցական դաստիարակության ոլորտում: Կկազմակերպվի դպրոցականների ամառային հանգիստը՝ ՀՀ տարբեր մարզերի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար, ինչպես նաև նոր գույքով կհամալրվեն հանրակրթական դպրոցների ռազմագիտության կաբինետները: Մարզի կրթության ոլորտի զարգացման տեսանկյունից չափազանց կարևորվում է նաև կրթության ոլորտում միջազգային, բարեգործական և հասարակական կազմակերպությունների աջակցությունը՝ ուղղված մարզի քաղաքային և գյուղական համայնքների կրթական հաստատությունների զարգացմանը:

174. Արագածոտնի մարզում 2015-2017 թվականների ՄԺԾԾ կողմնորոշիչ չափաքանակների նախատեսվել է իրականացնել «Կրթական օբյեկտների հիմնանորոգում», «Կրթական օբյեկտների շինարարություն» և «Միջին մասնագիտական կրթության օբյեկտների հիմնանորոգում» ծրագրերով շինարարական աշխատանքներ: ՀՀ Արագածոտնի մարզի կրթության ոլորտի ռազմավարության ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 3.575.340.0 հազ.դրամ (տես՝ հավելված 6.1):

6.1.3. Կրթության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Արագածոտնի մարզում	1. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում 2. Աշակերտ - ուսուցիչ հարաբերակցությունը հանրակրթության բնագավառում 3. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը 4. 3-5 տարեկան երեխաների նախադպրոցական	Կրթության համար պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել համաձայն ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշներ: Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:

	հաստատություններում ընդգրկվածության տեսակարար կշիռն այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում, % 5. Համախառն ընդգրկվածությունը տարրական դպրոցում,%, 6.Աշակերտների թվաքանակը մեկ համակարգչի հաշվով, 7.Աշխատանքի տեղավորված նախնական(արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ,%	
1. Դպրոցների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում		
1.1. Դպրոցական շենքերի կառուցում և վերանորոգում 1.2. Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների նորոգում և հիմնանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	Նոր կառուցված դպրոցների թիվը Բարեկարգված մարզադահլիճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը, % Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտներիթիվը, %	Դպրոցական շենքերի նորոգման և նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով ՀՀ կառավարության հատկացվող ֆինանսական միջոցները տարեցտարի ավելանում են:
1.3. .Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը, %	Նորացված գույք ունեցող դպրոցների թիվը	
1.4. Լաբորատոր սարքավորումների և նյութերի, դիդակտիկ պարագաների ձեռքբերում, գրադարանային ֆոնդի համալրում և թարմացում	Դպրոցական գույք ստացած դպրոցների թիվը Համալրված և արդիականացված լաբորատորիաներ ունեցող դպրոցների թիվը Նորացված գրադարաններ ունեցող դպրոցների թիվը	
1.5. Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով	Աշակերտների թվաքանակը մեկ համակարգչի հաշվով Ինտերնետային կապով	

ապահովում	ապահովված հանրակրթական դպրոցների թիվը դպրոցների ընդհանուր թվի նկատմամբ, %>>,	
1.6. Դպրոցական արհեստանոցների վերազինում (հաստոցներ, գործիքներ և նյութեր)	Վերազինված արհեստանոց ունեցող դպրոցների թիվը	
1.7 . Դպրոցական բուֆետ-ճաշարանների ստեղծում և համապատասխան գույքով ապահովում	Դպրոցական սննդի ծրագիր իրականացնող դպրոցների թիվը	
2. Ուսուցչական անձնակազմի որակավորման բարձրացում		
2.1. Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում		
2.2. Ուսուցիչների համար համակարգչային դասընթացի կազմակերպում՝ դասապրոցեսում համակարգչային տեխնոլոգիաներ կիրառելու նպատակով	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվը	Ուսուցիչների վերապատրաստումը կառավարության ուշադրության կենտրոնում է և իրականացվում է ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակում:
2.3. Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում	Տարակարգ ստացած ուսուցիչների տեսակարար կշիռը ատեստավորված ուսուցիչների ընդհանուր թվաքանակի մեջ,%	Ուսուցիչների վերապատրաստումը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է, այդ գործընթացին աջակցում է նաև ՀԲ «Կրթության բարելավում» վարկային ծրագիրը
3. Դպրոցների ինքնակառավարման կարողությունների բարձրացում		
3.1. Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների, այդ թվում՝ արտաբյուջետային աղբյուրների	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ղեկավարների թիվը	Դպրոցների ղեկավար կադրերի վերապատրաստումը կառավարության

ներգրավման կարողությունների զարգացում	Արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը դպրոցների ընդհանուր բյուջեում	ուշադրության կենտրոնում է և իրականացվում է ՀԲ «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակում:
3.3. Սովորողների նախաձեռնողականության ակտիվության բարձրացում՝ ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալի, դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի, մանագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալի վերապատրաստման միջոցով	Դպրոցական խորհուրդներում աշակերտական խորհրդի ներկայացուցիչների թիվը, Աշակերտական խորհուրդների կողմից իրականացված նախաձեռնությունների թիվը, Վերապատրաստման դասընթացների մասնակցած տնօրենի տեղակալների և կազմակերպիչների թիվը,	Դպրոցների ղեկավար կադրերի վերապատրաստումը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է, տնօրենների վերապատրաստումն իրականացվում է հավաստագրման նպատակով՝ մրցույթով անցած վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների կողմից
4. Ներառական կրթության համակարգի զարգացում		
4. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծում և զարգացում	Կրթական հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների/աշակերտների թիվը	Հանրակրթական դպրոցներում կառուցված թեքահարթակների թիվը
5. Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում		
5.1. Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում	Վերանորոգված և նոր գործող մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների թիվը	
5.2. Մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում	Մարզային/համայնքային մարզամշակութային միջոցառումների թիվը Հանրապետական և միջազգային մրցույթներում հաղթող սաների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ	

	Ցուցահանդեսների այցելուների քանակը տարեկան կտրվածքով Թատերական ներկայացումների քանակը Թատերական միջոցառումների մասնակիցների քանակը	
6. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում		
6.1. Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված մանկապարտեզների թիվը	Պետությունը հետևողական է <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի կիրարկման, նախադպրոցական կրթության ոլորտի բարեփոխումների ծրագրի իրականացման հարցում:
6.2. Նախադպրոցական հաստատությունների նյութատեխնիկական բազայի թարմացում և կրթական միջավայրի բարելավում	Թարմացված ուսումնական և նյութատեխնիկական բազա ունեցող մանկապարտեզների թիվը	
6.3. Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների թիվը	
6.4. Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում	Նախադպրոցական կրթությունում 5 տարեկանների զուտ ընդգրկվածության գործակիցը, %, Նախադպրոցական այլընտրանքային ծառայություններում ընդգրկված երեխաների թիվը, Գործող նախադպրոցական հաստատությունների թիվը, Նոր ներդրված նախադպրոցական հաստատությունների թիվը, 3-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություն-ներում (հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ գյուղերի) ընդգրկվածության %	

6.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

6.2.1. Մշակույթ

175. Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Արագածոտնի մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները հիմնականում վերաբերում են գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանմանն ու զարգացմանը: Բնագավառում սրությամբ հառնել է նաև մասնագետ կադրերի սակավության և կադրերի վերապատրաստման խնդիրը: Մշակույթի ոլորտում մարզերում ՀՀ կառավարության կողմից իրականացվող համապետական ծրագրերը պայմանավորված են «ՀՀ կառավարության 2008-2012 թթ. գործունեության միջոցառումների ծրագրով», որի «Մշակույթի համաչափ զարգացում» կետի դրույթներով ՀՀ մարզերում մշակույթի զարգացումը դիտարկվում է որպես գործունեության հիմնական ուղղություն:

6.2.1.1 Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների գործունեություն

176. Դպրոցների և կենտրոնների քանակական բաշխվածություն-2013-2014թթ. ՀՀ Արագածոտնի մարզում գործում է **12** գեղարվեստական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն, այդ թվում՝ **5** երաժշտական, **4** արվեստի, **2** գեղարվեստի դպրոց, **1** պարարվեստի դպրոց (**1066** աշակերտ, **111** մանկավարժ): ՀՀ Արագածոտնի մարզի երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում դասավանդվում են հետևյալ առարկաները՝ դաշնամուր, ազգային, լարային, փողային նվագարաններ, հարվածային գործիքներ, կերպարվեստ, դեկորատիվ-կիրառական արվեստ, գրաֆիկա, երգեցողություն, պարարվեստ, դիզայն: Մարզում գործում է 3 հենակետային դպրոց՝ ք. Աշտարակի Ա. Այվազյանի անվան երաժշտական, ք. Ապարանի արվեստի և ք. Թալինի գեղարվեստի դպրոցները: Աշտարակ քաղաքի Ա. Այվազյանի անվան երաժշտական դպրոցը 2012 թվականին տեղափոխվել է նոր շենք և ունի գերազանց շենքային պայմաններ: Թալինի գեղարվեստի դպրոցը 2013թ. Հայաստանի սոցներդրումների հիմնադրամի շրջանակներում վերակառուցվում է: Դպրոցը ունի գույքի անհրաժեշտություն: Համապատասխան գույքով համալրումից հետո աշնանը տեղի կունենա դպրոցի հանդիսավոր բացումը: Մարզի հենակետային դպրոցներում մանկավարժական կոլեկտիվի ներուժը համապատասխանում է հենակետային դպրոցների պահանջներին: ՀՀ մշակույթի նախարարությունը 2012-2013 թվականներին

իրականացրել է մի շարք կրթական ծրագրեր, որոնց մասնակցել են մարզի գեղարվեստական կրթությունն իրականացնող ուսումնական հաստատությունները: 2012-2013թթ. Ուսումնա-մեթոդական օժանդակություն, վարպետության դասեր է ստացել **2056** աշակերտ և **548** մանկավարժ, վերապատրաստման դասալսումների է մասնակցել **105** մանկավարժ, ինչպես նաև «Գեղարվեստական կրթության միջազգային շաբաթ» ծրագրի շրջանակներում 2014թ. գրական-երաժշտական ցերեկույթ «Կոմիտասական» միջոցառմանը մասնակցել է մարզի երաժշտական և հանրակրթական դպրոցների թվով 100 սան: «Երաժշտական և արվեստի դպրոցների ազգային լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի շրջանակներում 2012-2013 թվականներին ուսման վարձավճարի փոխհատուցում է ստացել մարզի բոլոր երաժշտական և արվեստի՝ թվով **8** համայնքային դպրոցների **84** աշակերտներ (ազգային նվագարաններ՝ **73**, լարային՝ **3,** փողային՝ **8**)»:

Աղյուսակ 6.8. Դպրոցների և կենտրոնների քանակն ըստ տեսակի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2013/2014 ուս. տարի

միավոր

	Դպրոցների և կենտրոնների քանակը	այդ թվում՝			
		երաժշտական	արվեստի	գեղարվեստի	մանկապատա-նեկան ստեղծա-գործական
ք.Երևան	49	16	10	1	22
Արագածոտն	**11**	**8**	**1**	**1**	**1**
Արարատ	22	11	4	3	4
Արմավիր	14	9	-	5	-
Գեղարքունիք	17	8	4	3	2
Լոռի	22	8	10	3	1
Կոտայք	24	8	12	1	3
Շիրակ	27	13	11	2	1
Սյունիք	17	8	5	2	2
Վայոց ձոր	7	1	4	1	1
Տավուշ	19	12	5	2	-
Ընդամենը ՀՀ	**226**	**97**	**67**	**25**	**37**

177. Սակայն մշակույթի օջախների շենքային և նյութատեխնիկական բազաները բավարար չեն: Դա բացասական է անդրադառնում ինչպես մշակույթի ոլորտի գործունեության, այնպես էլ դրանց մասսայականության ապահովման վրա: Մշակույթի շատ օջախներ միջոցառում կազմակերպելու հնարավորություն ընդհանրապես չունեն: Ազգային արժեք համարվող մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգությունների պահպանման, տարածման և զարգացման ուղղությամբ մարզի հանրակրթական դպրոցներում, մշակույթի տներում գործում են արտադասարանական և արտադպրոցական խմբակներ՝ խեցեգործության, փայտի փորագրության, գոբելենի, տակառագործության, ոսկերչության, արծաթյա զարդերի պատրաստման, գորգագործության, ժանյակագործության, քարերի մշակման:

178. Այնուամենայնիվ, մարզում համեմատաբար շատ մշակութային միջոցառումներ են իրականանում, որոնցից մի քանիսը հանրապետական նշանակություն ունեն: 2013-2014 ուսումնական տարում անցկացվել է մի շարք միջոցառումներ՝ ,,Մայրության և գեղեցկության տոն,, ,, Ոսկե աշուն,, , ,,Ուսուցչի օր,, , Սուրբ Ծննդյան տոներին և Ամանորին նվիրված միջոցառում, ՀՀ անկախության 23-րդ տարեդարձին նվիրված մեծ միջոցառում, 2014թ. ընտանիքի տարի հայտարարելու և ընտանիքի տարվա կապակցությամբ միջոցառումներ, Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 69-րդ և Շուշիի ազատագրման 22-րդ տարեդարձներին, ,,Թանգարանային հավաքածուների միջոցով են ստեղծվում կապեր խորագրով միջոցառումները, ,,Արագածոտնի մարզի պատմաճարտարապետական հուշարձանների պատմությունը,, թեմայով վիկտորինա-դասախոսություն, ՀՀ ԿԳՆ և ՌԴ-ի հետ համատեղ անցկացվել է <<Живая классика>> 7-րդ դասարանցիների ընթերցանության մրցույթ, ,,Մեր մեծերը,, ծրագրի շրջանակներում մարզի գրեթե բոլոր դպրոցներում, գրադարաններում, երաժշտական և արվեստի դպրոցներում անցկացվել են միջոցառումներ՝ նվիրված Գալուստ Գյուլբենկյանին /145-ամյակ/, Արշիլ Գորկուն /110-ամյակ/, Սիամանթոյին /136-ամյակ/, Կոմիտասին /145-ամյակ/ և Հովհաննես Թումանյանին /145-ամյակ/: Երևանի Խ.Աբովյանի անվան համալսարանում կայացած Կոմիտասին 145 ամյակին նվիրված փառատոնին Կարբիի Վ. Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցի եռաձայն երգչախումբը արժանացել է բարձր պարգևի, կազմակերպվել են Բարեկենդան, Ծաղկազարդի տոն, Զատիկ, Վարդավառ, Խաչվերած ազգային ծեսերը, ,,Հայոց ազգային բանակի կազմավորման 21-րդ տարեդարձ,, , ,,Սասնա ծռեր,, էպոսյան օր, ,,Էրգրի համի հիշողություն, ազգային ուտեստների,, , ,,Թանգարանը որպես ոչ ֆորմալ կրթության միջավայր,, ,,,Վերածնունդ,, , ,,Մինասի գույներով,, , մայիսի 28-ին, նշվում է Բաշ Ապարանի ճակատամարտի օրը, բազմաթիվ այլ միջոցառումներ, հանդիսություններ եւ տոնախմբություններ: 2003թ.-ից սկսած միջոցառումներին մասնակցում են նաև

հանրապետության այլ մարզերից հրավիրված կոլեկտիվներ և անհատներ: Մարզի բոլոր համայնքներում կազմակերպվում են Եղեռնին, Հաղթանակի օրվան, Բերքի տոնին, նշանավոր հոբելյաններին և մարդկանց նվիրված բազմաթիվ միջոցառումներ:

179. Կարևոր հիմնախնդիր է մնում նաև երկրագիտական թանգարանների կազմակերպումը, որոնք մեծ ճանաչողական արժեք կներկայացնեն, իրենց կգրավեն զբոսաշրջիկների, սերունդներին կփոխանցեն անցյալի ժառանգության ավանդույթները: Մարզն ունի նաև բանավոր ստեղծագործության հսկայական ավանդույթներ: Դարերի տնթացքում պատումները, վիպասքները, հայկական էպոսի տարբերակները սերնդե-սերունդ փոխանցվել են պատմվել իրենց նախաստեղծ ձևերով: Այսօր էլ գյուղերում այդ ավանդույթը պահպանվում է: Մարզի տարածքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Դա լուրջ նախադրյալ է մշակութային կյանքի աշխուժացման և տուրիզմի զարգացման համար: Մշակույթի տները, գրադարանները համայնքային ենթակայության կառույցներ են: Իսկ համայնքների ֆինանսական սուղ հնարավորությունների պայմաններում ոլորտը հայտնվում է բարձիթողի վիճակում: Բացառություն են կազմում, թերևս, Աշտարակ, Ապարան և Թալին քաղաքները, որոնք համեմատաբար բարվոք ֆինանսական վիճակում են գտնվում: Վերջին տարիների ընթացքում որոշ չափով ընդլայնվել է մշակութային միջոցառումների աշխարհագրությունը, վերականգնվել և ստեղծվել են այլ մարզերի և Երևան քաղաքի հետ մշակութային կապեր, ավելացել է միջոցառումների մասնակիցների քանակը: 2008թ.-ին զանգվածային միջոցառումներին մարզում ընդհանուր առմամբ մասնակցել է 15000 մարդ, իսկ 2009 թ-ին՝ 20000 մարդ: Սակայն մշակույթի օջախների նյութատեխնիկական բազան բավարար չէ ներկայումս բնագավառի առջև կանգնած խնդիրները լուծելու համար: Համայնքների մշակութային նշանակության շենքերում և շինություններում կատարվել են միայն անհետաձգելի նորոգումներ և հարդարումներ, նյութական բազան գրեթե չի նորացվել, նոր գույք չի ձեռք բերվել: Նախկինում գործող շատ գեղարվեստական խմբեր դադարեցրել են իրենց գործունեությունը:

180. Արագածոտնի մարզը հարուստ մշակութային ժառանգություն է ստացել: Մարզի ողջ տարածքում սփռված են պատմության ու մշակույթի հուշարձաններ, բոլոր համայնքներում գործել են մշակույթի օջախներ, ուր ուսումնասիրվել և հետագա սերունդներին է փոխանցվել այդ ժառանգությունը: Ծաղկել է ժողովրդական ստողծագործությունը: Լուրջ գործ է արվել հուշարձանների պահպանման ու բարեկարգման ուղղությամբ: Վերականգնվել են բազմաթիվ պատմության ու մշակույթի հուշարձաններ, կառուցվել են հուշահամալիրներ: Մարզում գործում է 5 պատմության և մշակույթի խոշոր գործիչների՝ գրող Պ.Պռոշյանի, ակադեմիկոս

կենսաբան-ֆիզիկոս Ն.Սիսակյանի, ակադեմիկոս-լեզվաբան Գր.Ղափանցյանի, ԳԱԱ բազմամյա նախագահ, ակադեմիկոս Վ.Համբարձումյանի տուն-թանգարանները, Ապարանի երկրագիտական թանգարանը: Շուտով կբացվեն գրողներ Մ. Գալշոյանի և Վ.Պետրոսյանի տուն– թանգարանները: Օշականի Սբ. Մեսրոպ Մաշտոց եկեղեցուն կից գործում է դպրատունը, ուր ամեն տարի գիտաժողովներ են անց կացնում աշխարհի տարբեր ծայրերից ժամանած հայագետներ, կրոնագետներ, արվեստի ու գրականության խոշոր դեմքեր:

181. Գրադարաններ-ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն, 2009 թ. մարզում գործում է 111 գրադարան, որոնցից 1-ը՝ մարզային (կենտրոնական), 3-ը՝ քաղաքային, 1-ը՝ մանկական և 106-ը՝ գյուղական: Գրքաֆոնդը 798584 կտոր է: Մարզի գրադարանների շենքային պայմաններն բարվոք չեն, գրապահոցներում բացակայում են հավաքածուների պահպանությունն ապահովող տեխնիկական սարքավորումները: Դա հնարավորություն չի տալիս լիարժեք կազմակերպել հավաքածուների պահպանությունը և օգտագործումը: Գրադարանային ֆոնդն աղքատիկ է և հնամաշ: Գրադարաններից օգտվողների ընթերցողական պահանջը բավարարելու համար հավաքածուների համալրման նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել նոր գրականության: Գրադարանների վիճակի բարելավումը կնպաստի բնակչությանը մատուցվող գրադարանային-տեղեկատվական սպասարկման աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, տարածաշրջանի բնակչության՝ տեղեկույթի մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացմանը: Պարբերական հրատարակությունները գրեթե մատչելի չեն բնակչությանը: Մարզի համայնքային գրադարանների նյութատեխնիկական անկատար վիճակը խոչընդոտում է տնտեսական և կազմակերպական խնդիրների օպերատիվ և արդյունավետ լուծմանը: «Ինտերնետ» համացանցի բացակայությունընտարածաշրջանում արգելակում է համայնքների սոցիալ-տնտեսական զարգացումը: Արդյունքում կրճատվում է գիտության, կրթության և արտադրության վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, արգելակվում միասնական տեղեկատվական գարծընթացների ներգրավվումը, նվազում երկրի և տարածաշրջանի մրցունակության մակարդակը, խորանում տնտեսական ու սոցիալական անհավասարությունը, խաչընդոտներ ստեղծում բնակիչների և ամբողջ տարածաշրջանի զարգացման ճանապարհին: Համայնքային գրադարնների ընթերցասրահները հավուր պատշաճի կահավորված չեն, չկան հարմարավետ պայմաններ, ինչը չի նպաստում ընթերցանության նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը: Մարզի գրադարանային կադրերի պատրաստվածության որակը հետ է մնում ժամանակի պահանջներից: Թալինի քաղաքային գրադարանը 2013 թվականին ստացել է հանրայինի կարգավիճակ և «Նյութատեխնիկական բազայի

զարգացման ծրագրով վերազինվել է համակարգիչներով, բազմաֆունկցիոնալ տպիչով, պատճենահանման սարքով, համապատասխան կահույքով (գրապահարաններ, սեղաններ, աթոռներ, գրադարակներ, համակարգչային և սպասարկման սեղաններ, ցուցափեղկեր), ինչպես նաև համալրվել է նոր գրականությամբ և ապահովվել ինտերնետային կապով:

182. Պատմամշակութային հուշարձանների պահպանում-ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում հաշվառված է 1829 հուշարձան՝ 814 պահպանական միավորով, որից 1436-ը ընդգրկված է ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում: ՀՀ Արագածոտնի մարզում հաստատված է 510 հուշարձանի պահպանական գոտի: Մարզում է գտնվում «Ագարակ» պատմամշակութային արգելոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ 118.2 հեկտար տարածքով, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ագարակ և Ոսկեհատ գյուղական համայնքների վարչական տարածքներում:

183. Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանում-Այս ոլորտի պետական մշակութային քաղաքականությունը նպատակաուղղված է մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանն ու պաշտպանությանը, ՀՀ ազգային ավանդական ոչ նյութական ժառանգության /բանավոր ստեղծագործություններ և հմտություններ/ պահպանմանը, տարածմանն ու զարգացմանը՝ գործընթացին ՀՀ մարզերի ընդգրկվածության ապահովմամբ: Մարզն ազգագրական մեծ ավանդույթներ ունի: Թալինի և Աշտարակի տարածաշրջանների շատ բնակավայրեր Արևմտյան Հայաստանից գաղթածների սերունդներ են, որոնք պահպանել են ազգագրական ավանդույթները: Այդպիսի յուրաքանչյուր բնակավայրում նախկինում գործել են ազգագրական պարի, երգի, ասմունքի խմբեր» որոնք ամեն տարի մասնակցել են մարզում և երկրում կազմակերպվող փառատոններին և միջոցառումներին: Սակայն ներկայումս, կապված հանրապետության և բնակավայրերի ֆինանսական վիճակի հետ, դրանց գործունեությունը շատ բնակավայրերում դադարեցվել է: Առիթից-առիթ հավաքվում են Սասունիկի, Ուջանի, Ներքին և Վերին Բազմաբերդերի և մի քանի այլ գյուղերի խմբեր: Սակայն նրանց գործունեությունը չի կանոնակարգվում, խմբերը միջոցառումներից հետո դադարում են գործելուց: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ շատ մշակույթի տներ դրա համար անհրաժեշտ պայմաններ չունեն: Չկան նաև երաժշտական գործիքներ, համազգեստը մաշվել և շարքից դուրս է եկել:

Մարզի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման նպատակով ոչ նյութական մշակութային ժառանգության կրողների վերաբերյալ տեղեկատվական շտեմարանի ստեղծում, մարզի հանրակրթական դպրոցներում, տարբեր հասարակական կազմակերպություններում ազգագրական երգի ու պարի վարպետության դասընթացների կազմակերպում:

184. Արվեստ (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ, կերպարվեստ)- Այս ենթաոլորտի ռազմավարական նպատակն է թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի, կերպարվեստի պահպանումը, զարգացումը և տարածումը, թատերահամերգային կազմակերպությունների գործունեության ապահովումը, ժողովրդական ստեղծագործության և արհեստների պահպանությունը, ուսումնասիրումը, տարածումը, հասարակության ստեղծագործական ներուժի օգտագործման, վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը, խթանումը, տարածքային մշակութային համագործակցությունը և մշակութային կյանքի զարգացումը: Շենքային անբավարար պայմանների, ջեռուցման, օդափոխման համակարգերի բացակայության պատճառով վերջին տասնամյակում ընդհանուր առմամբ խաթարված է թատրոնների բնականոն գործունեությունը, և դրանց մեծ մասը ձմռանը գրեթե չի գործում:

185. Մարզի մշակույթի ոլորտի առջև կանգնած ամենահիմնական հիմնախնդիրը ֆինանսական միջոցների անբավարարությունն է, որի պատճառով մարզի շատ համայնքներում մշակույթի օջախները չեն գործում: Շատ համայնքներում նույնիսկ չեն պահվում մշակույթի հարցերով զբաղվող մասնագետներ: Փաստորեն, համայնքներում, հատկապես լեռնային և սահմանամերձ համայնքներում մարդկանց մշակույթի սպասարկման միակ հնարավորությունը մնացել է հեռուստատեսությունը: Կենդանի շփումներ արվեստի, գրականության, գիտության ներկայացուցիչների հետ շատ քիչ են կայանում, մշակույթի շատ նորություններ չեն հասնում տեղեր, ամբողջովին չի բավարարվում մարդկանց պահանջմունքը մշակույթի նկատմամբ:

186. Այսպիսով՝ Արագածոտնի մարզում մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակայություններն են.

1) մարզի մշակութային կյանքի զարգացում,

2) նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուների համալրում, պահպանություն, պաշտպանություն և հանրահռչակում,

3) տարածաշրջանում տեղեկատվայնացման անհավասարության հաղթահարում,

4) գրադարանային հավաքածուների շրջանառության աճ,

5) տեղեկատվական սպասարկման ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացում,

6) մշակութային կազմակերպությունների շենքերի ու շինությունների հիմնանորոգում,

7) տեղեկատվական մշակույթի՝ ընթերցանության, հայոց լեզվի, պատմության և մշակույթի նկատմամբ կայուն հետաքրքրության ձևավորում,

8) կազմակերպությունների շենքերի ու շինությունների հիմնանորոգում,

9) պատմական հուշարձանների պահպանություն, ամրակայում, նորոգում, վերականգնում, բարեկարգում և օգտագործում,

10) սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:

6.2.2. Երիտասարդության հարցեր

187. Մարզում կրթական և մարզամշակութային միջոցառումների համատեքստում կարևորվում է երիտասարդական քաղաքականության զարգացումը և դրա արդյունավետության բարձրացումը: Պետության քաղաքականությունն այս ոլորտում սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովումն է՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժը հասարակության շահերին առավել լիարժեք ծառայեցնելու համար: ՀՀ Արագածոտնի մարզում երիտասարդությունը կազմում է ընդհանուր բնակչության 42 տոկոսը: Մարզում պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, բարձրագույն և միջին մասնագիտական կրթական հաստատությունների, երիտասարդության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և մարմինների կողմից: Սակայն այդ խմբի հիմնախնդիրները շարունակում են անհանգստացնող մնալ:

188. Աշխատատեղերի բացակայությունը, տեղում վաստակելու հնարավորությունների սահմանափակությունը, բնակարանային անհարմար պայմանները, հաճախ՝ բնակարանների բացակայությունը ստիպում են երիտասարդության մեծ մասին՝ վաստակելու նպատակով արտերկրներ, հիմնականում՝ Ռուսաստանի Դաշնություն մեկնել: Դա իր հետ բերում է շատ բացասական հետևանքներ: Երիտասարդները չեն մասնակցում համայնքային կյանքին, օտարանում են այն հիմնախնդիրներից, որոնք կանգնած են համայնքի և նրա ողջ բնակչության համար: Պակաս կարևոր չէ այն, որ այդ ընտանիքների ողջ հոգսն ընկնում է տանը նմացած երեխաներ, կանանց ու ծերերի վրա, որոնք ունակ

չեն լուծել ողջ խնդիրները: Այդ պատճառով նույնիսկ սեփական հողերը տարիներ շարունակ մնում են անմշակ, վերածվում արոտավայրերի ու խոտհարքների: Պակաս կարևոր չէ նաև երիտասարդության օտարացման փաստն ինչպես ընտանիքներից, այնպես էլ համայնքի ու երկրի խնդիրներից: Երիտասարդության հիմնախնդիրները լուծելու նպատակով անհրաժեշտ է արմատապես վերանայել երիտասարդության նկատմամբ տարվող քաղաքականությունը: Մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմինները այս հարցում առանձնակի կարևոր դեր ունեն: Այդ հարցերը հիմնականում վերաբերում են.

1) բնակարաններով երիտասարդության ապահովմանը,

2) առաջնային առողջության պահպանմանը,

3) սոցիալական երաշխիքների ստեղծմանը,

4) երիտասարդության զբաղվածության ապահովմանը,

5) հանգստի և ժամանցի կազմակերպման հնարավորությունների ստեղծմանը,

6) երիտասարդական միջոցառումների կազմակերպման ֆինանսական և նյութական միջոցների ապահովմանը:

189. Այս խնդիրները ինչ-որ չափով լուծելու առաքելություն ունի Արագածոտնի մարզային երիտասարդական կենտրոնը, որն ունի հետևյալ նպատակները.

1) Հայաստանում պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակից դարձնել առավել շատ երիտասարդական կազմակերպություններ,

2) նպաստել մարզային երիտասարդական կառույցների, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության սուբյեկտների խնդիրների մասին եղած տեղեկատվության հավաքմանը, համակարգման և հրապարակման կազմակերպմանը,

3) երիտասարդությանը մատուցել սոցիալական իրավաբանական, կազմակերպչական ծառայություններ,

4) աջակցել երիտասարդության շահերն ու իրավունքները ամրագրող օրենսդրական դաշտի ստեղծմանը և այդ գործընթացում երիտասարդական կազմակերպությունների ներգրավմանը,

5) իրականացնել երիտասարդության հիմնախնդիրներին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ (ուսումնասիրություններ, հոդվածներ, այս բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություն),

6) մարզի երիտասարդության համար հաստատել և ամրապնդել արտաքին կապեր, կատարել փորձի փոխանակում:

ՀՀ Արագածոտնի մարզպետի որոշմամբ 2014 թվականին ստեղծվել է ՀՀ Արագածոտնի մարզպետին առընթեր երիտասարդական խորհուրդ, հաստատվել են

խորհրդի անհատական կազմը և կանոնադրությունը: Մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նպատակը մարզում երիտասարդական քաղաքականության համակարգված ու նպատակային իրականացմանն աջակցելն է, հանրային կյանքի տարբեր բնագավառներում երիտասարդների մասնակցությունը խթանելն ու երիտասարդական կազմակերպությունների գործունեությանը նպաստելը:

6.2.3. Սպորտ

190. Մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդման, անհատի ներդաշնակ զարգացման երաշխիքը պետական քաղաքականության իրականացումն է: Այն իր մեջ ներառում է տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովումը: Ֆիզիկական դաստիարակության իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել մանուկների և պատանիների մասնակցությունը տեղական, հանրապետական և միջազգային մրցաշարերին, սպորտային միջոցառումներին, հուշամրցաշարերին: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը, նրանց առողջության ամրապնդմանը, առողջ ապրելակերպի արմատավորմանը, հաշմանդամային սպորտի զարգացմանը: Ստեղծել անհրաժեշտ պայմաններ մարզական կառույցներից օգտվելու, ձեռք բերել անհրաժեշտ մարզական գույք, որոնք կնպաստեն հաշմանդամների տարբեր խմբերին հասարակական կյանքին առավելագույնս և համակողմանի ինտեգրման գործընթացին: Սպորտի բնագավառում մարզն ունեցել է ակնառու նվաճումներ ինչպես հանրապետական, այնպես էլ Համամիութենական ու միջազգային ասպարեզներում: 2014 թվականի Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի՝ Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածքային փուլերին մասնակցել են 108 երիտասարդ ընտանիքներ, որոնցից 1-3-րդ տեղերը գրաված 12 ընտանիքներ մասնակցել են մարզային փուլին: ,,Կորյուն,, ռազմամարզական խաղերի տարածքային և մարզային փուլերին, մասնակցել են մարզի 87 դպրոցների 1800 աշակերտ: Անցկացվել է ՀՀ Ազգային Ժողովի գավաթի խաղարկության ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը: Մասնակցել են 95 դպրոցների 3600 աշակերտ, շախմատի առարկայական հանրապետական օլիմպիադայի տարածքային և մարզային մրցումներին մասնակցել են մարզի բոլոր 119 դպրոցների աշակերտական թիմերը: Անցկացվել է նախազորակոչային և

զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի Արագածոտնի մարզի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը, մասնակցել են մարզի 82 դպրոց՝ 782 աշակերտներով: Մարզի դպրոցական թիմերը մասնակցել են ՀՀ դպրոցականների մարզական խաղերին՝ շախմատ, ֆուտբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, աթլետիկա և հանդբոլ մարզաձևերից: 2014թ. կազմակերպվել և անցկացվել են շախմատի, ֆուտբոլի, ըմբշամարտի, վոլեյբոլի գյուղական համայնքների, քաղաքների և մարզային առաջնություններ: ՀՀ Արագածոտնի մարզում գործում է շախմատի ֆեդերացիա՝ մարզպետ Սարգիս Սահակյանի նախագահությամբ: 2013-2014 ուսումնական տարում ակտիվ շախմատի բնագավառում ունեցել ենք բավականին լուրջ հաջողություններ: 2013թ. Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան դպրոցի 8 տարեկան Արսեն Միքայելի Դավթյանը Մոնտենեգրոյի Բուդվա քաղաքում մասնակցեց Եվրոպայի պատանի շախմատիստների առաջնությանը: 2014 թվականին Արսեն Դավթյանը իր տարիքային խմբում Հայաստանի առաջնությունում գրավելով 1-ին տեղը իրավունք է ստացել սեպտեմբերին Հարավ Աֆրիկյան Հանրապետությունում անցկացվելիք աշխարհի, իակ հոկտեմբերին Վրաստանում կայանալիք Եվրոպայի աշխարհի առաջնությանը մասնակցելու: ՀՀ դպրոցականների ,,Դիպուկ հրաձիգ,, հանրապետական մրցումների տարածքային և մարզային փուլեր, Մելիքգյուղի միջնակարգ դպրոցը անհատական հաշվարկով գրավել է 1-ին տեղը: «ՀՀ մարզերում նախադպրոցական և դպրոցական հիմնարկներում անցկացվում է «Սպորտլանդիա-2014» մարզական միջոցառումը: 2014թ. Մայիսին ,,Փոքր Միեր,, կրթահամալիրի նախաձեռնությամբ Աշտարակի Պերճ Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում կազմակերպվել է դպրոցականների երկօրյա ռազմամարզական հավաք: Թաթուլ Կրպեյանի անվան միջնակարգ դպրոցը ցուսաբերել է լավագույն արդյունք: 2014թ. մարզի 17 դպրոցների աշակերտները այցելել են ,,Փոքր Միեր,, կրթահամալիր, ծանոթացել սովորողների առօրյային, մասնակցել դասընթացներին: Մասսայականություն վայելող մարզաձևերից մարզում առաջինը ֆուտբոլն է: Մարզի երկու բնակավայրերի՝ Աշտարակի և Ապարանի ֆուտբոլի թիմերը հանրապետական առաջնության մշտական մասնակիցներ էին և առաջատարների շարքում էին գտնվում: Այժմ հանրապետության առաջնությանը մասնակցում է Աշտարակի ,,Քասախ,, թիմը: Հաճախակի կազմակերպվում են ընկերական հանդիպումներ:

191. Մարզում կան հետևյալ մարզական կառույցները.

1) Աշտարակ քաղաք – 1 մարզադաշտ,
2) Ապարան քաղաք – 1 մարզադաշտ,
3) Թալին քաղաք – 1 մարզադաշտ

192. Դրանք բոլորն էլ նորոգման կարիք ունեն, չի բավարարում գույքը:

6.2.3.1. Սպորտային կազմակերպությունների գործունեություն

193. Սպորտային կազմակերպությունների քանակական բաշխվածություն: 2013թ. մարզում գործել է 7 սպորտային կազմակերպություն: Մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդման, անհատի ներդաշնակ զարգացման երաշխիքը պետական քաղաքականության իրականացումն է: Այն իր մեջ ներառում է տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովումը: Ֆիզիկական դաստիարակության իրականացման նպատակով անհրաժեշտ է ապահովել մանուկների և պատանիների մասնակցությունը տեղական, հանրապետական և միջազգային մրցաշարերին, սպորտային միջոցառումներին, հուշամրցաշարերին: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը, նրանց առողջության ամրապնդմանը, առողջ ապրելակերպի արմատավորմանը, հաշմանդամային սպորտի զարգացմանը: Ստեղծել անհրաժեշտ պայմաններ մարզական կառույցներից օգտվելու, ձեռք բերել անհրաժեշտ մարզական գույք, որոնք կնպաստեն հաշմանդամների տարբեր խմբերին հասարակական կյանքին առավելագույնս և համակողմանի ինտեգրման գործընթացին:

Աղյուսակ 6.9. Սպորտային կազմակերպությունների և դրանցում խմբերի քանակներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2013թ.

միավոր

	Սպորտային կազ-մակերպություն-ների քանակը	Խմբերի քանակը			
		օլիմպիական մարզաձև	որից՝ գյուղական համայնքներում	ոչ օլիմպիական մարզաձև	որից՝ գյուղական համայնքներում
ք.Երևան	55	1 291	-	245	-
Արագածոտն	**7**	**54**	**40**	**2**	**2**
Արարատ	7	121	18	12	2
Արմավիր	6	58	2	6	-
Գեղարքունիք	9	145	36	15	-
Լոռի	18	216	7	64	14

	Սպորտային կազ-մակերպություն-ների քանակը	Խմբերի քանակը			
		օլիմպիական մարզաձև	որից՝ գյուղական համայնքներում	ոչ օլիմպիական մարզաձև	որից՝ գյուղական համայնքներում
Կոտայք	16	293	70	36	-
Շիրակ	36	607	49	115	6
Սյունիք	10	118	-	21	-
Վայոց ձոր	4	111	22	52	32
Տավուշ	4	40	-	9	-
Ընդամենը ՀՀ	**172**	**3 054**	**244**	**577**	**56**

194. Մարզի թիմը մասնակցել է «Բազե» համահայկական հավաքներին, մարզի բոլոր համայնքներում և դպրոցներում անցկացվել են հոբելյանական և ավանդական տարբեր միջոցառումներ: Կազմակերպված ձևով են անցել «Հուսո գավաթ» ֆուտբոլային մրցումները և այլ միջոցառումներ: Տարեցտարի առավել մեծ մասսայականություն են վայելում «Ֆիզկուլտուրայի օր», «Ֆիզիկական ակտիվության օր» միջոցառումները, որոնք առավել արդյունավետ են մարզի քաղաքներում և խոշոր բնակավայրերում: Այդ միջոցառումներին ակտիվորեն մասնակցում են մազական կազմակերպությունները, որոնք հանդես են գալիս որպես կազմակերպիչներ, զանգվածային միջոցառումների ժամանակ տրամադրում են իրենց մարզագույքը: Մարզպետարանի նախաձեռնությամբ անցկացվում են մարզական միջոցառումներ, համայնքների բյուջեներում ավելանում են սպորտին տրվող հատկացումները: «Բանակ-18» միջոցառմանը մարզի երիտասարդությանը և մարզիկներին ընդգրկելու նպատակով մարզպետարանը կազմել է միջոցառումների ծրագիր, հատկացված են անհրաժեշտ ֆինանսական և տեխնիկական միջոցները, կազմվել է աշխատանքային պլան և ժամանակացույց: Ցուցումներ են տրվել մարզի համայքներին, երիտասարդության, մշակոյթի և սպորտի հարցերով մարզում գործող կազմակերպություններին:

195. Արագածոտնի մարզում սպորտի ոլորտի զարգացման հիմնական գերակայություններն են.

1) մարզական կյանքի աշխուժացում,

2) մարզի բնակչության ֆիզիկական ակտիվության բարձրացում,

3) բնակավայրերի հատակագծման ընթացքում մարզական կառույցների նախատեսում,

4) մրցումների, մարզական միջոցառումների քանակի ավելացում,

5) սպորտի, որպես առողջ սերնդի աճեցման լավագույն միջոցի՝ առաջնահերթության հաստատում,

6) մարզական օջախների նյութատեխնիկական պայմանների բարելավում,

7) մարզչական ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացում,

8) մարզական շենքերի ու շինությունների հիմնանորոգում,

9) սպորտի տարբեր ձևերի նկատմամբ կայուն հետաքրքրության ձևավորում:

6.2.4. Մշակույթի, սպորտի և երիտասարդական հարցերի ոլորտի ֆինանսավորումը

195. 2015-2018թթ. մարզական, մշակութային և երիտասարդական միջոցառումների ծավալի, աշխարհագրության և մասնակիցների քանակի ավելացման համար հիմք են ընդունվել իրական պահանջարկը և ՀՀ կառավարության՝ այդ ոլորտներին վերաբերող ծարագրերի պահանջները: Նախորդ տարիների համեմատությամբ յուրաքանչյուր տարի ծախսերն ավելացվել են մոտավորապես 10–12%-ով: Այն նախատեսվում է տրանսպորտային փոխադրումների, դիդակտիկ պարագաների պատրաստման, տեխնիկական միջոցների ապահովման և ընթացիկ այլ ծախսերի համար: Ծրագրերի ֆինանսավորումը բերված է հավելված 6.2 և հավելված 6.2.1-ում:

6.2.5. Մշակույթի, սպորտի և երիտասարդական հարցերի ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
1. Երիտասարդության զբաղվածության բարձրացում, անձնական տնտեսությունների ամրապնդում		
Ոլորտային նպատակ 1. Նոր աշխատատեղերի ստեղծում, սեփական տնտեսությունների ֆիանանսական ապահովում	1. Նոր բացված աշխատատեղերի քանակը, 2. Երիտասարդական տնտեսություններին ցուցաբերվող ֆիանսական և խորհրդատվական աջակցությունների քանակը	Աձնական տնտեսություններն ամրապնդվել են, տարեցտարի ավելանում են նոր աշխատատեղերը:
2. Մշակութային և մարզական կյանքի աշխուժացում		
Ոլորտային նպատակ 2 Բարձրացնել մշակութային, մարզական և երիտասարդությանը մատուցվող ծառայությունների մատչելիությունը և որակը Արագածոտնի մարզում	1. Մշակույթի, սպորտի բնագավառում զբաղվածների թիվը 2. Մարզական միջոցառումների քանակը, դրանցում երիտասարդության մասնակցության տոկոսը	Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի համար պետական և համայնքային բյուջեների ծախսերը շարունակելու են աճել:

	3. Մշակութային միջոցառումների քանակը, դրանցում երիտասարդության մասնակցության տոկոսը	
3. Մշակույթի և սպորտի շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում		
Ոլորտային նպատակ 3 3.1. Նոր մշակութային և մարզական շենքերի կառուցում, եղածների հիմնանորոգում 3.2. Մարզադահլիճների և խաղահրապարակների նորոգում և հիմնանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	Կառուցված և նորոգված մշակութային և մարզական օբյեկտների թիվը Բարեկարգված մարզադահլիճներ և խաղահրապարակներ ունեցող համայնքների տեսակարար կշիռը, %	Մարզական և մշակութային օբյեկտների նորոգման և նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով ՀՀ կառավարության և համայնքների բյուջեներից հատկացվող ֆինանսական միջոցները տարեցտարի ավելանում են:
4. Հանգստի և ժամանցի կազմակերպման հարցերի լուծում		
4.1. Հեծանիվային արահետների կազմակերպում 4.2. Ոտքով երթևեկության զարգացման նպատակով արահետների կազմակերպում 4.3. Բնության գրկում միջոցառումների կազմակերպում	1. Բացված արահետների թիվը, դրանց երկարությունը, 2. Միջոցառումների թիվը	Արահետները և երթուղիները բացված են: Միջոցառումներն անցկացված են
5 Երիտասարդության ստեղծագործական կարողությունների զարգացում և երիտասարդության ներուժի օգտագործում		
5.1. Երիտասարդներին ինտեգրում ստեղծագործական կյանքում 5.2. Երիտասարդական ստեղծագործական կենտրոնների ստեղծում	1. Ցուցահանդեսներին և մարզական կյանքում տեղի ունեցող իրադարձություններում մասնակցող երտասարդների թիվը 2. Երիտասարդական կենտրոնների թիվը, դրանցում մասնակցության մակարդակը, 3. Բացված ցուցահանդեսների, ներկայացումների, համերգների թիվը	Ցուցահանդեսներին և զանգվածային միջոցառումներում երիտասարդության կազմակերպական կարողություններն օգտագործված են

6.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

6.3.1. Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն

196. ՀՀ Արագածոտնի մարզի առողջապահության ոլորտի 2015-2018թթ. մարզային զարգացման ծրագրի կազմման հիմքում դրվել են ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N994 որոշմամբ ամրագրված առողջապահության վերաբերյալ դրույթները և ՀՀ կառավարության առաջիկա տարիների ռազմավարության գերակայությունները: Մարզի բնակչության բուժսպասարկումը լիարժեք մատչելի և որակյալ կազմակերպելու համար իրականացվել են մի շարք միջոցառումներ: ԱՀՌԾ-ի շրջանակներում գերակա է համարվել առաջնային բուժօգնության ոլորտը, իսկ ծրագրային մակարդակով՝ հատուկ կարևորվել են մոր և մանկան առողջության պահպանումը, ինչպես նաև վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման խնդիրները: Դրված նպատակների ապահովման հարցում մեծ դեր է վերագրվել առողջապահության ոլորտում պետական ծախսերի ավելացմանը, դրանց ներոլորտային վերաբաշխմանը՝ ի օգուտ առաջնային բուժօգնության օղակի, ինչպես նաև համակարգի կառավարման բարեփոխումների արդյունքում ակնկալվող արդյունավետության բարձրացմանը:

197. Արագածոտնի մարզում գործում են 22 առողջապահական հիմնարկներ, որոնցից 5-ը մարզպետարանի ենթակայությամբ, 16-ը՝ համայնքային ենթակայության գյուղական բժշկական ամբուլատորիաներ, ինչպես նաև թվով 2 մասնավորեցված ստոմատոլոգիական պոլիկլինիկաներ, որոնցում տեղադրված է պետական պատվեր:

Աղյուսակ. 6.10. ՀՀ Արագածոտնի մարզի բուժհաստատությունները

բուժհաստատության տեսակը	քանակը	մահճակալների թիվը
Բժշկական կենտրոններ այդ թվում՝ «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ	**4** 1 1 1 1	 70 40 55 38
Ամբուլատոր-պոլիկլինիկաներ գյուղական	**16**	-

համայնքներում այդ թվում՝ բուժակ մանկաբարձական կետեր	 92	

198. Պետական առողջապահական ծրագրերի իրականացման նպատակով 2012-2014թթ. տարեկան գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատություններին հատկացված միջոցները ներկայացված են աղյուսակ 6.11.-ում:

Աղյուսակ 6.11.

(հազ.դրամ)

Արագածոտնի մարզ	**2012թ.**	**2013թ.**	**2014թ.**
Հիվանդանոցային	470,974,8	885,777,7	870,565,7
Արտահիվանդանոցային	791,594,7	475,759,3	606,523,8
Ընդամենը	1,262,569,5	1,361,537,0	1,477,089,5

199. Արագածոտնի մարզի բնակչության առողջության մասին պատկերացում առաջին հերթին կարելի է կազմել այնպիսի դեմոգրաֆիկ ցուցանիշներից, ինչպիսիք են՝ ծնելիությունը, մահացությունը և բնակչության բնական աճը: 2011-2013թթ. մարզի հիվանդանոցներում բժշկական օգնություն են ստացել 15876 հիվանդներ, որից պետական պատվերի շրջանակներում՝ 14367 հիվանդներ, համավճարով բուժվածներ՝ 1984:

Աղյուսակ 6.12. Առողջության վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների դինամիկան Արագածոտնի մարզում 2011-2013թթ.

	Ծնվածների թվաքանակը			Մահացածների թվաքանակը			Բնական աճը			Մինչև 1տ. երեխաների մահվան դեպքերի քանակ		
	2011	2012	2013	2011	2012	2013	2011	2012	2013	2011	2012	2013
Արագածոտնի մարզ	1988	1907	1910	1255	1269	1235	733	638	675	8	9	7

Աղբյուր ՀՀ Արագածոտնի մարզպետարան

200. Արագածոտնի մարզում երեք տարիների ընթացքում զգալիորեն բարձրացել է ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ: Հիվանդացության և մահացության ցուցանիշները տատանվում են միջին հանրապետական ցուցանիշների սահմաններում: Վերջին երեք տարիների ընթացքում տարբեր հիվանդություններով

հիվանդացությունը ենթարկվել է էական փոփոխությունների: Արագածոտնի մարզում հիվանդացության և մահացության մակարդակները բարձր են սիրտ-անոթային համակարգի հիվանդություններով, նորագոյացություններով և շաքարային դիաբետով հիվանդների հաշվին: Բնակչության և բուժանձնակազմի շրջանում բազմաթիվ իրազեկման և ուսուցողական դասընթացների կազմակերպման արդյունքում բարձրացել է տուբերկուլյոզով և սեռավարակներով տառապող հիվանդների հայտնաբերման ցուցանիշը, որն էլ հնարավորություն է տալիս իրականացնել նշված հիվանդությունների վաղ կանխարգելումն ու բուժումը: Եվ այս առումով առավել ռիսկային խմբում են հայտնվում հատկապես բնակչության աղքատ և սոցիալապես անապահով խմբերը, ինչպես նաև բնակչության ոչ լիարժեք տեղեկացվածությունը նշված հիվանդությունների և ռիսկերի վերաբերյալ: Առաջնահերթ խնդիր է դառնում այդ հիվանդությունների վաղ հայտնաբերման, կանխարգելման և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումները: Տարածված վարակիչ հիվանդությունների շարքում առանձնանում է տուբերկուլյոզը: Անցած տարիների համեմատությամբ նկատվել է հիվանդության աճ, սակայն դա արդյունքն է այն բանի, որ գործում է «Տուբերկուլյոզի ազգային ծրագիրը», որի միջոցներով մարզի հակատուբերկուլյոզային կաբինետներին տրամադրվել են լաբորատոր ախտորոշիչ սարքեր՝ խորխի քննությունն իրականացնելու համար, որը նպաստում է հիվանդության վաղ հայտնաբերմանը: Յուրաքանչյուր տարի մարզի տուբերկուլյոզային կաբինետներում հաշվառման են վերցվում միջին թվով 40-ից 45 առաջնակի տուբերկուլյոզով հիվանդներ: Արագածոտնի մարզի տարածքում պարբերաբար իրականացվում են հակահամաճարակային և կարանտինային միջոցառումներ, սանիտարահիգիենիկ միջոցառումներ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով: Այս կապակցությամբ բարձրացված բոլոր հարցերը մարզպետի հանձնարարությամբ նախապատրաստվել և մանրամասն քննարկվել են մարզպետի մոտ անցկացված խորհրդակցություններում, մարզխորհրդի նիստերում և ստացել համապատասխան լուծում մարզում հակահամաճարակային և սանիտարահիգինեիկ միջոցառումները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Իրականացվել են աղիքային վարակիչ հիվանդությունների և սննդային թունավորումների կանխարգելման դեմ պայքարի միջոցառումներ, որի կապակցությամբ ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Արագածոտնի մարզային կենտրոնի կողմից ներկայացվել է ամբողջ տարվա ընթացքում վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների ուղղությամբ արձանագրված դեպքերի վերլուծությունը: Մարզպետի կարգադրությամբ հանձնարարվել է բնակավայրերի, բնակելի շենքերի, դպրոցների և այլ օբյեկտների սպասարկող կազմակերպությունների ղեկավարներին ձեռնարկելու բոլոր անհետաձ-

գելի միջոցառումները հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների ապահովման նպատակով: Մարզի համայնքներում ապահովվել է խմելու ջրի կանխարգելիչ քլորացումը, ձեռք է բերվել բավարար քանակի ախտահանիչ նյութեր, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում և նախադպրոցական կազմակերպություններում ախտահանիչ և վարակազերծող նյութեր, ապահովվել օբյեկտներում հիգիենիկ հակահամաճարակային ռեժիմը: Մարզի բուժկանխարգելիչ կազմակերպությունները, նախադպրոցական և հանրակրթական դպրոցները մշատապես ապահովված են ախտահանիչ նյութերով, կապված գրիպի դեմ պայքարի միջոցառումների ուժեղացման հարցերի հետ:

201. Առողջապահության համակարգի կառուցվածքային փոփոխությունները և ներկայիս խնդիրները. Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 2-ի «ՀՀ մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» N 1911-Ն որոշման՝ մարզում տվյալ ժամանակահատվածում հիմնականում ավարտվել են առողջապահության համակարգի օպտիմալացման աշխատանքները: Ընթացքի մեջ է Արագածոտնի մարզի թվով 15 համայնքային ենթակայության գյուղական բժշկական ամբուլատորիաների բաժնետիրական ընկերություններից համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների վերակազմավորման գործընթացը: Մարզի առողջապահական բնագավառում աշխատում են 202 բժիշկներ, 508 բուժքույրեր: Բուժհաստատությունները հիմնականում ապահովված են մասնագետներով, սակայն ունեն որոշ նեղ մասնագետների պակաս՝ վիրաբույժ, կարդիոլոգ, նյարդաբան, անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, ռեանիմատոլոգ, մանկաբարձ-գինեկոլոգ /վիրահատող/, ակնաբույժ, էնդոկրինոլոգ, ինֆեկցիոնիստ, մաշկավեներոլոգ, ռենտգենոլոգ, վնասվածքաբան: Նշված բժիշկ-մասնագետներով ապահովման վերաբերյալ հայտ է ներկայացվել ՀՀ առողջապահության նախարարություն:

202. Ընտանեկան բժշկության համակարգի ներդրման արդյունքում մեծացել է գյուղական համայնքների բուժսպասարկման մակարդակը: Ծառայությունների մատուցման ծավալը թանկ հիվանդանոցային բուժօգնությունից տեղաշարժվել է դեպի ավելի մատչելի և համեմատաբար էժան առաջնային բուժօգնության օղակ: Գյուղական ամբուլատորիաներում աշխատում են թվով 57 բժիշկներ և 207 միջին բուժաշխատողներ: Բոլորն էլ առողջապահության համակարգի արդիականացում թիվ 3920-ԱՄ վարկային համակարգի ընտանեկան բժշկության միօրինականացված 12 ամյա կրթական ծրագրով ենթարկվել են վերապատրաստման: Ընտանեկան բժշկության ինստիտուտի վերափոխման գործընթացն ավարտվել է, սակայն քաղաքային պոլիկլինիկաներում կներդրվի ընտանեկան բժշկության ինստիտուտը:

ԲՄԿ-ներում աշխատող 60 բուժքույրեր USAID-ի կողմից անցել են վերապատրաստում՝ որպես համայնքային բուժքույր:

203. ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 30-ի «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը հաստատելու մասին» N 420-Ն որոշմամբ մարզում լիովին գործում է ՀՀ առողջապահության նախարարության և առողջության առաջնային բարեփոխումների ծրագրի օժանդակությամբ առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ բնակչության գրանցման ավտոմատացված համակարգը:

204. Նյութատեխնիկական բազա. Սկսած ՀՀ Արագածոտնի մարզում սկսած 2001թ.-ից «Առողջապահության ֆինանսավորման բարելավման և առողջության առաջնային պահպանման զարգացման» թիվ 2979-ԱՄ (1998-2003թթ.), «Առողջապահական համակարգի արդիականացում» թիվ 3920-ԱՄ (2005-2007թթ.), «Առողջապահական համակարգի արդիականացում, ծրագիր 2» թիվ 4267-ԱՄ (2008-2012 թթ.) և «Առողջապահական համակարգի արդիականացում, ծրագիր 2» հավելյալ ֆինանսավորման թիվ 7987-ԱՄ (2012-2013 թթ.) վարկային ծրագրերի շրջանակներում վերանորոգվել և կառուցվել են մարզի 15 ամբուլատորիաներ:

2007-2008թթ. «ՆՕՎԱ» միջազգային բարեգործական կազմակերպությունը նորոգել և գույքով ու բուժգործիքներով ապահովել է մարզի 18 բուժակմանկաբարձական կետեր /ԲՄԿ/: 2008թ.-ին, Առողջության Առաջնային Պահպանման Բարեփոխումների /ԱԱՊԲ/ ծրագրի հատկացրած միջոցների հաշվին կազմակերպվել է մարզի 21 բուժակմանկաբարձական կետերի նորոգումներն ու կահավորումը: Մարզի 51 բուժակմանկաբարձական կետեր կարիք ունեն վերանորոգման կամ նոր շենքերի կառուցման:

205. Լիարժեք վերագործարկվել է Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում հիմնանորոգված «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն: Վերազինված առողջության կենտրոնը սպասարկում է ոչ միայն տարածաշրջանի, այլև մարզի ազգաբնակչությանը: Բոլոր բաժանմունքներն ապահովված են ժամանակակից կոշտ և փափուկ գույքով, անհրաժեշտ բժշկական և լաբորատոր սարքավորումներով: Բարեփոխումներ են իրականացվում նաև մարզի հիվանդանոցային համակարգում: Օպտիմալացման հետևանքով որոշ չափով կրճատվել է հիվանդանոցային բուժանձնակազմի թիվը, ինչը բերել է աշխատավարձերի ավելացմանը և ընկերությունների ֆինանսական վիճակի բարելավմանը: Վերջին 3 տարիների ընթացքում գրեթե երեք անգամ ավելացել է բուժանձնակազմի աշխատավարձը, իսկ մեկ հիվանդին ընկնող պետության կողմից տրամադրված գումարի չափը՝ հինգ անգամ:

206. ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի «ՀՀ կառավարության և Չինաստանի ժողովրդական հանրապետության կառավարության միջև 2010 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված պայմանագրի շրջանակներում շտապ օգնության գծային մեքենաները, շտապ օգնության ռեանիմոբիլները և դրանց օժանդակ սարքավորումները նվիրաբերելու մասին» թիվ 874-Ա որոշման 3-րդ կետի հիման վրա կնքված եռակողմ պայմանագրերի համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայության «Աշտարակի բժշկական կենտրոն», «Ապարանի բժշկական կենտրոն», «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» և «Թալինի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություններին, նվիրաբերվել են ՀՀ կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև 2010 թվականի դեկտեմբերի 27-ին ստորագրված պայմանագրով Հայաստանի Հանարպետությանը նվիրաբերված շտապ օգնության գծային մեքենաները, շտապ օգնության ռեանիմոբիլները և դրանց օժանդակ սարքավորումները, որոնց արժեքը սահմանված կարգով ներդրվել է նվիրառու բաժնետիրական կազմակերպությունների կանոնադրական կապիտալներում:

207. Արագածոտնի մարզում առողջապահության բնագավառում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

1) Մարզի բուժհաստատությունների լիարժեք հագեցվածություն ժամանակակից գույքով, բժշկական սարքավորումներով և պարագաներով
2) Շենքային պայմանների բարելավում («Աշտարակի բժշկական կենտրոն», «Ծաղկահովիտի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ներ), վերանորոգում և տեխնիկական հագեցվածություն
3) Բուժհիմնարկների միջև տեղեկատվական, համակարգչային ցանցի լիարժեք կիրառում
4) Քաղաքային պոլիկլինիկաներում ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրում
5) Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում
6) Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացում
7) Նորածինների առողջության բարելավում, նորածնային հիվանդացության և մահացության կրճատում
8) Վաղ հասակի երեխաների հիվանդացության իջեցում

9) Տեղային և մարզային մակարդակներում կառավարման մոնիտորինգի և վերահսկողության բարելավում:

6.3.2. Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

208. Համաձայն ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի, մարդկային կապիտալի զարգացման գործողություններն ուղղված են լինելու առողջապահության առաջնային ծառայությունների ծավալների ավելացման, բժշկական սպասարկման որակի բարձրացման և մատչելիության աճին: 2014-2019թթ. ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222-ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում, մասնավորապես՝ նախատեսվում է, ՀՀ մարզերի բնակչության ռիսկային խմբերում իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) զանգվածային սքրինինգներ, որոնք ուղղված կլինեն այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը և վերահսկմանը: Հիպերտոնիայի և շաքարային դիաբետի սքրինինգների մեջ ընդգրկված է կանանց և տղամարդկանց 35-68 տարիքային խումբը: Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման նպատակով ընդգրկված է կանանց 30-60 տարիքային խումբը: Վերոնշյալ սքրինինգների իրականացման կատարողականը պետք է լինի առնվազն 50-60%:

209. ՀՀ Առողջապահության նախարարության և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից, ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ և Վորլդ Վիժն-ի հետ համագործակցությամբ մարզի Թալինի և Ապարանի տարածքներում իրականացվում է «Երեխայի առողջության և սնուցման բարելավման» համապարփակ ծրագիր: Կազմակերպության կողմից իրականացվում են դասընթացներ ապագա մայրերի, բարձր դասարանի աշակերտուհիների և հղիների, ինչպես նաև մայրերի ուսուցման համար, ստեղծվել են մայրերին աջակցող խմբեր, մանկական հիվանդությունների ինտեգրացված վարում համայնքային կտրվածքով դասընթացների միջոցով, դասընթացներ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում և ,,Առողջ սնունդ, առողջ ապրելակերպ,, թեմաներով:

210. 2014 թվականին մարզի ամբուլատորիաներում UMCOR Հայաստան հասարակական կազմակերպության կողմից շարունակվելու է իրականացվել սեռավարակների ախտորոշում և բուժում, տուբերկուլոզով հիվանդների և նրանց

հետ շփում ունեցող անձանց խորհրդատվություն, լաբորատոր հետազոտություններ, ՄԻԱՎ\ՁԻԱՀ-ի վերաբերյալ կամավոր խորհրդատվություն թեմաներով սեմինարներ:

211. ԱՄՆ Միջազգային Զարգացման գործակալության կողմից ՀՀ ԱՆ տրամադրված «Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին» դրամաշնորհային ծրագիրը նպատակաուղղված է բարելավելու շտապ բուժօգնության ծառայությունները՝ ՇՕ ռեսուրսների պլանավորման և կառավարման, մշտադիտարկման համակարգի ներդրման, հանրային իրազեկվածության բարձրացման միջոցով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մի շարք աշխատանքներ: <<Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին>> ծրագրի շրջանակներում բոլոր շտապ բուժօգնություն իրականացնող բժշկական հաստատություններին տրամադրվելու է համակարգիչներ և պլանշետներ՝ ՇՕ տեղեկատվական-վերլուծական համակարգի գործարկման համար: Ներկայումս համակարգիչներ են տրամադրվել Աշտարակի, Թալինի, Ապարանի, Ծաղկահովիտի, Արագածավանի, Ներքին Բազմաբերդի, Արագածի շտապ օգնության ծառայություններին: Ընթացքի մեջ է Արուճի, Ագարակի, Կարբիի և Մաստարայի շտապ օգնության ծառայություններին պլանշետների տրամադրման գործընթացը: Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2014 թվականի օգոստոսից գործարկվում է շտապ օգնության տեղեկատվական վերլուծական համակարգը, որը հնարավորություն է տալիս ստեղծել էլեկտրոնային կանչի թերթիկներ և բոլոր կանչերը ավտոմատ գրանցել տեղեկատվական համակարգում: Համակարգում ամրագրվում են բոլոր կանչերի ընդունման, սպասարկման, հոսպիտալացման ժամերը: Համակարգը միաժամանակ հնարավորություն է տալիս ստանալու տարաբնույթ հաշվետվություններ՝ յուրաքանչյուր հիվանդի հետ կապված հիվանդությունների ախտորոշումների, օգտագործված դեղորայքի, իրականացրած միջամտությունների վերաբերյալ: Տեղեկատվական վերլուծական համակարգի ներդրման շնորհիվ ավելի վերահսկելի և արդյունավետ է դարձել շտապ օգնության ծառայություն իրականացնող բրիգադների աշխատանքը՝ կանչն ընդունելուց մինչև հոսպիտալացում:

212. 2014թ. օգոստոս-սեպտեմբերն ընկած ժամանակահատվածի համար կազմակերպվել են Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» N 5222-ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում «Ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման և վարման» և «Արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման և վարման» թեմաներով դասընթացներ: Առողջապահության ոլորտի հանրապետական միջոցառումները կունենան անմիջական ազդեցություն Արագածոտնի մարզի վրա: Մասնավորապես, կարևորվում են ընտանեկան բժշկության զարգացման, համակարգի

ֆինանսավորման մեխանիզմների բարելավման, գյուղական բնակչության բուժօգնության բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի, այլ վարակիչ և մակաբուծային, սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների կանխարգելման, հիվանդացության ու մահացության իջեցմանն ուղղված միջոցառումները: Այդ միջոցառումները տարածքային մակարդակով լրացնելու և, հետևաբար, ուժեղացնելու համար նպատակահարմար է մշակել առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին: ՀՀ Արագածոտնի մարզում մալարիա հիվանդության արմատական վերացման նպատակով մարզում համապատասխան իրավասություն ունեցող կազմակերպությունների կողմից շարունակվում են մալարիայի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում մալարիայի ներբերումը և արմատավորումը կանխարգելելու 2011-2015 թվականների պետական ծրագրի: ՀՀ-ում շարունակվում են իրականացվել միջոցառումներ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և վարակիչ այլ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:

Գծապատկեր 3.



213. Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը՝ մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման զարգացման գերակա նպատակն է՝

1) Հզորացնել համակարգի ֆինանսավորման աղբյուրները (պետական բյուջե, ապահովագրական հիմնադրամ, ուղղակի վճարումներ), չնայած վերջին տարիներին նկատվում է ֆինանսական հատկացումների աճ
2) Առողջապահության համակարգում կրճատել ստվերային շրջանառությունը
3) Ներդնել պարտադիր բժշկական ապահովագրության համակարգ
4) Բարելավել վերարտադրողական առողջությունը:

6.3.3 Առողջապահության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	*Արդյունքային ցուցանիշ*	*Թիրախ 2015-2018թթ.*	*Կարևոր նախադրյալներ*
1. Մարզում առողջության պահպանման առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավում, ինչը կնպաստի բուժօգնության որակի բարելավմանը, մայրական և մանկական հիվանդացության և մահացության նվազեցմանը, ծնելիության և բնակչության բնական աճի բարձրացմանը			
1.1. Բժշկական անձնակազմի վերապատրաստում՝ ներառելով ընտանեկան բժիշկներին	Վերապատրաստված բժիշկների և բուժքույրերի ընդգրկվածության արդյունքային ցուցանիշը	90-95%	Առողջության պահպանման առաջնային օղակի անձնակազմը կանոնավոր կերպով մասնակցում է դասընթացների և կիրառում է վերապատրաստումից ստացած գիտելիքները
1.2. Վերարտադրողական առողջության բարելավում, մոր և մանկան առողջության վերաբերյալ կանանց համար դասընթացների կազմակերպում	-Մինչև 1 տարեկան երեխաների մահացության թվի իջեցում՝ 1000 կենդանածինների հաշվով, -Մայրական մահացության թվի իջեցում՝ ընդհուպ մինչև մահվան դեպքերի չարձանագրում	4.5-5 պրոմիլե 0	*ներ ունեցող կանայք և հղի կանայք ցանկանում են մասնակցել դասընթացների և օգտվել խնամքի ծառայություններից*
1.3.Հղի կանանց համար նախածննդյան խնամքի կազմակերպում	Հղիների վաղաժամ ընդգրկում, մայրական դպրոցի կատարելագործում	90-95%	Բուժանձնակազմը և հղիները համագործակցում են միմյանց հետ
1.4. Ակտիվ տուբերկուլյոզով բնակչության հիվանդացության իջեցում	Հիվանդացության դեպքերի թվի իջեցում	8-9%	
1.5. Կանխարգելիչ	Կանխարգելիչ	97-99%	

պատվաստումներում երեխաների ընդգրկվածություն	պատվաստումներում երեխաների ընդգրկվածության բարձրացում		
2. Բուժսպասարկման հաստատությունների շենքերի, շինությունների նյութատեխնիկական բազայի բարելավում, ինչը կնպաստի ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացմանը			
2.1 Բժշկական հաստատու-թյունների (հատկապես գյուղական) շենքային պայմանների բարելավում	Չվերանորոգված բուժհիմնարկների ընդգրկվածության բարձրացում	95-98%	
2.2 Պոլիկլինիկաների հագեցում ախտորոշիչ սարքավորումներով	Բուժ.հիմնարկներում (պոլիկլինիկական-ամբուլատոր, հիվանդանոցային) ախտորոշիչ սարքավորումների թվի ավելացում	80-85%	
2.3 Հիվանդանոցների ապահովում ժամանակակից սարքավորումներով	Ժամանակակից սարքավորումներով ապահովված հիվանդանոցների տեսակարար կշիռի բարձրացում	70-80%	
3. Բուժհաստատությունների կառավարման բարելավում, կառավարման արդյունավետության բարձրացում			
3.1. Բուժհաստատությունների ղեկավար անձնակազմի ուսուցում կառավարման ժամանակակից մեթոդներով	Վերապատրաստումների մասնակցած ղեկավար անձնակազմի տեսակարար կշռի բարձրացում	85-90%	*մնարկների ղեկավար անձնակազմը կիրառում է նոր գիտելիքներ*
3.2. Առողջապահական հաստատությունների բարեփոխումների՝ հատկապես շտապ բժշկական օգնության ծառայության գծով, ծրագրերի շարունակական իրականացում	Որակյալ մասնագիտական անհետաձգելի օգնություն	90-95%	
4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ պայքարի միջոցառումների ուժեղացում, ինչը կնպաստի հիվանդությունների թվի իջեցմանը			
4.1 ՁԼՄ-ների միջոցով տարփոխիկ հիվանդությունների՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ իրազեկված բնակչության տեսակարար կշռի բարձրացում	90-95%	

6.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

6.4.1. Ոլորտի իրավիճակի վերլուծություն

214. Սոցիալական պաշտպանությունը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է: Սոցիալական պաշտպանության պետական քաղաքականության նպատակը պետության կողմից երկրի բնակչության որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ որոշակի կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնումն է: Այն իրականացնում է սոցիալական աջակցության որոշակի նպատակային քաղաքականություն՝ ուղղված երկրում աղքատության կրճատմանը, անհավասարության մեղմմանը, արժանավայել ծերության ապահովմանը, բնակչության խոցելի խավերի հնարավորությունների ընդլայնմանն ու նրանց որոշակի սոցիալական երաշխիքների ապահովմանը, ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը: Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավումը հանդիսանում է նաև Հայաստանի Հանրապետության հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (ՀԶԾ) գերակայություններից մեկը:

215. Համակարգի բարելավման գործողությունները միտված են լինելու գործող համակարգերի արդյունավետության բարձրացմանը (ներառյալ՝ հասցեականության և նպատակայնության ավելացումը) և երկարաժամկետ հատվածում ֆինանսական կայունության հիմքերի ստեղծմանը՝ ապահովելով սոցիալական երաշխիքների համապարփակ տրամադրում, սոցիալական ռիսկերի էական նվազում և աղքատության կրճատում: Միևնույն ժամանակ, գործողություններ են իրականացվելու սոցիալապես անապահով և խոցելի բնակչությանը տրամադրվող սոցիալական աջակցության գերազանցապես դրամական ձևերից միջնաժամկետ հեռանկարում համալիր փաթեթների տրամադրմանն աստիճանական անցում կատարելու ուղղությամբ:

216. Ծրագրի իրականացումը երաշխավորելու է հասարակության յուրաքանչյուր անդամի՝ հարազատ պետության կողմից պաշտպանված և սոցիալապես ապահովված լինելու կայուն զգացման ամրապնդումը: Սոցիալական պաշտպանության ոլորտում ներկայումս ներդրվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման հիմքում դիմողի (քաղաքացի կամ ընտանիք) գնահատված սոցիալական կարիքներն են, որոնց համարժեք սոցիալական ծառայությունները տրամադրելու են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական հատվածի կազմակերպությունները (հասարակական կազմակերպություններ)՝ համագործակցության համաձայնագրի շրջանակներում, այդ թվում՝ պետական և

տեղական սոցիալական ծրագրերի շրջանակներում:

217. Տեղական սոցիալական ծրագրերը կազմվում են համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (ՀՍԾՏԿ) աջակցությամբ համայնքների ղեկավարների կողմից համայնքի սոցիալական կարիքների գնահատման արդյունքներով: Աղքատության կրճատմանը, անհավասարության մեղմմանը, արժանավայել ծերության ապահովմանը, բնակչության խոցելի խավերի հնարավորությունների ընդլայնմանն ու ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված նպատակային սոցիալական պաշտպանության քաղաքականությունը ՀԶԾ գերակայություններից մեկն է: Ոլորտում հիմնական առաջնահերթություններն են՝

1) Սոցիալապես անապահով և խոցելի, նաև նպատակային/թիրախային խավերին սոցիալական աջակցության՝ ինչպես դրամական օժանդակության, այնպես էլ սոցիալական ծառայությունների համալիր փաթեթների թիրախային ու հասցեական տրամադրումը (միջնաժամկետ հեռանկարում աստիճանական անցում կատարելով առավելապես սոցիալական ծառայությունների համալիր փաթեթների տրամադրմանը),
2) Արժանապատիվ ծերության ապահովումը՝ ներառյալ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի գործարկումը,
3) Ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը նպաստող սոցիալական աջակցությունը:

218. Նկատի ունենալով, որ սոցիալական պաշտպանությունը պետական քաղաքա-կանության գերակա ուղղություններից է, ՀԶԾ-ն նախատեսում է անվանական արտահայտությամբ սոցիալական պաշտպանությանն ուղղված պետական ծախսերի անընդմեջ աճ: Դա իր հերթին նշանակում է, որ ամենատարբեր սոցիալական նպաստներն ու կենսաթոշակներն ավելանալու են: Հիմնվելով այն տրամաբանության վրա, որ երկրում աղքատության հաղթահարումը հնարավոր է մարդկանց կենսաբանական (սնունդ, բնակարանի առկայություն, ջրի, էլեկտրաէներգիայի սպառում և այլն), սոցիալական (առողջություն, կրթություն, աշխատանք, նվազագույն տեղեկացվածություն և այլն) և հոգևոր (կարդալու, մշակութային արժեքներին հաղորդակից լինելու հնարավորություն) պահանջմունքների համակցված բավարարման ճանապարհով, նշենք, որ Արագածոտնի մարզի բնակչության աղքատության հաղթահարման և բարեկեցության բարելավման կարևոր պայմաններից է մարզի սոցիալական բնագավառների՝ առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության համակարգերի լիարժեք ու արդյունավետ գործունեությունն ու զարգացումը:

219. ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» N 952-Ն որոշման համաձայն՝ հանրապետությունում կստեղծվեն «Մեկ պատուհանի սկզբունքով գործող համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող 10 տարածքային կենտրոններ»: Այդ ծրագիրն իրականացնելու համար նախանշվել են հետևյալ քայլերը.

1) ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման համար անհրաժեշտ նորմատիվ-իրավական ակտերի մշակում,

2) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների տեխնիկական վերազինում,

3) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների աշխատողների վերապատրաստման դասընթացների կազմակերպում,

4) համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կենտրոնների գործառույթների ընդլայնում՝ ներառելով կրթական, զբաղվածության և այլ ծրագրերի գծով խորհրդատվություն, աջակցություն ցուցաբերելուն:

220. Ներկա իրավիճակը. ՀՀ Արագածոտնի մարզում գործում են.

Աղյուսակ 6.13.

•	Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ	4
•	Սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) տարածքային բաժիններ	4
•	«ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության» գործակալության Արագածոտնի մարզային բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով (ԲՍՓՀ)	1
•	« Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններ	4

Աղյուսակ 6.14. ՀԶՀ սոցիալական հնարավորություններից զրկվածության բաղադրիչի խոցելիության համաթիվը (V) ՀՀ մարզերում՝ 2012թ.

	երեք և ավելի երեխա(0-15 տարեկան) պարունակող տ/տ-ների անդամներ,%	Միայնակ կամ միքանի ծերերից (65 և ավելի տարեկան) կազմված տ/տ-ների անդամներ%	Աշխատանքային տարիքի տղամարդ չունեցող /տ-ների անդամներ%	Խոցելի սոցիալական կազմ ունեցող տ/տ-ներում ապրող գյուղական բնակչության տեսակարար կշիռը %
	V1	V2	V3	V=1/3x(V1+ V2+ V3)

Արագածոտն	**23.5**	**8.2**	**16.8**	**16.2**
Կոտայք	27.0	5.0	10.0	14.0
Գեղարքունիք	27.9	8.1	17.4	17.8
Տավուշ	10.1	13.9	23.5	15.8
Լոռի	13.6	10.9	23.8	16.1
Շիրակ	10.8	10.3	21.7	14.3
Արարատ	13.7	7.8	19.4	13.6
Արմավիր	17.6	8.8	18.9	15.1
Սյունիք	18.9	18.2	30.5	22.5
Վայոց ձոր	18.0	7.4	14.9	13.4
Ընդամենը ՀՀ գյուղական բնակչություն	18.4	9.2	18.8	15.5

Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական միտումները: Գյուղական աղքատությունը ՀՀ մարզերում: Տեղեկատվական-վերլուծական պարբերական: ՄԱԿԶԾ – համար 6, էջ 7

Աղյուսակ 6.15. Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում, % մարզի բնակչության թվում

ՀՀ մարզեր	Խոցելի խմբերի ներկայացվածությունը ՀՀ մարզերում, % մարզի բնակչության թվում								Խոցելիության համա թիվ
	Հաշման դամ-ներ՝ այդ թվում երեխա	Ծնողա զուրկ երեխա-ներ	Միայ-նակ ծերեր	Գործա-զուրկ-ներ	Տարեց-ներ	Բազմա զավակ ընտա-նիքներ	Փախ ստա-կանն ներ	Նպաս-տառու-ներ	
Երևան	4.4	2.1	9.8	25.0	12.9	4.9	4.6	9.2	31.7
Արագածոտն	**3.7**	**3.1**	**9.8**	**16.9**	**12.0**	**20.2**	**5.1**	**17.5**	**34.2**
Արարատ	3.4	3.1	7.8	14.9	13.1	12.6	17.0	12.4	31.8
Արմավիր	2.9	2.8	9.6	18.3	10.5	13.8	8.6	9.1	30.5
Գեղարքունիք	4.0	1.4	8.4	37.3	12.0	21.4	11.0	23.3	45.5
Լոռի	5.1	3.9	9.6	19.1	11.6	9.0	5.8	29.4	35.5
Կոտայք	2.6	1.7	6.2	37.1	8.8	14.8	11.0	13.7	38.1
Շիրակ	4.2	4.8	13.2	18.2	11.8	8.2	1.3	35.9	36.6
Սյունիք	5.5	5.2	13.2	19.7	12.6	9.6	9.0	14.5	37.5
Վայոց Ձոր	5.6	2.5	7.2	21.9	13.3	13.2	7.0	19.0	35.6
Տավուշ	6.9	5.1	16.2	27.8	15.7	8.0	7.4	21.2	45.6
Ընդամենը ՀՀ	4.2	3.2	10.1	24.2	12.2	12.3	7.2	17.3	36.6

Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալական միտումները: Խոցելի բնակչությունը ՀՀ մարզերում: Տեղեկատվական վերլուծական պարբերական: ՄԱԿԶԾ - Հոկտեմբեր 2005թ.: Էջ 17

221. Աղյուսակի տվյալները վկայում են, որ մարզի սոցիալական խոցելիության համաթիվը չի գերազանցում հանրապետական միջին համաթիվին (36.6%): Խոցելի բնակչության տեսակարար կշիռն ավելի մեծ է փոքր՝ մինչև 1000 բնակիչ ունեցող համայնքներում: Փաստորեն, որքան փոքր է համայնքը, այնքան մեծ է այնտեղ խոցելի բնակչության տեսակարար կշիռը և որքան մեծ է փոքր համայնքների տեսակարար կշիռը մարզի համայնքների ընդհանուր թվում, այնքան բարձր է խոցելի բնակչության միջին մակարդակը մարզում: Մարզն առանձնանում է նաև սոցիալական պաշտպանվածության առավել կարիք ունեցող խմբերի բազմազանությամբ: Դրանք են.

1) գործազուրկներն ու ցածր աշխատավարձով աշխատողները,

2) փախստականները և ժամանակավոր կացարաններում բնակվողները,

3) թոշակառուներն ու հաշմանդամները (հատկապես՝ միայնակ),

4) բազմանդամ, հատկապես՝ բազմազավակ ընտանիքների անդամները:

222.Պետական նպաստներ. 2014թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են պետական նպաստների հետևյալ տեսակները.

1) ընտանեկան նպաստը.
2) սոցիալական նպաստը.
3) հրատապ օգնությունը.
4) երեխայի ծննդյան միանվագ նպաստը.
5) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը.
6) ժամանակավոր անաշխատունակության նպաստը.
7) ծերության նպաստը.
8) հաշմանդամության նպաստը.
9) կերակրողին կորցնելու դեպքում նպաստը.
10) թաղման նպաստը:

223. Ընտանեկան նպաստների համակարգը հանդիսանալով Հայաստանում աղքատության մեղմացման պետական քաղաքականության գլխավոր լծակ, աջակցում է սոցիալապես առավել անապահով ընտանիքներին և խոցելի բնակչությանը՝ գնահատելով իր շահառուների սոցիալական վիճակը՝ ըստ որոշակի օբյեկտիվ ցուցանիշների և բալային համակարգի: Իրականացվող ծրագիրն այս

տարիների ընթացքում ենթարկվել է փոփոխությունների ինչպես ընտանիքների անապահովության գնահատման, այնպես էլ համակարգի վարչարարության բարելավման առումով: «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընտանիքների անապահովության գնահատման ժամանակ օգտագործվում են ցուցանիշներ ու չափորոշիչներ, որոնց կշիռը որոշվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ամենամյա հետազոտությունների տվյալների հիման վրա:

224. Յուրաքանչյուր տարի այդ հետազոտությունների արդյունքների օգտագործմամբ ամբողջ հանրապետության համար վերանայվում է ընտանիքների անապահովության գնահատման կարգը, ինչպես նաև սահմանվում են նպաստի բազային չափը, երեխաների համար տրվող հավելման և միանվագ դրամական օգնության չափերը: Շարունակվել է ընտանեկան նպաստի համար նախատեսված ֆինանսական միջոցների ուղղորդումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես՝ բազմազավակ ընտանիքներին, հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը (սահմանամերձ բնակավայրեր և այլն): Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անդամի (երեխայի) համար տրվող հավելումը, որի չափը տարբերակվում է ելնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակության վայրից, բնակարանային պայմաններից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից: Յուրաքանչյուր տարվա համար ՀՀ կառավարությունը սահմանում է ընտանեկան նպաստի բազային մասի, երեխաներին տրվող հավելումների, ինչպես նաև միանվագ դրամական օգնության չափերը, անապահովության սահմանային միավորի մեծությունը: Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝

1) 30.01-35.00,
2) 35.01-39.00,
3) 39.01 և ավելի:

225.Անապահովության միավորների տիրույթների հավելման չափերը միմյանցից տարբերվում են 500 դրամով: Այսինքն, որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը: Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է. սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար տրվող հավելումը 500 դրամով ավելի է տվյալ տիրույթի համար սահմանված հավելման չափից, իսկ եթե ընտանիքում երեխաների թիվը 4 և ավելի է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար տրվող հավելման չափը բարձր է ևս 1000 դրամով:

226. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանեկան նպաստի համակարգում սահմանվել են միանվագ օգնության նշանակման հստակ հիմքեր՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու և ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակառու, աշխատող, ինչպես նաև առնվազն մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող գործազուրկ չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ օգնության չափը սահմանվել է 50000 դրամ, երեխայի առաջին դասարան ընդունվելու համար միանվագ օգնության չափը՝ 25000 դրամ, իսկ ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ հուղարկավորության միանվագ օգնության չափը՝ 50000 դրամ: Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով՝ ՍԾՏԳ-ին կից գործող սոցիալական աջակցության խորհրդի (ՍԱԽ) առաջարկությամբ կարող է տվյալ ընտանիքին նշանակել եռամսյակային հրատապ օգնություն, որի ամսական չափը սահմանվում է բազային նպաստի չափին հավասար: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունվել որոշում հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին: Անդրադառնալով սոցիալական աջակցության բնագավառում իրականացվող բարեփոխումներին պետք է փաստել, որ դեռևս օրակարգային է սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների հասցեականության բարձրացման հարցը և այս տեսանկյունից առանձնանում է հատկապես ընտանեկան նպաստը:

227. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ. Վերջին տարիներին ուշադրության կենտրոնում են հայտնվել երեխաները, որոնցից շատերի ընտանիքները չեն ընդգրկված ընտանեկան նպաստի համակարգում և, փաստորեն, դեռևս լիարժեք չի ապահովվում հատկապես դեռահասների սոցիալական պաշտպանվածությունը: Տարեցտարի ավելացվեցին ընտանեկան նպաստների չափերը և ընտանիքների յուրաքանչյուր մինչև 18 տարին չլրացած անդամին տրվող հավելումները: Երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող 35.000 դրամ նպաստը և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի 3000 դրամ նպաստը 2009 թվականից դարձան համապատասխանաբար՝ 50.000 դրամ և 18.000 դրամ:

228. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ. 2009 թվականին սահմանվել է 50.000 դրամի չափով միանվագ դրամական օգնություն ընտանիքում ծնված յուրաքանչյուր երեխայի համար: Ծնելիությունը և բազմազավակությունը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունը որոշակի քայլեր է ձեռնարկել: Մասնավորապես, 2007 թվականի հունվարի 1-ից (ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշում)

ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքներում (որոնց անապահովության միավորը բարձր է 0-ից), այդ թվում՝ նպաստառու, երրորդ և ավելի երեխա ծնվելու դեպքում վճարվել է 200.000 դրամ միանվագ դրամական օգնություն, որը 2008թ. հունվարի 1-ից դարձել է 300.000 դրամ, 2009թ. հունվարի 1-ից՝ 430.000 դրամ, իսկ 2014թ. հունվարի 1-ից 1-ին եւ 2-րդ երեխայի ծննդյան դեպքում պահպանվել է միանվագ նպաստի չափը 50.000 դրամ, իսկ 3-րդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում կիրառվում է տարբերակված նոր մոտեցում՝ ներդնելով ընտանեկան դրամագլխի համակարգը՝ կանխիկ վճարելով 500.000 դրամ, ինչը 70.000 դրամով ավելին է 2013թ. համեմատ, ընդ որում 3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում միանվագ նպաստի չափը սահմանվել է 1 մլն դրամ (որից 500.0-ը հազ.դրամը կանխիկ, 500.0 հազ. դրամը որպես ընտանեկան դրամագլուխ), իսկ 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ (որից 500,0 հազ.դրամը կանխիկ, 1000.0 հազ.դրամը անկանխիկ՝ որպես ընտանեկան դրամագլուխ, որը մինչև երեխայի 18 տարին լրանալը, անկանխիկ վճարումներ կատարելու միջոցով տնօրինվում է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի կողմից, իսկ երեխան այն առանց սահմանափակումների կարող է տնօրինել 18 տարին լրանալուց հետո:

229. Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ամփոփ տեղեկատվության, 2014թ. հունվար-հունիսին երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացել է 12 880 ընտանիք, նշանակված նպաստների քանակը կազմել է 13340, որից ՀՀ Արագածոտնի մարզում 666 ընտանիք և 666 նպաստ:

Աղյուսակ 6.16. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացող ընտանիքների քանակն ու նշանակված նպաստների քանակն ըստ նորածինների հերթական կարգաթվերի, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2014թ. հունվար-հունիս

միավոր

	Ընտանիքների քանակը	Նշանակված նպաստների քանակը	այդ թվում՝ ըստ երեխայի հերթական կարգաթվի				
			1-ին երեխա	2-րդ երեխա	3-րդ երեխա	4-րդ երեխա	5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխա
ք.Երևան	4 346	4 385	1 898	1 780	611	75	21
Արագածոտն	**660**	**666**	**294**	**228**	**125**	**13**	**6**
Արարատ	1 062	1 075	429	372	228	33	13
Արմավիր	1 267	1 285	504	498	228	40	15
Գեղարքունիք	913	921	379	329	177	30	6
Լոռի	1 120	1 134	556	408	135	30	5
Կոտայք	1 333	1 344	538	529	238	31	8
Շիրակ	1 154	1 165	558	407	163	25	12

	Ընտանիքների քանակը	Նշանակված նպաստների քանակը	այդ թվում՝ ըստ երեխայի հերթական կարգաթվի				
			1-ին երեխա	2-րդ երեխա	3-րդ երեխա	4-րդ երեխա	5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխա
Սյունիք	590	593	257	235	90	4	7
Վայոց ձոր	250	252	110	98	32	10	2
Տավուշ	185	520	192	195	110	16	7
Ընդամենը ՀՀ	**12 880**	**13 340**	**5 715**	**5 079**	**2 137**	**307**	**102**

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-հուլիսին

230. Կենսաթոշակային համակարգ. Կենսաթոշակային ապահովության բնագավառը կանոնակարգելու նպատակով մշակվել և 2011 թվականին ուժի մեջ են մտել մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝ «Պետական կենսաթոշակների մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն, «Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին» N 670-Ն և մի շարք այլ որոշումներ: Համապատասխան փոփոխություններ են կատարվել մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ «Պետական կենսաթոշակների մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին», «Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին», «Շահութահարկի մասին», «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին», «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքներում:

1) ձևավորվել և գործում է կենսաթոշակային համակարգի կենտրոնացված տեղեկատվական շտեմարանը:

Աղյուսակ 6.17. Ընտանեկան նպաստի ներգործությունն աղքատության մակարդակի վրա ըստ մարզերի (%-ներով), 2011թ.

Մարզեր	Հետտրանսֆերտային մակարդակ (վճարվել են կենսաթոշակները և սոցիալական աջակցությունը)		Նախքան ընտանեկան նպաստի (ԸՆ) վճարումը (նախա-ԸՆ, հետկենսաթոշակային և այլ սոց. աջակցություն)		Ընտանեկան նպաստի չվճարման փոփոխությունը, տոկոսային կետ	
	ծայրահեղ աղքատության մակարդակ	աղքատության մակարդակ	ծայրահեղ աղքատության մակարդակ	աղքատության մակարդակ	ծայրահեղ աղքատության մակարդակ	աղքատության մակարդակ

ք.Երևան	2.7	27.5	4.2	28.1	1.5	0.6
Արագածոտն	**1.1**	**20.7**	**1.8**	**21.5**	**0.7**	**0.8**
Արարատ	2.5	39.3	5.7	40.4	3.2	1.1
Արմավիր	5.6	37.0	7.1	39.2	1.5	2.2
Գեղարքունիք	1.5	37.0	4.8	39.4	3.3	2.4
Լոռի	4.7	45.4	10.0	48.0	5.3	2.6
Կոտայք	7.1	45.5	12.2	49.3	5.1	3.8
Շիրակ	7.0	47.7	11.2	50.7	4.2	3.0
Սյունիք	1.1	26.8	4.3	30.1	3.2	3.3
Վայոց Ձոր	1.5	29.9	2.8	32.3	1.3	2.4
Տավուշ	2.0	26.7	4.1	28.5	2.1	1.8
Ընդամենը՝ ՀՀ	3.7	35.0	6.5	36.8	2.8	1.8

231. Աշխատանքի և զբաղվածության ոլորտ. Գործազրկությունը մարզում աղքատությունը և խոցելիությունը պայմանավորող հիմնական գործոններից է: Գործազրկության մակարդակը Արագածոտնում 2005-2008թթ.-երին հիմնականում տատանվել է (2005 թ) 1.57%, (2008 թ) -1.63 % - ի սահմաններում և ունեցել է աճման միտում: Այն կապված է թաքնված գործազրկության կրճատման և գործազրկության նպաստի կտրուկ աճի հետ: 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ըստ զբաղվածության պետական ծառայության տարածքային կենտրոնների տվյալների, մարզում հաշվառվել է 2226 քաղաքացի, որոնցից գործազուրկի կարգավիճակ է ստացել 1311-ը: Նրանցից 77%-ը կանայք են:

232. Զբաղվածություն.

1) Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում,
2) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում,
3) Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում,
4) Աշխատանքի տոնավաճառի կազմակերպում,

5) Գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում,
6) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում,
7) .Մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովում և կադրերի վերապատրաստում, հանրային իրազեկում,
8) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում,
9) Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում,
10) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում»:

233. Զբաղվածության պետական գործակալության Աշտարակի, Ապարանի, Թալինի և Ծաղկահովիտի տարածքային կենտրոնների (այսուհետ՝ զբաղվածության կենտրոններ) գործունեությունն ուղղված է մարզի բնակչության կայուն զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծմանն ուղղված միջոցառումների իրականացմանը, մասնավորապես՝ մարզի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր աշխատատեղերի ստեղծմանն ու համալրմանն ուղղված միջոցառումների իրականացմանը: Զբաղվածության կենտրոնների միջոցով իրականացվում են ստորև նշված զբաղվածության պետական կարգավորման ծրագրերը՝

1) գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում.
2) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում.
3) ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում.
4) աշխատանքի տոնավաճառի կազմակերպում.
5) գործազուրկին այլ վայրում աշխատանքի տեղավորման աջակցության տրամադրում.

6) աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում.
7) մասնագիտական կողմնորոշման համակարգի մեթոդաբանության ապահովում և կադրերի վերապատրաստում, հանրային իրազեկում.
8) աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում.
9) սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում.
10) աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության ծախսերի փոխհատուցում:

234. 2014թ. հուլիսի դրությամբ մարզում աշխատանք փնտրողների թիվը կազմում է 2563 մարդ, գործազուրկների թիվը՝ 2358 մարդ, որից՝ Աշտարակի տարածաշրջանում՝ 903 մարդ, Ապարանի տարածաշրջանում՝ 528 մարդ, Թալինի տարածաշրջանում 657 և Արագածի տարածաշրջանում՝ 270 մարդ:

Աղյուսակ 6.18. Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2014թ. հուլիսի վերջի դրությամբ

մարդ

	Աշխատանք փնտրողներ			*նրանցից՝գործազուրկներ*		
	ընդամենը	*նրանցից՝* երիտասարդներ, *տարեկան*		ընդամենը	*նրանցից՝* երիտասարդներ, *տարեկան*	
		16-24	25-30/25-29[1]		16-24	25-30/25-29[1]
Ընդամենը	66 341	7 021	8 578	63 533	6 422	8 380
ք. Երևան	16 630	1 161	1 523	15 504	901	1 382
Արագածոտն	**2 563**	**355**	**322**	**2 358**	**325**	**281**
Արարատ	4 163	512	507	3 988	464	564
Արմավիր	3 469	328	423	3 413	321	419
Գեղարքունիք	5 500	647	831	5 396	616	818
Լոռի	7 861	892	1 278	7 787	889	1 271
Կոտայք	6 450	561	839	6 253	530	819
Շիրակ	9 725	1 301	1 330	9 208	1 148	1 338
Սյունիք	4 446	383	646	4 324	368	631

	Աշխատանք փնտրողներ			*նրանցից՝ գործազուրկներ*		
	ընդամենը	*նրանցից՝* երիտասարդներ, *տարեկան*		ընդամենը	*նրանցից՝* երիտասարդներ, *տարեկան*	
		16-24	25-30/25-29[1]		16-24	25-30/25-29[1]
Վայոց ձոր	1 067	148	163	932	139	148
Տավուշ	4 467	733	716	4 370	721	709

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-հուլիսին

Աղյուսակ 6.19. Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ Արագածոտնի մարզի տարածաշրջանների 2014թ. հուլիսի վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ	*նրանցից՝ գործազուրկներ*
Արագածոտն	**2 563**	**2 358**
Աշտարակ	1 670	1 577
Ապարան	113	108
Արագած	376	294
Թալին	404	294

Աղբյուր՝ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-հուլիսին

Գրաֆիկական պատկեր 3.



235. Գործազրկության մակարդակը մարզում, որպես խոցելիություն ծնող պատճառ, ըստ պաշտոնական տվյալների չնայած շատ ցածր է, սակայն իրականում թե քաղաքային, թե գյուղական համայնքներում առկա է գործազրկության ավելի բարձր մակարդակ:

Գրաֆիկական պատկեր 4. Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակի փոփոխությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2014թ. հուլիսի վերջի դրությամբ



236. Զբաղվածության ոլորտի գերակայություններ են.

1) աշխատուժի մրցունակության շարունակական բարձրացում
2) աշխատուժի առաջարկի և պահանջարկի անհամամասնությունների մեղմում
3) երիտասարդների (այդ թվում՝ գյուղական երիտասարդության) զբաղվածության ապահովման աջակցություն
4) աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամների զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի ծավալների մեծացում:

237. Փախստականներ. որպես առանձնահատուկ սոցիալապես անապահով առանձին խմբի, սոցիալական օժանդակության ծրագրերի անհրաժեշտությունը ամրագրված է նաև ԿԶԾ-ում: Արագածոտն մարզում 1989-1990թթ. բնակվում էր 2700 փախստական ընտանիք: 90-ականներին նրանց թիվը նվազեց, և ներկայումս մարզում մշտական բնակություն է հաստատել 1396 ընտանիք: Արագածոտն մարզում 1994-2005թթ. փախստականների համար իրականացվել են բնակարանաշինության

տարբեր ծրագրեր: Կառուցվել է 148 քոթեջ, 1 բնակելի շենք և նրանց է հատկացվել վերակառուցված հանրակացարանի 1 շենք: 2002-2007թթ. բնակարանները սեփականաշնորհել է 291 ընտանիք: Հինգ ընտանիք բնակարանը չի սեփականաշնորհել՝ ՀՀ –ից բացակայելու պատճառով:

Աղյուսակ 6.20. Տեղեկանք ՀՀ Արագածոտնի մարզում փախստականներին հատկացված բնակելի շենքերի և բնակարանների մասին

Կառուցման տարեթիվ	Օբյեկտների անվանումը և գտնվելու վայրը	Շենքերի թիվը	Բնակարան-ների թիվը
1994	գ.Կարին	55 քոթեջ	107
1995	ք. Աշտարակ,«Նարեկ» թաղամաս	35 քոթեջ	70
	ք. Աշտարակ,«Նարեկ» թաղամաս	45 քոթեջ	90
1998	ք. Աշտարակ, բնակելի շենք	1	8
	գ. Կարին	13 քոթեջ	13
2002	ք.Աշտարակ, Սպանդարյան 25 հասցեում հանրակացարանի վերակառուցումը բնակելի շենքի	1	38
2006	գ. Արտաշավան, գ. Մուլքի, գ.Նոր-Ամանոս	3 քոթեջ	3

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մազպետարան

238. ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 20-ի «1988-1992 թվականներին ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին«» թիվ 747 որոշմամբ ՀՀ Արագածոտն մարզից բնակարանի գնման վկայագիր է ներկայացրել 84 փախստական ընտանիք: 51 ընտանիք գնել է իրենց նախկինում բնակեցված տարածքները կամ գնել նոր բնակարաններ: 33 փախստական ընտանիք վկայագրերը վերադարձրել է ՀՀ կառավարություն՝ գնման ժամկետը լրանալու կամ բնակարան գնելու գումարը չբավարարելու պատճառով: 123 ընտանիք դեռևս բնակարանի խնդիր ունի: ՄԱԿ-ի կողմից 2007թ.-ին իրականացվեց փախստականների հաշվառում, ըստ որի փախստական ընտանիքների թիվը մարզում դարձել է 635: Փախստականների թվի նվազումը հիմնականում կապված է արտագաղթի հետ: Միջինից բարձր տարիք ունեցողները՝ չինտեգրվելով նոր մաջավայրում, ունենալով լեզվական խնդիրներ, և հարմար աշխատանք չգտնելով, լքում են Հայաստանը:

239. Փախստականներից մարզում հիմնականում մնացել են ծերերը: Այսօր փախստականների առաջ ծառացած են խոցելի բոլոր խմբերին բնորոշ առանձնահատուկ խնդիրներ՝

1) Աշխատատեղերի բացակայությունը. Գործազրկության բարձր մակարդակը բնորոշ է նաև փախստականներին, ինչի պատճառով նրանցից շատերը գտնվում են ծայրաստիճան կարիքի և զրկանքների մեջ:
2) Բնակարանային վիճակը. Չնայած, որ կառավարության և դոնոր հանրության ջանքերով այսօր արդեն իրական առաջընթաց է գրանցվել փախստականների բնակարանային խնդրի հարցում, այնուամենայնիվ դեռևս կան ընտանիքներ, որոնք ապրում են ժամանակավոր կացարաններում, և ընգրկված չեն առաջնահերթության ծրագրերում: Մարզում բնակվում է մոտ 40 ընտանիք (վարձով, հարազատների ու բարեկամների տանը), որոնք պետական կամ միջազգային որևէ ծրագրերում ընդգրկված չեն:
3) Սոցիալական, կենցաղային տարրական պայմանների անբավարար վիճակ. Փախստականների կենցաղային պայմանները ևս բարվոք չեն:
4) Իրազեկվածության ցածր մակարդակը: Փախստականների խոցելիության և աղքատության հաղթահարման խոչընդոտներից է նաև սոցիալական իրավունքների և իրականացվող աջակցության ծրագրերի վերաբերյալ նրանց իրազեկության ցածր մակարդակը:

240. Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումն ուղղված է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման և պրոտեզաօրթոպետիկ օգնության ու ծառայությունների մատուցման կազմակերպման բարելավմանը, որը կնպաստի հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու, մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները Դա մեր երկրի սոցիալական քաղաքականության և աղքատության հաղթահարման ծրագրի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության» պահանջներից է: հաշմանդամություն ունեցող անձանց բնորոշ հիմնախնդիրները համընկնում են հաշմանդամություն ունեցող երեխա հիմնախնդիրների հետ: Նրանց բնորոշ առանձնահատկություններն են.

1) հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ տիպի մասնագիտական հմտությունների փոխանցման անհրաժեշտությունը,

2) գյուղաբնակ հաշմանդամություն ունեցող անձանց գյուղատնտեսությամբ զբաղվելու սահմանափակ կարողությունները,

3) անաշխատունակ հաշմանդամություն ունեցող անձանց նպաստի և թոշակի անընդունելի ցածր մակարդակը,

4) ընտանիքների լրացուցիչ ծանրաբեռնվածությունը: Այն հատկապես օրախնդրային է 1-ին կարգի հաշմանդամություն ունեցող անձ ունեցող ընտանիքներում, որտեղ անդամներից մեկը ստիպված է անգամ հնարավորություն ունենալու դեպքում հրաժարվել աշխատելուց: Դա կարող է որպես վտանգ դիտվել այդ անձի առումով, քանզի խոչընդոտում է նրա կարողությունների իրացմանը: Այս հանգամանքը տվյալ ընտանիքներին դարձնում է էլ ավելի խոցելի:

241.Հաշմանդամություն ունեցող երեխաների նախադպրոցական և կրթական հաստատություններում ընդգրկելու մատչելի պայմաններ չկան, հասարակությունը պատրաստ չէ նրանց ընդունելու: Խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է մարզում իրականացնել «Յուրաքանչյուր հաշմանդամ երեխայի՝ հատուկ խնամք, կրթություն և վերաբերմունք» ծրագիրը: Այդ նպատակի համար 82 մլն դրամի ներդրումներ անհրաժեշտ կլինեն: Այն հնարավորություն կտա.

1) մարզի դպրոցներն ու մանկապարտեզները մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող երեխաների համար: Յուրաքանչյուր տարի մարզի 10 կրթական շենքերում կկառուցվեն թեքահարթակներ,

2) մանկավարժների, սպասարկող անձանց, հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների և համադասարանցիների հետ կիրականացվեն կրթական, մշակութային ծրագրեր:

3) կկազմակերպվի տնային ուսուցման:

4) կապահովվի տրանսպորտային ծառայության:

242. Հաշմանդամություն ունեցող երեխաների խոցելի խմբերի առանձնահատուկ հիմնախնդիրներն ավելի շատ են.

1) Առողջապահական ծառայությունները լիարժեք կերպով չեն տրամադրվում, քանի որ դրանք դարձյալ պետք է իրականացվեն պետպատվերի շրջանակներում: Նշվել են դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող երեխային անհրաժեշտ է դեղորայք, որն անմատչելի է հաշմանդամության ցածր թոշակի և նպաստի պայմաններում:
2) Հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնականում չեն ընդգրկվում կրթության համակարգում, որի պատճառներից են նաև շրջապատի վերաբերմունքն ու նրանց հնարավորություններին կրթական հաստատությունների կամ ծրագրերի անհամապատասխանությունը: Էական

հիմնախնդիր է նաև երեխայի հաշմանդամության վերաբերյալ իրազեկվածության պակասը:

243.Հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանափակ են մասնագիտական կրթության հնարավորությունները, ինչն անկանխատեսելի է դարձնում նրանց ապագան: Փաստացիորեն, նրանք զրկվում են առանց խնամակալի իրենց կյանքը դասավորելու որևէ հնարավորությունից:

244. Նրանց համար նախատեսված ժամանցի վայրերի բացակայությունը ևս լուրջ խնդիր է, հատկապես, եթե հաշվի առնենք այն, որ այն նաև խնամակալին է դարձնում խոցելի, քանի որ վերջինս ստիպված է միշտ լինել հաշմանդամ երեխայի կողքին՝ հնարավորություն չունենալով զբաղվել սեփական հիմնախնդիրներով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 276-Ն որոշման /այսուհետ՝ որոշում/ մեջ կատարվել են լրացումները.

1) Համաձայն որոշման 5.1 կետի՝ «Առաջին անգամ փորձաքննվող անձանց բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ հանձնաժողովի նիստին մասնակցում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանների կամ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից հաստատված մասնագետների ցանկում ներառված անձինք, այդ թվում՝ պոլիկլինիկաների տնօրենների փորձաքննության գծով տեղակալներ, Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների առողջապահության ոլորտի գլխավոր մասնագետներ:
2) Համաձայն որոշման 5.3 կետի՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, փորձաքննվող անձի համաձայնության կամ ցանկության դեպքում, կարող են դիտորդի կարգավիճակով մասնակցել բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին»:
3) Հանձնաժողովների նիստերին մասնագետների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգերը հաստատվել են Հայաստանի Հանրապետության առողջապահության և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների կողմից:

245. Հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են մարզի բնակչության 7%-ը /2013թ./: Անցած տարիների ընթացքում որոշակի աշխատանք է կատարվել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական վիճակի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես, 52 հաշմանդամություն ունեցող անձանց

տրամադրվել են սայլակներ, վատ լսող 74 քաղաքացում լսողական ապարատներ են տրվել:

6.4.2 Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

246. Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է «Երեխաների իրավունքների մասին», «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքների, ՀՀ Ընտանեկան օրենսգրքի, ՀՀ կառավարության 2010թ. մարտի 18-ի «Երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին» N269-Ն, 2003թ. օգոստոսի 8-ի «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ. ռազմավարությունը հաստատելու մասին» N1000-Ն, 2012թ. դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ժամանակացույցը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 18-ի N 1745-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1694-Ն որոշումների և այլ իրավական ակտերի համաձայն»

247. «Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի հիմնախնդիրներն են `

1) ընտանիքի, կանանց և երեխաների խնամքի և պաշտպանության միասնական համակարգի զարգացումը,
2) երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների մուտքի կանխարգելումը/բեռնաթափումը,
3) հատուկ հանրակրթական հաստատություններում/ներառական կրթություն/ հատուկ կարիքներով երեխաների ընդգրկվածությունը,
4) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց սոցիալական պաշտպանության ապահովումը,
5) մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության մեջ մեղադրվող երեխաների պաշտպանության ապահովումը,

6) գենդերային հիմնահարցերի ուսումնասիրումը, դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակումը և իրականացումը:

248. «Հայաստանի Հանրապետության երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագրում կարևորվում է նաև երեխային մատուցվող ծառայությունների ապակենտրոնացման և համայնքների ներգրավման սկզբունքը՝ խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծման միջոցով:

249. Ներկայումս մարզում երեխային մատուցվող ծառայությունների ապակենտրոնացման և համայնքների ներգրավման նպատակով՝ խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծման միջոցով գործընթացի իրականացման համար խոչընդոտ են հանդիսանում շենքային պայմանների և ֆինանսական միջոցների բացակայությունը՝

1) երեխաների խնամքի և պաշտպանության միասնական համակարգի ստեղծումը,
2) երեխայի խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների թվի նվազեցումը և այդ հաստատություններում երեխաների մուտքի կանոնակարգումը,
3) երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների պայմանների բարելավումը,
4) առանց ծնողական խնամքի մնացած և հաշմանդամ երեխաների հիմնախնդիրների լուծումը,
5) պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների հիմնախնդիրների լուծումը,
6) մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդիրների կարգավորումը,
7) աղքատ ընտանիքներում երեխաների պաշտպանության հիմնախնդիրների քննարկումը և այդ ուղղությամբ ծրագրերի իրականացումը:

250. ՀՀ կառավարության որոշմամբ 2006թ. երկրում ստեղծվել է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ, որի միջոցով կազմակերպվում և ապահովվում է երեխաների պաշտպանությունը ազգային, մարզային և համայնքային մակարդակներում: Մարզպետարանի նպատակն է պետական քաղաքականության շրջանակներում աջակցել, համակարգել և վերահսկել մարզում երեխաների իրավունքների պաշտպանության կառույցների գործունեությունը և ապահովել ընտանիքների, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությանը նպատակաուղղված պետության նպատակային ծրագրերի իրականացումը: Համայնքներում խնամակալության և հոգաբարձության

մարմիններին կից ստեղծվել են հանձնաժողովներ, որոնց նպատակն է տեղերում ապահովել երեխաների պաշտպանությունն ու բարեկեցությունը:

251. Երեխայի հիմնախնդիրների լուծման հիմնական ուղղվածություններն են.

1) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հիմնախնդիրներ,
2) հաշմանդամ երեխաների հիմնախնդիրներ,
3) պետական հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների երեխաների հիմնախնդիրներ,
4) մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հիմնախնդիրներ,
5) օրինազանց երեխաների հիմնախնդիրներ,
6) կոնֆլիկտային ընտանիքներում գտնվող երեխաների հիմնախնդիրներ,
7) աղքատ ընտանիքներում երեխաների պաշտպանության հիմնախնդիրներ:

252. Խնամակալության և հոգաբարձության մարմինը համայնքի ղեկավարն է, որի աշխատանքի կազմակերպման համար ստեղծվում են համապատասխան հանձնաժողովներ: Արագածոտն մարզի բոլոր՝ 114 համայնքներում սահմանված կարգով ձևավորված են **խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ**: Խնամակալության և հոգաբարձության մարմինները հայտնաբերում են համայնքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, նրանց մասին ձեռք են բերում տեղեկություններ և հետազոտում են երեխայի կյանքի պայմանները, երեխայի կյանքին անմիջական վտանգ սպառնալու դեպքում՝ անհապաղ ապահովում են երեխայի ժամանակավոր տեղավորումը: Խնամակալության և հոգաբարձության մարմինները առավել լավատեղյակ են ընտանիքների կարիքներին և առկա ռեսուրսների շրջանակներում կարող են հասցեական աջակցություն հատկացնել դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին: Դրանք առավել մեծ հնարավորություններ ունեն հայտնաբերելու ռիսկային խմբերի երեխաներին, որովհետև ավելի մոտ են գտնվում համայնքի բնակիչներին, ճանաչում են նրանց: Սրանով հանդերձ, Տեղական ինքնակառավարման մարմինները բավարար արդյունավետ չեն իրականացնում ՏԻՄ օրենքի 33 հոդվածի 2 կետով սահմանված պահանջները: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության» 7 կետով նախատեսված պահանջները: Մասնավորապես, ժամանակին և ճիշտ չեն կատարվում բացահայտված ԱԾԽՄ երեխաների սկզբնական հաշվառումը և եռօրյա ժամկետում տեղեկությունները Երեխաների Իրավունքների Պաշտպանության բաժին փոխանցումը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 3 տարվա ընթացքում

խնամակալության և հոգաբարձության մարմիններն ընդունել են են շուրջ 100 որոշում: Սակայն, պետք է նկատել, որ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից հաճախակի սահմանվում են թե բովանդակությամբ, թե իրավական ձևակերպմամբ սխալ որոշումներ: Այդ մարմիններին աջակցելու, դրանց իրավական գործունեությունը արդյունավետ դարձնելու նպատակով համայնքի ղեկավարների և աշխատակազմի ղեկավարների համար մարզում կազմակերպվել են տարածաշրջանային տարբեր սեմինարներ: Շատ համայնքների տրամադրվել են մեթոդական գրականություն և գործունեության ոլորտին առնչվող իրավական ակտերի փաթեթներ: Սակայն այդ մարմինների աշխատանքները առ այսօր թերի են:

Աղյուսակ 6.21. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թիվն ըստ տարածաշրջանների

Տարածաշրջան	Տարիքը 0-18	Տարիքը 18-23
Աշտարակ	14	6
Ապարան	11	1
Թալին	10	7
Արագած	3	1
Ընդամենը	**38**	**15**

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մազպետարան

253. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բացահայտումը և հաշվառումը կարևորագույն գործնթաց է, որ պետք է իրականացնեն խնամակալության և հոգաբարձության մարմինները: Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանել է ԱԾԽՄ երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչները, որոնք ընդգրկում են՝

1) **կրթության և դաստիարակության բնագավառում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումները,**
2) **առանց ծնողական խնամքի մնացած երեխաների առողջության պահպանման իրավունքի ապահովումը,**
3) **առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակելի տարածության իրավունքի ապահովումը.**

4) զբաղվածության բնագավառում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

254. Արագածոտնի մարզի երեխաների 10,8 տոկոսը կյանքի դժվարին իրավիճակներում է գտնվում: Կան 53 առանց ծնողական խնամքի մնացած և նրան թվին պատկանող, 578 միակողմանի ծնողազուրկ 410 հաշմանդամ երեխաներ: 3500-ը ապրում են սոցիալապես խիստ անապահով ընտանիքներում: Բազմաթիվ երեխաներ ունեն հաշմանդամ, հարբեցող, մշտապես արտագնա աշխատանքի մեկնող ծնողներ: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանցից 10-ը իրենց ծնողներից բնակարան ժառանգություն չեն ստացել: Նրանց կեսը համայնքներում և ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունում հաշվառվել են որպես բնակարանի կարիք ունեցողներ: Սակայն մինչ օրս նրանցից ոչ մեկի համար բնակարան ձեռք չի բերվել: Մարզում գործում է Աշտարակի թիվ 1՝ մտավոր թերզարգացած երեխաների հատուկ գիշերօթիկ դպրոցը, որի միջոցով լուծվում է միայն մեկ խմբի՝ կարիքավոր երեխաների խնդիրը: Մարզում լուծված չէ երեխաների խնամքի հաստատությունների բացման հարցը: Վերջին 3 տարիների ընթացքում մարզում աճում է սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոններ ուղարկվող երեխաների թիվը:

Աղյուսակ 6.22. Խոցելի խմբի երեխաների թիվը ըստ տարածաշրջանների

Տարածաշրջան	ԱԾԽՄ /մինչև 18/	ԱԾԽՄ /18-23/	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	Հաշմանդամ երեխաներ	Ոստիկանությունում գրանցված երեխաներ
Աշտարակ	11	4	167	179	8
Թալին	11	12	285	126	6
Ապարան	8	3	78	54	9
Արագած	7	3	48	52	2
ԸՆԴԱՄԵՆԸ	37	22	578	411	25

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մազպետարան

Գրաֆիկական պատկեր 5. Մարզի երեխաների տոկոսային հարաբերությունն ըստ խոցելիության խմբերի



255. «Հայաստանի հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագիրը», «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարությունը» փաստաթղթերով կարևորվում է ներառական կրթության կազմակերպումը: Աշտարակի Գր. Ղափանցյանի անվան թիվ 4 դպրոցում և «Հովիկ» մանկապարտեզում մանկավարժները վերապատրաստվել են ներառական կրթություն կազմակերպելու նպատակով: Սակայն մարզում առայժմ այդպիսի մասնագիտացված կրթական հաստատություն չկա: Կատարված աշխատանքների արդյունքում բացահայտվել են կրթությունից դուրս մնացած հաշմանդամ երեխաներ: Համայնքի կրթական հաստատություններում համապատասխան պայմանների ապահովման դեպքում հնարավոր կլիներ նրանց ընդգրկել հանրակրթական ուսուցման, նախադպրոցական հաստատությունում:

256. Մարզի երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի հիմնախնդիրներն են. Մարզի ՏԻՄ-երի փոքրաթիվ աշխատակազմը: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներն աշխատում են հասարակական կարգով և չեն կարողանում ապահովել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների բացահայտման, նրանց աջակցություն կազմակերպման հարցերով արդյունավետ աշխատանքը: Արագածոտնի մարզի համայնքներում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությունը բարելավելու նպատակով անհրաժեշտ է 2010թ.-ից յուրաքանչյուր տարածաշրջանի ամենամեծ համայնքներում ունենալ վերապատրաստված 1-ական սոցիալական մանկավարժ, որը խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատող կդառնա: Այդ ծրագիրն

իրագործելու համար յուրաքանչյուր տարածաշրջանին անհրաժեշտ է լրացուցիչ հատկցնել 500000-ական դրամ՝ աշխատավարձի, ճանապարհածախսի, անհրաժեշտ գրականության ձեռք բերման համար:

257. Մարզում հաշվառված կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների համար չկա բազմամասնագիտական աջակցության հաստատություն: Անհրաժեշտ է 2015-2018թթ. ընթացքում Աշտարակում բացել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների աջակցության բազմամասնագիտական շուրջօրյա կենտրոն:

258. Աճում է ամուսնալուծված ընտանիքների թիվը, որի պատճառով երեխաները հայտնվում են կոնֆլիկտային իրավիճակում**:** Այդպիսի վիճակում անհրաժեշտ է դատարան ամուսնալուծության հայցով դիմած անչափահաս երեխաներ ունեցող անձանց և երիտասարդ ընտանիքների համար բացել բժշկահոգեբանական, իրավական աջակցության ընտանեկան կենտրոն: Դրա համար կպահանջվի 2500000 հազար դրամ դոնոր կազմակերպությունների, և 500000 դրամ՝ կամավորական ներդրում:

259. «Մարզում իրականացվում են նաև կանանց հիմնախնդիրներին վերաբերող նպատակային ծրագրեր, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. մայիսի 20-ի նիստում հավանության է արժանացել «Գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N19 արձանագրային որոշումը, իսկ 2011թ. հունիսի 17-ի նիստում՝ «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը, 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» N23 արձանագրային որոշումը, որոնց շրջանակներում յուրաքանչյուր տարի հաստատվող տարեկան ծրագրերում ներառվում են նաև մարզի ծրագրերը: Վերջիններս նպաստում են մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովմանը, օժանդակում կանանց սոցիալտնտեսական հարցերի կարգավորմանը, ընտանեկան բռնության կանխարգելմանը»:

6.4.3. Սոցիալական պաշտպանության համակարգի տարրերը

260. Վերոհիշյալ բոլոր խոցելի խմբերի նկատմամբ այսօր պետությունն իրականացնում է մի շարք միջոցառումներ: Սոցիալական պաշտպանության պետական համակարգը ներառում է.

261. պետական սոցիալական օժանդակության ծրագրեր - Դրանք պետական նպաստներն են (ընտանեկան, ծննդյան միանվագ, մինչև 2 տարեկան երեխաների խնամքի, ինչպես նաև հուղարկավորության նպաստներ), ԽՍՀՄ խնայբանկում

ներդրված ավանդների փոխհատուցման և այլ աջակցությունների ուղղված ծրագրերը, ապահովագրական և սոցիալական կենսաթոշակները,

262. հաշմանդամություն ունեցող անձանց**, վետերանների և երեխաների համար սոցիալական ապահովության ծրագրեր.** Այստեղ ներառված են բժշկասոցիալական վերականգնման, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում սպասարկելու, տուն-ինտերնատների, մանկատների և գիշերօթիկ դպրոցների պահպանման ծրագրեր,

263. պետական սոցիալական ապահովագրության ծրագրեր. Դրանք տարիքային և հաշմանդամության կենսաթոշակներն են, ժամանակավոր անաշխատունակության և հղիության նպաստները:

Զբաղվածության ծրագրեր՝

1) Գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման կազմակերպում,

2) Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար աշխատավարձի փոխհատուցման տրամադրում,

3) Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում և այլ ծրագրեր:

264. Համակարգի հիմնախնդիրների կանոնակարգման նպատակով ներկայումս պետության կողմից իրականավում են հետևյալ ծրագրերը.

Պետական նպաստների տրամադրում. Բնագավառը կանոնակարգվում է «Պետական նպաստների մասին», «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության՝ օրենքների կիրառությունն ապահովող մի շարք որոշումներով և իր մեջ ներառում է հետևյալ համակարգը և ծրագրերը.

1) **ընտանեկան նպաստի համակարգ,**
2) **մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի ծրագիր,**
3) **երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստի ծրագիր:**

265. Ընտանեկան նպաստի համակարգը գործում է 1999 թվականից և կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին: Իրականացվող ծրագիրն անցած տարիներին էապես բարեփոխվել է: Աճել են այդ նպատակներով պետական բյուջեի հատկացումները: Ավելացել են նպաստի բազային գումարի չափը, 18 տարեկան երեխաների հավելավճարները, նոր ծնված երեխաների ծննդյան միանվագ օգնություն նպաստների գումարները: 2010 թ. հունվարի 1-ի վիճակով նպաստառու է մարզի բնակչության 15.4%-ը:

266. Աղքատության ընտանեկան նպաստ համակարգի /ԱԸՆՀ/ նպատակը բնակչության առավել աղքատ խավերի սոցիալական բարվոք պայմանների ապահովումն է: Սակայն ներկայումս համակարգը կատարելագործման կարիք ունի: Կան նախանպաստային ընտանիքներ, ովքեր իրապես աղքատ են, բայց ընտանեկան նպաստ չեն ստանում: Այս խնդիրը փորձում է կարգավորել հրատապ դրամական աջակցության ծրագիրը որը, խորհուրդների որոշմամբ, նախանպաստային ընտանիքներին գումարներ է հատկացնում: Համակարգի բարեփոխումների շնորհիվ մեծացել են դրամական աջակցության չափը և տեսակները:

267. Սակայն կա բնակչության աղքատ մի խավ, որը չի փաստագրվում: Դրա հիմնական պատճառը համակարգի նկատմամբ անվստահությունն է: Այս խմբի մի մասն էլ դժվարություն ունի փաստաթղթերի ձեռք բերման հարցերում: Այդ խնդիրների կարգավորման նպատակով մարզպետարանը աշխատում է համայնքների և դրանցում գործող ՀԿ-ների հետ: Մարզի համայնքների մեծ մասը գտնվում են լեռնային և բարձր լեռնային գոտում, ինչը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում բնակիչների համար: Երկարատև ձմեռը, դժվար անցանելի ճանապարհները, հասարակական տրանսպորտի պակասը, դժվարեցնում է անգամ մարզկենտրոնի հետ կապը:

268. Սոցիալական օգնության պետական ծրագրերից ամենամեծն աղքատության ընտանեկան նպաստի ծրագիրն է: Արագածոտնի մարզում այդ ծրագրի շահառուների թիվը վերջին տարիներին դանդաղորեն նվազում է: Դա պայմանավորված է կենսաթոշակների չափի բարձրացմամբ, որի արդյունքում մարզի թոշակառուների որոշ մասն համակարգից դուրս է մնացել:

Նպաստառուների թվի և ոլորտի զարգացման դինամիկայի մասին առավել ակնհայտ պատկերացում է տալիս ստորև ներկայացվող գրաֆիկական պատկերը:

Գրաֆիկական պատկեր 6. Ընտանեկան նպաստառուների բաշխումը մարզում



269. Ընտանեկան նպաստի համակարգում կարիքավորության աստիճանի հիման վրա սկսել է տարբերակված մոտեցում կիրառվել, որքան աղքատ է ընտանիքը, այնքան բարձր է աղքատության ընտանեկան նպաստի չափը: Մարզում նպաստառու ընտանիքների կեսից ավելին բնակվում է գյուղական համայնքներում: Ընդ որում՝ նպաստառու ընտանիքների ներկայացվածությունը էապես մեծ է քաղաքային ընտանիքների շրջանում:

270. Մարզում ընտանեկան նպաստների և այլ սոցիալական օգնության ծրագրերի իրականացման պատասխանատուները սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններն են: Սակայն նրանք հիմնականում գտնվում են նախկին շրջկենտրոններում և տրանսպորտի ոչ լիարժեք աշխատանքի պատճառով, ոչ բոլորին են հասու: Դրանով է մասամբ պայմանավորված այն, որ բնակչության ամենաաղքատ խավերն ընտանեկան նպաստների համակարգի մասին տեղեկատվությանը լիարժեք չեն տիրապետում: Այդ հանգամանքը պահանջում է, որ նաև սոցիալական ծառայությունները բացահայտեն ամենաաղքատներին, ոչ թե ընտրությունը կատարվի միայն դիմումների հիման վրա:

271. Սոցիալական խնդիրները մեղմելու համար անհրաժեշտ է.

1) Կատարելագործել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների անապահովության գնահատման կիրառման անուղղակի /բալային/ մեխանիզմները: Դա կօգնի շտկելու ոչ աղքատ խավերի ընդգրկման սխալները և կբարձրացնի հասցեականությունը:

2) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ապահովել փաստագրված ծայրահեղ աղքատ և աղքատ բնակչության բարձր

ներկայացվածությունը՝ բնակչության՝ հատկապես աղքատների իրազեկման ու հայտնաբերման նոր մեթոդների կիրառման, փաստաթղթերի հավաքագրման պարզ և հասանելի սխեմաների ապահովման միջոցով,

3) Աղքատների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքների հոգսերը մեղմելու և նրանց առաջին անհրաժեշտության խնդիրները հոգալու նպատակով մարզում ստեղծել մասնագիտացված մարմին՝ խնամքի տարածաշրջանային կենտրոններ, որոնք կարիքավորներին սոցիալական, հոգեբանական, իրավաբանական անվճար խորհրդատվություն կտրամադրեն: Միայնակ ծերերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ է կազմակերպել անվճար ճաշարան և բաղնիք, հիմնել տնային խնամքի հաստատությունը:

4) Մարզում փախստականների համար հիմնված համայնքներում շատ հիմնախնդիրներ կան: Դրանցում չկան կոյուղագծեր, ջրագերր, չի գործում ոռոգման համակագը: Փախստական 127 ընտանիքներ դեռ ունեն բնակարանի կարիք: Պետական միջոցների հաշվին անհրաժեշտ է կառուցել բնակարաններ, բարելավել ենթակառուցվածքները:

5) Զգբաղվածության ոլորտում իրականացվող զբաղվածության պետական կարգավորման ակտիվ ծրագրերում ընդգրկված շահառուների թվի մեծացում, նոր աշխատատեղերի ստեղծմանն ուղղված գործատուների շահագրգռվածության մեծացում, ինքնազբաղվածության խթանմանն ուղղված ծրագրերի իրականացում:

6) Պարբերաբար կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, կադրեր պատրաստել որոնք, գործատուի ներկայացրած պահանջի դեպքում աշխատանքի կտեղավորվեն:

6.4.4. Արագածոտն մարզի սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

272. Ոլորտում մարզի զարգացման գերակա նպատակը սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումն է: Այն կարող է իրագործվել սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցությամբ սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, ինչպես նաև սոցիալական

ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով: Սոցիալական ոլորտի ֆինանսավորումը ներկայացված է հավելված 6-ում:

273. ԿՀԾ-ի համաձայն, կշարունակվեն ընտանեկան նպաստների ծրագրի և կենսաթոշակային ապահովության համակարգի հետագա կատարելագործման և միանվագ դրամական օգնության վճարների բարձրացման միջոցառումները, որոնք ուղղված են լինելու նաև մարզի բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը: Այս առումով, մարզի համար, սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը: Այդպիսի ծառայություններից են.

1) հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես՝ երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը,

2) ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տան պայմաններում խնամքի ծառայության գործարկումը և կատարելագործումը,

3) խնամատար ինստիտուտի ներդրման աշխատանքների շարունակության ապահովումը,

4) կյանքի դժվարին իրավիճակներում հայտված երեխաների խնամքի ցերեկային /ընտանեկան/ կենտրոնների ստեղծումը,

5) փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը,

6) սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը,

7) զբաղվածության պետական կարգավորման ակտիվ ծրագրերի շարունակական իրականացում:

274. Սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացումը նախատեսում է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում: Կադրերի մասնագիտական պատրաստվածության աստիճանը ծրագրերի իրականացման արդյունավետության վրա ազդող հիմնական գործոն է:

275. Ծրագրի ընթացքում կադրերի վերապատրաստումը կմնա որպես կարևոր գերակայություն: Կարևորվում է նաև սոցիալական ծառայությունների, ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական, մասնագետների կարիքների գնահատման հմտությունների ուսուցանումը, դոնորներ, հովանավորներ որոնելու հմտությունների զարգացումը, խնամողների վերապատրաստումը՝ հաշմանդամություն ունեցող

անձանց, ծերերին նաև՝ տան պայմաններում խնամելու գործընթացի կազմակերպումը: Մարզի սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական պայմանների բարելավումը կարևոր դեր ունի ՍԾՏԳ-ների գործունեության արդյունավետության բարձրացման գործում:

276. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավումը ներառում է հետևյալ հիմնական բաղադրատարրերը՝

1) ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակումը և ներդնումը,

2) պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրականացումը,

3) կամավորների շարժման (կենտրոնի) զարգացումը:

Գծապատկեր 4 . Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները



6.4.4. Սոցիալական պաշտպանության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը Արագածոտնի մարզում	1. Սոցիալական ծառայությունների հասցեականությունից սոցիալապես խոցելի բնակչության բավարարվածության աստիճան,% 2. Ծառայության որակից սոցիալապես խոցելի խմբերի բավարարվածության աստիճան,% 3. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը,% 4. Ոչ նյութական աջակցություն ստացած հաշմանդամություն ունեցող անձանց, ծերերի տեսակարար կշիռը,% 5. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը,%	Սոցիալական պաշտպանության ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է: Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:
1. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝ համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով		
1.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների /պետական և ոչ պետական/ համակարգչային գույքով, տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչների տեսակարար կշիռը,% Կայուն ինտերնետ կապ ունեցուղ սոցիալական ծառայությունների թիվը,%	
2. Երեխաների խնամքի կենտրոնների ստեղծում՝ ապահովելով սոցիալ- հոգեբանական, մանկավարժական և իրավաբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին և նրանց ընտանիքներին		
2.1 Դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում 2.2 Ժամանակավոր խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային կենտրոնների	Մարզում դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվ Խնամքի և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվ	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների պաշտպանությունը գտնվում է կառավարության ուշադրության կենտրոնում:

ստեղծում		
3.Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում,որը կնպաստի խոցելի խմբերի համար մատուցվող ծառայությունների բազմազանությունը		
3.1 Խնամողների վերապատրաստում հաշմանդամություն ունեցող անձանց, ծերերի խնամքը, այդ թվում տնային խնամք իրականացնելու համար	Մարզում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը	Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը ակնկալվում է դոնոր կազմակերպություններից: Անհրաժեշտ փորձ և հմտություններ ունեցող սոցիալական ծառայություններ մատուցողների /պետական, ոչ կառավարական/ առկայություն: Պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև համագործակցության բարձր աստիճան:
3.2 Սոցիալական անապահով ընտանիքների անդամների սննդապահովում	Հումանիտար ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը,%	
3.3 Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում	Բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող ծերերի թիվը	
3.4 Հաշմանդամություն ունեցող անձանց /հատկապես հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ծնողների/ վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում: հաշմանդամություն ունեցող երեխաների առողջավերականգնողական ցերեկային կենտրոնների ստեղծում	Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամների թիվը Կենտրոնի ծառայություններից օգտվող հաշմանդամ երեխաների թիվ	
3.5 Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում	Հաշվառված խնամատար ընտանիքների թիվ: Խնամատար ընտանիքներ տեղավորված ծնողազուրկ երեխաների թիվը	ՀՀ կառավարությունը աջակցում է խնամատար ընտանիքների ինստիտուտի կայացմանը

		հանրապետությունում:
3.6 Զբաղվածության պետական կարգավորման ակտիվ ծրագրերի իրականացում:	Վերապատրաստված գործազուրկների թիվը Աշխատանքի տեղավորված վերապատրաստված գործազուրկների տեսակարար կշիռը,%	Միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավո-րումը ակնկալվում է դոնոր կազմակերպու-թյուններից: Նոր աշխատատեղերի ստեղծման հնարա-վորությունները ընդլայնվում են մարզում:
		Աջակցության ցուցաբերում
4 Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում, ինչի արդյունքում խոցելի բնակչության սոցիալական սպասարկման գործում կավելանան համագործակցությամբ իրականացվող ծրագրերը		
4.1 ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդնում	ՀԿ-ների, ՏԻՄ-երի, համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	Միջոցառումների իրականացման համար անհրածեշտ ֆինանսավորումը ակնկալվում է դոնոր կազմակերպություններից:
4.2 Պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի ծմբերի կարիքների գնահատման միջոցառում-ների կանոնավոր իրագործում		
4.3 Մարզի խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով	Խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների բազայի առկայություն Խոցելի խմբերի համար իրականացված ծրագրերի և միջոցառումների թիվը	
4.4 Կամավորների շարժման /կենտրոնի/ զարգացում, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանում	Սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը	Երիտասարդությունը ցանկանում է հասարակական հիմունքներով ծառայություն մատուցել խոցելի խմբերին:
5.Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացում, ինչը կնպաստի		

մարզում սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևաբար նաև նրանց աշծատանքի նպատակայնության բարձրացամնը		
5.1 Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություններ/պետական, հասարակական միջազգային/ և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում	Հրապարակային ներկայացումների թիվը	Մարզում գործող սոցիալական ծառայություններ մատուցողները շահագրգռված են տրամադրել իրենց սոցիալական ծրագրերի մասին տեղեկատվություն :
	Սոցիալական ծրագրերի և ծառայություն մատուցողների մասին իրազեկված խոցելի բնակչության տեսակարար կշիռ, % Հասարակական կարծիքի հարցումների ժամանակ սոցիալական ծառայությունների նպատակայնությունից և հասցեակա-նությունից բավարարված հարցվողների տեսակարար կշիռը հարցվողների ընդհանուր թվում,%	
5.2 Մարզպետարանի սոցիալական ապահովության վարչության / ՍԾՏՄ-ների կանոնավոր հաշվե-տվությունների հրապարակային ներկայացում բնակչությանը սոցիալական աջակցության բնագավառում ընթացող ծրագրերի, նրանց մեջ ընդգրկման չափանիշների վերաբերյալ		
6. Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում		
6.1 Սոցիալական ծառայություներ մատուցող կազմակերպությունների համար դոնոր և հովանավորներ որոնելու հմտությունների զարգացում /դասընթացներ, արտասահմանյան փորձ և ալն / պետական և ոչպետական	Մատուցվող ոչ նյութական ծառայություն-ների թիվը Դոնորների և մասնավոր բարերարների կողմից ֆինանսավորվող կարիքավոր խմբերին ուղղվածաջակցության ծառայությունների թիվը	

6.2Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների /պետական և ոչ պետական/ կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ	Կարիքի գնահատման դասնթացներին մասնակցածների թիվը /մարզպետարան և ՍԾՏՄ-ներ, ՏԻՄ, ՀԿ-ներ	

7. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

7.1. Մարզում արդյունաբերության և էներգետիկայի իրավիճակն ու ներկա ցուցանիշները

277. Արդյունաբերական արտադրանքի բացարձակ ծավալով, համաձայն ՀՀ վիճպետկոմի հաշվետվությունների, ՀՀ Արագածոտնի մարզը թողարկում է հանրապետության արդյունաբերական համախառն արտադրանքի 1-1.5 %-ը, որը գերազանցում է միայն Վայոց Ձորի և Տավուշի մարզերի ցուցանիշներին:

278. Վերջին հինգ տարում մարզի արդյունաբերությունը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով. (մլն. դրամ)

Աղյուսակ 7.1. Մարզի արդյունաբերությունը 2010-2013թթ.

Ոլորտը	2010	2011	2012	2013
ԱՄԲՈՂՋ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ	13251.2	14344.7	15061.9	15814.9
Արտադրանքի իրացում	11051.2	11632.7	12236.3	12880.1
Արտահանում	2200.0	2712.0	2825.6	2934.8

Աղբյուրը՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ.

279. Արտադրանքի իրացման և արտահանման հարաբերակցությունը մարզում ներկայացվում է 7-րդ գրաֆիկական պատկերում:

Գրաֆիկական պատկեր 7. Արտադրանքի իրացման և արտահանման հարաբերակցությունը



280. Արտադրության աճը տեղի է ունեցել հանքագործական արդյունաբերության մեջ /պեռլիտ, քար, խարամ/ 3.3 անգամ, սննդամթերքի / ներառյալ խմիչքը/ արտադրությունում՝ - 112.6 %: Մարզում երկրի արդյունաբերական համախառն արտադրանքի տեսակարար կշիռը 2011 թ.-ին կազմել է 1.8 %-ի: Մարզի արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ ամենամեծ բաժինը պատկանում է վերամշակող արդյունաբերությանը, որը թողարկում է ամբողջ արդյունաբերական արտադրանքի 79.3 տոկոսը: 16.1 տոկոսը վերաբերում է էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությանը և բաշխմանը, 4.6 տոկոսը՝ հանքարդյունաբերությանը:

Գրաֆիկական պատկեր 8. Մարզի արդյունաբեության ցուցանիշների հարաբերակցությունը



281. Վերամշակող արդյունաբերության մեջ ամենամեծ բաժինը պատկանում է ադամանդագործությանը: Մարզում 2002 թ-ից գործում է բնական ադամանդի մշակության «Դայմոթեք» ընկերության Թալինի արտադրամասը: Հզորությունը մեծացրել է նաև Մելիքգյուղի գործարանը: 2008 թ.-ին մարզում մշակվել է մոտ 12800 կարատ ադամանդ, որը 2002 թ.-ի համեմատությամբ ավել է 3000 կարատով:

282. Առաջընթաց կա սննդարդյունաբերության մեջ: Կաթնամթերքի արտադրությունը 2008թ-ին, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 1.5, երշիկեղենի արտադրությունը՝ 2.1 անգամ: Այս բնագավառում հիմնական արտադրողներն են «Աշտարակկաթ» միավորումը, «Աշտարակմիս» և «Ապարանմիս» կազմակերպությունները: Մարզում նախկինում խոշոր արդյունաբերական կազմակերպություններ են գործել: 2010-2011թթ. արդյունաբերության մեջ զբաղվածների թիվն ավելացել է հիմնականում ի հաշիվ «Աշտարակկաթ», Թալինի «Դայմոթեք», «Աշտարակյան գինիներ» գործարանների, Արագածի արհեստական ալմաստի, Ապարանի «Նիգ», «Արև» գործարանների վերապրոֆիլավորման և վերագործարկման, «Թամարա Ֆրուտ» պահածոների արտադրության ծավալների ընդլայնման: Սակայն մյուս արդյունաբերական կազմակերպություններում աշխատակիցների թիվը կրճատվել է: Գործունեությունը ամբողջովին դադարեցրել է Աշտարակի կիսահաղորդիչների գործարանը:

283. Հիմնական ֆոնդերի և հարաբերական, և բացարձակ ցուցանիշներով, ֆոնդահատույցով, մարզը հանրապետությունում վերջին տեղում է: Մարզի արդյունաբերական կազմակերպությունները նախկինում կողմնորոշված են եղել դեպի խորհրդային սպառողը: Այդ համակարգի փլուզումից հետո դրանց ներկա ներուժը և հնարավորությունները, նույնիսկ կազմակերպությունների վերագործարկման և արտադրական հզորությունների լրիվ վերականգնման դեպքում թույլ չեն տա այդ ճյուղում լուրջ առաջընթաց ապահովել, մարզը վերածել արդյունաբերական կենտրոնի: Իր հերթին, հայրենական սպառողը կողմնորոշվում է դեպի ավելի զարգացած, արտերկրյա տեխնոլոգիաներով թողարկվող բարձրորակ արտադրանքը, և հայրենական հնացած տեխնոլոգիաներով արտադրությունը նրան այլևս չի բավարարում: Այս պայմաններում անցած տարիներին մարզի արդյունաբերության զարգացման քաղաքականությունը հիմնականում հանգել է եղած կազմակերպությունների վերագործարկմանը: Սակայն այս ուղղությամբ կազմակերպությունների մեծ մասի ջանքերը որոշակի դրական արդյունքներ չեն տվել: Դա ունի իր և օբյեկտիվ, և սուբյեկտիվ պատճառները: Օբյեկտիվ պատճառներից հիմնականն այն է, որ մարզի արդյունաբերական նախկին ներուժն իրեն սպառել է: Եղած կազմակերպությունների՝ ամեն գնով վերագործարկման

միտումը դրանց նախկին կարգավիճակով թե տնտեսապես, թե քաղաքականապես սնանկ է:

284. Այդ պայմաններում, որոշ տնտեսական վերելքին անխուսափելիորեն հետևելու է արագ անկումը: Այս դեպքում, իր տեխնոլոգիական հետամնացության պատճառով, հայրենական տնտեսությունն ընդհանրապես կախման մեջ է ընկնելու արտերկրի բարձր տեխնոլոգիական արտադրողից, լավագույն դեպքում դառնալու է նրա կցորդը: Հետամնացության հաղթահարումը առանց նոր հայեցակարգի և նպատակային ներդրումների, կդառնա անհնարին կամ չափազանց ուշացած: Նման պայմաններում զարգացման հաստատուն հեռանկարներ ունեն միայն այն կազմակերպությունները, որոնք թողարկում են կամ բարձր տեխնոլոգիաների ոլորտի, կամ բարձր արժեք ու մեծ պահանջարկ ունեցող արտադրանք: Ներկայումս այդպիսի արտադրանք են թողարկում Թալինի «Դայմոթեք» և Մելիքգյուղի ադամանդի գործարանները: Սրանով ներկայումս սպառվում են եղած արդյունաբերական ներուժի զարգացման ներքին հնարավորությունները: Ինչպես այս, այնպես էլ հանրապետության նմանատիպ կազմակերպություններում կան հիմնախնդիրներ, որոնք կարող են լուրջ հարցերի առջև կանգնեցնել և մարզը, և երկիրը: Այս կազմակերպությունների տնտեսական արդյունքները բնութագրվում են որակական բավականին ցածր ցուցանիշներով. մեծ շահութաբերությամբ, ինքնարժեքի կառուցվածքում ցածր աշխատանքային ծախսումների, բարձր էներգատարության և հիմնական միջոցների արժեքի բավականին ցածր մակարդակով: Դա թույլ է տվել այդ կազմակերպություններին՝ արագորեն հետ գնել կապիտալ ներդրումները և աշխատել մեծ շահույթով /մինչև 200 %/: Այսպիսի ցուցանիշները բնութագրական են զարգացող երկրների տնտեսությունների համար:

285. Սակայն համաշխարհային տնտեսության մեջ հանրապետության և մարզի ինտեգրումը, իրացման գների հավասարեցման միտումը, ի վերջո, հասցնելու են այն բանին, որ արդյունավետության մյուս ցուցանիշները ևս կսկսեն համեմատվել համաշխարհայինի հետ: Այս դեպքում աշխատավարձերը նույնպես անխուսափելիորեն կբարձրանան մինչև համաշխարհային մակարդակ: Արդեն այսօր այս միտումներն իրենց զգացնել են տալիս: Ցածր աշխատավարձի պատճառով որոշ որակյալ աշխատողներ լքում են ձեռնարկությունը և աշխատանք են գտնում Ռուսաստանի տարբեր, հիմնականում՝ ադամանդագործական շրջաններում, ուր նրանց նկատմամբ պահանջարկը բավականին բարձր է: Այս առթիվ «Դայմոթեքում» ներկայումս լուրջ անհանգստություն կա: Սակայն վաղ թե ուշ ձեռնարկությունը կանգնելու է աշխատավարձը բարձրացնելու անհրաժեշտության առջև: Դա են թելադրում է նաև սպառողական շուկան, գների անխուսափելի բարձրացումները: Նման հեռանկարի դեպքում այսպիսի ընկերությանը այլևս ձեռնտու չի լինի պահել

գործող ձեռնարկությունը: Իսկ նրա հեռանալու դեպքում, քանի որ հիմնական միջոցների արժեքը ցածր է և դրանք այլ նպատակներով օգտագործելը՝ անհնարին, դրանք այլևս սպառողական բարձր արժեք չեն ունենա:

286. Դիտարկումները և վերլուծությունները վկայում են նաև, որ մարզի տարածքում եղած, այսօրվա դրությամբ չգործող արդյունաբերական կազմակերպությունների միայն մի մասն իր ներկա վիճակով որոշակի արժեք ունի և կարող է հետաքրքրել հավանական ներդրողներին կամ գնորդներին: Մնացած կազմակերպությունները կամ պետք է լուծարվեն կամ վերապրոֆիլավորվեն որպես նոր արտադրություններ: Դրանցում տեխնիկան հիմնականում հնացած է, ֆիզիկապես և բարոյապես մաշված, որոշ կազմակերպություններում հավաքակայանն ամբողջովին վաճառվել է: Փաստորեն, բացի մի քանի, արդեն իսկ գործող կազմակերպությունները, եղածներից ոչ մեկն այսօրվա վիճակով անկարող է գործել: Այդ կազմակերպությունների վերագործարկման համար անհրաժեշտ են մի շարք պայմաններ: Եղած կազմակերպությունների վերագործարկման ծրագիրը բավականին ծախսատար է, կպահանջվի արտերկրում գտնել գործընկերներ, ապահովել անհրաժեշտ ֆինանսական ներդրումներ, արտադրանքի անխափան իրացում և արտադրության բարձր արդյունավետություն: Բավականին ծանր է նաև փոխադրման խնդիրը: Թողարկվող արտադրանքի ծավալը մեծ է լինելու, և երկաթուղու գործարկումը դառնալու է կենսական խնդիր:

287. Գյուղատնտեսական արտադրությունը ներկայումս չի ապահովում այն հատույցը, որ անհրաժեշտ է մարդկանց նորմալ կենսագործունեության համար: Բացի այդ, հողերի խոշորացման պայմաններում, այդ ոլորտում զբաղվածների մի մասն անխուսափելիորեն զրկվելու է սեփականությունից, դառնալու է վարձու աշխատող: Իսկ դաշտավարության բարձր սեզոնայնության պայմաններում արդյունաբերական արտադրությունների կազմակերպումը մարդկանց այդ խմբի համար կարող է դառնալ բարձր եկամտի կայուն աղբյուր: Այսինքն, ճյուղի վերագործարկումը կլուծի սոցիալական շատ կարևոր խնդիր:

288. Ի թիվս այլ հիմնախնդիրների, ոլորտի զարգացման նպատակով անհրաժեշտ կլինի կատարել բավականին մեծ կապիտալ ներդրումներ: Դրանց ետգնման ժամկետները բավականին երկար կլինեն և զուտ տնտեսական տեսանկյունից գոնե առաջիկա 5 տարում բարձր եկամտաբերություն չեն ապահովի: Մարզում այնպիսի նոր խոշոր արդյունաբերական կազմակերպությունների կազմակերպումը, որոնք ընդունակ կլինեն մարզը դարձնել կարևոր արդյունաբերական կենտրոն, մի քանի առումներով տնտեսապես անհեռանկարային է: Դա ունի իր օբյեկտիվ պատճառները.

1) Անհրաժեշտ ենթակառուցվածքներ ունեցող բնակավայրերի տարածքային սահմանափակվածությունը: Աշտարակ, Ապարան, Թալին քաղաքները շրջապատված են բնակավայրերի խիտ ցանցով և ունեն միայն քաղաքաշինության նպատակներին հարմար կառուցապատման տարածքներ: Մյուս բնակավայրերի տարածքներում նոր կազմակերպությունների կառուցումը տնտեսապես ձեռնտու չէ, քանի որ չկան անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնք անհրաժեշտ կլինի կազմակերպել: Դրա փոխարեն մարզում կան դատարկ կամ չօգտագործվող մեծաթիվ շինություններ, որոնք համեմատաբար քիչ ներդրումներով, կարելի է վերակառուցել և հարմարեցնել այլ նպատակների: Կկրճատվեն նաև հետգնումների ժամկետները:
2) Անհրաժեշտ կլինի նոր կառուցումների հետ միաժամանակ ներդնել նոր տեխնոլոգիաներ: Դա բավականին թանկ կարժենա և ներդրումների հետգնման ժամկետները բավականին երկար կլինեն:
3) Չկա համապատասխան որակի ինժեներատեխնիկական և բանվորական անձնակազմ: Նրանց ուսուցումը ևս բավականին գումարներ կարժենա:
4) Երկիրը և մարզը զրկված են հաղորդակցության նորմալ ուղիներից, և չկա երաշխիք, որ դրանք մոտ ապագայում կգործեն անխափան: Համեմատաբար թույլ է զարգացած նաև երկաթուղին: Ինքնաթիռային փոխադրումները երբեմն անհնար կլինեն արտադրանքի մեծ ծավալների պայմաններում և մեծ չափով կբարձրացնեն արտադրանքի ինքնարժեքը, կիջեցնեն արտադրության շահութաբերությունը:
5) Շուկայի պահանջարկի մասին փաստացի տեղեկատվությունը բացակայում է, անկատար է շուկայավարման համակարգը:

289. Այնուամենայնիվ, այս բոլոր դժվարությունների պայմաններում առաջարկվող ծրագիրը չափազանց կարևոր է մարզի բնակչության զբաղվածության և աղքատության հաղթահարման խնդիրների լուծման համար: Ուստի բնագավառի նորովի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է ունենալ նոր հայեցակարգ և ճյուղի զարգացման որակապես նոր ծրագիր: Բազմաթիվ գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի արդյունաբերության ոլորտում առաջատար դերը կարող է ստանձնել գիտաարտադրական համալիրը, առաջին հերթին՝ գիտատար արդյունաբերությունը:

290. Նպատակային միջոցառումներ իրականացնելու դեպքում այն հնարավորություն ունի ապահովելու բոլոր անհրաժեշտ հիմքերը՝ մարզի տնտեսության արագ, կայուն և արդյունավետ զարգացման համար. մարզը

ցածրարդյունավետ գյուղատնտեսական շրջանից վերածել գիտաարտադրական համալիրի ոչ միայն համապետական, այլև՝ տարածաշրջանային կենտրոնի: Միաժամանակ անհրաժեշտ է զարկ տալ տնտեսության մյուս ճյուղերին՝ գյուղատնտեսությանը, շինարարությանը, առևտրին, զբոսաշրջությանը և ծառայություններին: Տնտեսական ոլորտի զարգացումով է առաջին հերթին պայմանավորված մարզում աղքատության հաղթահարման հիմնախնդրի լուծումը:

7.2 Էներգետիկա

291. Տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացումը նոր պահանջներ է առաջադրում մարզի տարածքում նոր էներգետիկ հզորությունների ստեղծման համար: Ներկայումս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն, Արագածոտնի մարզում տարեկան 38.9 մլն. կՎտժ էլեկտրական էներգիա են արտադրում 6 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ մոտ 15.95 ՄՎտ ընդհանուր հզորությամբ/Աղյուսակ 7.2/:

Աղյուսակ 7.2. 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂ ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Շահագործող ընկերության և ՓՀԷԿ-ի անվանումը	Հզորությունը ՄՎտ	Էլ. էներգիայի փաստացի առաքումը և օգտագործումը
«Էներգիա» ՍՊԸ «Ապարան-Երևան» ջր. ՓՀԷԿ-եր 1.2.3.4	1.648	13.6
«ՎԱԿՈՒՖԼՕ» ՍՊԸ «Արագած-1» ՓՀԷԿ	1.260	2.9
«Էլ-Կաս» ՍՊԸ «Գողարոտ» ՓՀԷԿ	2.91	7.7
«Ամբերտ ՀԷԿ» ՍՊԸ « Ամբերտ ՀԷԿ 1» ՓՀԷԿ	3.35	5.2
«ԵՂՎԱՐԴ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱ» ՍՊԸ Օշէներգո3 ՓՀԷԿ	0.289	0.0
«Ամբերտ ՀԷԿ» ՍՊԸ «Ամբերտ ՀԷԿ 2» ՓՀԷԿ	6.29	9.5

292. Մարզում 2009թ. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվում են ևս 4 ՓՀԷԿ-եր՝ 15.21 ՄՎտ հզորությամբ և 46.3 մլն. կՎտժ արտադրանքով /Աղյուսակ 7.3 և7.4/: Ներդրումների ընդհանուր ծավալը կկազմի 3140.3 մլն. դրամ:

Աղյուսակ 7.3. 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Շահագործող ընկերությունը	ՓՀԷԿ-ի անվանումը	Հզորությունը ՄՎտ	Էլ.էներգիայի փաստացի օգտակար առաքումը մլն. կՎտժ
«ԻՓՐԱ» ՍՊԸ	Ալպիական -2	2.550	6.5

Աղյուսակ 7.4. 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՍԱԿԱՅՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԸՍՏ ՇԱՀԱԳՈՐԾՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	Շահագործող ընկերությունը	ՓՀԷԿ-ի անվանումը	Հզորությունը ՄՎտ	Էլ. էներգիայի փաստացի օգտակար առաքումը մլն. կՎտժ
1	«ԷՅ ՔԵՅ ԷՅ ՋԻ» ՍՊԸ	Կոշ1	1.839	5.2
2	«ԼՈՒՍԱՐՓԻ» ՍՊԸ	Լուսարփի2	0.992	2.9
3	«Ամբերդ ՀԷԿ» ՍՊԸ	Ամբերդ ՓՀԷԿ-3	9.830	31.7

293. 2009 թվականի հունվարի 22-ի ՀՀ կառավարության նիստի N3 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել՝ «Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման», ըստ որի, Արագածոտնի մարզում նախատեսվում է կառուցել ևս 4 փոքր ՀԷԿ՝ 3.5 ՄՎտ տեղակայված հզորությամբ և տարեկան 12.5 մլն. կՎտժ գումարային արտադրանքով (2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ) /Աղյուսակ 7.5/:

Աղյուսակ 7.5. Արագածոտնի մարզում ճշտված և նորացված ՓՀԷԿ-երի ջրաէներգետիկական ցուցանիշները

h/h	ՓՀԷԿ-ի անվանումը	Հաշվարկային ելքը խոր.մ./վրկ	Դրվածքային հզորությունը կՎտ	Էլ. էներգիայի տարեկան արտադրանքը մլն. կՎտժ
1	Արխաշան ՓՀԷԿ-1	0.6	1106	3.94
2	Արխաշան ՓՀԷԿ-2	0.7	714	2.54
3	Արխաշան ՓՀԷԿ-3	1.5	840	3.14
4	Դուսքենդ ՓՀԷԿ	0.6	841	2.879

294.Փոքր ՀԷԿ-երի կառուցումը մարզում նոր աշխատատեղերի բացման հնարավորություն կստեղծի: 2015-2018 թվականների ընթացքում մարզի էլեկտրամատակարարման հուսալիությունը բարձրացնելու նպատակով <Հայաստանի էլեկտրական ցանցեր> ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով նախատեսվում է շուրջ 2400.0 մլն դրամի ներդրումներ: Ներդրումները հիմնականում ուղղված կլինեն օդային, մալուխային գծերի կառուցման/վերակառուցման, վերանորոգման, ենթակայանների նորոգման, հին տրանսֆորմատորները նորերով փոխարինելու աշխատանքներին, ինչպես նաև նոր բաժանորդների ցանցին միանալուն ուղղված աշխատանքներին: Ըստ տարիների ներդրումները կլինեն՝

1) 2015թ. 563.0 մլն. դրամ
2) 2016թ. 587.0մլն. դրամ
3) 2017թ. 621.0մլն. դրամ
4) 2018թ. 656.0 մլն. դրամ:

295. <Բարձրավոլտ էլեկտական ցանցեր> ՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող 220/110կՎ ՕԳ-երի ընթացիկ նորոգման աշխատանքների համար ընկերության սեփական միջոցների հաշվին կիրականացվեն 900.0 հազ. դրամի աշխատանքներ: Ըստ տարիների ներդրումները կլինեն՝

1) 2015թ. 200.0 հազ. դրամ
2) 2016թ. 200.0 հազ. դրամ
3) 2017թ. 250.0 հազ. դրամ
4) 2018թ. 250.0 հազ. դրամ:

296.Զարգացման Միջազգային Բանկի կողմից <Էլեկտրամատակարարման հուսալիություն> ծրագրի շրջանակներում տրամադրվել է 39,0 մլն ԱՄՆ դոլար վարկ,

որն ուղղվելու է՝ Հրազդան ՋԷԿ-ից մինչև Շինուհայր 220 կՎ ենթակայան ընկած Նորադուզ-Լիճք-Վարդենիս-Վայք- Որոտան 1 220 կՎ օդային էլեկտրահաղորդման գծերի շուրջ 230 կմ հատվածի վերակառուցմանը: Ծրագրի նպատակն է՝ բարելավել հաղորդիչ ցանցի հուսալիության բարձրացումը, թողունակության մեծացումը և նվազեցնել էլեկտրաէներգիայի կորուստները: Արագածոտնի մարզում գտնվող հատվածի վերակառուցմանը, ըստ տարիների, Ծրագրով նախատեսված է իրականացնել հետևյալ ներդրումները.

1) 2016թ- 3000.0 հազ. ԱՄՆ դոլար
2) 2017թ- 6000.0 հազ. ԱՄՆ դոլար,
3) 2018թ- 6000.0 հազ. ԱՄՆ դոլար:

297.Սույն բաշխվածությունը կճշգրտվի գլխավոր կապալառուի հետ կնքվող պայմանագրի ընթացքում:

8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

8.1.Գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի վերլուծությունը

298. Մարզի տնտեսության մեջ գյուղատնտեսության ոլորտը ավանդաբար նշանակալից տեղ է զբաղեցրել: Սակայն ներկա շրջանում գյուղատնտեսական արդյունավետության բարձրացումը ՄԶԾ-ի այս ոլորտի ամենակարևոր նպատակներից է: Այս նպատակն իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ գյուղատնտեսության հեռանկարների վերաբերյալ հստակ պատկերացումներ, հստակ սահմանված ոլորտային գերակայություններ, լավ հիմնավորված ռազմավարություն, ինչպես նաև համատեղ գործողություններ տարածքային կառավարման մարմինների, ագրոմիությունների, համայնքների և ֆերմերների կողմից, ինչպես նաև ֆինանսական միջոցների առկայություն: ՀՀ Արագածոտնի մարզի գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են մարզի ընդհանուր տարածքի (217809 հա) 79.2 %-ը: Մարզի բնակլիմայական պայմաններն ըստ տարածաշրջանների, բազմազան են: Կան նախալեռնային, լեռնային և բարձրլեռնային գոտիներ: Դրանցով էլ պայմանավորված է գյուղատնտեսության կողմնորոշումը տարբեր տարածաշրջաններում: Ցածրադիր գոտում՝ Աշտարակի տարածաշրջանում և Թալինի նախալեռնային գոտիներում մշակվում են ջերմասեր մշակաբույսեր՝ խաղող, հնդավոր պտուղներ: Այստեղ տարվա ընթացքում խոտհարքերից ստացվում է 2-3 բերք, հացահատիկի տարածություններն օգտագործվում են երկու անգամ: Այս

տարածքներում համեմատաբար զարգացած են ենթակառույցները, որը բարձրացնում է ճյուղի արդյունավետությունը: Բարձրադիր գոտիներում՝ Ապարանի, Արագածի և Թալինի լեռնային բնակավայրերում գյուղատնտեսության հիմնական ուղղվածությունը անասնապահությունն է: Սակայն, համեմատած ցածրադիր գոտու հետ, այստեղ այն համեմատաբար ավելի քիչ արդյունավետ է: Մարզի 54.0 հազ. հա վարելահողերից 2011թ. գյուղացիական և ֆերմերային տնտեսություններն օգտագործել են 33.1 հազար հա: Դրանից 24.31 հազար հեկտարը հացահատիկային մշակաբույսերն են: Համայնքներում փաստացի չի օգտագործվել 22.85 հազար հա վարելահող: Դրանք հիմնականում բարձրադիր գոտում են, տարածված են մեծ թեքությունների վրա, քարքարոտ են և և համեմատաբար հեռու են համայնքներից: Ըստ հողային հաշվեկշռի, մարզում գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքը բնութագրվում է աղյուսակում:

Աղյուսակ 8.1. Արագածոտնի մարզի գյուղատնտեսական հողատեսքերի կազմը բնորոշող ցուցանիշներն ըստ 2012-2014թթ. հաշվեկշռի տվյալների (հա)

(հեկտար)

Տարեթիվը	Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը	Այդ թվում՝		
		վարելահողեր	խաղողի այգիներ	պտղատու այգիներ
2012թ.	218239.8	54016.3	1838.4	2966
2013թ.	218232.8	54152.7	1812.3	2879.4
2014թ.	218225.4	54149.9	1811	2897

Աղբյուրը՝ ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների

299. Մարզի գյուղատնտեսական հողատեսքերի մեջ մեծ կշիռ ունեն արոտավայրերը /63.2 %/ և վարելահողերը /24.8 %/:

Գրաֆիկական պատկեր 9. Գյուղատնտեսական հողատեսքերի բաշխումը մարզում %



300. Մարզում 2013թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը 2012թ. համեմատությամբ աճը կազմել է 2.7 տոկոս: Աճի տեմպերով Արագածոտնի մարզը հանրապետությունում զիջում է միայն Արմավիրի մարզին: 2013 թվականին մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 89.1 մլրդ. դրամ, որը կազմել է հանրապետության գյուղատնտեսության արտադրանքի համախառն ծավալի 9.7%-ը: Գյուղատնտեսության ոլորտում գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեկ շնչի հաշվով ցուցանիշի մարզային միջինը 2012-2013թթ. աճել է 1.6 անգամ:

Աղյուսակ 8.3. Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2013թ. հունվար-դեկտեմբեր

	Համախառն արտադրանքը, մլրդ.դրամ	Տեսակարար կշիռը, %
ք.Երևան	8.5	0.9
Արագածոտն	**89.1**	**9.7**
Արարատ	136.4	14.8
Արմավիր	163.2	17.8
Գեղարքունիք	165.3	18.0
Լոռի	67.3	7.2
Կոտայք	56.7	6.2
Շիրակ	106.1	11.6
Սյունիք	62.3	6.8
Վայոց ձոր	20.0	2.2
Տավուշ	43.7	4.8

	Համախառն արտադրանքը, մլրդ.դրամ	Տեսակարար կշիռը, %
Ընդամենը ՀՀ	**918.6**	**100.0**

Աղբյուրը՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին» ԱՎԾ հաշվետվություն

Աղյուսակ 8.4. ՀՀ մարզերում գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով, ընթացիկ գներով, 2009-2013թթ., հազար դրամ

	Ընդամենը					այդ թվում									
						բուսաբուծություն					անասնաբուծություն				
	2009	**2010**	**2011**	**2012**	**2013**	**2009**	**2010**	**2011**	**2012**	**2013**	**2009**	**2010**	**2011**	**2012**	**2013**
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ	*552.1*	*636.7*	*795.0*	*841.5*	*919.1*	*346.7*	*392.7*	*465.1*	*516.0*	*572.8*	*205.4*	*244.0*	*329.9*	*325.5*	*346.3*
Ք.ԵՐԵՎԱՆ	4.9	5.4	6.5	8.2	8.5	2.3	2.6	3.1	3.5	3.7	2.6	2.8	3.4	4.7	4.8
ԱՐԱԳԱԾՈՏՆ	**54.2**	**61.4**	**76.8**	**86.0**	**89.2**	**31.6**	**33.4**	**38.8**	**49.5**	**51**	**22.6**	**28.0**	**38.0**	**36.5**	**38.2**
ԱՐԱՐԱՏ	89.0	108.5	116.8	125.3	136.2	74.5	91.2	94.3	102.9	112	14.5	17.3	22.5	22.4	24.2
ԱՐՄԱՎԻՐ	108.8	104.5	135.0	148.4	163.7	91.8	83.0	105.3	117.6	128.1	17.0	21.5	29.7	30.8	35.6
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	94.0	125.7	152.8	152.7	165.3	60.2	85.4	98.4	100.5	110.6	33.8	40.3	54.4	52.2	54.7
ԼՈՌԻ	36.8	41.8	57.1	57.4	67.5	14.0	14.7	19.3	20.9	29.4	22.8	27.1	37.8	36.5	38.1
ԿՈՏԱՅՔ	39.6	39.9	50.8	53.0	56.3	14.1	13.0	16.2	18.1	19.8	25.5	26.9	34.6	34.9	36.5
ՇԻՐԱԿ	55.8	71.1	93.0	94.0	106.3	26.9	35.9	44.9	47.8	57.9	28.9	35.2	48.1	46.2	48.4
ՍՅՈՒՆԻՔ	33.4	36.3	50.4	57.7	62.4	15.7	15.1	21.8	29.5	31.5	17.7	21.2	28.6	28.2	30.9
ՎԱՅՈՑ ՁՈՐ	11.3	13.8	16.9	18.4	19.9	3.9	4.9	5.0	6.3	6.4	7.4	8.9	11.9	12.1	13.5
ՏԱՎՈՒՇ	24.3	28.3	38.9	40.4	43.8	11.7	13.5	18.0	19.4	22.4	12.6	14.8	20.9	21.0	21.4

Աղբյուրը՝ “ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով” 2014

301. Բուսաբուծական մթերքների արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար կարևորվում է նաև մարզի համայնքներին պարարտանյութի, ինչպես նաև ՋՕԸ-երի միջոցով ոռոգման ջրի արդյունավետ բաշխումը, ինչպես նաև բույսերի պաշտպանության համալիր միջոցառումների իրականացումը: Բույսերը հիվանդություններից և վնասատուներից պաշտպանելու համար ձեռք են բերվելու անհրաժեշտ քանակությամբ թունաքիմիկատներ և տրվելու են համայնքներին: 2014 թ. մարզի տնտեսություններին կտրվի 7000 կգ. թունաքիմիկատ: Մինչև 2018թ.-ը թունաքիմիկատների ծավալները կավելանան և կկազմեն 8200կգ:

Աղյուսակ 8.2. ՀՀ Արագածոտնի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, 2013թ.

Մշակաբույսի անվանումը	Տարածքը (հա)	Միջին բերքը g/հա	Համախառն բերքը (հազ.տոննա)	այդ թվում՝ կրկնակի միջշարային տարածություններից հավաքված
Հացահատիկ	24359	30.1	73269	
Հատիկաընդեղեն	65	23.1	151	20
Կարտոֆիլ	1605	244.7	39281	40
Բանջարեղեն	1011	340	34364	150
Բոստան	173	375.2	6492	60
Բազմամյա և միամյա խոտաբույսեր	8096	51.5	41700	8000
Պտուղ	5825.8	120	69910	
Խաղող	1665	87.1	14510	
Ընդամենը	**42800**	**1271.7**	**279677**	**8270**

Աղբյուրը՝ ,, Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2013թ.

302. Մարզում կարևորվում են նաև հացահատիկի սերմաթարմացմանն ուղղված միջոցառումները: Այս տարի ՀՀ կառավարության աջակցությամբ 300 տ. սերմանյութ կներկրվի մարզ, որը հնարավորություն կտա շուրջ 1000 հեկտարի վրա բարձրորակ սերմացուով ցանք կատարել: Հետագայում, նախատեսվում է որպես այդ ծրագրի շարունակություն, մարզում հիմք դնել մշտական սերմնարտադրությանը ծավալները հասցնելով 2200հա-ի կամ յուրաքանչյուր տարի ավելացնելով 300 հա-ով:

303. Գյուղատնտեսության ոլորտում մարզում ՄԶԾ-ով 2014թ.ին նախատեսված էր ներդնել 1057.0 միլիոն դրամ: Սակայն գոյություն ունեցող ծրագրերով այս տարի կներդրվի 6613.1 միլիոն դրամ, որից 1179.32 միլիոն դրամը ներ է դրվելու ՀՀ պետբյուջեի միջոցներով: Դոնոր կազմակերպությունների ներդրումները և ոլորտի վարկավորումը կկազմեն 5098.18 միլիոն դրամ, հետագա տարիներին այն կկազմի շուրջ 7000-7500 մլն դրամ, յուրաքանչյուր տարի այն կավելանա 20 մլն դրամով և 2018 թ կկազմի 8025 մլն դրամ:

304. Ինչպես հանրապետության, այնպես էլ մարզի վարչական տարածքը ապահովագրված չէ բնակլիմայական աղետների վնասներից, այսպես՝

1) 2013թ. ապրիլի 23-24-ը տեղի ունեցած ցրտահարության հետևանքով վնասվել են մարզի 29 համայնքների 1829 հեկտար տարածության վրա աճեցված մշակաբույսերը՝ 20-90%-ով: Մարզի գյուղատնտեսությանը լուրջ վնաս է հասցվել

նաև 2013թ. մայիսի 12-ին, 17-ին տեղի ունեցած աննախադեպ կարկտահարությունը. վնասվել են 46 համայնքների 12787 հողօգտագործողների շուրջ 11137 հեկտար հողատարածքները՝ վնասի չափը կազմել է շուրջ 25.3 մլրդ.դրամ:

2) 2014թ. մարտի 31-ից ապրիլի 2-ի մարզի տարածքում տեղի ունեցած ցրտահարության հետևանքով վնասվել են մարզի 83 համայնքների 6679 գյուղացիական տնտեսություններին պատկանող 3962.078 հեկտար այգիները՝ 50-100%-ի չափով, վնասի չափը կազմել է շուրջ 5.8 մլրդ.դրամ:

305. 2014թ. ցրտահարության վնասները մեղմելու նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

1) ՀՀ կառավարության կողմից փոխհատուցվել են ցրտահարությունից տուժած հողօգտագործողների կողմից օգտագործած ոռոգման ջրի վարձերը 50%-ի չափով, իսկ հողի հարկերը՝ 100%-ի չափով:
2) Տուժած հողօգտագործողների արտարժույթով ունեցած վարկերը վերաձևակերպվել են դրամային վարկերով և սուբսիդավորվել ՀՀ կառավարության կողմից, ինչպես նաև անհատական մոտեցմամբ իրականացվել են վարկերի վճարման ժամկետների երկարաձգում:

306.Գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, գարնանացանի իրականացման նպատակով ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն տրամադրվել է՝

1) 350 /44.7/ տոննա գարնանացան գարու, 32 /6.78/ տոննա առվույտի և 66.5 /60.045/ տոննա կորնգանի սերմացու, որոնք համապատասխանաբար բաշխվել են համայնքներին:
2) 3500 տոննա ազոտական պարարտանյութ, որից ներկրվել է 2506 տոննան,
3) 85-տոննա ֆոսֆորական պարարտանյութ, որից ներկրվել է 35 տոննան,
4) 142- տոննա կալիումական պարարտանյութ, որից ներկրվել է 7.0 տոննան,
5) 1.8 մլն- լիտր դիզելային վառելանյութ, որից վճարվել և ներկրվել է 495135 լիտրը:

307.Մարզի համայնքներում մկնանման կրծողների դեմ պայքարի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հատկացվել է ցինկի ֆոսֆիդ թունաքիմիկատ, մասնավորապես.

1) 2011 թվական 2825կգ 45 համայնք, որով պայքարի աշխատանքներ են իրականացվել շուրջ 22600 հա հողատարածության վրա:

2) 2012 թվական 1115կգ, որով պայքարի աշխատանքներ են իրականացվել համայնքներին պատկանող 9292 հա հողատարածության վրա:
3) 2013- 1510.92 կգ, բաշխվել է 77 համայնքի, պարտք է տրվել 12591 հա վրա:
4) 2014- 226.32 կգ, բաշխվել է 14 համայնքի, պարտք է տրվել 1886 հա վրա:

308. 2014թ. ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել են՝ գարի 350 տ ներկրվել է /վճարումով/ 44.7տ: Առվույտ 32 տ ներկրվել է /վճարումով/ 6.78տ: Կորնգան 66.5 տ ներկրվել է /վճարումով/ 60.045տ: ՀՀ կառավարության կողմից փոխհատուցվել են ցրտահարությունից տուժած հողօգտագործողների կողմից օգտագործած ոռոգման ջրի վարձերը 50-%-ի չափով, իսկ հողի հարկերը՝ 100%-ի չափով: ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N534-Ն որոշմամբ սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսություններին աջակցության ծրագրերի իրականացման նպատակով, Արագածոտնի մարզին հատկացվել է 20 մլն դրամ: Հետագայում կարկտահարության դեպքերը նվազեցնելու նպատակով մարզում կառուցվել են 5 հակակարկտային կայաններ:

309. Անասնաբուծություն և անասնաբուժություն. Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: ՀՀ Արագածոտնի մարզպետի համապատասխան կարգադրությունների հիման վրա կազմակերպվել և համակարգվել են 2014թ. հունվարի 1-ի դրությամբ համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները (աղյուսակ 8.5): Համակարգվել է մարզային անասնաբուժական ծառայության գործունեությունը: 2013թ. ընթացքում սուր վարակիչ հիվանդությունների չի արձանագրվել:

Աղյուսակ 8.5. Անասունների գլխաքանակը՝ 2014թ. հունվարի 1-ի դրությամբ

(գլուխ)

	Խոշոր եղջերավոր անասուն		*որից՝* կով		Խոզ		Ընդամենը ոչխար և այծ		*այդ թվում*				Ձի	
									ոչխար		այծ			
	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Նկատմամբ, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Նկատմամբ, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Նկատմամբ, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Նկատմամբ, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Նկատմամբ, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Նկատմամբ, %-ով	01.01.14թ.	01.01.14թ. 01.01.13թ Նկատմամբ, %-ով
Ք.Երևան	3 750	140.3	1 271	109.0	6 478	105.0	6 297	317.4	6 277	316.4	20	x	12	85.7
Արագածոտն	**85 263**	**100.1**	**40 350**	**100.1**	**10 521**	**100.1**	**96 766**	**100.9**	**92 998**	**100.6**	**3 768**	**107.4**	**437**	**127.4**
Արարատ	46 376	104.9	17 721	102.3	19 434	107.3	92 503	113.7	88 907	113.8	3 596	110.8	650	106.0

Արմավիր	55 796	101.5	20 143	100.9	19 999	96.7	91 114	98.5	90 550	98.5	564	96.0	136	101.5
Գեղարքունիք	115 619	103.0	56 735	104.5	11 527	96.8	102 613	101.2	99 860	101.2	2 753	101.1	1 606	112.2
Լոռի	81 850	100.4	39 193	100.2	12 255	89.4	37 851	117.6	35 253	117.1	2 598	124.4	2 736	105.8
Կոտայք	61 464	103.4	28 152	102.6	15 305	79.7	46 108	104.2	42 586	103.6	3 522	112.3	601	115.1
Շիրակ	107 097	101.3	50 567	100.8	13 810	87.9	90 400	104.5	87 784	104.8	2 616	97.3	505	105.0
Սյունիք	60 548	107.6	28 281	105.8	11 686	110.4	114 655	112.9	111 243	113.4	3 412	98.5	2 513	104.0
Վայոց ձոր	22 749	100.1	9 676	101.0	1 890	98.4	23 097	108.0	16 864	109.4	6 233	104.7	426	116.7
Տավուշ	37 072	103.1	17 527	102.0	16 894	102.3	16 170	102.8	14 752	104.5	1 418	87.3	2 064	110.4
Ընդամենը	**677 584**	**102.5**	**309 616**	**102.1**	**139 799**	**96.4**	**717 574**	**106.3**	**687 074**	**106.4**	**30 500**	**105.1**	**11 686**	**108.4**

Աղբյուրը՝ «Անասնագլխաքանակի համապարած հաշվառման հանրագումարները 2014թվականի հունվարի 1-ի դրությամբ» ԱՎԾ տեղեկագիր

310. 2012-2013թթ. և 2014թ. հունվար-հուլիս ամիսներին մարզում արտադրված անասնաբուծական մթերքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը, ինչպես նաև դրանց համեմատականը Երևան քաղաքի և այլ մարզերի հետ ներկայացված է աղյուսակներ 8.6 և 8.7.-ում:

Աղյուսակ 8.6. Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2013թ. հունվար-դեկտեմբեր

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)², հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2013թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբերը 2012թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2013թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբերը 2012թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2013թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբերը 2012թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
ք.Երևան	1.8	2.2 անգամ	2.5	113.6	28.7	80.6
Արագածոտն	**15.6**	**106.1**	**79.9**	**104.4**	**59.4**	**96.3**
Արարատ	9.8	113.1	40.1	105.0	54.7	99.5
Արմավիր	15.4	140.3	40.5	108.3	127.7	91.1
Գեղարքունիք	23.5	107.8	120.7	103.8	58.2	101.9
Լոռի	16.3	108.0	81.3	104.6	43.7	92.4
Կոտայք	14.7	114.0	57.9	108.2	117.3	88.8
Շիրակ	21.4	106.9	107.6	106.0	40.1	98.0
Սյունիք	13.9	115.8	62.2	108.7	26.3	96.8
Վայոց ձոր	5.6	111.8	24.8	117.5	17.4	95.5

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)², հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2013թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբերը 2012թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2013թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբերը 2012թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2013թ. հունվար-դեկտեմբեր	2013թ. հունվար-դեկտեմբերը 2012թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %
Տավուշ	8.8	106.5	39.5	107.9	41.7	97.3
Ընդամենը ՀՀ	**146.8**	**112.7**	**657.0**	**106.3**	**615.2**	**93.5**

Աղբյուրը՝ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվար-դեկտեմբերին» ԱՎԾ

Աղյուսակ 8.7 Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի 2014 հուլիս

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով)³ հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2014թ. հուլիս	2014թ. հուլիսը 2013թ. հուլիսի նկատմամբ, %	2014թ. հուլիս	2014թ. հուլիսը 2013թ. հուլիսի նկատմամբ, %	2014թ. հուլիս	2014թ. հուլիսը 2013թ. հուլիսի նկատմամբ, %
ք.Երևան	0.2	2.0 անգամ	0.3	100.0	0.5	18.5
Արագածոտն	**0.5**	**115.0**	**9.5**	**114.5**	**6.1**	**101.7**
Արարատ	0.4	120.0	4.5	107.1	7.1	109.8
Արմավիր	0.9	112.5	4.7	114.6	14.2	99.3
Գեղարքունիք	0.7	101.4	12.7	101.6	6.8	96.4
Լոռի	0.5	100.0	9.2	105.7	5.8	108.5
Կոտայք	0.5	102.0	6.9	106.2	10.2	96.7
Շիրակ	0.6	100.0	11.5	101.3	4.8	100.4
Սյունիք	0.4	136.7	6.9	112.8	5.9	190.3
Վայոց ձոր	0.2	170.0	2.4	100.0	2.2	111.5
Տավուշ	0.3	133.3	4.1	103.8	5.7	113.0
Ընդամենը ՀՀ	**5.2**	**115.6**	**72.7**	**106.3**	**69.3**	**103.1**

311. Համակարգվել է մարզային անասնաբուժական ծառայության գործունեությունը: 2014թ. ընթացքում սուր վարակիչ հիվանդություններից արձանագրվել է բրուցելոզի մի քանի դեպքեր մարզի մի շարք համայնքներում:

³ Ներառյալ ներքին սպառումը:

312. Գյուղատնտեսական տեխնիկական ապահովվածությունը. Մարզում գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար կարևոր նշանակություն ունի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին նորագույն տեխնիկայով հագեցվածությունը և ապահովվածությունը: Վերջին տարիներին գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան ֆերմերները համալրել են նորագույն տեխնիկայով: 01.01.2014թ. դրությամբ մարզում առկա 1295 տրակտորներից գյուղատնտեսական աշխատանքներին պատրաստ են եղել 930-ը, 179 հացահատիկահավաք կոմբայններից՝ 121--ը, 38- կերահավաք կոմբայններից՝ 26-ը:

Աղյուսակ 8.8. ՀՀ Արագածոտնի մարզում գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակը (01.01.2014թ. դրությամբ)

Գյուղտեխնիկայի անվանումը	Առկա քանակը (հատ)		Որից սարքին վիճակում (հատ)		Առկա և սարքին գյուղ.տեխնիկայի հարաբերակցությունը,%	
	մարզ	ՀՀ-ում	մարզ	ՀՀ-ում	մարզ	ՀՀ-ում
Տրակտորներ բոլոր մակնիշների	1295	14783	930	11656	72	78.8
Բեռնատար ավտոմեքենաներ	1336	15251	949	11576	71	75.9
Հացահատիկահավաք կոմբայններ	179	1355	121	1011	68	74.6
Տրակտորային կցասայլեր	572	6099	480	5339	84	87.5
Տրակտորային խոտհնձիչներ	131	2030	95	1798	73	88.6
Կերահավաք կոմբայններ	38	376	26	272	68	72.3
Հատիկազտիչ մեքենաներ	39	427	30	372	77	87.1
Տրակտորային շարքացաններ	211	1856	175	1619	83	87.2
Տրակտորային գութաններ	362	3843	293	3385	81	88.1
Կուլտիվատորներ	259	2244	197	1876	76	83.6
Հավաքիչ-մամլիչներ	151	1575	130	1356	86	86.1

Աղբյուրը՝ «Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին 2014թ. հունվարի 1-ի դրությամբ» ԱՎԾ տեղեկագիր

313. Ոռոգման համակարգեր. 2011-2013թթ. ընթացքում մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել ոռոգման ներտնտեսային ցանցերի կառուցման և վերականգնման ուղղությամբ: Դրական տեղաշարժեր են արձանագրվել մարզում ոռոգման նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ: 2014թ. կշարունակվի

ոռոգման սեզոնում գոյություն ունեցող համակարգերի և ոռոգման կարիքների գույքագրումը և համակարգումը, էներգակիրների ծախսերի կրճատումը, համայնքներում ոռոգելի և խմելու ջրի վերաբերյալ առկա խնդիրների ուսումնասիրումը և դրանց լուծման միջոցառումների ժամանակացույցի կազմումը:
Մարզում 218225.4 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերից 21251.7 հեկտարը ոռոգելի են: 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի ջրօգտագործողներին մատակարարվել է 65 մլն մ^3 ոռոգման ջուր՝ 714.908 մլն դրամ հասույթով, որի դիմաց գանձվել է 576.992 մլն. դրամ, գանձման մակարդակը կազմել է 80.7%:

314. Գյուղատնտեսական մթերքների իրացումը. Գյուղատնտեսության կայուն զարգացման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և վերարտադրության համար կարևոր հանգամանք է արտադրանքի իրացման խնդրի լուծումը: Այն եղել և մնում է գյուղատնտեսության զարգացման կարևորագույն խնդիրներից մեկը: Մարզում գյուղատնտեսական մթերքների իրացումն իրականացվում է 6 մեծածախ ու մանրածախ շուկաներում և վերամշակող կազմակերպությունների միջոցով: Կձեռնարկվեն միջոցառումներ իրացման շուկայի մատչելիության և արտադրողի պաշտպանվածության ապահովման ուղղությամբ: Ֆերմերների համար ներկայումս հրատապ է գյուղմթերքի մեծածախ շուկաների ձևավորումը: Այսօր ֆերմերներն իրենց արտադրանքն իրացնում են տարերայնորեն, պատահական վայրերում: Այս առումով կարևորվում է ժամանակակից պահանջներին համապատասխան Աշտարակի մեծածախ շուկայի ձևավորումը, որի ստեղծման գործընթացի համար 2014թ. կշարունակվի մասնագիտական ուսումնասիրություններ ու վերլուծություններ:

315. Գյուղատնտեսության վարկավորում. Ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսությունները արտադրության գործընթացում ունենում են շրջանառու միջոցների համալրման անհրաժեշտություն, բացի այդ գյուղատնտեսության մեջ հաճախ անհրաժեշտ է լինում կատարելու խոշոր ներդրումներ, որն իրականացվում է վարկավորման միջոցով:

8.2. Գյուղատնտեսության զարգացման ծրագրի նպատակները և ռազմավարությունը

316. 2014 թվականին ՄԶԾ նպատակներից է Արագածոտնի մարզում գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և

անասնաբուծական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման հիմնախնդիրները, որի արդյունքում կավելանան գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը գյուղական բնակավայրերում:

317. 2015թ. և մինչև 2018թ. ՄԶԾ-ում մարզի գյուղատնտեսության ոլորտի գերակայություններն են սահմանվում.

1. Տոհմային անասնաբուծության հիմնադրում և զարգացում,
2. Հացահատիկի կայուն սերմարտադրության ստեղծում,
3. Մեքենատրակտորային հավաքակայանի նորացում,
4. Գյուղատնտեսության արտադրության ապրանքայնության ավելացում:

318. Սա ենթադրում է մի շարք երկարաժամկետ հետևողական միջոցառումների իրականացում, որոնք ուղղված կլինեն մարզի ամբողջ տնտեսության զարգացմանը: Մարզի գյուղատնտեսության ոլորտի զարգացման գլխավոր նպատակն է բուսաբուծության՝ խաղողագործություն, բանջարաբուծություն, պտղաբուծության ճյուղերի և անասնապահության հետևողական ինտենսիվացման շնորհիվ գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումը, որը կբերի գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճին և աղքատության կրճատմանը: Նախատեսված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

1) Հետևողական և արդյունավետ օգտագործել մարզի հողային և մարդկային ռեսուրսները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառման, ոռոգելի հողերի ընդարձակման, անմշակ հողերը ցանքաշրջանառության մեջ ներառելու միջոցով:
2) Հնարավորինս ավելացնել բուսաբուծական մթերքների, հատկապես խաղողի, պտղի հիմնական տեսակների՝ ծիրանի, դեղձի, սալորի, կեռասի, և այլն, բոստան-բանջարանոցային և կերային մշակաբույսերի արտադրության ծավալները և նրանց ապրանքայնության մակարդակը:
3) Օժանդակություն ցուցաբերել մարզի տարածքում գործող ագրովերամշակող ընկերությունների կողմից գյուղատնտեսական հումքի մթերման կազմակերպման և ագրովերամշակող կազմակերպությունների ու գյուղատնտեսական հումք արտադրողների միջև հումքի գնման պայմանագրային փոխհարաբերությունների ձևավորման գործընթացներին
4) Էապես ընդլայնել խաղողի, պտղի և բոստան-բանջարանոցային մշակաբույսերի տարածքները և արտադրվող մթերքների արտահանման ծավալները:
5) Ընդլայնել բոստան-բանջարանոցային մշակաբույսերի բարձր բերքատու սորտերի սերմերի արտադրության և ներկրման, ինչպես նաև մշակության նոր արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման, ոռոգման ջրի, հանքային և օրգանական պարարտանյութերի արդյունավետ օգտագործման միջոցով:

6) Բարելավվել ոռոգման համակարգը, մասնավորապես՝ վերանորոգել ստորին Հրազդանի ջրանցքը, վերանորոգել պոմպակայանները, բարելավել ոռոգման ներտնտեսային ցանցը և վերացնել ջրօգտագործման բնագավառում առկա թերություններն ու բացթողումները:
7) Անասնաբուծական ծառայությունների բարելավման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը, անասնապահական մթերքների որակը, արտադրության արդյունավետությունը և ապրանքայնության մակարդակը:
8) Արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով պահպանել և կատարելագործել կենդանիների տոհմային հատկանիշները:
9) Հետևողական աշխատանքներ տանել մարզում հակակարկտային կայանների թվի ավելացման ուղղությամբ:
10) Ապահովել գյուղատնտեսական վարկերի հասանելիությունը աղքատ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսական կազմակերպություններին:
11) Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելու ռիսկը մեղմելու նպատակով մարզում ներդնել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրական համակարգը:
12) Հետևողական աշխատանք իրականացնել մարզում գյուղատնտեսական մթերքների՝ բանջարեղենի, պտղի, խաղողի, կաթի, մսի, ձկան, վերամշակվող կազմակերպությունների թվի ավելացմանը՝ այն հնարավորինս մոտեցնելով բուն արտադրողին:
13) Արագածոտնի մարզում կառուցել մսի մթերման և վերամշակման արտադրամասեր:
14) Հետևողական աշխատանքներ տանել մարզում հողերի կատեգորիաների ուսումնասիրման, ճշգրտման և վերահսկողություն իրականացման բնագավառում:
15) Մարզում շուկայական հարաբերությունների աշխուժացման նպատակով բարելավել միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վիճակը, վերացնել կապի և հաղորդակցության համակարգում եղած թերությունները:
16) Բարձրացնել գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակը և տեխնիկայի օգտագործման արդյունավերտությունը՝ կոոպերացայի և այլ կազմակերպչական ձևերով համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրման միջոցով:
17) Մարզում շահագրգռել հողերի խոշորացումը և գյուղացիական տնտեսությունների միավորումը:
18) Ապահովել գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին բնակչության իրազեկումը:

319. ՀՀ Արագածոտնի մարզի գյուղատնտեսության ոլորտի երկրորդ արդյունքը անասնապահության արտադրողականության բարձրացումն է արհեստական սերմնավորման միջոցառումներ անցկացնելու շնորհիվ: Վերջինս մասամբ ապահովվում է ՀՀ կառավարության տարեկան հատկացումների հաշվին և հիմնականում վերաբերում է գլխաքանակի հիվանդությունների կանխարգելմանը: Սակայն ինչպես անբավարար ֆինանսավորումը, այնպես էլ միջոցառումների որակը լուրջ բարելավման կարիք ունեն: Պետական ֆինանսավորմամբ 2014թ. տարբեր հիվանդությունների դեմ պատվաստում կստանա 70.000 խոշոր եղջերավոր, 70.000 մանր եղջերավոր անասուն և 300.000 թռչուն: Մինչև 2018թ նշված ծավալները կավելանան և կկազմեն Խ.Ե.Կ. 90000, մանր եղջերավոր՝ 90000 և թռչուն 350000 գլուխ: Կարևոր խնդիր է մեքենատրակտորային հավաքակայանի թարմացումը: Մարզի մեքենատրակտորային հավաքակայանը հին է, հիմնականում՝ մաշված և չի համապատասխանում իր նկատմամբ ներկայացվող պահանջներին: 2015-2018թթ. տարբեր ծրագրերով նախատեսվում է մարզ ներկրել 3 տրակտոր, 10 գութան, 3 կուլտիվատոր, 3 շարքացան, 1 հավաքիչ-մամլիչ, 5 կցասայլ՝ 80 միլիոն դրամ ընդամենը արժեքով: Հետագա տարիներին նշված ծավալները կաճեն՝ տրակտոր մինչև 50 միավոր, հացահատիկահավաք կոմբայն մինչև 15, գութան 50, կուլտիվատոր 20, շարքացան 15, հավաքիչ-մամլիչ 5, կցասայլ 30, շուրջ 1.2 մլդ դրամ ընդհանուր արժեքով: Շարունակվելու է մարզի ոռոգման համակարգի բարելավումը: Տարբեր ծրագրերով և համայնքների միջոցներով վերանորոգվելու են մարզի տարածքում գտնվող միջհամայնքային և ներհամայնքային ոռոգման ցանցերը:

Աղյուսակ 8.9. ՀՀ Արագածոտնի մարզի 2011-2014 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի գյուղատնտեսության ոլորտի 2014 թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի և մինչև 2018 թ. ընկած ժամանակահատվածի

(մլն. դրամ)

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014 թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	2015-2018թթ
1	2	3	4
Գյուղատնտեսություն	**1057.0**	**6613.1**	**8025**
որից՝			

ՀՀ պետական բյուջե	737.4	1179.32	1500.0
միջազգային կազմակերպություններ, դոնորներ, վարկավորում և մասնավոր ներդրումներ	227.0	5098.18	5560.0
Այլ աղբյուրներով/մասնավոր ներդրումներ/	92.6	335.6	500.0
համայնքային բյուջե	-	-	465.0

320. 2015-2018թթ. կշարունակվեն «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության», «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» և «Հայաստանի Հանրապետությունում գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման պետական աջակցության» ծրագրերը: Անհրաժեշտության դեպքում, ելնելով բուսասանիտարական վիճակի վերլուծության արդյունքներից, «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում կիրականացվեն կրծողների, մորեխների և անտառի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումներ:

321. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 336-Ա որոշման համաձայն՝ 2007-2015 թվականներին իրականացվում է տավարաբուծության զարգացման ծրագիրը, որի շրջանակներում եվրոպական երկրներից հանրապետություն են ներկրվում շվից, հոլշտին և սիմենթալ ցեղերի տոհմային բարձրարժեք երինջներ և տարաժամկետ վճարման պայմանով հատկացվում գյուղացիական տնտեսություններին:

322. 2015-2018 թվականներին մարզում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվելու է «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագիրը, որի շրջանակներում կիրականացվի գյուղատնտեսական կենդանիների թվով 9-ը առավել վտանգավոր վարակիչ հիվանդությունների դեմ ախտորոշիչ և կանխարգելիչ շուրջ 995 հազար միջոցառում:

323. «ՀՀ Արագածոտնի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ-ի (ԳԱՄԿ) կողմից 2015-2017 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտի համաձայն նախատեսվում է իրականացնել «Գյուղական խորհրդատվական ծառայություններ» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր տարվա ընթացքում նախատեսվում է կազմակերպել և անցկացնել 115 սեմինար և 45 դաշտային ուսուցում, 2288 խորհրդատվական միջոցառում, 15 փորձացուցադրական աշխատանք: Տպագրել և տարածել 35 անուն խորհրդատվական թերթիկ և գրքույկ՝ 12000 ընդհանուր տպաքանակով: Թողարկել 12 համար թերթ՝ 14400 ընդհանուր տպաքանակով»,

324. «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսվող ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ապարատի պահպանման ծախսերի և «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի, բույսերի կարանտինի, գյուղմշակաբույսերի և բույսերի պաշտպանության միջոցների լաբորատոր փորձաքննությունների իրականացում» ծախսային ծրագրի շրջանակներում:

325. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ամեն տարի ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հնարավորություն է ունենում իրականացնել հանրապետության գետերի ու հեղեղատարների ամենախոցելի տեղամասերի ամրացման ու մաքրման աշխատանքներ: Հակահեղեղային միջոցառումների ծրագրերը մշակելու համար տեղեկատվություն ստանալու, տեղերում ուսումնասիրություններ կատարելու գործընթացներում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը համագործակցում է ինչպես բնագավառում փորձ ու դերակատարություն ունեցող պետական կառավարման և այլ մարմինների, այնպես էլ մարզպետարանների հետ:

326. ՀՀ Արագածոտնի մարզի գյուղատնտեսության ոլորտի ռազմավարության ֆինանսավորումը 2015-2018 թվականներին կազմում է 3,260,000.0 հազ.դրամ (տես՝ հավելված 8):

8.3.Գյուղատնտեսության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	*Թիրախ 2015-2018թթ.*	*Կարևոր նախադրյալներ*
Ավելացնել գյուղատնտեսության	1)Գյուղատնտեսության համախառն արտադրանքը	165 մլրդ.դրամ	Առկա նյութատեխնիկական

համախառն արտադրությունը	2) Գյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության ծավալում, %	18-20%	և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում, Բնակլիմայական գործոնի ազդեցությունը
Արդյունք 1. Մարզի հողային և մարդկային ռեսուրսների արդյունավետ օգտագործում	1.1.Օգտագործվող վարելահողերի մակերեսը	29000հա	Ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների առկայությունը
	1.2.Չօգտագործվող վարելահողերի տարածքը	11000հա	
	1.3.Մշակաբույսերի տարածքը	43000հա	
	1.4. Գյուղատնտեսության ոլորտում զբաղված աշխատուժի տեսակարար կշիռը	63%	
Արդյունք 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և համախառն արտադրանքի ծավալների բարձրացում	2.1.Բանջար-բոստանային մշակաբույսերի բերքատվությունը -բանջար -բոստան	350 g/հա 360 g/հա	Ֆինանսական ռեսուրսների առկայություն Որակյալ սերմերի, տնկանյութի առկայություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
	2.2.Խաղողի բերքատվությունը,	160 g/հա	
	2.3.Պտղի բերքատվությունը,	70-90 g/հա	
	2.4. Հացահատիկի բերքատվությունը	35 g/հա	
Արդյունք 3. Ոռոգման համակարգի բարելավում	3.1. Մարզում ոռոգվող հողատարածությունների ավելացում	300 հա	Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն
	3.2. Համայնքներում վերանորոգվող ջրանցքների թիվը	տարեկան 4-5	
	3.3. Վերականգնվող ոռոգման ցանցերի ընդհանուր երկարությունը	տարեկան 5-15կմ	
Արդյունք 4. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, որակի բարելավում և հիվանդությունների	4.1. Կաթի արտադրության ծավալները	48-50 հազ.տոննա	Անասնաբուժական կանոնների ճիշտ և ժամանակին կիրառում, գյուղ. կենդանիների հիվանդությունների բռնկման կանխարգելում
	4.2. Մսի արտադրության ծավալը	8-10 հազ. տոննա	
	4.3. Բրդի արտադրության ծավալները	170-180 տոննա	
	4.4. Ձվի արտադրության ծավալները	80-90 մլն. հատ	

կանխում			
Արդյունք 5. Գյուղատնտեսական արտադրական ենթակառուցվածքների բարելավում	5.1. Մարզում գյուղատնտեսական արտադրանքի շուկաների թվի ավելացում	1-2	Ֆինանսական և տեխնիկական միջոցների առկայություն
	5.2. Մարզում գյուղացիական տնտեսությունների թիվը	50634	
	5.3. Ջերմոցային տնտեսությունների մակերեսը,հա	416.79	
	5.4. Մնկի արտադրամասերի մակերեսը, հա	0.14	
	5.5. Սառնարանային տնտեսությունների տարողությունը, տոննա	2375.7	
Արդյունք 6. Գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացում	6.1. Առևտրային բանկերից և միկրոֆինանսավորման կառույցներից վարկային միջոցներ ստացած գյուղացիական տնտեսությունների (կազմակերպությունների) թիվը -ընդհանուր գումարը	9600 7-10 մլրդ.դրամ	Վարկերի հասանելիություն գյուղացիական տնտեսությունների, կազմակերպություններ համար

9. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

9.1.Ոլորտի իրավիճակի վերլուծություն

327. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները մեծ չափով առկա են Արագածոտնի մարզում:

328. Դրանք են անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման, ինչպես նաև կազմակերպությունների արտադրական գործունեությունից շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության սահմանափակման, մասնավորապես՝ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների նվազեցման խնդիրները, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը, հողերի դեգրադացիայի կանխումը, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը, մարգագետինների բարելավումը և արդյունավետ օգտագործումը:

329. Բնապահպանության ոլորտում 2015-2018 թվականներին կշարունակվի

օրենսդրությամբ ՀՀ Արագածոտնի մարզպետին, մարզի համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններին և ոլորտի հանրապետական գործադիր ու այլ մարմինների տարածքային ստորաբաժանումներին վերապահված լիազորությունների կատարումը:

330. ԲՊԿՀՆ ԾԻԳ-ը, ՀՀ կառավարության հետ համատեղ, կշարունակի անտառների հիմնման և անտառային ռեսուրսների կառավարման ծրագրերը, փեթակների տրամադրումը մարզի մեղվաբույծներին, լեռնային արոտավայրերի սնուցման/պարարտացման միջոցառումները, ինչպես նաև դրամաշնորհների տրամադրումը բնապահպանական ծրագրերի իրականացման համար:

331. 2015-2018 թվականներին կշարունակվի Արագածոտնի մարզում բնապահպանական իրավիճակի կառավարումը առկա օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերի միջոցով: Ոլորտում կկատարվեն նախորդ տարիներին սկսված աշխատանքները:

Աղյուսակ 9.1. ՀՀ Արագածոտնի մարզի 2011-2014 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի բնապահպանության ոլորտի 2014 թ. գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի

(մլն. դրամ)

Ոլորտը/ֆինանսավորման աղբյուրը	2014 թ. կարիքների գնահատման արժեքը ըստ ՄԶԾ-ի	2014 թ. ՏԱՊ-ով նախատեսվող ծրագրերը	ՄԶԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը
Բնապահպանություն	**151.0**	**224.0**	**73.0**
որից՝			
ՀՀ պետական բյուջե	151.0	224.0	73.0
միջազգային կազմակերպություններ, դոնորներ և մասնավոր ներդրումներ	0	0	0
համայնքային բյուջե	0.0	0.0	0.0

332. Ընդհանրապես, բնապահպանության բնագավառում քիչ են կատարվող ներդրումները ՀՀ պետբյուջեի, դոնոր կազմակերպությունների և համայնքների միջոցներով: Միայն մարզի խոշոր համայնքները ֆինանսական հնարավորություններ ունեն այս բնագավառում որոշ ներդրումներ կատարելու: Սակայն ավելի թույլ համայնքները այդ ուղղությամբ քիչ գործ են անում: Բնապահպանական

հիմնախնդիրները մնում են չլուծված: Ներկայումս մարզպետարանը բանակցություններ է վարում տարբեր միջզգային կազմակերպությունների հետ՝ հիմնախնդիրը վերջնականապես լուծելու նպատակով:

333. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը: Հայաստանն ակտիվորեն մասնակցում է միջազգային համագործակցության գործընթացներին, ստորագրել ու վավերացրել է բնապահպանական մի շարք միջազգային ու եվրոպական կոնվենցիաներ և դրանցից բխող արձանագրություններ:

334. Միջազգային այդ համաձայնագրերի ու կոնվենցիաների շրջանակներում Հայաստանը նպատակ ունի կանխարգելել կամ սահմանափակել մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունը, կանխարգելել կամ նվազագույնի հասցնել վնասակար նյութերի և միացությունների արտանետումներն ու արտահոսքերը մթնոլորտային օդ և բաց ջրային ավազան, նվազեցնել և ստեղծել կենցաղային և արտադրական թափոնները շրջակա միջավայրում տեղադրելու և դրանց վնասազերծման բավարար մեխանիզմներ, սահմանափակել հողի բերրի շերտի տեղափոխումը, վերացնել մթնոլորտային օդի գերնորմատիվային աղտոտվածությունը, մեղմացնել կլիմայի գլոբալ փոփոխության բացասական հետևանքները, պահպանել կենսաբազմազանությունը, ապահովել վերականգնվող բնական ռեսուրսների վերարտադրության անհրաժեշտ ծավալները և բնական հավասարակշռվածությունն ապահովող պայմանները, ապահովել չվերականգնվող բնական ռեսուրսների բանական և արդյունավետ օգտագործումը:

335. Վերջին տարիների ընթացքում, օրենսդրական դաշտի բարելավման առումով, բավականին մեծ աշխատանք է կատարվել նշված խնդիրների լուծման համար. ընդունվել են ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք իրավական ակտեր և ծրագրեր:

336. Դրանցից կարելի է նշել ՀՀ «Անտառային օրենսգիրք» և ՀՀ կառավարության 2005թ. հուլիսի 21-ի «Անտառի ազգային ծրագիրը հաստատելու մասին» N 1232-Ն որոշումը, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» , «Հայաստանի Հանրապետության օրենքը թափոնների մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին», «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին», «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» և «Որսի և որսորդական տնտեսության վարման մասին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներ և այլն:

337. ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի «Բնության

հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշմամբ սահմանվել է մարզի բնության հուշարձանների ցանկը.

1) Երկրաբանական հուշարձաններ

ա. «Տափակ բլուր» լիպարիտային գմբեթ- Թաթուլ գյուղից 2կմ հեռավորությամբ:

բ. «Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում Բյուրական գյուղից 7կմ հս. Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ:

գ. «Տաթևիկ» քարե բնական քանդակ- Դաշտադեմ գյուղի հարավ-արևելյան եզրին

դ. «Փոքր Արտենի» հրաբուխ - Արևուտ գյուղից 2,5 կմ հվ-արմ.

ե. «Քարե կարկուտ» տեքստուրային առանձնահատուկ ներփակումներ – Սարալանջ գյուղից մոտ 3կմ հս-արմ.

զ. «Արայի լեռան խառնարան - Արտաշավան գյուղից 6կմ հս-արլ.

է. «Անանուն» ժայռ-մնացուկներ - Սարալանջ գյուղից 4,5կմ հվ-արմ.

ը. «Չինգիլային» դաշտ քարե կուտակումներ – Քուչակ գյուղից մոտ 1,5կմ - հս-արլ.

թ. «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն - բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ, քարեդարյան հասակի եզակի հնագիտական հուշարձաններ

2) Ջրաերկրաբանական հուշարձաններ

ա. «Սրբի» կամ «Քառասուն» աղբյուր - Ապարան քաղաքի կենտրոնում

բ. «Քյահրիզ» աղբյուր - Գեղաձոր գյուղից 8,5կմ հվ-արմ.

գ. «Գեղաձոր» աղբյուր - Գեղաձոր գյուղից 7,5կմ հվ-արմ.

դ. «Ջաղացի» աղբյուր – Ղազարավան գյուղի հարավային ծայրամասում

3) Ջրագրական հուշարձաններ

ա. «Ամբերդ» լիճ - Բյուրականից մոտ 2,1կմ հս-արմ.

բ. «Լիսինգ» լիճ - Ծաղկաշեն գյուղից մոտ 11կմ հս-արմ.

գ. «Ումրոյ» լիճ - Ծաղկաշեն գյուղից մոտ 8կմ հս-արմ.

դ. «Գեղարոտի» ջրվեժ - Արագած գյուղից 11կմ հս-արմ.

4) Բնապատմական հուշարձաններ

ա. «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն - Արևուտ գյուղից 2կմ հվ-արմ.

բ. «Արտաշավան» բնապատմական համալիր - Արտաշավան գյուղի արլ եզրին

գ. «Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ – Հարթավան գյուղից մոտ 4կմ դեպի արլ.

դ. «Քասախի դարավանդներ» - Օհանավան գյուղի արլ. եզրին

ե. «Քասախի կիրճ» - Սաղմոսավան գյուղ

զ. Անանուն» էրոզիոն աշտարակ Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ, Արայի լեռան հրաբխի խառնարանում

Կենսաբանական հուշարձաններ մարզում չկան

338. Այսպիսով, ՀՀ-ում 5 անվանական հուշարձաններից մարզում բացակայում են միայն կենսաբանական հուշարձանները: Ընդամենը մարզում բնության հուշարձանների թիվը 22-ն է և «Արագածի ալպյան» պետական արգելավայրը: Արգելավայրը կառավարվում է ֆիզիկայի ինստիտուտի կողմից /300 հա/: 2006թ. ընդունվել է ՀՀ օրենք «Բնության հատուկ պահպանվող տարածքների» մասին:

339. Բնագավառի խնդիրներով զբաղվելու իրավասություններ ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները: 1996 թվականին ընդունված և մինչև 2002 թվականը գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև բնապահպանության ոլորտը կարգավորող մինչև 2001 թվականն ընդունված ՀՀ օրենսդրական այլ ակտերը հիմնականում չէին պարունակում համայնքներին բնապահպանության ոլորտում համապատասխան լիազորություններով, պարտականություններով և պատասխանատվությամբ օժտող դրույթներ: Սակայն դրանից հետո իրավիճակը շտկվեց: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր օրենքի 32-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով կամ կառավարության սահմանած կարգով վարում է համայնքի բնապահպանական կադաստրը, 45-րդ հոդվածի համաձայն՝ բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, շրջակա միջավայրի պահպանության կազմակերպման՝ պարտադիր, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված հետևյալ լիազորությունները.

1) **վերահսկողություն է իրականացնում բնության պահպանության բնագավառում, կազմակերպում է ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումները**
2) **ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:**

340. Բնապահպանության ոլորտը Արագածոտնի մարզում ներկայացված է նաև որոշակի ինստիտուցիոնալ համակարգով: Մարզում բնապահպանությանը հիմնականում առնչվում են հետևյալ կառուցվածքային միավորները՝

1) **ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը**
2) **ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Արագածոտնի տարածքային բաժինը**
3) **Մարզի անտառտնտեսությունները, որոնք գործում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության գերատեսչական ենթակայության տակ**
4) **ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության Ախուրյանի և Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքային բաժինը**
5) **Բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունները:**

341. Այսպիսով, մարզում բնապահպանական իրավիճակը կառավարվում է որոշակի օրենսդրական և ինստիտուցիոնալ համակարգերի միջոցով:

342. Անտառներ, կենսաբազմազանություն, բնակության վայրեր - Արագածոտնի ընդհանուր անտառային ֆոնդը կազմում է 13448 հա, որից անտառածածկ են 8300 հա: Արագածոտնի մարզի անտառածածկ տարածքները գտնվում են մարզի Ապարանի. Արագածի, Աշտարակի և Թալինի տարածաշրջաններում: Մարզի դիրքը և ռելիեֆը նպաստել են կենսաբազմազանության մեծ տեսականու, էնդեմիզմի բարձր մակարդակի և հարուստ ագրոկենսաբազմազանության ձևավորմանը: Մարզը Հայաստանի այն տարածքներից է, որոնք ունենալով հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանություն, միաժամանակ ենթարկվում են այն վտանգող մարադկային և տեխնածին մի շարք գործոնների ազդեցությունը: Այդ ազդեցության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի, էկոհամակարգերի և դրանց համակեցությունների տեսակային կազմի փոփոխություն, ընդհուպ առանձին տեսակների ոչնչացում, կենսառեսուրսների գերօգտագործում, աղտոտում:

343. Անտառներով համեմատաբար աղքատ Արագածոտնի մարզը գտնվում է որոշակի հակասական վիճակում՝ մի կողմից առկա են գեղատեսիլ բնություն, իսկ մյուս կողմից՝ հանքային պաշարներով՝ քարերով հարուստ ընդերքը հանքարդյունահանվում է, որը սոցիալ-տնտեսական դրական հետևանքների հետ մեկտեղ մարզում առաջացրել է բնապահպանական բազում խնդիրներ: Մարզի անտառտնտեսության գործունեությունը լուրջ բարեփոխումների խնդիր ունի: Այդ ձեռնարկությանը պետական բյուջեից տրվող սահմանափակ աջակցությունը ստիպում է նրանց նորմալ տնտեսվարելու համար առավելագույն կերպով օգտագործել անտառը, միևնույն ժամանակ չավելացնելով անտառվերականգնման

ծախսերը: Անտառում այս իմաստով տնտեսվարելու և՛ հնարավորություն և՛ անհրաժեշտություն չկա, այլ անհրաժեշտ է անտառային օրենսգրքով սահմանված անտառների կայուն կառավարում: Արագածոտնի անտառներն այդ «ինքնապահպանման-ինքնածախսածածկման» ներուժը, ռեսուրսներն ու հնարավորությունները չունեն և այս առումով միայն ազգային-պետական աջակցության և ներդրումների շնորհիվ է, որ անտառները կարող են երկար ժամանակաշրջանի ընթացքում պահպանվել, վերականգնվել և փոխանցվել սերունդներին:

344. Արագածոտնի անտառները նաև առողջարար և գեղատեսիլ են: Անտառների, որոշակի չափով նաև բուժիչ հանքային ջրերի, պատմամշակութային հուշարձանների, ռելիեֆի այս ձևավորված ամբողջությունը խոսում է մարզում առողջարաններ հիմնելու, ինչպես նաև զբոսաշրջությունը զարգացնելու մեծ ներուժի մասին: Կարևոր է համայնքների, հասարակության լայն շերտերի մասնակցությունը անտառի պահպանության հարցերում: Այստեղ համայնքների, հասարակության և պետության փոխհամաձայնեցված, ներդաշնակ գործունեությունը կարող է ապահովվել միայն տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության լայն խավերի, հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավման միջոցով: Օրենսդրական որոշակի բազա կա /ՀՀ Սահմանադրություն, ՀՀ միջազգային պայմանագրեր, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ՀՀ Անտառային օրենսգիրք և այլն/, հասարակությանը նույնպես այս գործընթացներում ներգրավելու համար և այդ ներգրավվածությունը որոշակի չափով առկա է, սակայն այն բավարար համարել չի կարելի, քանզի ակնկալվում է ավելի մեծ մասնակցություն այս խնդիրներին: Ինչ-որ տեղ հասարակության անբավարարար մասնակցությունն այստեղ հենց մարդկանց մի ստվար հատվածի կրավորական դիրքորոշման արդյունք է:

345. Հասարակության անդամները նաև կոնկրետ համայնքների բնակիչներ են: Մի շարք բնակավայրեր տեղադրված են անտառաշատ տարածքներում և կարծես թե այդ բնակավայրերի բնակչությունը ամենասերտ հոգեկան, ֆիզիկական, փոխներգործուն կապի մեջ է գտնվում տվյալ բնակավայրի անտառի հետ: Այսօր անտառային հարցերով հիմնականում որոշումներն ընդունվում են իշխանության բարձր մակարդակներում, բայց ստացվում է այնպես, որ անտառկառավարմանը վերաբերող մի շարք հարցեր ունեն ոչ միայն ազգային պետական այլ նաև տվյալ համայնքների համար համայնքային նշանակություն: Ցանկալի է, որ այս իրողությունը բոլոր դեպքերում հաշվի առնվի և պրակտիկայում ավելի շատ հնարավորություն ստեղծվի նաև համայնքներում քննարկել անտառկառավարման հարցերը և մասնակցել որոշումների ընդունման գործընթացին:

346. Արագածոտնի մարզում համայնքների վարչական սահմաններում գտնվող անտառների կայուն կառավարումն իրականացվում է անտառտնտեսությունների կողմից: Մեկ անգամ չէ, որ քննարկվել են անտառների կայուն կառավարումը տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնելու խնդիրները: Խնդիրը կարևոր նշանակություն ունի և դեռ ենթակա է քննարկումների: Այստեղ մոտեցումը հետևյալն է՝ եթե համայնքային անտառկառավարումը կարող է նպաստել անտառի պահպանմանը, ինքնավերականգնմանը և ապահովել օպտիմալություն, ապա անտառների մի մասը համապատասխան համայնքների կառավարմանը հանձնելը կարող է արդյունավետ լինել:

347. Արագածոտնի անտառներին լուրջ վնաս հասցրեցին 1990-ական թթ. կատարված անտառհատումները, որոնք պայմանավորված էին տնտեսական ու էներգետիկ ճգնաժամով՝ էլեկտրոէներգիայի, գազի մատակարարման, կենտրոնացված ջերմամատակարարման բացակայությամբ: Էներգետիկ իրավիճակի բարելավման շնորհիվ անտառհատումները զգալիորեն նվազել են, տեղի է ունենում մարզի բնակավայրերի գազիֆիկացում, որը զգալիորեն կրճատում է բնակչության վառելափայտի պահանջարկը: Գործընթացը հնարավորություն կտա հատկապես անտառներին մոտ գտնվող գյուղերում զգալիորեն կրճատել անտառհատումները և բարձրացնել անտառի ինքնավերականգնման ներուժը:

348. Վերոնշյալ բոլոր հարցերի վերաբերյալ մարզպետարանում պարբերաբար անց են կացվում քննարկումներ, որոնց արդյունքում ձևավորված կարծիքները, առաջարկությունները ներկայացվում են ՀՀ կառավարությանը, իրավասու պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին:

349. Ջրային ավազան - Մարզի տարածքով են հոսում հինգ գետեր՝ Քասախ, Հալավար, Գեղարոտ, Շահվերդ և Ամբերդ:

Աղյուսակ 9.2. Արագածոտնի մարզի գետային համակարգը

Գետի անվանումը	Ակունքի նիշը /մ/	Գետաբերանի նիշը /մ/	Երկարու-թյունը /կմ/	Միջին թեքությունը /%/	Ջրահավաք ավազանի մակերեսը /կմ.ք./
Քասախ	3400	830	89	29	1480
Հալավար	2820	1990	11	75	39.9
Գեղարոտ	3600	1726	25	75	66
Շահվերդ	3300	990	28	82	162
Ամբերդ	3700	955	36	76	141

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան

Նկարագիրը և փուլերը	չափի միավորը	ծավալը
1. ՀՀ Արագածոտնի մարզի ստորերկրյա քաղցրահամ ջրերի ջրառու հորատանցքերի գույքագրում, տեխնիկական վիճակի ուսումնասիրում և կադաստրի ստեղծում	հորատանցք	210
2. ՀՀ Արագածոտնի մարզի ստորերկրյա քաղցրահամ ջրերի բնաղբյուրների գույքագրում, տեխնիկական վիճակի ուսումնասիրում և կադաստրի ստեղծում	բնաղբյուր	315

350. Քասախ գետի ջրահավաք ավազանի մակերեսը 1480 քառ.կմ է, հոսքը 329 մլն./մ/խ, հոսքի մոդուլը՝ /ծավալային/ 0.222: Մարզում առկա են 28 արհեստական ջրամբարներ

Աղյուսակ 9.3. Մարզի ջրամբարների ցուցանիշները

հ/հ	**Ջրամբարի անվանումը**	**Ծավալը մլն. մ/խ**	**Պատվարի բարձրությունը /մ/**
1	Ապարանի	91	51.5
2	Ագարակի	0.196	8
3	Աշնակի	0.113	5.2
4	Դավթաշենի	0.316	8.8
5	Արագածի	0.59	4
6	Թալինի 1	0.248	7.5
7	Իրինդի	0.06	5
8	Ծիլքարի	1.2	13
9	Կաթնաղբյուրի	0.4	10.4
10	Կաքավաձորի 1	0.024	3.8
11	Կոշի	0.5	9
12	Հացաշենի	1.11	7.3
13	Հալավարի	5.5	32.4
14	Ն.Սասնաշենի	1.15	17.4
15	Շղարշիկի	0.097	7
16	Ոսկեթասի	0.105	7
17	Վ.Բազմաբերդի	0.222	8
18	Վ.Սասնաշենի	0.064	4.5
19	Կաքավաձորի 2	1	35
20	Շենիկի	0.78	18
21	Աշնակի	0.331	7
22	Զովասարի	0.91	10.3
23	Մաստարայի	0.077	4
24	Դաշտադեմի	0.039	5

25	Կաթնաղբյուրի 2	0.01	4
26	Ն.Բազմաբերդի	0.017	4.5
27	Եղնիկի	0.01	3
28	Արուճի	0.05	8
29	Թալին 2	0.03	

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան

351. Օդային ավազանն աղտոտվում է հիմնականում ադյունաբերական, այդ թվում՝ հանքարդյունահանող կազմակերպությունների և ավտոտրանսպորտի արտանետումներից: Ստացիոնար աղբյուրներից արտանետումների կրճատման համար հեռանկարային լուծումը բնապահպանական տեսակետից նախընտրելի տեխնոլոգիաների ներդրման համար պետության կողմից նպաստավոր միջավայրի քաղաքականության մշակումն է: Մարդկանց առողջության և կյանքի որակի ապահովման համար կարևորվում է նաև քաղաքներում կանաչ տարածքների, ռեկրեացիոն գոտիների պահպանման և համաչափ զարգացման խնդիրը, որը առավել կարևորվում է ամառվա ամիսներին ջերմային սթրեսներին հարմարվելու համար:

Աղյուսակ 9.4. ՀՀ Արագածոտնի մարզում բնապահպանության օրենսդրության խախտումները 2010 թվականին

ՀՀ	Ցուցանիշներ	Չափի միավորը	Քանակը
1	Ստուգված օբյեկտների քանակը	Միավոր	106
2	Հայտնաբերված խախտումների քանակը	Միավոր	101
3	Վարչական տույժի համար սահմանված գումար	Հազ.դրամ	3725.0
4	Վարչական տույժի ենթարկվածների քանակը	Մարդ	55
5	Վնասի հատուցման գումարն ըստ արձանագրությունների	Հազ. դրամ	590.8
6	Վնասի հատուցման արձանագրությունների քանակը	Միավոր	6

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան

352. Մարզում բնապահպանության ոլորտը բնութագրող մի շարք ցուցանիշների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ 9.5. Բնապահպանության ոլորտում ՀՀ Արագածոտնի մարզի իրավիճակը բնութագրող մի քանի ցուցանիշներ

Հ.Հ.	Ցուցանիշը	2011	2012
1	Մթնոլորտային արտանետումներ անշարժ աղբյուրներից /տոննա/	148.2	165.8
2	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը մեկ քառ. կմ-ի հաշվով,/կգ/	53.8	60.2
/3	Մթնոլորտ արտանետված փոշու քանակը /տոննա/	140.4	129.8
4	Բնապահպանական ընթացիկ ծախսերի իրականացումը /մլն դրամ/	1.2	1.6
5	Բնապահպանական հիմնական արտադրական միջոցների փաստացի արժեքները /մլն դրամ/	0.9	0.9
6	Բնապահպանական հիմնական արտադրական միջոցների արժեքները հիմնական արտադրական միջոցներ ունեցող մեկ կազմակերպության հաշվով /հազ. դրամ/	475.3	448.2
7	Բնապահպանական հիմնական արտադրական միջոցների հիմնավերանորոգման համար իրականացվող ծախսերը /հազ. դրամ/	38.0	31.0
8	Բնապահպանական և բնօգտագործման վճարներ /հազ. դրամ/	48600.0	55000.0
8.1	Բնապահպանական վճարներ /հազ. դրամ/	18200.0	20240.0
8.2	Բնօգտագործման վճարներ /հազ. դրամ/	30400.0	34760.0

(Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալներ)

9.2. Բնապահպանության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը

353. Արագածոտնի մարզում բնապահպանության ոլորտում անհրաժեշտ է իրականացնել հետևյալը՝ մարզի արդյունաբերա-բնապահպանական համալիր ծրագրի ընդունում և իրականացում, որը կնպաստի մարզի սոցիալ-տնտեսական հզորացմանը: Մարզում գերակայություն է հատկապես հանքարդյունաբերական և բնապահպանական ռազմավարությունների համադրումը, որը հնարավորություն կտա ապահովել հանքարդյունաբերության վերազինումը ժամանակակից անթափոն, էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաներով, նվազեցնել շրջակա միջավայրի և մասնավորապես՝ անտառների աղտոտումը:

354. Տնտեսական աճին զուգընթաց լավագույն, բնապահպանական տեսակետից անվտանգ և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրման խթանում՝ ապահովելով վնասակար արտանետումներ ունեցող հին տեխնոլոգիաների դուրս մղումը:

355. Մարզում կազմակերպությունների բնապահպանական վարկանշման մեխանիզմների, այդ թվում՝ միջազգային ISO ստանդարտների մշակույթի կիրառում:

356. Տարբեր պատճառներով լքված և չշահագործվող հանքավայրերի էկոլոգիական իրավիճակի բարելավմանը նպատակաուղղված ռեկուլտիվացիայի ծրագրերի իրականացում, որն անհրաժեշտ է ջրային ռեսուրսների և հողերի հետագա աղտոտումը կանխարգելելու և բնական էկոհամակարգերը վերականգնելու համար:

357. Բնապահպանական հիմնախնդիրների լուծման մեջ համայնքների մասնակցության ուժեղացում, դրանց լուծման ուղիների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացում: Անհրաժեշտ է կազմակերպել միջոցառումներ, որոնք կնպաստեն համայնքների մասնակցության ակտիվացմանը ԲՀՊՏ կառավարման գործընթացներում, քանի որ այդ տարածքների համար սահմանված ռեժիմը համեմատաբար մեծ հնարավորություններ է ստեղծում տնտեսական մեխանիզմների կիրառման համար: Մասնավորապես կարևորելով զբոսաշրջության ոլորտի զարգացումը ընդհանուր տնտեսական զարգացման մեջ, անհրաժեշտ է աջակցել համայնքների նախաձեռնություններին՝ էկոտուրիզմի զարգացման և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման նպատակով:

358. Էկոլոգիական կրթության ներդրում և արմատավորում մարզի կրթական հիմնարկներում, մարզի բնապահպանական ինստիտուցիոնալ համակարգի ներդրում:

359. Այլընտրանքային էներգիայի աղբյուրների կիրառում:

360. Մարզի գազամատակարարման ցանցի ընդլայնում: Շատ բնակավայրերում տնային տնտեսությունների կողմից որպես ջեռուցման հիմնական միջոց է դիտվում վառելափայտը, որը, որպես կանոն, հատվում է այդ բնակավայրերի հարևանությամբ գտնվող անտառներից և դրանով իսկ զգալի վնաս է հասցվում այդ տարածաշրջանների շրջակա միջավայրին: Անտառամերձ գյուղերի գազիֆիկացումը այս առումով պետք է առաջնահերթ համարվի:

361. Հողերի որակի և բերրիության չափորոշիչների մշակում. որակյալ մոնիթորինգի, հողօգտագործման նորմավորման, հաշվառման և վերահսկողության համակարգի ձևավորում: Վնասված գյուղատնտեսական և բնական հողատարածքների վերականգնման համար անհրաժեշտ է մշակել խթանման տնտեսական մեխանիզմներ: Վարելահողերի մի մասն ինչպես ամբողջ Հանրապետությունում, այնպես էլ Արագածոտնի մարզում չի օգտագործվում՝ ինչպես ներդրումների, այնպես էլ մեխանիզացիայի, պարարտանյութերի և այլ պարագաների բացակայության պատճառով:

362. Արոտավայրերի և խոտհարքերի ռացիոնալ կառավարում: Ներկայումս մանր գյուղացիական տնտեսությունները, աղքատության և կազմակերպված կոոպերացիայի բացակայության պատճառով, հիմնականում չեն կարողանում իրենց

փոքր հոտերը քշել հեռավոր ամառային արոտավայրեր և ստիպված են օգտագործել միայն գյուղամերձ կերահանդակները: Արդյունքում վերջիններս գտնվում են չափազանց մեծ ծանրաբեռնվածության տակ, իսկ հեռավոր կերահանդակների վիճակը, որպես արոտավայր չօգտագործելու արդյունքում, նկատելիորեն բարելավվում է

363. Բնապահպանական որոշումների կայացման գործում հասարակության մասնակցության ընդլայնում:

364. Համայնքային անտառկառավարման կիրառում մարզի անտառամերձ համայնքներում: Հանրապետությունում նախապատրաստվում են փորձնական ծրագրեր, որոնց հետագա գնահատումը հիմք կհանդիսանա համայնքային անտառկառավարման եղանակների և ծավալների սահմանման համար: Այս գործընթացը պետք է ընթանա տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների համագործակցության նորարարական մեխանիզմների կիրառման ճանապարհով:

365. Մարզի տարածաշրջաններում որսահանդակների ստեղծում, որը հնարավորություն կտա որսը կազմակերպել միայն սահմանված վայրերում և կնպաստի կենսաբազմազանության պահպանմանը:

366. Բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ստեղծում:

367. Աշտարակ, Ապարան, Թալին և Ծաղկահովիտ քաղաքների՝ կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում և վերակառուցում: Կազմակերպությունների կողմից նախնական մաքրման համակարգերի ստեղծումը էականորեն կնվազեցնի ջրային ավազանների վրա աղտոտման ճնշումը:

368. Կենցաղային կոշտ թափոնների կենտրոնացված աղբավայրերի կառավարման պլանների մշակում և վերամշակման համար բիզնես ծրագրերի մշակում: Մարզի քաղաքներում արտադրական և կենցաղային թափոնների կառավարման՝ հավաքման, տեսակավորման և կազմակերպված վնասազերծման խնդիրը կարևորվում է ինչպես անմիջական վնասի կանխարգելման, այնպես էլ հողային ռեսուրսների և ջրային ավազանների աղտոտման հետևանքների վերացման համար հետագայում պահանջվող խոշոր ներդրումների անհրաժեշտությամբ: Գործնականում արդյունաբերական թափոնները և շինարարական աղբը կոշտ կենցաղային թափոնների հետ հեռացվում են քաղաքային և գյուղական աղբյուսներ: Համապատասխան նորմատիվամեթոդական փաստաթղթերի բացակայության պայմաններում աճում է կոշտ աղբի կուտակիչների և աղբավայրերի առկա վիճակի բացասական ազդեցության հավանականությունը բնակչության առողջության և շրջակա բնական միջավայրի, հատկապես՝ հողի վրա: Ներկայումս Արագածոտնում թափոնների հեռացման նպատակով կիրառվող եղանակները համարժեք չեն:

369. Պետական և մասնավոր մի շարք կազմակերպությունների միջոցով քաղաքապետարանների կողմից մատուցվող աղբահեռացման ապակենտրոնացված ծառայությունների որակի և կարողությունների միջև էական տարբերություններ կան: Աղբահավաքման եղանակները և կիրառվող ենթակառուցվածքը ստանդարտից ցածր են, որի արդյունքում տեղի են ունենում աղբի մեծ կուտակումներ, աղբը հաճախ չի հեռացվում, առաջանում են սանիտարա-հիգիենիկ անբարենպաստ պայմաններ:

370. Թափոնների հեռացման համակարգի կատարողականության բարելավման համար անհրաժեշտ է մշակել նշված համակարգի արդիականացման ռազմավարական ծրագիր, որը ենթադրում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, աղբամշակման գործարանի կառուցում:

371. Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը համայնքների տարածքների սանիտարական վիճակի նկատմամբ

372. Օդային և ջրային ավազանի աղտոտվածության քիմիական վերլուծության շրջիկ լաբորատորիայի ձեռքբերում, որը հնարավորություն կտա կատարել մի շարք բնապահպանական վերլուծություններ:

373. Հնարավորինս աջակցել բնապահպանական վերահսկողության պետական լիազոր մարմինների մարզային կառույցների տեխնիկական ներուժի հզորացմանը, այդ թվում՝ շրջիկ էկոլաբորատորիաների ձեռքբերմանը, ինչը հնարավորություն կտա անմիջականորեն որոշելու մթնոլորտային օդի, ջրային ավազանի, հողային ռեսուրսների աղտոտվածության աստիճանը, դրանց աղբյուրները և ժամանակին կանխարգելելու շրջակա միջավայրի աղտոտումը: Բնապահպանության ոլորտի 2011-2014 թթ. ֆինանսավորումը բերված է հավելված 8-ում:

9.3. Բնապահպանության ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտ. Բնապահպանություն		
Խնդիր	Ցուցանիշ	Ռիսկեր
Բարելավել բնապահպանական իրավիճակը Արագածոտնի մարզում	Կենսաբազմազանության պահպանության համար, մասնավորապես անտառների կայուն կառավարման համար	Կազմակերպչական՝ Անտառների կառավարման մեջ թափանցիկության և անկախ մոնիտորինգի

	ապահովված են պայմանները ԱՊ կենսաբազմազանության մոնիտորինգի հաշվետվություն Անտառկառավարման պլաններ ունեցող անտառտնտեսություններ, հա Անտառշինական աշխատանքների ծավալը, պաշտպանիչ անտառաշերտեր, հա Հեղեղումների հետևանքով հողերի էռոզիայի կանխարգելման աշխատանքների իրականացման ծավալները, հա, մլն դրամ Ամրացված գետերի հուներ, կմ Տեղադրված գաբիոններ, հատ Աղբավայրեր, որոնք ունեն ցանկապատեր, թիվ	համակարգը չի ձևավորվել
Առաջնահերթ ծրագրեր		
Արդյունք 1. Մարզային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և «Հայ-անտառ» ՊՈԱԿ-ի ամագործակ-ցության համար ինստիտուցիոնալ հիմքերն ստեղծված են Խնդիրներ՝ • Ապահովել տեղական ինքնա-կառավարման մարմինների մասնակցությունը բնական ռեսուրսների, մասնավորապես անտառների և արոտավայրերի կառավարման գործընթացում • Իրականացնել հանրային կարծիքի ուսումնասիրություն ԱՊ տարածքում իրականացվող ծրագրերի վերաբերյալ • Ապահովել համայնքների տարածքներում իրականացվող նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հանրային լսումներ	Համայնքների թիվը, որոնք մասնակցում են ԱՊ տարածքների պլանավորման, կառավարման աշխատանքներին Նախագծերի թիվը, որոնք անցել են հանրային քննարկումներ Ակտիվ գործող ՀԿ-ների թիվը և իրականացված ծրագրերի ծավալը (դրամ) Հանրային լսումներ անցած նախագծերի թիվը ՀԿ-ների մասնակցությամբիրականացված ծրագրերի թիվը, ծավալը (դրամ)	Ռիսկեր՝ Կոնֆլիկտներ Հայանտառ» ՊՈԱԿ-ի և համայնքների միջև Շահերի բախումներ Գործունեության թափանցիկության բացակայություն Մեղմում՝ Համայնքները շահագրգռված են մասնակցելու կառավարման գործընթացներին Մարզում կան ակտիվ ՀԿ-ներ, 1

• Մարզի բնապահպանական ՀԿ-ների և լրատվամիջոցների կարո-ղությունների զարգացում ԱՊ կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման և հանրային իրազեկման մեջ նրանց ներգրավելու համար		
Արդյունք 2. Անտառների կառավարման պլանների իրականացման մեջ համայնքների մասնակ-ցության պայմաններն ապահովված են Խնդիրներ՝ • Մշակել ընթացակարգեր անտառների արտոնագրային կառավարման որոշումներին ՏԻՄ մասնակցության ապահովման համար • Հիմնել համայնքային անտառներ • Հիմնել տնկարանային տնտեսություններ համայնքային հողերի վրա	Անտառային ռեսուրսների կառավարման գործընթացներում համայնքների մասնակցության արդյունավետ մեխանիզմները մշակված են Հանրային լսումների թիվը Համայնքների թիվը, որտեղ իրականացվել են ուսուցողական սեմինարներ Ուսուցում անցած տեղական ինքնակառավարման մարմինների մասնագետների թիվը Հիմնադրված անտառի մակերեսը, 5 հա Համայնքային անտառների ծավալը, հա Վերականգնված անտառների մակերեսը, 10 հա Բարեկարգված անտառային ճանապարհներ, 8կմ Հիմնադրված /վերականգնված տնկարանային տնտեսությունների քանակը, տարեկան արտադրվող տնկիների քանակը, հազ. տնկի Իրացված ոչ բնափայտային անտառային մթերքի ծավալը, կգ, հազ. դրամ	Ռիսկեր՝ Շահերի անհամապատաս-խանություն համագործակ-ցության ստեղծման համար ՏԻՄ-երի կողմից անտառների կառավարման համար աջակցության մեխանիզմ-ները չեն հստակեցվել ՏԻՄ-երի կողմից անտառների կառավարման համար հմտությունների բացակայություն
Արդյունք 3. Արոտավայրերի կայուն կառավարման համակարգը ներդրված է Արոտավայրերի կայուն կառա-վարման պլանները մշակված են բոլոր համայնքների համար և իրականացման համար	արոտավայրերի օգտագործման համար կոոպերացիայի խթանում կատարված է համայնքների բյուջեների հաշվին) Տեղադրված ջրարբիացման կետեր, հատ Արոտավայրերի մակերեսը, որոնք ունեն ջրարբիացման կետեր, հա Վերանորոգված դաշտամիջյան	Ռիսկեր՝ ֆինանսների բացակայու-թյուն, ՏԻՄ-երի կողմից համաֆինանսավորում իրականացնելու շահագրգռվածության բացակայություն Մեղմում՝ Համապատասխանում է ՀՀ

ապահովված են միջոցները և հսկողության մեխանիզմները Բարելավված արոտավայրեր և խոտհարքներ, հազ. հա Խնդիրներ՝ • Արոտավայրերի օգտագործման համար ճանապարհների կառուցում և երթուղիների համաձայնեցում ԱՊ պահպանության ռեժիմի հետ • Արոտավայրերի և խոտհարքերի արդյունավետության բարձրացում • Արոտավայրերի ջրարբիացում • Բեռնվածության կանոնակարգում	ճամապարհներ, կմ, տեղադրված ջրահեռացման խողովակներ, հատ Արոտավայրերի քանակը և մակերեսը, որոնք ունեն օգտագործման տեխնիկական պայմաններ Մշակված արոտավայրերի կառավարման պլաններ, համայնք Աջակցություն ստացած կոոպերատիվներ	գյուղատնտեսության ռազմավարությանը, 2006թ. ԲՊԿՀՆ Ծրագրով մշակվել են համայնքների արոտա-վայրերի կառավարման պլաններ Կոոպերացիայի ձևավորման համար աջակցության սխեմաների բացակայություն
Արդյունք 4. Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգը կատարելագործված է և տարերայնորեն առաջացող աղբյուրների առաջացումը կանխարգելված է Խնդիրներ՝ • Խոշոր բնակավայրերի աղբավայրերի կառավարման պլանների կազմում • Միջհամայնքային աղբավայրերի նախագծում Տեղական ինքնակառա-վարման մարմիններին աջակցու-թյուն՝ աղբահանության պայմանա-գրային հարաբերությունների ձևավորման համար	Մարզում թափոնների կառավարման համար պայմաններն ապահովված են Բնակավայրեր, որոնք մշակել են աղբավայրերի կառավարման պլաններ, թիվ Աղբավայրեր, որոնք ցանկապատվել են, թիվ Մարզի քաղաքներում մշակված աղբավայրերի կառավարման պլաններ, ցանկապատված գործող աղբավայրեր Աշտարակ, Ապարան, Թալին համայնքներում Միջհամայնքային աղբավայրերի մշակված նախագծեր, թիվ Կազմակերպված է աղբահեռացման միջհամայնքային կազմակերպու-թյուն, թիվ Համայնքներ, որոնք ունեն աղբա-հեռացման պայմանագրեր, թիվ	Ռիսկեր՝ Ֆինանսական միջոցների բացակայությունը ՏԻՄ-երը չեն կարևորում խնդիրը Մեղմում՝ Թափոնների կառավարման հիմնախնդիրը կառավարու-թյան գերակայությունների շարքում է Աղբավայրերի վերակառուցման/ կառուցման խնդիրը նախատեսված է քաղաքների գլխավոր հատակագծերով
Արդյունք 5. Հողային ռեսուրսների օգտագործ-ման և պահպանության արդյու-նավետության բարձրացում Խնդիրներ՝ • Գաբիոնների կառուցում • Հենապատերի ամրացում • Գետերի հուների մաքրում	Հողերի դեգրադացիայի կանխարգել-ման աշխատանքներն իրականաց-վում են պետական, համայնքային և մասնավոր համագործակցության շրջանակներում: Տեղադրված գաբիոններ, հատ Ամրացված հենապատեր, Հեղեղումների հետևանքով հողա-	Ռիսկեր՝ Համայնքների կողմից անտառտնկման համար բավարար շահագրգռվա-ծություն չի ցուցաբերվի Հանքավայրի ռեկուլտիվաց-ման համար ֆինանսական միջոցների բացակայությունը

• Հողերի էռոզիայի կանխարգել-ման համար անտառվերականգն-ման /անտառհիմնման աշխատանքների իրականացում • Լքված հանքավայրերի ռեկուլտիվացիա	տարման կանխարգելման համար հիմնված անտառտնկարկներ, հա • Ապարան համայնքում հիմնվել է 20 հա անտառ • Բյուրական համայնքում հիմնվել է 8 հա անտառ Աշտարակի տարածաշրջանի քարհանքեր, խախտված հողերի ռեկուլտիվացիայի նախագիծը մշակված է, ֆինանսավորումն ապահովված է Ռեկուլտիվացված տարածքի մակերեսը, հա	
Արդյունք 6. Ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում և գետերի մեջ առանց նախնական մշակման թափվող կեղտաջրերի և հանքային պարարտանյութերի մնացորդների ծավալների նվազեցում Խնդիրներ՝ • Ջրավազանային կառավարման խորհրդի աշխատանքներում ՏԻՄ-երի և հանրային մասնակցության ապահովում • Կեղտաջրերի մաքրման պարզ տեխնոլոգիաների կիրառմամբ մաքրման կայանների ստեղծում, • Օրգանական և անօրգանական պարարտանյութերի օգտագործման կուլտուրայի բարձրացում, ջրային ավազանների աղտոտման բացառում:	Ջրային ռեսուրսների աղտոտման կանխարգելման աշխատանքները դրված են կայուն հիմքերի վրա Կեղտաջրերի մաքրման պարզ կայանների նախագծերը մշակված են: Արտադրական և նոր կառուցվող կենցաղային սպասարկման կազմակերպությունները կահավորված են կեղտաջրերի մաքրման պարզ կայանքներով Մարզի հորատանցքերը գույքա-գրված են, արդյունահանման ծավալները ճշտված են: Պարարտանյութերի պահպանման և օգտագործման կուլտուրան բարձրացել է:	Ռիսկեր՝ Ջրահեռացման խնդիրը ջրավազանային կառավարման մարմնի կողմից չի կարևորվում
Արդյունք 7. Բնապահպանական հիմնախնդիրների և իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում Խնդիրներ՝	Իրականացված ծրագրերը, դրամ ՋԼՄ հրատարկված հոդվածներ, հեռուստահաղորդումներ, Բնապահպանության նախարարության և նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման	Ռիսկեր՝ Ֆինանսական միջոցների բացակայությունը

• Բնապահպանական ծրագրերի իրականացման համար հասարա-կական կազմակերպություններին աջակցության տրամադրում	գործակալության Ախուրյանի և Սևան-Հրազդան ջրավազանային կառավարման բաժինների հետ համատեղ:	
Արդյունք 8. Քաղաքներում կանաչ տարածքների, ռեկրեցիոն գոտիների պահանում և համաչափ զարգացում: Խնդիրներ՝ • Համայնքերի բյուջեներում կանաչապատման և ռեկրեցիոն գոտիների պահպանման համար գումարների նախատեսում, • Համայնքների զարգացման քառամյա ծրագրերում կանաչ գոտիների զարգացման ռազմավարության մշակում	Կազմված ծրագրեր և բյուջեներ, Նախատեսված միջոցառումներ՝ բնապահպանական ռազմավարության ենթատեքստում, Կանաչ գոտիների և պահպանվող տարածքների թիվն ավելացել է, հեկտար:	Ռիսկեր՝ Ֆինանսական միջոցների բացակայությունը

10. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

10.1 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծությունը

374. Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժերից մեկն է, որի զարգացումը նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու զարգացմանը, մշակութային արժեքների փոխադարձ արժևորմանը: ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության վիճակագրական տվյալների համաձայն, վերջին տարիներին մինչև 2008 թվականը համաշխարհային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է 4-4.5 %, 2007 թվականին այն անցել է 6 %-ի սահմանագիծը, 2008 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների ընթացքում համաշխարհային զբոսաշրջային այցելությունների աճի տեմպը 2007 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 3.7 %, իսկ

տարեկան աճի տեմպի կանխատեսումը 2-3% է: Համաշխարհային տնտեսական զարգացումների ներկա սցենարի պահպանման դեպքում 2009 թվականի ընթացքում կանխատեսվում է համաշխարհային զբոսաշրջային այցելությունների մինչև 2 % աճ:

375. Զբոսաշրջությունը Հայաստանի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, նոր միջազգային չափանիշներին համապատասխանող օդանավակայանը, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Զբոսաշրջությունը երկրում արձանագրել է այցելուների թվի կայուն և դինամիկ աճ: 2001 թվականից ի վեր Հայաստան կատարված միջազգային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմում է 25%, 2007 թվականին միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է ավելի քան 510 000՝ 2006 թվականի համեմատ աճելով 33.5 %-ով:

376. 2013 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 404310 2012 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 9.2%-ով: Ինչպես համաշխարհային զբոսաշրջային այցելությունները: Զբոսաշրջային այցելությունները Հայաստան շարունակում են աճել, իսկ 2014 թվականին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի թիրախը 700000-ի սահմանագիծը հատելն է:

377. Վերջին տարիներին զբոսաշրջության ոլորտի մարքեթինգային քաղաքականության շրջանակներում ծրագրային միջոցառումները հիմնականում ուղղված են եղել համաշխարհային շուկայում Հայաստանի, որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի, նկարագրի ձևավորման շարունակական կատերալագործմանը: Համաձայն կատարված զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության արդյունքների, Հայաստանում միջազգային զբոսաշրջիկների կատարած ծախսերը նույնպես դինամիկ աճում են: 2012 թվականին այն կազմել է շուրջ 314 մլն, իսկ 2013 թվականին՝ 423 մլն ԱՄՆ դոլլար: Մոտ 20 հազ. մարդ ուղղակիորեն աշխատում է զբոսաշրջության ոլորտում (ընդհանուր աշխատուժի 1.7%-ը): 2013թ. հունվար-դեկտեմբերին Հայաստան են այցելել 627000 միջազգային զբոսաշրջիկներ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 404310 զբոսաշրջիկների դիմաց:

378. Այս ամենին զուգահեռ, Արագածոտնում ոլորտի դինամիկան դեռևս համահունչ չէ Հայաստանի զարգացումներին և երկրում ոլորտի զարգացմանը

զուգընթաց կարևորվում է մարզում առկա զբոսաշրջային ներուժի հիման վրա զբոսաշրջության զարգացման ապահովումը, որը մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցում զգալի դեր կխաղա:

379. Արագածոտնի մարզը հարուստ է պատմամշակութային և բնական հուշարձաններով, հանգստի և առողջարարական գոտիների լայն ցանցով, որոնք մշտապես իրենց են գրավել ինչպես Հայաստանի, այնպես էլ արտերկրի զբոսաշրջիկներին: Մարզումում զգալի զբոսաշրջային մեծ ներուժ կա: Այն խորհրդային ժամանկաներում որոշակիորեն օգտագործվում էր և ապահովում դրամական ու արտարժութային մեծ մուտքեր: Մարզի տարածքում զբոսաշրջությունն իր զարգացման բարձր մակարդակին էր հասել 1970-1980-ական թվականներին: Այդ տարիներին գործել են Աշտարակի, Ապարանի և Թալինի զբոսաշրջային բյուրոները, որոնք, համաձայն նախօրոք հաստատված աշխատանքային պլանների, իրականացնում էին զբոսաշրջության կազմակերպումը:

380. Գործում էր երկու երթուղի՝ առաջինը տանում էր դեպի Արագած լեռը և Բյուրականի հանգստյան գոտի, ուր զբոսաշրջիկների համար հիմնականում 15 և 30 օրյա հանգիստ էր կազմակերպվում: Գոյություն ուներ նաև զարգացած ձմեռային հանգիստ, կային բազմաթիվ դահուկուղիներ: Մյուս երթուղին տանում էր դեպի մարզ տարածքում լայնորեն սփռված պատմության և մշակույթի հուշարձաններ: Այդ երթուղիները ամբողջ տարին ծանրաբեռվածությամբ գործում էին: Ներկայումս վերոնշյալ երթուղիներն արդյունավետ չեն գործում: Դրա պատճառն այն է, որ առ այսօր մարզի տարածքում զբոսաշրջության բնագավառում լուրջ ներդրումներ չեն կատարվել: Իսկ տուրիստական գործող կազմակերպությունները, ֆինանսական միջոցների և համագործակցության բացակայության պայմաններում անկարող են որևէ շոշափելի լուրջ գործունեություն ծավալել: Սակայն այսօր մեծ հնարավորություններ կան ոլորտի զարգացման համար: Դա հնարավորություն կտա բարելավել տուրիստական կազմակերպությունների ֆինանսական վիճակը և մարզի տնտեսությանը լրացուցիչ գումարներ ստանալու հեռանկարներ կբացի: Նախատեսվում է կազմակերպել և զարգացնել մարզի արհեստագործների և ստեղծագործող-վարպետների արվեստի ու արհեստի ստեղծագործությունների վաճառքը, որը ֆինանսական լրացուցիչ աղբյուր կարող է հանդիսանա մարզի համար:

Արագած լեռը

382. Մարզի զբոսաշրջային ներուժը ներկայացված է Արագածոտնի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, պատմամշակութային արժեքներով, բնության հուշարձաններով և ենթակառուցվածքներով: Մարզում է գտնվում երկրի ամենաբարձր լեռը՝ Արագածը, որի լանջերը հարուստ են անտառներով, գետերով, խմելու քաղցրահամ ջրի աղբյուրներով: Ամառային և ձմեռային հանգստի կազմակերպման, լռնագնացության լուրջ հնարավորություններ կան: Բյուրականի հանգստյան գոտում գործում են բազմաթիվ հանգստյան տներ, պանսիոնատներ, առողջարարական կենտրոններ: Հնարավորություններ կան կառուցելու նորերը, որտեղ կլինեն հանգստի կազմակերպման լայն հնարավորություններ:

Ամբերդ

383. Մարզը չափազանց հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Հատկապես շատ են քրիստոնեությանը և այդ շրջանի հայոց պատմությանը վերաբերող հուշարձանները: Մարզում են գտնվում հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի և Վահան Ամատունու գերեզմանները, որոնց ամեն տարի հազարավոր ուխտավորներ են այցի գալիս աշխարհի բազմաթիվ երկրներից: Գրեթե յուրաքանչյուր բնակավայրում որևէ պաշտամունքային կառույց կա:

384. Մարզը ճանապարհներ ունի, որոնք տանում են դեպի երկրի զբոսաշրջության մյուս կենտրոններ և մայրաքաղաք: Աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս արագորեն ընտրել նոր երթուղիներ՝ կախված զբոսաշրջիկների ցանկություններից: Մարզի քաղաքներում գործում են հյուրանոցներ, մասնավոր հյուրանոցատիպ հանգրվաններ, հանրային սննդի օբյեկտներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տուրիստների 75%-ը բավականին հետքրքրված է գյուղական կյանքով, բիոսննդով, հայկական լավաշի պատրաստման արարողությամբ, տնական պանրով, կարագով, գինով, չորացրած մրգերով և այլն, գյուղերում առկա են կարողություններ՝ ցուցադրելու համար զուտ հայկական մշակութային ծեսեր:

385. Պահպանվել են նաև ազգային շատ ծեսեր ու սովորույթներ, մեծ է ժողովրդական արհեստներով և ստեծագործությամբ զբաղվող անձանց թիվը: Դրանց ծանոթանալու, մեր ժողովրդին առավել խորքից ծանոթանալու համար առաջիկա տարիներին անհրաժեշտ է մարզում զարգացնել ընտանեկան տուրիզմը: Մարզում այդ նպատակին հարմար բազմաթիվ շենքեր ու շինություններ կան, որոնք կարող են բավարարել ամենախիստ պահանջները:



Եկեղեցի Մուղնի գյուղում

386. Մարզում զբոսաշրջիկներին մատուցվող ծառայություններ մատուցելու և գիտելիքների լուրջ պակաս կա: Բացի դրանից, զարգացած չեն նաև անհրաժեշտ

ենթակառուցվածքները (հյուրատներ, հուշանվերների վաճառակետեր, արագ սննդի կետեր, հանգստի վայրեր և այլն): Ակնհայտ է, որ մարզում հյուրատների զարգացումն ունի մեծ ներուժ զբոսաշրջության ոլորտի հզորացման գործում, քանզի այն հնարավորություն է ընձեռում սահմանափակ ռեսուրսներով զգալիորեն խթանել մարզում գիշերելու տեղերի քանակությունը: Հայտնի է, որ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան զբոսաշրջիկները նախընտրում են հյուրատները, որոնք ավելի հարմար են և էժան: Հնարավոր է զարգացնել «Պանդոկային» տուրիզմը, երբ հովեկը այցելելով կծանոթանա մարզի թե՛ կենցաղին, թե՛ սննդին, թե՛ տվյալ տարածքում կկազմակերպվի ցուցահանդես-վաճառքներ: Պարզապես կարելի է հավաքագրել, ստեղծել ուղեցույց նման բնակարանների, կապ պահպանել Հայաստանում և արտերկրում գործող տուրիստական կազմակերպությունների հետ, և հաճախակի կազմակերպել նման տուրիստական ուղևորություններ: Տուրիստները Արագածոտնի մարզ հաճախելով կծանոթանան ոչ միայն հուշարձան կոթողներին, այլև կենցաղին, սննդին և մարզի արհեստագործ-վարպետների ստեղծագործության նմուշների ցուցադրմանն ու վաճառքին:

Պերճ Պռոշյանի թանգարանը

387. Պետական մակարդակով մարզի զբոսաշրջության վերակենդանացման խնդրի լուծումից հետո միայն կարելի կլինի խոսել զբոսաշրջության տարածաշրջանային զարգացման հնարավորությունների մասին« որոնք առաջին հերթին կապված են մարզի զբոսաշրջային ներուժի համակարգված ու տեղական ինքնակառավարման մարմինների արտասահմանյան երկրների հետ ունեցած և

հնարավոր կապերի օգտագործման« ինչպես նաև մասնավոր հատվածի ակտիվացման հետ:

388. Այսօր պետական և համայնքային բյուջեների սղության պայմաններում անհրաժեշտ է օգտվել դրանց զգալի համալրման հնարավորությունից՝ ի հաշիվ մարզի հարուստ բնական զբոսաշրջային ռեսուրսների արդյունավետ օգտագործման:

Աստվածընկալի եկեղեցին

389. Մարզում զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտներն են.

1) մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակը,
2)զբոսաշրջային տնտեսության բացակայությունը,
3)գործող զբոսաշրջային կազմակերպությունների բացակայությունը
4)զբոսաշրջությանը վերաբերող գովազդի անկատարությունը,
5)մասնավոր հատվածի շահագրգռման մեխանիզմների բացակայությունը,
6)հստակ վիճակագրական տվյալների բազայի բացակայությունը« ֆինանսական միջոցների սղության պատճառով պատմամշակութային հուշարձանների և այլ գրավչությունների ոչ պատշաճ պահպանությունը,
7)միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների, զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների ֆիզիկական և որակական վիճակների անբավարար վիճակը,
8)զբոսաշրջության բնագավառում ներդրումային ծրագրերի սակավությունը:

10.2. Զբոսաշրջության ոլորտի խնդիրները և ռազմավարությունը

390. Կանխատեսումների համաձայն մարզն ամեն տարի կարող է ընդունել և սպասարկել մոտ 8000-10000 զբոսաշրջիկ: Եթե մեկ զբոսաշրջիկի սպասարկման

համար միջին եկամուտը ընդունենք 200-250 ԱՄՆ դոլար (5-6 օրյա ուղևորություն)« ապա զբոսաշրջիկային կազմակերպությունները կարող են ստանալ ընդհանուր առմամբ 1.0-1.3 մլն. ԱՄՆ դոլարի եկամուտ: Շահութաբերության նվազագույն նորմայի դեպքում (40-50%) զուտ եկամուտը կկազմի 0.5-0.65 մլն. դոլար: Զբոսաշրջության զարգացման շնորհիվ կլուծվեն մի շարք սոցիալական հիմնախնդիրներ (աշխատատեղերի ստեղծում, շուկայի ընդլայնում և այլն):

391. Արագածոտնի մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է առաջնորդվել **հետևյալ ռազմավարությամբ.**

392. Մարզում զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի և այն կարող է առաջնային տեղ զբաղեցնել լեռնահանքային արդյունաբերության. էներգետիկայի և գյուղատնտեսության կողքին:

393. Զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ է ենթակառուցվածքների ներդաշնակ զարգացումը՝ հյուրանոցային համալիրների, հանգստյան տների վերանորոգում, վերակառուցում, կառուցում, մարզում առկա մշակութային ժառանգության՝ պատմամշակութային հուշարձանների գույքագրում, մարզի եկեղեցական և պատմական համալիրների վերանորոգում, առանձին համալիրների վերանորոգում, վերակառուցում կամ մասնակի նորոգում, դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ավտոճանապարհների վերանորոգում:

394. Մարզի տարածքում էկոտուրիզմի զարգացման խթանում: Դրա հիմքերը մարզում բնության հատուկ պահպանվող տարածքների առկայությունն է: Այստեղ կան բուսական արժեքավոր եզակի տեսակներ, որոնք մեծ հետաքրքրություն կարող են առաջացնել էկոզբոսաշրջիկների շրջանում:

395. Ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով ՀՀ Արագածոտնի մարզի որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրամասի նկարագրի ձևավորումը և միջազգային շուկայում ներկայացումն ու ամրապնդումը, մարզի ինտերնետային կայքում զբոսաշրջության վերաբերյալ վեբ էջի ստեղծում և էջի արհեստավարժ կառավարում:

396. Սփյուռքի հետ կապերի համատեքստում, արտասահմանում գտնվող հայության շրջաններում բարձրացնել Արագածոտնի զբոսաշրջային գրավչությունը, ապահովել բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը մեր հայրենակիցների համար:

397. Զբոսաշրջության զարգացման առաջնային ձևերի կիրառում: Զբոսաշրջության բոլոր տեսակների ուսումնասիրությունը ինչպես նաև Արագածոտնի տարածաշրջանում զբոսաշրջության ներուժի և նախադրյալների առկայությունը հուշում են այս տարածաշրջանում գիտաճանաչողական, տարանցիկ, հետիոտն, գիտական, մարզական հանգստի կազմակերպման և բուժաճանաչողական տեսակների զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունը: Ընդ որում, եթե բուժաճանաչողական և հանգստի կազմակերպման զբոսաշրջության տեսակների զարգացման համար տեղավորման հարմարավետությունը, սպասարկման մակարդակը կարևոր գործոններ են, ապա տարանցիկ հետիոտն մարզական (ալպինիզմ) տեսակները պակաս պահանջկոտ են վերը նշված գործոնների նկատմամբ: Բացի այդ տարանցիկ զբոսաշրջությունը յուրահատուկ կայունացնող դեր կարող է խաղալ:

398. Տարանցիկ զբոսաշրջության զարգացման գործընթացում կարևորվում է մարզի տարածքում զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին կամ դրանց կառուցումը նպատակահարմար կետերում: Այս խնդիրը անհրաժեշտ է լուծել պետություն-մասնավոր հատված կապի արդյունավետ օգտագործմամբ: Հատուկ ուշադրության են արժանի գիտական և գիտաճանաչողական զբոսաշրջության տեսակների զարգացման հեռանկարները: Անհրաժեշտ է իրականացնել պեղումներ և նմանատիպ այլ աշխատանքներ, որոնց նպատակահարմարությունը մարզի տարածքում կասկած չի հարուցում:

399. Ինչ վերաբերվում է հետիոտն սպորտային /լեռնագնացություն/ զբոսաշրջության տեսակներին, ապա այսօր էլ չնչին ներդրումների շնորհիվ կարելի է իրականացնել և հետագայում զարգացնել զբոսաշրջության այս տեսակները: Վերոնշյալ ներդրումները անհրաժեշտ են առաջին հերթին երթուղիների մանրակրկիտ մշակման և միջոցների ձեռք բերման համար: Հանգստի կազմակերպման և բուժաճանաչողական զբոսաշրջության տեսակների զարգացումը ավելի շատ ներդրումներ և ժամանակ է պահանջում: Մարզում զբոսաշրջության առաջնահերթ ձևերի (տարանցիկ սպորտային« հետիոտն) զարգացմանը զուգընթաց կստեղծվի նպաստավոր դաշտ հանգստի կազմակերպման և բուժաճանաչողական զբոսաշրջության տեսակների զարգացման համար: Զբոսաշրջության ֆինանսավորումը բերված է հավելված 6-ում:

1) Հյուրատների և հյուրասիրության ծառայությունների համակարգի զարգացում,

2) Համայնքահեն Տուրիզմի (ՀՏ) զարգացման խթանում: Այս բնագավառը չափազանց կարևոր է մարզի համար, քանզի այն իրենից

ներկայացնում է տնտեսական գործունեության մի ձև, որի վրա զգալի թվով ներգրավված տեղական բնակչությունն ունի լուրջ վերահսկողություն, ներգրավվածություն և կառավարում, ինչպես նաև եկամուտների հիմնական մասն էլ մնում է տեղական տնտեսության մեջ: Համայնքի անդամները, անգամ նրանք ովքեր ուղղակի ներգրավված չեն տուրիստական կազմակերպություններում, ևս որոշակիորեն օգտվում են (հարկերի տեսքով ընդհանուր համայնքի եկամուտներ, բազմապատկիչ էֆեկտ և այլն.):

400. Զբոսաշրջության զարգացման ապահովման համար ձեռնարկվելիք քայլերը.

1) Մարզում զբոսաշրջության կենտրոնի ստեղծում,

2) Զբոսաշրջության ուղիների և հոսքերի բոլոր հնարավոր տարբերակների ու պարամետրերի որոշում« տարածքի ռեկրեացիոն ծանրաբեռնվածության նորմերի սահմանում,

3) Մարզի զբոսաշրջային տնտեսության գույքագրում,

4) Բազմաբնույթ գովազդային նյութերի պատրաստում,

5) Առավել հարմարավետ առանձնատների և անավարտ օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում,

6) Շուկայի ուսումնասիրություն և գովազդային նյութերի տեղադրում (մարքետինգ),

7) Համակարգել մասնավոր հատվածի կողմից զբոսաշրջային ենթակառուցվածքային օբյեկտների տեղադրման« կառուցման աշխատանքները,

8) Նախատեսել վերակառուցվող և նոր կառուցվող օբյեկտները որպես անկախ էներգիա և ջրամատակարարում« հեռուստառադիո և կապի միջոցներ« մուտքային ճանապարհներ ունեցող և ընդհանրապես միջազգային չափանիշներին համապատասխանող հանգստավայրեր,

9) Նախատեսել ըստ զբոսաշրջության տեսակների նրանց տեղաբաշխման միջոցների բազմազան տեսակներ և կարգեր,

10) Կազմակերպել համապատասխան կադրերի պատրաստումը և վերապատրաստումը,

11) Մարզի զբոսաշրջության զարգացման ծրագիրը համաձայնեցնել մարզի սոցիալ-տնտեսական ծրագրի և ազգային անվտանգության« էկոլոգիական գործոնների հետ,

12) Համագործակցություն ՓՄՁ զարգացմանն աջակցող կազմակերպությունների միջև: Ծրագրի իրականացումը հնարավորություն կընձեռի վեր հանել ՓՄՁ զարգացման այլ կարիքներ, որոնք կհոգան ՓՄՁ

Զարգացման ազգային կենտրոնը և այլ դոնոր կազմակերպություններ՝ նման կլաստերների ստեղծման և զարգացման հետագա ընթացքում:

11. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

401. Քաղաքաշինության բնագավառում տարիների ընթացքում կուտակվել են հիմնահարցեր, որոնք հրատապ լուծում են պահանջում, որպես մարդկային աղքատության նվազեցման կարևորագույն գործոն զարգացման գերակա նպատակը հանդիսանում է բնակչության կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումն ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավումը:

402. Դրանք ըստ առաջնահերթությունների հետևյալ խնդիրներն են.

1) Օրենսդրության կատարելագործում,
2) Պետբյուջեով կատարվող շինարարությունների հարցում պատվիրատու-շինարար, վերահսկող հարաբերությունների որոշակիացում,
3) Գոտիավորում,
4) Բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում,
5) Բնակարանաշինության ծավալների ընդարձակում և բնակարանների նորոգման իրականացում,
6) Ենթակառուցվածքների կատարելագործում:

403. Հիմնախնդիրներ. Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

404. Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող շենքերում անհրաժեշտ միջոցառումների իրականացումը հանրապետության համար ունի ռազմավարական նշանակություն, պահանջում է լուրջ պետական միջամտություն և վերահսկողություն, քանի որ նշված շենքերի հետագա տևական շահագործումն առանց ուժեղացման-վերականգնման աշխատանքների կատարման կբերի կոնստրուկտիվ տարրերում վնասվածքների և դեֆորմացիաների հետագա զարգացման, նորերի առաջացման, շենքերի սեյսմակայունության կտրուկ նվազման և այդ առումով հետագայում վերակառուցման աշխատանքների իրականացման համար ֆինանսական զգալի միջոցների լրացուցիչ պահանջի, վթարայնությամբ պայմանավորված դրանց

քանդման անհրաժեշտության, ինչպես նաև հնարավոր անկանխատեսելի հետևանքների:

405. Օրենսդրության կատարելագործում - ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երին տրված է համայնքներում կատարվող շինարարությունների նախագծման, իրականացման և վերահսկման գործառույթը: Սակայն, տեղերում անհրաժեշտ մասնագետների բացակայության պատճառով, այդ աշխատանքները պահանջված ձևով չեն կատարվում: Նախագծերը հաճախ արվում են՝ անտեսելով քաղաքաշինական նորմերը և պահանջները: Այդ պատճառով հետագայում անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ միջոցներ և ժամանակ ծախսել՝ շինարարության սխալները և բացթողումները շտկելու համար: Որոշ դեպքերում անհնար է լինում վերացնել թերությունները և շինությունը իր նպատակներին ամբողջովին չի ծառայում:

406. Բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում- Մարզի բնակավայրերում քաղաքաշինական գործունեությունը կանոնակարգելու, ներդաշնակ և անվտանգ կենսամիջավայրի ստեղծումն ու անօրինական շինարարությունը կանխելու նպատակով նախատեսվում է կազմել քախաքաշինության ծրագրային փաստաթղթեր չունեցող կամ հնացած փաստաթղթերով մարզի քաղաքների և մյուս բնակավայրերի, ինչպես նաև Արագածոտնի մարզի տարածքային հատակագծման նախագիծը, որի համար ըստ նախնական հաշվարկների պահանջվող գումարները ներկայացված են Հավելված 11-ում:

407. Մարզում առկա քաղաքացիական պաշտպանության կառույցների վերականգնում, վերանորոգում, անհրաժեշտ տեխնիկական միջոցներով հագեցում և սպասարկում: Ներկայումս մարզի տարածքում գտնվող պաշտպանական կառույցները չեն համապատասխանում իրենց նկատմամբ ներկայացված պահանջներին: Դրանք վերականգնման, նորոգման և տեխնիկական միջոցներով հագեցման կարիք ունեն: Որպես քաղաքացիական պաշտպանության պետ, մարզպետը ներկայումս չունի ժամանակակից պահանջներին բավարարող պահեստային կառավարման կետ: Այն անհրաժեշտ է ստեղծել և կահավորել բոլոր անհրաժեշտ սարքավորումներով և պարագաներով:

408. Գոյություն ունեցող հրշեջ փրկարարական ջոկատների վերազինում, հրժեջ դեպոների վերակառուցում և նորերի կառուցում, հրշեջ հիդրանտների վերականգնում և նորերի կառուցում: Հրշեջ ջրավազանների կառուցում: Խնդիրը չափազանց արդիական է, քանի որ գոյություն ունեցող տեխնիկական միջոցներով պարզապես անհնարին է խոշոր հրդեհների դեպքում արդյունավետ պայքար կազմակերպել:

11.1. Հանրակրթական դպրոցների շինարարություն և հիմնանորոգում

609. Մարզի դպրոցական շենքերում և շինություններում յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալն ավելացվում է: Հատկապես լուրջ ուշադրություն է դարձվում սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներին: Մարզի հանրակրթության ոլորտում միայն 2012-13թթ. իրականացվել են շենքերի նորոգման, գույքի թարմացման, ուսուցիչների, տնօրենների և խորհրդի անդամների վերապատրաստման մի շարք ծրագրեր, որոնք դրական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի վրա:

ՀՀ Արագածոտնի մարզի 2015 թվականին նախատեսվող հանրակրթական դպրոցների շինարարական և հիմնանորոգման ծրագրերի վերաբերյալ

Ծրագրի, աշխատանքների/օբյեկտների անվանումները	գումարի չափը / հազ. դրամ/
Սասունիկի դպրոցի նոր մասնաշենքի կառուցում	100000.0
Ապարանի թիվ 1 դպրոցի հիմնանորոգում	60100.0
Նոր Ամանոսի դպրոցի ուժեղացում, վերականգնում/3-րդ աստիճանի վնասված/	50000.0
Կաթնաղբյուրի դպրոցի հիմնանորոգում	60000.0
Հնաբերդի դպրոցի հիմնանորոգում	70000.0
Ակունքի դպրոցի հիմնանորոգում	62000.0
Եղնիկի դպրոցի հիմնանորոգում	70000.0
Դերեկի /Ճարճակիս/ դպրոցի հիմնանորոգում	62200.0
Շենավանի դպրոց	70000.0
Արայի հիմնական դպրոց	40000.0
Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց	80000.0
Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց	80000.0
Հարթավանի դպրոց	60000.0

Աղյուսակ ՀՀ Արագածոտնի մարզի 2016 թվականին նախատեսվող հանրակրթական դպրոցների շինարարական և հիմնանորոգման ծրագրերի վերաբերյալ

Ծրագրի, աշխատանքների/օբյեկտների անվանումները	գումարի չափը / հազ. դրամ/
Սասունիկի դպրոցի նոր մասնաշենքի կառուցում	100000.0
այդ թվում՝	
Նոր Ամանոսի դպրոցի ուժեղացում, վերականգնում/3-րդ աստիճանի վնասված/	60000.0
Կաթնաղբյուրի դպրոցի հիմնանորոգում	81800.0
Հնաբերդի դպրոցի հիմնանորոգում	50000.0
Շենավանի դպրոց	50000.0
Արայի հիմնական դպրոց	30000.0
Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց	50000.0
Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց	70000.0
Հարթավանի դպրոց	60000.0
Ձորագլխի միջնակարգ դպրոց	62000.0
Արտենիի հիմնական դպրոց	60000.0
Լեռնարոտի դպրոց	40000.0
Կարինի դպրոց	50000.0
Ղազարավանի դպրոց	70000.0
Նոր Եդեսիայի դպրոց	70500.0
Ուջանի դպրոց	62000.0
Գետափի դպրոց	40000.0
Հացաշենի դպրոց	40000.0
Նոր Արթիկի դպրոց	50000.0
Դիանի դպրոց	40000.0
Նորաշենի դպրոց	40000.0

Աղձքի դպրոց	60000.0

ՀՀ Արագածոտնի մարզի 2017 թվականին նախատեսվող հանրակրթական դպրոցների շինարարական և հիմնանորոգման ծրագրերի վերաբերյալ

Ծրագրի, աշխատանքների/օբյեկտների անվանումները	գումարի չափը / հազ. դրամ/
Նոր Ամանոսի դպրոցի ուժեղացում, վերականգնում/3-րդ աստիճանի վնասված/	70000.0
Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց	50000.0
Արտենիի հիմնական դպրոց	60000.0
Լեռնարոտի դպրոց	40000.0
Կարինի դպրոց	40000.0
Գետափի դպրոց	30000.0
Հացաշենի դպրոց	40000.0
Նոր Արթիկի դպրոց	30000.0

ՀՀ Արագածոտնի մարզի 2018 թվականին նախատեսվող հանրակրթական դպրոցների շինարարական և հիմնանորոգման ծրագրերի վերաբերյալ

Ծրագրի, աշխատանքների/օբյեկտների անվանումները	գումարի չափը / հազ. դրամ/
Դիանի դպրոց	30000.0
Նորաշենի դպրոց	50000.0

Ամրե Թազայի դպրոց	50000.0
Գեղաձորի դպրոց	57200.0
Սուսերի դպրոց	70000.0
Գառնահովիտի դպրոց	70000.0
Ջամշլուի դպրոց	50000.0
Սանգյառի դպրոց	50000.0

11.2. Բնակարանաշինություն և քաղաքաշինական այլ խնդիրներ

409. Բազմաբնակարան շենքերի կառավարում - ՀՀ Արագածոտնի մարզում կա 231 բազմաբնակարան շենք, որոնք կառուցվել են Խորհրդային իշխանության տարիներին: Անցած տարիներին մարզում այդպիսի շենք չի կառուցվել: Ըստ բնակավայրերի բազմաբնակարան շենքերի քանակն հետևյալն է.

Աղյուսակ 11.1. Բազմաբնակարան շենքերի թիվը մարզի բնակավայրերում 2013թ. դրությամբ

hh	Բնակավայրը	շենքերի քանակը	բնակարանների քանակը
1	ք. Աշտարակ	57	2030
2	ք. Ապարան	26	804
3	ք. Թալին,	30	900
4	Ծաղկահովիտ	5	170
5	Ջրամբար	3	20
6	Արտենի	52	274
7	Արագածավան	40	590
8	Երնջատափ	2	40
9	Սասունիկ	16	384
	ԸՆԴԱՄԵՆԸ	231	5212

Աղբյուրը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարան

410. Դրանից սեփականաշնորհված է 3909 բնակարան: Բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է հիմնականում համայնքների կողմից: Ստեղծված են նաև 3 համատիրություններ: Այդ շենքերի կոմունալ սպասարկումը իրականացնում են համայնքապետարանների և համատիրությունների կողմից: Նախորդ տարիներին որոշակի աշխատանք արված է այդ շենքերի բարելավման ուղղությամբ:

11.3. Բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգումներ

411. Անհատական բնակարանաշինություն - Մարզում բնակելի շենքերի 80%-ը անհատական բնակելի տներ են, դրանցից 10%-ը վթարային է, և ունի հիմնանորոգման կարիք: Անհատական բնակարանաշինության տեմպերը մարզում 1990-ական թվականներին անկում են ապրել: Այդ ուղղությամբ որոշակի առաջընթաց արձանագրվել է 2008-2010 թվականներին: Մարզում 2007թ.-ին շահագործման է հանձնվել 6760քմ, 2008թ-ին՝ 7213 քմ ընդհանուր մակերեսով բնակելի շենք, աճը կազմել է 6.7%: Շատ են նաև լքված տները: Դրանց տերերը ժամանակավորապես կամ հիմնական բացակայում են հանրապետությունից: Իսկ տները, ենթարկվելով բնական պայմաններին, քայքայվում և շարքից դուրս են գալիս: Մարզում կազմավորվել են նոր ընտանիքներ, որոնք հնարավորություն չունեն նոր բնակարաններ կառուցել: Դրա պատճառը բնակիչների ֆինանսական միջոցների սղությունն է և հիպոթեքային վարկերի ոչ հասանելիությունը:

412. Բնակարանաշինության, համայնքների գլխավոր հատակագծերի կազմման, համայնքային կենտրոնների կառուցման 2015-2018թթ. ֆինանսավորման պահանջը 900 միլիոն դրամ է, ներկայացված է 11 հավելվածում:

11.4. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ձևավորում

413. Վերանայման կարիք ունեն քաղաքաշինական պետական տեսչությունների աշխատանքի սկզբունքները: Նրանք չպետք է լինեն այն կառույցների կազմում, որոնք շինարարության պատվիրատուներն են: Այս դեպքում վերահսկողությունը արդյունավետ լինել չի կարող: Անհրաժեշտ է որպես վերահսկողներ հաստատվեն կազմակերպությունները: Այն դեպքերում, երբ որպես շինարարության պատվիրատու հանդես է գալիս, մարզպետարանը, նախագծերի պատվիրատուն լինում է այլ կազմակերպություն: Դա հնարավորություն չի տալիս

վերահսկել նախագծման ընթացքը, ժամանակին նկատել թերությունները և ուղղել դրանք: Ուստի, անհրաժեշտ է, որ պատվիրատուի գործառույթի հետ միաժամանակ մարզպետարանին տրվեն նաև նախագծի պատվիրատուի գործառույթներ:

12. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑՆԵՐ

12.1. Ենթակառուցվածքների ոլորտի իրավիճակի վերլուծություն

414. Մարզային ենթակառուցվածքների զարգացումը ինչպես ԿԶԾ, այնպես էլ Արագածոտնի մարզի զարգացման ծրագրի կարևոր գերակայություններից է: Մարզում ենթակառուցվածքների զարգացման հիմնական խնդիրները կապված են խմելու ջրի մատակարարման (ներառյալ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և որակի արելավման), կոյուղիների (ներառյալ մաքրման կայանների վերակառուցման և կառուցման), նմխիթար վիճակում գտնվող ճանապարհների (հատկապես գյուղական վայրերի), ինչպես նաև գազամատակարարման խնդիրների հետ: Այս խնդիրները հատկապես գերակա են այն համայնքների համար, որոնք սահմանամերձ են և որոնց բնակչությունը հեռանում է հայրենի վայրերից, ինչպես նաև մեծ թվով բնակչություն ունեցող համայնքների համար:

12.2. Ճանապարհաշինություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ

415. Ֆիզիկական մեկուսացվածությունը ԿԶԾ-ում սահմանված է որպես կարևորագույն գործոն, որը խոչընդոտում է կենսաբանական, սոցիալական ու մշակութային կարիքները հոգալուն: Հայաստանում աղքատության մակարդակը ուղղակիորեն կապակցված է Երևանից ու մարզկենտրոններից հեռավորության և հատկապես այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմխիթար վիճակի հետ:

416. Այս առումով աղքատության աստիճանը ուղղակիորեն կապվում է ճանապարհային ցանցի վիճակի հետ: Մարզի միջպետական ու մասամբ հանրապետական նշանակության ճանապարհները համեմատաբար բարվոք, իսկ համայնքային ու մարզային նշանակության ճանապարհները անմխիթար վիճակում են: Արագածոտնի մարզով անցնում են 133կմ միջպետական, 164կմ հանրապետական և 389.40 կմ տեղական ճանապարհներ: Մարզի միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհային ցանցում կա 66 կամուրջ և 54 երկաթբետոնե խողովակ: Դրանք վթարային են՝ հեղեղումների և երկար տարիներ չնորոգվելու պատճառով: Մարզի ամբողջ ճանապարհային ցանցի տարեկան

պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսավորման պահանջը շուրջ 3 մլրդ դրամ է:

417. Միջպետական և հանրապետական ճանապարհների ձմեռային պահպանումը 2011 և 2014 թվականներին պահանջված կարգով է իրականացվել: Մարզը հիմնականում լեռնային և նախալեռնային գոտի է, ուր ձմեռը տևում է 4-5 ամիս:

418. 2015-2018թթ. մարզային զարգացման ծրագրով նախատեսվում է նորոգել մարզի տարածքում գտնվող մարզային նշանակության ընդհանուր առմամբ 316.2կմ երկարության ճանապարհներ, որի վրա ծախսվելու է 23,805,000.0 հազար դրամ 12.1 հավելված :

12.3. Գազամատակարարում

419. Երկարատև ձմեռները (6-7 ամիս) և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում է բնական գազի մատակարարման հրատապությունը մարզի համայնքների համար: Հետևաբար, համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի ընդարձակումը: Գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում նշանակում է տարեկան շուրջ 10-12 խմ վառելափայտի խնայողություն, որն իր հերթին, նպաստում է մարզի էկոհամակարգի բարելավմանը: Վառելիքի առկայությունը կարող է նպաստել համայնքներիև ՓՄՁ-ների զարգացմանը:

420. Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը՝ հիմնական շեշտը դնելով ջերմամատակարարման լոկալ համակարգերի ներդրման վրա: Մարզում արդեն աշխատանքներ են իրականացվել բազմաբնակարան տներում լոկալ ջեռուցման համակարգերի տեղադրման ուղղությամբ:

421. Գազամատակարարման համար կատարվող շահագործման և պահպանման բոլոր ծախսերը փոխհատուցվելու են սպառողների կողմից: Բազմաբնակարան տների արդյունավետ կառավարումը նույնպես կարևոր հարց է ջերմամատակարարման ծառայությունների հասանելիության և արդյունավետության բարելավման առումով: Այս հարցի լուծմանը կնպաստի 2002 թվականին ընդունված «Բազմաբնակարան տան կառավարման մասին» ՀՀ օրենքի կիրառումը: 2013 թվականին գազամատակարարման համակարգի բաժանորդների թիվը աճել է 18%-ով:

422. Ամփոփելով ենթակառուցվածքների բաժինը՝ անհրաժեշտ է նշել, որ միջոցների անբավարության պատճառով ենթակառուցվածքների վերականգնումն ու պահպանումը լայնածավալ չեն եղել, այնպես որ շահառուների պատկերացմամբ ներդրումների ազդեցությունը բավարար չի եղել ծառայությունների կենսունակությունն ապահովելու համար: Հետևաբար, հետագա ծրագրերով նախատեսվող միջոցառումները մանրակրկիտ կուսումնասիրվեն առավելագույնի հասցնելու համար իրականացվող միջոցառումների ազդեցությունը և մատուցվող ծառայությունների որակը:

423. Ենթակառուցվածքների բնագավառում իրականացվող աշխատանքները կպլանավորվեն ոչ ձմեռային ամիսներին, քանի որ աշխատանքների արդյունքները ավելի երկար կծառայեն, իսկ ծախսերը ավելի պակաս կլինեն: Կբարձրացվի շինարարական աշխատանքների որակը: Համայնքների մասնակցությունը մոնիտորինգի գործընթացներում, տեղական փորձի ու գիտելիքների օգտագործումն ու, որոշ դեպքերում, նրանց նպատակային մասնակցությունը կարող են շատ արժեքավոր լինել հատկապես այն դեպքերում, երբ խոսքը գնում է տվյալ համայնքի կողմից առաջադրված միջոցառման իրականացման աշխատանքներին:

424. 2015-2018թթ. մարզային զարգացման ծրագրով ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացման համար նախատեսվում է 4480 միլիոն դրամ 12.2 հավելված:

12.4. Ջրամատակարարում

425. Անվտանգ խմելու ջրի աղբյուրների մատչելիությունը ոչ միայն Հազարամյակի զարգացման նպատակների և ԿԶԾ-ի կարևոր թիրախներից մեկն է, այլև մարդկային աղքատությունը պայմանավորող գործոններից է: Ջրամատակարարումը մարզում իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» կազմակերպության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, որը չի մատակարարվում շատ համայնքներում, չնայած որ մարզի շատ բնակավայրերում գոյություն ունեն ջրի բնական պաշարներ: Այսպիսով՝ ջրամատակարարման ոլորտի խնդիրը կապված է ոչ թե ջրի պակասի, այլ.

1) ջրամատակարարման համակարգերի հնամաշության և քայքայվածության, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայության,

2) արտահոսքի և կորուստի (հատկապես պոմպակայաններում),

3) համայնքների կողմից ուշադրության պակասի (սեփականատիրոջ վերաբերմունիք պակասի),

4) գանձումների ցածր մակարդակի,

5) խմելու ջրի ցածր որակի, վարակազերծման հիմնախնդիրների, ջրմուղի կառույցների սանիտարական օրինակելի պահպանման,

6) որակի խնդիրների հետ:

426. Կարիքների, արդյունավետության ու ընթացիկ վիճակի վերլուծության համար հաշվի են առնվել հետևյալ ցուցանիշները.

1) տեխնիկական և տնտեսական տվյալներ,

2) հիդրո-տեխնիկական կառույցների վերաբերյալ տվյալներ (ծավալ, հզորություններ և այլն),

3) ջրագծերի վերաբերյալ տվյալներ (երկարություն, ինժեներական պարամետրեր),

4) կարիքներ (օրական ծավալներ՝ խմելու և ոռոգման ջրի համար),

5) սակագներ,

6) որակ,

7) ջրահեռացման ծավալները:

427. Էլեկտրաէներգիայի և/կամ ջրի սահմանաքանակային տրամադրումը կարող է հանգեցնել աղտոտման, հաշվի առնելով, որ այս դեպքում գծերում դրենաժը գործում է միայն մասնակի ռեժիմով, ինչպես նաև կան օդի խցանման պատճառով առաջացող այլ խնդիրները: Մատակարար-սպառող և ներդնող-շահառու փոխհարաբերությունները ճիշտ պատկերացնելու համար կարևոր է ճիշտ գնահատել փոքր համայնքների կարիքները և դրանցում ներդրումների տնտեսական նպատակահարմարությունը: Այստեղ պարզ «ծախսերի և օգուտների» վերլուծությունը բավարար չի կարող լինել ներդրման կենսունակությունը գնահատելու համար:

428. Ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որը ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում: Հետևաբար, ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի բարելավման և արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը: Այնուամենայնիվ, սակագնային քաղաքականություն մշակելիս պետք է խուսափել սակագների և սպառողական վարձերի չափազանց բարձրացման միջոցով կապիտալ ներդրումների ծախսածածկումից: Կապիտալ ծախսերը պետք է իրականացվեն պետության կողմից՝ պետական ներդրումային ծրագրերի միջոցով:

429. Ջրահեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է հանդիսանում մաքրման կայանների կառուցումը մարզի բոլոր քաղաքներում: Ջրահեռացման

համակարգի բարելավմանն ուղղված ներդրումների հիմնական նպատակն է նվազեցնել Քասախ գետի ավազանի շարունակական աղտոտումը համայնքներից եկող կեղտաջրերով, ինչպես նաև բարձրացնել առողջապահական ցուցանիշները՝ կեղտաջրերի մաքրման համակարգի բարելաման միջոցով՝ կիրառելով աէրացման և մաքրման մեխանիկական եղանակները մարզի բոլոր համայնքներում: Զուգահեռաբար մասնավոր հատվածի մասնակցությունը այս բնագավառում պետք է մանրամասնորեն ուսումնասիրվի՝ գործող պայմանագրի ժամկետի ավարտից հետո այսպիսի մասնակցությունը շարունակական դարձնելու նպատակով:

430. Ասիական զարգացման բանկի <<Ջրամատակարարման և ջրահեռացման սեկտորի>> վարկային ծրագրով ընթացքի մեջ են՝

1. Թալին քաղաքի ջրամատակարարման բարելավման ծրագիրը, որի նախնական ընդհանուր արժեքը 475 մլն դրամ է, շինարարությունը սկսվել է 2014 թվականին, իսկ ավարտը նախատեսված է 2016 թվականին,

2. Արուճ, Պարտիզակ, Նոր Ամանոս, Արևուտ, Կանչ, Հակկո, Սորիկ գյուղերի ջրամատակարարման ծրագիրը, որի նախնական ընդհանուր արժեքը կազմում է 650 մլն դրամ, շինարարությունը սկսվել է 2014 թվականին, իսկ ավարտը նախատեսված է 2016 թվականին:

Ջրամատակարարման 2015-2018թթ. պահանջվող ֆինանսավորումը, որը կազմում է 550 միլիոն դրամ, բերված է 12.3 հավելվածում:

12.5. Ենթակառուցվածքների ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտի նպատակները, արդյունքներն ու միջոցառումները	Արդյունքային ցուցանիշներ Ռիսկեր	Ոլորտի նպատակը
Արագածոտնի մարզի ենթակառուցվածքների վիճակի բարելավում	Միջոցները հատկացվել են և ժամանակին տրամադրվել: Կառավարությունը հետևողական է ապակենտրոնացման քաղաքականություն իրականացնելու հարցում	
1. Մարդկանց բավարարվածության աստիճանը ճանապարհների որակից, %	Արդյունք 1 Արագածոտնի մարզի ճանապարհային ցանցը բարելավվել է Արդյունք 2 Ճանապարհների ձմեռային և ընթացիկ պահպանման	

	համակարգը բարելավվել է	
2. Մաքուր խմելու ջուր ունեցող մարդկանց տեսակարար կշիռը, %		
3. Մարդկանց բավարարվածության աստիճանը ոռոգման համակարգերով, %		
4. Բնական գազ ունեցող տնային տնտեսությունների թիվը		

13. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

13.1. Տարածքային կառավարում

13.1.1. Վարչատարածքային բաժանում

431. Հայաստանի տարածքային կառավարման ներկայիս համակարգը նախանշվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որն ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, համաձայն որի ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները և որով անցում կատարվեց վարչատարածքային բաժանման նոր երկաստիճան կառավարման համակարգին (հանրապետական և տեղական ինքնակառավարում): Հիմնվելով Սահմանադրության վրա՝ ՀՀ Ազգային Ժողովը 1995թ.-ի նոյեմբերին ընդունեց «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքը: Այդ օրենքով Արագածոտնի մարզի կազմի մեջ մտան նախկին Աշտարակի, Ապարանի, Թալինի և Արագածի շրջանները:

432. Սահմանադրությունը վարչատարածքային բաժանման հիմքում դնում է իշխանության տարբերակման և տարանջատման գաղափարը: Մարզերում իրականացվում է պետական կառավարում: Տարածքային կառավարման համակարգի մեջ բացի մարզպետից և մարզպետարանից մտնում են նաև մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները, որոնք մի կողմից ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմիններին, սակայն, հանդիսանալով պետական կառավարման մարմիններ, միաժամանակ գտնվում են համապատասխան մարզպետների համակարգման ոլորտում: 2005թ.-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում տարածքային կառավարման գործող համակարգը,

ըստ էության, փոփոխությունների չենթարկվեց: Վերափոխված Սահմանադրության 88.1 հոդվածով սահմանվում է, որ ՀՀ կառավարության կողմից նշանակված մարզպետներն իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը և, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

Աղյուսակ 13.1. ՀՀ Արագածոտնի մարզի քաղաքային համայնքներ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Աշտարակ	ք. Աշտարակ	19 769
	գ. Մուղնի	
Ապարան	ք. Ապարան	6 469
Թալին	ք. Թալին	5 294

Աղյուսակ 13.2. ՀՀ Արագածոտնի մարզի գյուղական համայնքներ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
1	Ագարակ (Աշտարակի տարածաշրջան)		2 017
2	Ագարակավան (Թալինի տարածաշրջան)		1 076
3	Ալագյազ		528
4	Ակունք		717
5	Աղձք		1 922
6	Անտառուտ		281
7	Աշնակ		1 281
8	Ավան	•Ավան •Խնուսիկ	955
9	Ավշեն		287
10	Արագած (Ապարանի տարածաշրջան)		3 835
11	Արագածավան (Թալինի տարածաշրջան)		6 060
12	Արագածոտն		1 259
13	Արայի		649

14	Արտաշավան	•Արտաշավան •Լուսաղբյուր •Նիգատուն	685
15	Արտենի		3 770
16	Արուճ		1 229
17	Արևուտ (նախկինում՝ Բառոժ)		99
18	Ափնագյուղ		645
19	Բազմաղբյուր		1 087
20	Բերքառատ		1 058
21	Բյուրական		4 793
22	Գառնահովիտ		510
23	Գեղադիր		693
24	Գեղաձոր		1 331
25	Գեղարոտ		611
26	Գետափ		164
27	Դաշտադեմ		675
28	Դավթաշեն		764
29	Դդմասար		160
30	Դիան		123
31	Դպրևանք		100
32	Եղիպատրուշ		845
33	Եղնիկ		537
34	Երնջատափ		729
35	Զարինջա		714
36	Զովասար		613
37	Թաթուլ		1 006
38	Թթուջուր		383
39	Թլիկ		108
40	Իրինդ		945
41	Լեռնապար		602
42	Լեռնարոտ		450
43	Լուսագյուղ		936
44	Լուսակն		225
45	Ծաղկահովիտ		2 153
46	Ծաղկաշեն		795
47	Ծաղկասար		112
48	Ծիլքար		607
49	Կաթնաղբյուր		1 365
50	Կայք		680
51	Կանչ		133
52	Կանիաշիր		465

53	Կարբի		4 373
54	Կարմրաշեն		672
55	Կաքավաձոր		1 165
56	Կոշ		3 240
57	Հակո		196
58	Հարթավան		1 107
59	Հացաշեն		417
60	Հնաբերդ		2 267
61	Ձորագլուխ		288
62	Ղազարավան		584
63	Ճարճակիս		692
64	Մաստարա	• Մաստարա • Ձորագյուղ	2 706
65	Մելիքգյուղ		1 274
66	Մեծաձոր		67
67	Միջնատուն		296
68	Միրաք		132
69	Ներքին Բազմաբերդ		1 625
70	Ներքին Սասնաշեն		1 120
71	Նիգավան		746
72	Նոր Ամանոս		776
73	Նորաշեն (Արագածի տարածաշրջան)		1 186
74	Նոր Արթիկ		561
75	Նոր Եդեսիա		1 250
76	Շամիրամ		2 015
77	Շենավան		1 954
78	Շենկանի		278
79	Շղարշիկ		561
80	Շողակն (Ապարանի տարածաշրջան)		155
81	Ոսկեթաս		589
82	Ոսկեհատ		1 182
83	Ոսկեվազ		4 450
84	Չքնաղ		266
85	Պարտիզակ		329
86	Ջամշլու		280
87	Ջրամբար		183
88	Ռյա թազա		585
89	Սաղմոսավան		153
90	Սադունց		265

91	Սասունիկ	• Սասունիկ • Կարին	3 919
92	Սարալանջ		235
93	Սիփան		247
94	Սորիկ		110
95	Սուսեր		443
96	Վարդաբլուր		634
97	Վարդենիս		811
98	Վարդենուտ		985
99	Վերին Բազմաբերդ		477
100	Վերին Սասնաշեն		384
101	Վերին Սասունիկ		165
102	Տեղեր		196
103	Ցամաքասար		505
104	Ուշի		1 725
105	Ուջան		3 463
106	Փարպի		2 462
107	Քուչակ		2 281
108	Օթևան		235
109	Օհանավան		2 575
110	Օշական		5 977
111	Օրգով		538

13.1.2. Գերակայություններ և հիմնախնդիրներ

432. Տարածքային կառավարման բնագավառում դեռևս չլուծված խնդիրներից կարևորագույնը մարզպետարանների իրավասությունների ոչ հստակ սահմանումն է: Ներկայումս մարզպետների գործունեությունը հիմնականում կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագրով, որի համաձայն մարզպետներին իրավասություններ են վերապահված տնտեսական և հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, սակայն դրանց իրականացումը պարզաբանող դրույթների ձևակերպումը հստակ չէ:

433. Հաշվի առնելով խնդրի համապետական բնույթը՝ մարզպետների լիազորությունների հստակ սահմանումը 2015-2018թթ.-ի պետք է դիտարկել ընդհանուր օրենսդրության վերափոխման համատեքստում: Կարևոր հիմնախնդիրներից է նաև մարզային խորհրդի դերի ակտիվացումը, հաշվի առնելով, որ այն մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման, մարզի բնակչության բոլոր հատվածների հետ անմիջական կապ հաստատելու, ինչպես նաև

զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման հետ կապված գործընթացները քննարկող ու հաստատող ամենակարևոր խորհրդակցական մարմինն է: Արագածոտնի մարզ խորհուրդը ՀՏԶԾ-ի իրականացման վերջին երեք տարիների ընթացքում ուղղակիորեն մասնակցել է ՄԶԾ-ների գերակայությունների վերջնական համաձայնեցման, հրապարակայնության ապահովման և իրազեկման գործընթացներին՝ այսպիսով ձեռք բերելով որոշակի փորձ:

434. Տարածքային կառավարման բնագավառում 2015-2018թթ.-ի գործունեության կարևորագույն ուղղություններն ըստ առաջնահերթությունների հետևյալներն են.

1) **Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ-պետական հատվածի փոխհարաբերությունները:** Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի պաշտոնական անձնագրերի դրույթների հստակեցում, որը պետք է հաշվի առնի երկրում և մարզում տեղի ունեցող հանրային ոլորտի բարեփոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը:

2) **Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կառավարության կողմից անհրաժեշտ է մշակել և սահմանել պետության կողմից պատվիրակած լիազորությունների իրականացման կարգերն ու չափորոշիչները**, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացմանը:

3) **Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին**, ելնելով ԿԶԾ-ով ամրագրված զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից:

4) **Վերանայել մարզային զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթները, պարտականություններըն ու իրավասությունները՝** հաշվի առնելով Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում մշակված ու գործադրված ինստիտուցիոնալ համակարգը:

5) **Մշակել ոլորտային աշխատանքային խմբերի, մարզային զարգացման հանձնաժողովների, մարզի ՓՄՁ ԶՄԽ-ի կազմավորման մեխանիզմները, մշակել և հաստատել նրանց անդամների պարտականությունների և իրավասությունների ցանկը**:

6) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տվյալների բազա, որն ի վերջո

կծառայի որպես մարզային կյանքի բոլոր բնագավառների համար բոլորի կողմից ընդունված պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը:

7) **Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրող մեթոդաբանական օգնությունը**:

8) Մարզային զարգացման գործընթացներում Արագածոտնի մարզային խորհրդի դերը բարձրացնելու անհրաժեշտության դեպքում լրացուցիչ օրենսդրական հիմքեր ապահովելու նպատակով, **ուսումնասիրել Արագածոտնի մարզային խորհրդի գործող իրավասությունների շրջանակը:**

435. Հատկանշական է, որ «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը, չնայած վերջին տարիներին իրականացված սահմանադրական և օրենսդրական բարեփոխումներին, էական փոփոխությունների չի ենթարկվել, ինչի հետևանքով հրամանագրում արտահայտված բազմաթիվ դրույթներ և փոխհարաբերություններ վերանայման, ավելին, օրենքի մակարդակով ամրագրման կարիք ունեն:

436. Այնուամենայիվ, հաշվի առնելով Արագածոտնի մարզպետարանում և, ընդհանուր առմամբ, մարզում վերջին շրջանում ընթացող բարեփոխումները (2011-2013թթ.-ին), տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառներում ԿՀԾ 2-ի գերակայություններ, պետք է արձանագրել, որ տարածքային կառավարման արդյունավետության բարձրացման, մարզային իշխանությունների գործունեության իրական հաշվետվականությունը, թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու, ինչպես նաև զարգացման պլանավորման բնագավառում հանրային, մասնավոր ու հասարակական սեկտորների գործակցության ուղղությամբ կուտակվել է զգալի արդյունավետ փորձ, որը հիմք է դնում մարզպետարանի և մարզի հասարակության միջև համատեղ գործողությունների իսկապես արդյունավետ իրականացման և դրանց հետագա զարգացման համար:

13.1.3. Մարզպետարանի կառավարում

437. ՀՀ Արագածոտնի մարզպետարանը ձևավորվել է 1996 թվականից՝ "ՀՀ վարչատարածքային բաժանման մասին" օրենքի համաձայն: Կազմակերպական կառուցվածքը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1808-ն “Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ” պետական կառավարչական

հիմնարկ ստեղծելու, Արագածոտնի մարզպետարանի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին” որոշմամբ (հետագա փոփոխություններով ու լրացումներով): Արագածոտնի մարզպետարանը ՀՀ սահմանադրության համաձայն, իրականացնում է պետական կառավարում: Ոլորտի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ,

438. ՀՀ օրենքներով, ՀՀ Նախագահի՝ "Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին" հրամանագրով և այլ իրավական ակտերով:

Հասարակական հարաբերությունների անընդհատ փոփոխությունները և պետական կառավարման համակարգում իրականացվող բարեփոխումները պետք է անդրադառնան նաև մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքի վերափոխման վրա: Կառուցվածքային փոփոխությունները պետք է դիտարկել օպտիմալության, ընդհանուր մոտեցումների պահպանման և աշխատանքների ռացիոնալ կազմակերպման տեսանկյունից:

439. Բարձր տեխնոլոգիաների սրընթաց զարգացման ֆոնի վրա անհրաժեշտ է ունենալ նաև մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բաժին:

440. Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է նաև մարզպետարանի և նրանում յուրաքանչյուր աշխատատեղի համապատասխանեցումը ժամանակակից չափանիշներին՝ հագեցնելով մարզպետարանը համապատասխան տեխնիկայով, համակարգչային ծրագրերով և տեղեկատվության ստացման ժամանակակից միջոցներով: Վերջինս ենթադրում է նաև նոր որակական պահանջներ մարզպետարանի աշխատակիցների նկատմամբ, ինչի համար միայն քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման շրջանակներում իրականացվող ուսուցումը բավարար չէ: Այս նպատակին կարելի է հասնել նաև լրացուցիչ ուսուցման շնորհիվ:

13.1.4. Քաղաքացիական ծառայություն

441. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը քաղաքացիական ծառայության համակարգն է: Ներկայումս կարելի է արձանագրել, որ այն հիմնականում կայացել է: 2001 թվականից տարածքային կառավարման համակարգում ներդրվեց քաղաքացիական ծառայությունը, որը հնարավորություն տվեց տարանջատելու քաղաքական, հայեցողական և սպասարկող պաշտոնները քաղաքացիական՝ մասնագիտական

ծառայողներից՝ օրենքի ուժով քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մարմին հռչակելով նաև աշխատակազմի ղեկավարներին: «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան դասակարգվեցին և նկարագրվեցին մարզպետարանի, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների՝ մարզում գործող տարածքային ծառայությունների քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի և հարակից իրավական ակտերի ընդունումը դեռևս առաջին քայլերն են մասնագիտական քաղաքացիական ծառայության կայացման ճանապարհին:

442. Քաղաքացիական ծառայության համակարգում ներկայումս կարևոր հիմնախնդիրներից մեկն այն է, որ մարզպետներին իրավունք է վերապահված համակարգել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, սակայն վերջիններս ունեն գերատեսչական պատկանելություն և նրանց ղեկավարները, որպես քաղաքացիական ծառայողներ, ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմնին՝ անհասկանալի դարձնելով մարզպետի հետ փոխհարաբերությունների դրսևորումները: Տարածքային կառավարման համակարգի արդյունավետությունը պահանջում է բարելավվել մարզպետի և գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

13.1.5. Էլեկտրոնային կառավարում

443. ՀՀ Արագածոտնի մարզպետարանում իրականացվել են տարածքային էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները: Ներկայումս մարզպետարանն ունի էլեկտրոնային կառավարման համակարգ: Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Արագածոտնի մարզն ինտերնետում ներկայացված է պաշտոնական էջով (aragatsotn.gov.am), որի միջոցով լուսաբանվում են ՀՀ պաշտոնատար անձանց, արտերկրի պատվիրակությունների այցելությունները, մարզային արժանահիշատակ դեպքերն ու իրադարձությունները, ինչպես նաև հանրությունն իրազեկվում է մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեության, ընդունված իրավական ակտերի, մարզխորհրդի նիստերի օրակարգերի և անցկացման ժամկետների, քաղաքացիների ընդունելության օրերի, ժամերի և վայրերի, մարզի քառամյա զարգացման ծրագրի դրույթներով նախատեսված և մարզի հետ առնչվող տեղեկատվական նյութերի, համայնքների ղեկավարների և ավագանու որոշումների, համայնքային բյուջետային եկամուտների ու ծախսերի, համայնքների ղեկավարների

տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվությունների, համայնքներում իրականացված վարչական հսկողության ակտերի և համայնքներին վերաբերող այլ նյութերի մասին:

444. Համակարգի ներդրմանը զուգընթաց բարձրացել է նաև մարզպետարանի աշխատակիցների համակարգչային գիտելիքների մակարդակը: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում տեղեկատվության արհեստավարժ ընդունման, ստացման, մշակման և փոխանցման անհրաժեշտությունն էլ ավելի է ուժեղանում:

445. Մարզում տեղեկատվության ազատության և հրապարակայնության ապահովման գործընթացին նպաստել են մարզային լրատվամիջոցների հետ համագործակցությունը, որոնց միջոցով լուսաբանվել է մարզի հասարակական-քաղաքական կյանքը:

446. 2010 թվականի մարտի 1-ից Արագածոտնի մարզպետարանն անցել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգին, որի ներդրումը զգալի տեղաշարժ է մտցրել ինչպես փաստաթղթաշրջանառության, այնպես էլ ընդհանուր գործավարության կանոնակարգման մեջ: Համակարգի ներդրման արդյունքում զգալիորեն բարձրացել է՝

1) փաստաթղթաշրջանառության արագությունը
2) օպերատիվությունը
3) կատարող ստորաբաժանումների պատասխանատվությունը
4) ծառայողների համակարգչային գնահատման օբյեկտիվությունը
5) հանձնարարականների կատարման ժամկետայնությունը
6) թղթերի խնայողությունը
7) պատասխանների և գրությունների ժամանակին առաքումը:

447. Փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը էլ ավելի արդյունավետ կգործի, եթե համակարգին ամբողջությամբ միանան ինչպես մարզի համայնքները, այնպես էլ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններն ու ստորաբաժանումները, քանի որ դրանց հասցեագրված գրությունները, որոշումները կամ թղթակցությունները ուղարկվում են փոստով կամ հանձնվում են առձեռն, որի ընթացքում դրանք հաճախ տեղ են հասնում ուշացումներով:

448. 2015-2018 թվականների ընթացքում անհրաժեշտ է.

1) Ապահովել մարզպետարանի ֆունկցիոնալ գործունեության ապահովման տեսանկյունից կարևոր, ներքին փաստաթղթաշրջանառության արդյունավետ

կազմակերպումը և այդ գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների պարտադիր կիրառումը:

2) Մարզպետարանի պաշտոնական տեղեկատվության շրջանառությունն առավելագույն չափով իրականացնել էլեկտրոնային տարբերակով:
3) Ունենալ համապատասխան ծրագրային ապահովում, հատկապես՝ լիցենզավորված հակավիրուսային ծրագրեր, որոնք առավել անվտանգ կդարձնեն տվյալների պահպանումն ու օգտագործումը, կնվազեցնեն դրանց վնասն ու կորուստը:
4) Ստեղծել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային սպասարկման բաժին:
5) Մշակել պաշտոնական տեղեկատվության արխիվացման, պահպանման և դրանից հետագայում օգտվելու հստակ մեխանիզմ:
6) Քաղաքացիներից ստացվող նամակների գործընթացում կիրառել «Մեկ պատուհանի» սկզբունքը, ինչը հնարավորություն կտա առավել արդյունավետ դարձնել հատկապես բնակչության հետ մարզպետարանի փոխհարաբերությունները:
7) Ստեղծել միասնական տեղեկատվական ցանց Արագածոտնի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև: Մարզին առնչվող մի շարք գործընթացներ, այդ թվում նաև գնումների գործընթացը կազմակերպել էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով:

13.2. Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում

13.2.1. Վարչատարածքային բաժանում և համայնքային խնդիրներ

449. Մարզային զարգացումը դժվար է պատկերացնել առանց տեղական ինքնակառավարման համակարգի և համայնքային զարգացման: Ավելին, մարզի զարգացումը պետք է դիտարկել համայնքների զարգացման տեսանկյունից: Այսինքն, մի դեպքում մարզում առկա հիմնախնդիրները պետք է լուծվեն պետության աջակցությամբ՝ պետական բյուջեի միջոցների հաշվին, սակայն պետք է նկատի ունենալ, որ դրանք կրում են հատվածական բնույթ և կարող են պայմանավորված լինել կառավարության ծրագրերով, մյուս կողմից համայնքային հիմնախնդիրների լուծման հիմնական և արդյունավետ համակարգը պետք է տեսնել համայնքային կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում:

450. Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 104 հոդվածի տեղական ինքնակառավարումը ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու իրավունքն է, այլև կարողությունը: Այսինքն՝ համայնքները պետք է բավարար կարողություն ունենան լուծելու տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ իրենց վերապահված հարցերը և իրականացնել լիազորությունները: Հայաստանում ներկայիս ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում ուղղված է տարածքային և տեղական կառավարման մարմիններին լիազորությունների և իրավասությունների փոխանցմանը: Այս գործընթացը զգալիորեն դանդաղում է երկու հիմնական պատճառներով: Առաջինը, համայնքները շատ փոքր են և մասնատված: Ապակենտրոնացման քաղաքականությունն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է խոշորացնել համայնքները՝ կրճատելով դրանց թիվը և միավորելով մի քանի բնակավայր մեկ համայնքի մեջ: Սա շատ նուրբ քաղաքական հարց է, և կառավարության կողմից խրախուսվող միջհամայնքային միավորումների ստեղծումն առաջին քայլն է այս ուղղությամբ:

451. Միջհամայնքային միավորումներին աջակցելու նպատակը հայտարարագրված է նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրում, որը հաստատվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Այն նախատեսված է նաև ԿԶԾ-ում: Նոր կազմավորվելիք միջհամայնքային միավորումները պետք է ստանան պետության ֆինանսական և տեխնիկական աջակցությունը: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներգարվվել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերն ու կարողությունները: Համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի Արագածոտնի մարզում կազմավորվել են 114 համայնքներ, որոնցից 3-ը քաղաքային, իսկ 111-ը՝ գյուղական: Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Արագածոտնի մարզում համայնքները հիմնականում կազմավորվել են «մեկ բնակավայր մեկ համայնք» սկզբունքով:

Աղյուսակ 13.1. Արագածոտնի մարզի գյուղական համայնքների թիվն՝ ըստ բնակչության թվի

Համայնքներ	Հայաստան	Արագածոտն
Մինչև 100 բնակիչ ունեցող	27	3
101-ից մինչև 200 բնակիչ ունեցող	79	20
201-ից մինչև 500 բնակիչ ունեցող	181	19
501-ից մինչև 1000 բնակիչ ունեցող	189	35
1001-ից մինչև 3000 բնակիչ ունեցող	309	26
3001-ից մինչև 5000 բնակիչ ունեցող	57	6
5001-ից մինչև 10000 բնակիչ ունեցող	29	5

Ընդամենը	**871**	**114**

452. Ինչպես երևում է ներկայացված աղյուսակից մարզի 114 գյուղական համայնքներից 77-ը կամ շուրջ 67.5 %-ն ունեն մինչև 1.000 բնակիչ, իսկ 3.000 ավել բնակիչ ունեն 26 գյուղական համայնքներ կամ ընդհանուրի մոտ 22.8 %-ը:

453. Վերջին տարիների դրական տեղաշարժերից մեկն այն է, որ պետական բյուջեով նախատեսված դոտացիաները բոլոր համայնքներին հատկացվում են 100%-ով: Սակայն չլուծված հիմնախնդիրներից մեկը մնում է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման ապահովումը:

454. Ապակենտրոնացմանը խոչընդոտող երկրորդ կարևոր հանգամանքը մարզային և համայնքային մակարդակներում բավարար կարողությունների բացակայությունն է, որը թույլ կտա ստանձնել նոր լիազորությունները և առավել արդյունավետ կառավարել տեղերում: Այդ իսկ պատճառով, կարողությունների բարձրացումը ապակենտրոնացման ընթացքում կարևոր նախապայման է: Կարողությունների զարգացման տարբեր մեթոդներ կան: Կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերը, անշուշտ, պետք է շարունակվեն և ընդլայնվեն:

455. Համայնքների բյուջեների հավաքագրման կարևոր նախապայմաններից մեկը պլանավորվող բյուջեների իրատեսությունն է և բազաների հստակությունը: Պլանավորվող ժամանակաշրջանում անհրաժեշտ է շարունակել համայնքների բյուջեներում հատկապես գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման աշխատանքները: Այս բնագավառում մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է պետական մակարդակում ընթացող նոր նախաձեռնությունների մասին ՏԻՄ-երին տեղեկացնելը և համապատասխան մեթոդաբանական օգնություն տրամադրելը: Օրինակ, Հայաստանի ֆինանսիստների միության կողմից շրջանառության մեջ է դրվել պետական բյուջեից դոտացիաների տրամադրման նոր հայեցակարգը, որը լայնորեն քննարկելուց հետո դրվելու է համապատասխան օրենսդրական ակտի հիմքում: Սա նշանակում է, որ մարզպետարանը պետք է նախաձեռնի շրջանառվող նախագծի վերաբերյալ լայնածավալ հանրային ու մասնագիտական քննարկումներ պատրաստելու համար ՏԻՄ-երի համապատասխան մասնագետներին դոտացիաների հաշվարկման նոր բանաձևերի ու մոտեցումների կիրառմանը:

456. Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վարչատարածքային կարևոր խնդիրներից են համայնքների սահմանների նկարագրումն ու քարտեզագրման աշխատանքները, համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը կամ դրանց ժամանակակից պայմաններին հարմարեցումը, համայնքների բյուջետային կարողությունների ամրապնդումն ու

զարգացումը, ինչպես նաև բյուջեների հավաքագրման մակարդակի բարձրացումը՝ այն հասցնելով պլանավորված մակարդակին:

457. Տեղական ինքնակառավարման բնագավառի 2015-2018թթ.-ի գերակայություններն են.

1) **ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը:**

2) **Ավարտել համայնքների սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքները:**

3) Նպաստել միջհամայնքային միավորումների ստեղծմանը:

4) Մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

13.2.2. Համայնքային ծառայություն

458. 2002 թվականի դեկտեմբերի 14-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է օրենք «Համայնքային ծառայության մասին», համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատվել են օրենքից բխող բոլոր նորմատիվ-իրավական փաստաթղթերը: Համայնքների ղեկավարների կողմից կազմվել են համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերի նախագծեր, որոնք վերջնական հաստատմանն են ենթարկվել տարածքային կառավարման նախարարի կողմից: Համայնքների ղեկավարների որոշմամբ հաստատվել են նաև համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը և համապատասխան նշանակումներ են կատարվել այդ պաշտոններում:

459. Համագործակցելով համայնքային ծառայության ոլորտի պետական լիազոր մարմնի հետ, համակարգված աշխատանքներ են տարվել մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերում համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերի ամբողջական իրականացումն ապահովելու ուղղությամբ:

460. Համայնքային ծառայության համակարգի սահուն ներդրման ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) կազմակերպել համայնքային մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստումը

2) ապահովել համայնքային ծառայության օրենսդրական փաստաթղթերի և հարցաշարերի տրամադրումը համապատասխան հանձնաժողովներին
3) մարզում ստեղծել միասնական տեղեկատվական համակարգ, որը տեղեկություններ կպարունակի այս կամ այն պաշտոնին համապատասխան կադրերի վերաբերյալ՝ թափուր պաշտոնները հնարավորինս արագ համալրելու նպատակով
4) խորհրդատվական աջակցություն ցուցաբերել համայնքներին արդյունավետ գործող և օպտիմալ կառուցվածքներ սահմանելու, ինչպես նաև դրանց համապատասխան համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու ուղղությամբ
5) միջոցներ ձեռնարկել համայնքային ծառայողների վարձատրության միասնական համակարգ սահմանելու ուղղությամբ
6) համայնքներին ապահովել համապատասխան տեխնիկական միջոցներով և համակարգչային ծրագրերով:

461. Վերոգրյալ աշխատանքների կատարմանը զուգահեռ, հաշվի առնելով գործնականում առաջացած խնդիրները, կմշակվեն օրենսդրական փոփոխություններին վերաբերվող առաջարկություններ և դրանք սահմանված կարգով կներկայացվեն ՀՀ կառավարության քննարկմանը:

13.2.3. Տեխնիկական ապահովվածություն

462. Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը, որը կակտիվացնի նաև ապակենտրոնացման գործընթացը: Սակայն համայնքները ժամանակակից տեխնիկայով և հեռահաղորդակցության համակարգերով (ինտերնետային կապ, ցանցային ծրագրեր և այլն) ապահովելը բավարար չէ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար:

463. 2013 թվականին մարզպետարանը ՏԻՄ-երի կարողությունների բարձրացմանն ուղղված աշխատանքներ է տարել ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման և տեղադրման ուղղությամբ: Մարզի բոլոր համայնքներն ունեն ժամանակակից պահանջներին բավարարող համակարգիչներ և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրեր: Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 114 համայնքներից 55 համայնքներում ներդրված է ՀԿՏՀ (համայնքային կառավարման տեղեկատվական

համակարգ): Այսպիսով, 55 համայնք, այդ թվում՝ 3 քաղաքային համայնք ապահովված է ՀԿՏՀ-ով: Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 114 համայնքներն ապահովված են ինտերնետ կապով և համակարգիչներով:

464. Աշխատանքներ են տարվում համայնքապետարաններում առավել հուսալի ինտերնետային կապի հասանելիությունն ապահովելու, համակարգչային տեխնիկան թարմացնելու, ՀԿՏՀ-ի շահագործման արդյունավետությունը բարձրացնելու և նշված համակարգը մյուս համայնքներում ևս ներդնելու ուղղությամբ: Համայնքներում տեղեկատվական վահանակների միջոցով ապահովվել է տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերի հրապարակումը:

465. Համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված է օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Խնդրի լուծման արդյունավետությունը իրականացվել է Հայաստանի Իրավական Տեղեկատվական համակարգի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերի պաշտոնական էլեկտրոնային հրապարակումից՝ ինտերնետային կայքից օգտվելու միջոցով: Ներկայում գործում է http://www.arlis.am, e-gov.am կայքերը: Համակարգի բաց տեղադրումն ինտերնետում հնարավորություն է տալիս ունենալ ցանկացած իրավական ակտի ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային տարբերակը, որը համայնքների կողմից գործող օրենսդրության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման կարևոր գործոն է:

13.2.4. Համայնքի քառամյա զարգացման ծրագիր

466. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսված են մի շարք փոփոխություններ օրենքի 53-րդ հոդվածում, մասնավորապես՝

1) Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

2) Համայնքի նորընտիր ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, և իր լիազորությունները ստանձնելու օրվանից հետո՝

երկամսյա ժամկետում ներկայացնում ավագանու հաստատմանը: Համայնքի ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, անհրաժեշտության դեպքում՝ դրա մեջ կատարում փոփոխություններ և (կամ) լրացումներ և ընդունում է այն՝ նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ: Համայնքի քառամյա զարգացման ծրագրի գործողության ժամկետի ընթացքում համայնքի ավագանու անդամների ընտրություն կայանալու դեպքում՝ ավագանու լիազորությունները ստանձնելուց հետո եռամսյա ժամկետում համայնքի ավագանու անդամների օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կողմից կարող են առաջարկվել քառամյա զարգացման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ:

467. Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի և կառավարության հավանությանն արժանացած մարզային, տարածաշրջանային զարգացման և այլ ռազմավարական ծրագրերին:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են՝

1) համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ,
2) շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ,
3) համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ,
4) աղետների ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումներ,
5) համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ (հոդված 53),
6) ինչպես նաև համայնքի սեփականություն համարվող շենքերի, շինությունների (հոդված 37 կետ 7.1) ու հողամասերի (հոդված 38 կետ 1.1) օտարման քառամյա ծրագրերը՝ տարեկան կտրվածքով:

468. Համայնքային զարգացման ծրագրերի որակը էապես պայմանավորված է դրանց առկա հիմնախնդիրների և համայնքի բնակչության ցանկությունների համապատասխանությունից: Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցություն ծրագրերի քննարկման և հաստատման ավանդույթ, նպատակահարմար է, որ մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ, սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, սակայն հետագայում համայնքների և միջհամայնքային միավորումների միջոցներով, համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանելու համայնքային

հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունները: Այս ուսումնասիրությունները պետք է հիմք հանդիսանան սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար:

469. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը հատկապես լուրջ դժվարությունների է հանդիպում փոքր համայնքներում, որոնք զրկված են բավարար ֆինանսական միջոցներից և որտեղ առավել ցածր մակարդակի վրա են գտնվում բյուջեների հավաքագրման ցուցանիշները, 2015-2018թթ.-ին անհրաժեշտ է քննարկել և համայնքների առանձնահատկություններից ելնելով առաջարկություններ ներկայացնել համայնքների խոշորացմանն ուղղված վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելու իմաստով: Մնացյալ բոլոր դեպքերի համար 2011-2014 թթ.-երին գործուն ջանքեր պետք է ներդրվեն միջհամայնքային համագործակցության ամրապնդման և խորացման ուղղությամբ: Հաշվի առնելով համայնքների միությունների արդեն իսկ կուտակած որոշ փորձն ու համագործակցության որոշ դրսևորումները, պետք է միջոցներ ձեռնարկվեն միջհամայնքային միավորումների ստեղծման ուղղությամբ:

470. Միջհամայնքային միավորումների կազմավորման համար էական նշանակություն ունի հետևյալ հիմնախնդիրների լուծումը.

1) Նոր վարչատարածքային բաժանման ժամանակ, որպես կանոն, հիմք է ընդունվել «մեկ բնակավայր մեկ համայնք» սկզբունքը: Արդյունքում գյուղական համայնքների զգալի մասը փոքր են, սեփական միջոցները չեն բավարարում նույնիսկ ՏԻՄ աշխատակազմի աշխատավարձի ապահովմանը:

2) Բնակչությանը մատուցվող ծառայությունների մի զգալի մասը իրականացվում է նախկին շրջանների տարածքներում, ապակենտրոնացում իրականացնելիս դրանք հնարավոր չէ տրոհել առանձին համայնքների միջև:

3) Համայնքների մասնագիտական և ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով, դժվարանում է համայնքներին նոր խնդիրներ վերագրելու գործընթացը, դանդաղում է կառավարման ապակենտրոնացման իրականացումը:

4) Միջհամայնքային միավորումների ձևավորումը կապահովի ռեսուրսների համակենտրոնացում, որը հնարավորություն կտա ոչ միայն բարելավել արդեն իսկ մատուցվող ծառայությունների որակը, այլև մատուցել նոր ծառայություններ և այլն:

13.2.5. Քաղաքացիական հասարակություն

471. Ժամանակակից արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկը ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է:

472. Քաղաքացիական հասարակության տարբեր խավերի մասնակցությունը կառավարման գործընթացներում ոչ միայն ժողովրդավարության ամրապնդման երաշխիքն է, այլև կարողությունների զարգացման բնագավառում կարևորագույն ուղիներից մեկը: Համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման ընթացքում մասնակցային մոտեցումը կնպաստի տեղական մարմինների կարողությունների բարձրացմանը՝ համայնքների զարգացմանն ուղղված այլընտրանքային կարծիքների հավաքագրման և համապարփակ ծրագրերի կազմման աշխատանքներում: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երի ղեկավարներները պետք է զարգացնեն իրենց կառավարչական հմտությունները՝ մասնակցային գործընթացները արդյունավետ համակարգելու նպատակով: Համայնքներում ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներ իրականացնելիս, հատկապես դրանց պլանավորման, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման ժամանակ, մասնակցային մոտեցումը կապահովի թափանցիկություն և հրապարակայնություն, ինչպես նաև կբարձրացնի բնակչության վստահությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ:

473. 2015-2018 թթ.-ի ընթացքում տարածքային կառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) մարզի տարածքում գործող ՀԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ հեռարձակել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, ներկայացնելով գոյություն ունեցող հիմնախնդիրները և կատարվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն և նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:

2) Պարբերաբար և համակարգված ձևով կազմակերպել մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք պետք է ուղեկցվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ «դեմ առ դեմ»

սկզբունքով մարզի առաջին դեմքերից բնակչությունը հնարավորություն կունենա ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ:

3) Մարզի զարգացման ծրագրի, այդ թվում՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին պետք է պատրաստվեն հանրամատչելի տեղեկատվական թերթիկներ և դրանք առաքվեն բոլոր համայնքներին:

4) Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին մասնակից դարձնել մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

474. 2015-2018թթ.-ի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) Ստեղծել քաղաքային համայնքների պաշտոնական ինտերնետային էջեր, որոնք հետագայում նախատիպ կհանդիսանան գյուղական համայնքների համար:

2) Փորձնական ծրագրեր իրականացնել մի քանի համայնքներում՝ կազմակերպելու համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի և հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների հրապարակային քննարկումներ:

3) Համայնքների հնարավորություններից ելնելով հրապարակել համայնքի սոցիալտընտեսական զարգացման ծրագրի և համայնքի բյուջեի հանրամատչելի և վերլուծական ձեռնարկներ և դրանք անվճար տարածել համայնքի բնակչությանը:

4) Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին:

5) Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների մեկական օրինակ տեղադրել համայնքի ղեկավարի նստավայրի հանրության համար մատչելի վայրերում:

6) Հրապարակել բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են պետության կամ միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրվող սերմացուների, վառելիքի, պարարտանյութերի և այլ նյութերի բաշխմանը:

7) Հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանը իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն կտրամադրվի գույքային իրավունքների գրանցման, պայմանագրային հարաբերությունների հաստատման և բանկային վարկերի ստացման վերաբերյալ:

8) «Տեղական հանրաքվեի մասին» օրենքի դրույթներից ելնելով՝ նախաձեռնել և իրականացնել համայնքային հանրաքվե՝ ստեղծելով դրա նախադեպ և համայնքային հետաքրքրություն ունեցող հարցի քննարկում հանրաքվեի միջոցով:

475. Քաղաքացիական հասարակության ակտիվության ապահովման համար անհրաժեշտ է հանրային կառավարման հարաբերություններում մշտական մասնակցային դեր վերապահել գոյություն ունեցող տարաբնույթ կազմակերպություններին և հասարակական խմբերին (օրինակ, Ջրօգտագործողների ընկերություններին, համայնքների միություններ, «Արագածոտնի մարզի ՀԿ ցանց», ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ, դպրոցական խորհուրդներ, Արագածոտի մարզի առևտրաարդյունաբերական պալատ, գործատուների միություն և այլն):

13.2.6 Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Կարևոր նախապայմաններ
Տարածքային կառավարում		
Ոլորտային նպատակ՝ Մարզում պետական կառավարման (տարածքային կառավարման) արդյունավետության բարձրացում	Մարզպետարանի նոր, ընդլայնված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկում Օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում	Օրենսդրության հստակեցում
Արդյունք 1. Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև համագործակցության մակարդակի բարձրացում		Նորմատիվ իրավական դաշտի առկայություն, այդ թվում՝ մարզային մակարդակով
Միջոցառումներ 1.1 Կառավարության կողմից սահմանված չափորոշիչների յուրացում 1.2 Մարզպետարանում աշխատող քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման ապահովում		Օրենսդրական պահանջներ
Արդյունք 2.	Մոնիտորինգի և գնահատման	

Մարզպետարանի վերափոխված կառավարման կազմակերպական կառուցվածք	աշխատանքների համակարգման և ՄԳ հաշվետվությունների ամփոփման նպատակով Ծրագրերի և ներդրումների բաժնի առանձնացում որպես կառուցվածքային ստորաբաժանում՝ մարզպետի տեղակալի անմիջական ենթակայության ներքո /համապատասխան ենթաօրենսդրական ակտի ընդունում/	
Միջոցառումներ 2.1 Համապատասխան կարգավորող որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը		
Արդյունք 3. Սոցիալական ծառայությունների ապակենտրոնացում	3.1 Մարզպետարանի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող սոցիալական ծառայությունները կփոխանցվեն համայնքներին	ՀՀ կառավարության կողմից փորձնական ծրագրի իրականացման ընթացք
Միջոցառումներ 3.1 ՀՀ օրենսդրական բարեփոխում-ների իրագործում, համայնքներին համապատասխան տեղեկատվու-թյան տրամադրում		
Արդյունք 4. Մարզպետարանում աշխատող աշխատակիցների գործունեության համար անհրաժեշտ ժամանակակից տեխնիկայով ապահովում	4.1 համակարգիչների թիվ 4.2 համակարգչային ցանցինմիացած համակարգիչների թիվ 4.3 համակարգչային ծրագրերի թիվ	
Միջոցառումներ 4.1 Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, ծրագրային ապահովում և		

շահագործում		
Արդյունք 5. Մարզի բոլոր քաղաքային համայնքներում ինտերնետային կենտրոնների ստեղծում, դրանց տեխնիկական միջոցներով և ինտերնետով ապահովում	Գործող ինտերնետ կենտրոնների թիվը մարզի քաղաքային համայնքներում	• Արդեն իսկ գոյություն ունեն նման կենտրոն Աշտարակ,Ապարան և Թալին քաղաքներում: • Հնարավոր է օգտագործել տեղական հասարակական կազմակերպություն-ների տեխնիկական հնարավորու-թյունները և տարածքները: • Հանրակրթական դպրոցներն ապահովված են համակարգչային տեխնիկայով:
Միջոցառումներ 5.1 Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, ծրագրային ապահովում և շահագործում, 5.2 Համապատասխան կազմակեր-պությունների հետ պայմանագրերի կնքում, 5.3 Հանրակրթական դպրոցների հետ կազմակերպական աշխատանքների իրականացում:		
Արդյունք 6. Մարզպետարանի և համայնքների միջև միասնական տեղեկատվական ցանցի ստեղծում	Միասնական տեղեկատվական ցանցում ընդգրկված համայնքների թիվը	• Հնարավոր է օգտագործել տեղական հասարակական կազմակերպություն-ների տեխնիկական հնարավորու-թյունները և տարածքները: • Հանրակրթական դպրոցներն ապահովված են համակարգչային տեխնիկայով:
Միջոցառումներ 6.1 Համապատասխան տեխնիկական ապահովում,		Մարզպետարանում և համայքների մեծ մասում գոյություն ունեն համակարգիչներ

6.2 Ծրագրային ապահովում, 6.3 Կադրերի վերապատրաստում		
Արդյունք 7. Մարզպետարանի և հանրապետա-կան գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հարաբերությունների բարելավվում:		Հանրապետական գործադիր մարմնի տարածքային ծառայու-թյուններն ունեն իրենց գործունեությունըկարգավորող նորմատիվային-իրավական դաշտ
Միջոցառումներ 7.1 Մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնցով կարգավորվում են պետական կառավարման մարմինների միջև փոխհարաբերությունները:		
<u>Տեղական ինքնակառավարում</u>		
Ոլորտային նպատակ՝ Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության բարձրացում	1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճան 2. Համայնքային մակարդակում հավաքագրվող հարկեր և տուրքեր, % նախորդ տարվա նկատմամբ	Բավարար ֆինանսական միջոցների առկայություն ՀՀ կառավարությունը շարունակում է ապակենտրոնացման քաղաքականությունը:
Արդյունք 1. Համայնքային բյուջեների հավաքագրման ցուցանիշների աճ	1.1 Համայնքային բյուջեների հավաքագրման մակարդակ (% պլանավորված եկամուտների նկատմամբ)	• գոյություն ունի բյուջետային ոլորտի հստակ կերպով կարգավորվող օրենսդրություն • համայնքային բյուջեների հարկային եկամուտների հավաքագրման աստիճանի բարձրացում • յուրաքանչյուր տարի ավելանում են պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող դոտացիաների ծավալները
Միջոցառումներ		

1.1 Հստակեցնել հողի հարկի, գույքահարկի և տուրքերի բազաները 1.2 Կազմել նախորդ տարիներից կուտակված ապառքների մարման ժամանակացույց և հետևողականորեն միջոցներ ձեռնարկել դրանց մարման ուղղությամբ:		
Արդյունք 2. Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը փոխանցել համայնքներին	2.1. Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը կփոխանցվեն 66 համայնքի / 72%/ 2.2 Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներ ունեցող համայնքների թիվը Թիրախ՝ (2008-2011թ.-ին 46 համայնքում կիրականացվեն համապատասխան աշխատանքներ, որը կկազմի համայնքների 50%) 2.3 Մշակված գլխավոր հատակագծեր ունեցող համայնքների թիվը Թիրախ՝ (2008-2011թ. կիրականացվեն 10 համայնքում բնակավայրերի գլխավոր հատակածերի կազմման աշխատանքներ, որը կկազմի համայնքների 16%)	• Գործող օրենսդրական դաշտը նպաստավոր է: • Մյուս մարզերում ևս աշխատանքներն ընթացքի մեջ են:
Միջոցառումներ 2.1 Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերի փոխանցում համայնքներին 2.2 Հողերի գոտիավորման և		

օգտա-գործման սխեմաների կազմում 2.3 Բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում		
Արդյունք 3. Տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացում	3.1. ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված աշխատատեղերի քանակը, % Թիրախ՝ (Աշխատատեղի 30%-ը կապահովվի համակարգիչներով 2008-2011թ. ընթացքում) 3.2. Վերապատրաստում անցած և վկայականներ ստացած համայնքային ծառայողների թիվը 3.3. Վերապատրաստում ստացած համայնքապետարանների աշխատողների թիվը Թիրախ՝ (2008-2011թ. ընթացքում կվերապատրաստվի 518 մարդ) 3.4.Տեղեկատվական համակարգ ունեցող համայնքների թիվը 3.5 Մասնագիտական որակավորում ստացած ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների թիվը	Նոր ընտրված տեղական իշխա-նությունները շարունակում են համայնքային կարողությունների զարգացման համար մշակված մոտեցումների կիրառումը
Միջոցառումներ 3.1 Համայնքների աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով 3.2 Մարզում համայնքային ուսումնական կենտրոնի հիմնում		Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն

3.3 Համայնքների վարչական տեղե-կատվական համակարգի ձևավորում 3.4 ՏԻՄ-երի ղեկավարների և ավա-գանու անդամների մասնագիտական որակավորման բարձրացում վերապատրաստման միջոցով		
Արդյունք 4. Միջհամայնքային միավորումների կարողությունները բարձրացվել են	4.1. ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված միջհամայնքային միավորումների քանակը, %	Գործող օրենսդրական դաշտը նպաստավոր է: Կան 2 համայնքների միություններ,որոնք ընդգրկում են համայնքների մոտ 30%-ը: Ենթադրվում է, կձևավորվեն նոր միջհամայնքային միավորումներ՝ ըստ ՏԻՄ-ի մասին 2002թ-ի օրենքի
Միջոցառումներ 4.1 Միջհամայնքային միավորում-ներին տեխնիկական աջակցության տրամադրում 4.2 Միջհամայնքային միավորման շենքային պայմանների բարելավում 4.3 Միջհամայնքային միավորումների շրջանակներում աղբահեռացման գործընթաց սկսել 4.4 Միջհամայնքային միավորումների իրավական հիմքերի ամրապնդում		Համայնքները սատարում են միջհամայնքային միավորումների ստեղծման գաղափարին:
Արդյունք 5. Համայնքների եռամյա զարգացման ծրագրերի մշակման որակի բարձրացում և համապատասխան-եցում մարզային զարգացման ծրագրին	5.1.ՄԶԾ և համայնքների եռամյա զարգացման ծրագրերի համապա-տասխանեցման դասընթացներին մասնակցած աշխատակազմի թիվը 5.2.ՄԶԾ-ին համապատասխանեցված	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն

	համայնքային զարգացման ծրագրերի թիվը	
Միջոցառումներ 5.1.ՄԶԾ-ի և համայնքների եռամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցում		
Արդյունք 6. Համայնքային մակարդակում ՀԿ-ների և ԶԼՄ-ների դերի բարձրացում	6.1 Տարբեր հաղորդումների միջոցով հանրության իրազեկված հաղորդումների թիվը 6.2.Բնակչությանը ուսուցում անցկաց-նող ՀԿ –ների թիվը յուրաքանչյուր համայնքում տարեկան 2 անգամ 6.3 Բուկլետների տեղեկատվական թերթիկների թիվը յուրաքանչյուր հանդիպման համար 20-25 բուկլետ կամ տեղեկատվական թերթիկ 6.4.Ավագանու անդամների կողմից համայնքի բնակչությանը ներկայացված հաշվետվությունների թիվը	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ 6.1. Տարբեր թեմատիկ հաղորդում-ների միջոցով հանրության իրազեկում; 6.2. Համայնքների բնակչության իրազեկության բարձրացում՝ հասարակական կազմակեր-պությունների միջոցով 6.3. Բուկլետների, տեղեկատու թերթիկների տարածում/ բացատրում բնակչությանը 6.4. Ավագանու և բնակչության կապի ամրապնդում ՀԿ-ների նախաձեռնությամբ		Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն

6.5. Համայնքներում դրամահավաքի միջոցներով ծրագրերի իրականաց-ման դեպքում նախատեսել ֆինան-սական միջոցներ՝ տվյալ միջոցառ-ման իրագործման ընթացքի մասին տեղեկատվության տարածման համար		
Արդյունք 7. Հասարակական վերլուծական տեղեկատվական կենտրոնների ստեղծում ՀԿ-ների հիմքի վրա	Յուրաքանչյուր տարածքում հասարակական վերլուծական կենտրոնների թիվը	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ 7.1 Մարզի համայնքների իրավական տեղեկատվական բազայի ստեղծում		Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Արդյունք 8. ՄԶԾ-ների ինստիտուցիոնալ և ՄԳ համակարգերիի արմատավորում		
Միջոցառումներ 8.1. ՄԶՀ-ների և ՈԱԽ-ների անդամների տեխնիկական առաջադրանքների հաստատում 8.2. Առաջնահերթ ծրագրերի ընտրության հստակ չափանիշների մշակում և հաստատում 8.3. ՀԿ ցանցի հետ ՈԱԽն -երում և ՄԶՀ-ում ՀԿ-ների երկայացուցիչների անդամակցությունը կարգավորող փոխըմբռնման հուշագրի կնքում 8.4. ՄԳ համակարգի շարունակակա-նության ապահովում	8.1. Հաստատված տեխնիկական առաջադրանքներ 8.2 ՄԶՀ-ի համապատասխան որոշում՝ հաստատված մարզպետի կողմից 8.3. Փոխըմբռնման հուշագրի կնքում 8.4 Տարեկան կտրվածքով իրակա-նացված ՄԳ ուսումնասիրությունների թիվ ; Տարվա ընթացքում պատրաստված ՄԳ հաշվետվություն-ների քանակ 8.5. Կիսամյակային և տարեկան հրապարակված հաշվետվությունների թիվը	Անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են Ֆինանսական միջոցները առկա են Ֆինանսական միջոցները առկա են

8.5. Իրազեկման միջոցառումների իրականացում	2011- 14 թթ.-երին 2005-2007թթ.-երի ՄԶԾ-ի արդյունքների և 2008-2011թթ.-երի ՄԶԾ-ի ընթացքի մասին իրազեկման միջոցառումների քանակը և տեսակը	

14. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

14.1. Բնական աղետներ

476. ՀՀ Արագածոտնի մարզում հնարավոր են հետևյալ վտանգավոր բնական երևույթները՝

1) **Երկրաբանական վտանգավոր երևույթներ**՝ երկրաշարժեր, ջրակայուն և այլ անբարենպաստ գրունտների զանգվածային դեֆորմացիաներ:

477. Արագածոտնի մարզի տարածքը բնութագրվում է համեմատաբար միջին սեյսմիկ ակտիվությամբ: Հիմնական ուժեղ երկրաշարժի օջախները գտնվում են մարզի տարածքից դուրս: Մարզում կան տարբեր վթարայնության աստիճանի 12 բազմահարկ շենքեր, որոնք գտնվում են Աշտարակ, Ապարան, Թալին քաղաքներում և Ծաղկահովիտում: Բացի Աշտարակից, մնացած բնակավայրերի շենքները մեծապես տուժել են Սպիտակի երկրաշարժի ժամանակ: Որոշ շենքերում ամրացման աշխատանքներ են կատարվել, սակայն դրանք բավարար չեն դրանց կայունությունը և բնակիչների անվտանգությունն ապահովելու համար:

2) **Օդերևութաբանական և ագրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներ՝** ուժեղ քամիներ, ամպրոպ, խոշոր կարկուտ, սառնամանիք, ցրտահարություն, մառախուղ, ուժեղ շոգ, երաշտ:

3) **Հիդրոլոգիական վտանգավոր երևույթներ՝**

Մարզում կան 17 արհեստական ջրամբարներ և լճեր, որոնցից ամենախոշորը Ապարանի ջրամբարն է: Շատ համայնքերի միջով ձգվում են մշտական հոսք չունեցող հեղեղատներ և ձորակներ, որոնք ձնհալի և վարար անձրևների ժամանակ հեղեավտանգ են դառնում: Ամբարտակների փլուզման և հեղեղների ժամանակ ջրածածկման գոտում է հայտնվելու մարզի 17 բնակավայր, որտեղ բնակվում է 29438 մարդ: Ներկայումս բոլոր ջրամբարներն ունեն պատնեշների և ամբարտակների նորոգման ու վերականգնման խիստ կարիք: Վերջին 20 տարում այդ պատնեշները

գրեթե չեն նորոգվել: Ընթացիկ նորոգումները կարող են միայն հետաձգել աղետը, բայց կանխել այն ի վիճակի չեն: Այստեղ անհրաժեշտ են մեծ կապտալ ներդրումներ: Համայնքներն իրենց սուղ միջոցներով հնարավորություն չունեն այդ աշխատանքները կատարել: բացի այդ, անհրաժեշտ է նաև խիստ մասնագիտական մոտեցում ցուցաբերել ինչպես հնարավոր աղետի չափերի ու հետևանքների, այնպես էլ պահանջվող ծախսերի, կատարվող աշխատանքների ձևերի ու ծավալների նկատմամբ:

4) **Հիդրոերկրաբանական վտանգավոր երևույթներ և բնական հրդեհներ, սողանքային օջախներ և քարաթափումներ՝** Արագածոտնի մարզում բնական աղետներից ամենավտանգավորներն են կարկտահարություններն ու սողանքները: Առավել վտանգավոր են կարկտահարությունները, որոնք տարեկան մի քանի միլիարդ հասնող վնասներ են տալիս գյուղատնտեսությանը, մարզի տարածքում բնական հրդեհները մեծ վնասներ է հասցնում հացահատիկի ցանքատարածքների և չոր խոտածածկերի հրդեհները: Ամեն տարի մարզի բոլոր տարածաշրջաններում կարկտահարությունը մեծ վնասներ է հասցնում ցանքերի և բազմամյա տնկարկներին: Միայն 2013-2014 թթ. բնական աղետների հետևանքով տուժել է 58 համայնք՝ 4589 հա ընդհանուր տարածքով: Վնասը կազմել է 6.5 մլրդ.դրամ:

478. Քարաթափերի կանխարգելում Մարզի տարածքի ռելիեֆը բազմազան է: Կան հարթավայրային, լեռնային և բարձր լեռնային տարածքներ: Մարզում կան մի քանի խոշոր կիրճեր, ոչրոնցում կան քարաթափման վտանգներ: Քարաթափման առաջին և ամենավտանգավոր օղակը Քասախի կիրճում է, Օհանավանից դեպի Դեմեր կոչվող հանդամասը տանող ճանապարհը, որն անցնում է կիրճով: Երկրորդ վտանգավոր տարածքը Երնջատափ համայնքից դեպի Աստվածընկալ վանք տանող ճանապարհն է: Քարաթափման վտանգ կա նաև դեպի Աշտարակի ջրաղաց տանող ճանապարհին, որը նույնպես հատում է Քասախի կիրճը Աշտարակ քաղաքի տարածքում: Մյուս վտանգավոր տարածքը գտնվում է Ամբերդ գետի կիրճում՝ Դեպի Օրգով և Ամբերդի ամրոց տանող ճանապարհների գոտում: Քարաթափման ընդհանուր տարածքը մարզում կազմում է 2.8 հա:

479. Մարզի տարածքում քարաթափերի խնդրի լուծումը մարզի համար ունի մեծ նշանակություն, որը անվտանգության ապահովման կարևոր պայման է: Խնդիրը կարելի է կարգավորել և պետական հատկացումներով, և համայնքերի բյուջեով: Սակայն վերջիններս այդ խնդիրը վերջնական լուծելու համար անհրաժեշտ միջոցներ չունեն:

480. Կարկտահարության դեմ պայքարի ամենաարդյունավետ եղանակը գազագեներատորային հակակարկտային կայանների կառուցումն է մարզում: 2008-

2009թթ. ընթացքում Աշտարակի տարածաշրջանի 10 համայնքներում կառուցվել և փորձարկվել են 15 հակակարկտային կայաններ: Յուրաքանչյուր համակարգ ապահովում է 100հա տարածքի անվտանգությունը: Առաջիկա 4 տարիների ընթացքում մարզում կտեղադրվեն ևս այդպիսի 17 կայաններ:

481. Մարզը սողանքների առումով համարվում է համեմատաբար անվտանգ տարածք: Սակայն, այնուամենայնիվ, կան սողանքային մի քանի գոտիներ, որոնց վերացման համար լուրջ միջոցառումներ են պահանջվում: Սողանքներ կան Լուսագյուղի, Թթուջրի, Ձորագլուխի, Ծիլքարի տարածքներում: Սողանքների վտանգի մեծացմանը նպաստել են հատկապես այդ հողերի գյուղատնտեսական նպատակներով ակտիվ շահագործումը: Հողերի հաճախակի ոռոգումները, ոչխարաբուծության զարգացումն այդ տարածքներում նպաստում են սողանքների վտանգը և ամեն տարի ավելացնում են վտանգավոր տարածքները: Սողանքների վտանգը վերացնելու նպատակով անհրաժեշտ է այդ տարածքները դուրս բերել գյուղատնտեսական շրջանառությունից: Այնտեղ պետք է տնկվեն հզոր արմատային համակարգ ունեցող ծառեր:

14. 2.Տեխնածին աղետներ

482. Տեխնածին աղետներից մարզում վտանգավոր են հատկապես ավտովթարները, կենցաղային և անտառային հրդեհները, արտադրության մեջ օգտագործվող թունավոր նյութերը, պայթյունները, շենքերի և շինությունների հանկարծակի փլուզումները: Մարզի տարածքով են անցնում Երևան-Վանաձոր – Վրաստան և Երևան-Գյումրի-Թուրքիա տանող ավտոճանապարհները, որտեղ, ինտենսիվ երփևեկության պայմաններում մեծ է վթարների և դժբախտ դեպքերի հավանականությունը:

483. Տեղնածին աղետներ կարող են պատահել նաև մարզի այն արտադրական կազմակերպություններում, որոնք արտադրության մեջ օգտագործում են շրջակա միջավայրի համար վտանգավոր նյութեր: «Աշտարակկաթ», «Թամարա Ֆրութ», «Իշխան» ընկերություններն, Կարբիի սառնարանային տնտեսությունը տարեկան օգտագործում են 1-1.5-ական տոննա ամոնիակ, որի արտահոսքը կարող է աղետների հանգեցնել: Տեխնածին աղետներից ամենավտանգավորը մարզում կարող է լինել Հայկական ատոմակայանում տեղի ունեցող վթարները: Ատոմակայանի հարևանությամբ վտանգավոր գոտում են գտնվում մարզի Արագածոտն, Նոր Եդեսիա և Նոր Ամանոս բնակավայրերը, որոնք աղետի դեպքում հայտնվելու են իրական վտանգի մեջ:

484. Մարզի ութ համայնքներ՝ Արագածավան, Արտենի, Թլլք, Հակո, Գետափ, Սորիկ, Նոր Արթիկ գտնվում են Թուրքիայի սահմանի անմիջական հարևանությամբ և հարձակման դեպքում անմիջապես հայտնվելու են ռազմական գործողությունների կենտրոնում: Այս համայնքներում գրեթե բացակայում են քաղպաշտպանության օբյեկտները, իսկ եղածները չեն համապատասխնում սահմանված պահանջներին: Համայնքներում ռմբապաստարաններ և գազապաստարաններ, որպես այդպիսիք, չկան:

485. Այդ նպատակի համար նախատեսված շենքները չունեն տեխնիկական միջոցներ և անհրաժեշտ պայմաններ՝ հարձակման դեպքում բնակիչների անվտանգությունն ապահովելու համար: Հասարակական շենքերի՝ ակումբների, մշակույթի տների, դպրոցների նկուղները չունեն քաղպաշտպանության նորմերով սահմանված տարրական պայմաններ: Համայնքների բնակիչներն ապահովված չեն անհատական պաշտպանության միջոցներով՝ հակագազերով և հագուստներով: Լուծված չէ նաև վտանգի դեպքում կենցաղային պայմանների և սննդի կազմակերպման հարցը

14.3. Բնածին և տեխնածին աղետների ռիսկի նվազեցում

486. Բնական և տեխնածին աղետների ռիսկի նվազեցման ամենաարդյունավետ միջոցը բնակչության տեղեկացվածությունն է և հասարակության պատրաստվածությունը աղետներին դիմակայելու գործում: Մարզում ներդրված է աղետների մասին ազդարարման համակարգ: Սահմանամերձ, տեխնածին և բնական աղետներին ենթակա 11 համայնքերում ստեղծված են ազդարաման համակարգեր, որոնք գտնվում են համայնքապետարանների տրամադրության տակ:

487. 2015-2018թթ. մարզում բնական և տեխնածին աղետների նվազեցմանն ուղղված միջոցառումներ պլանը բերված է հավելված 14-ում: Առաջին և ամենակարևոր պայմանը աղետների ռիսկի նվազեցման գործընթացում հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին:

488. Բնական և տեխնածին աղետների ժամանակ բնակչության պաշտպանվածության խնդիրը պետք է միշտ լինի բարձր մակարդակի վրա: Բնակչության պաշտպանվածության բարձրացման նպատակով իրականացվում են ուսումնական պարապմունքներ, սեմինարներ, ուսումնական հավաքներ, օբյեկտային վարժանքներ, տարբեր մակարդակի շտաբային ուսումնավարժություններ՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ պետական և տեղական

ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին» N 134-Ն որոշման:

489. Լավ տեղեկացված բնակչությունը մեծ պատասխանատվությամբ է արձագանքում անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով իրականացվող ամեն մի գործողության:

490. Գարնանային հնարավոր հեղեղումները կանխարգելելու նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն հետևյալ միջոցառումները՝ հեղեղավտանգ տեղամասերի հետախուզում, վտանգավոր տեղամասերի հայտնաբերում, կանխարգելիչ աշխատանքների գնահատում, գետի հունի մաքրում և ափերի ամրացում, սելավատարի հունի մաքրում և ափերի ամրացում:

491. Շենքերի և շինությունների փլուզումից, հնարավոր հետևանքներից խուսափելու համար իրականացնել դրանց ամրացման աշխատանքներ:

492. Ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով իրականացնել վթարային կամուրջների ամրացում և վերականգնում: Ձմեռային սեզոնի համար ավազի և աղի պաշարների կուտակում, համապատասխան տեխնիկայի նախապատրաստում:

493. Կարկուտի հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է մարզի մնացած համայնքներում շարունակել հակակարկտային կետերի տեղադրման աշխատանքները:

494. Հրդեհների մարման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար բնակավայրերում իրականացնել հիդրանտների տեղադրում և մշտական ջրով ապահովված ջրավազանների կառուցում:

495. Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները, մարզին սպառնացող համաճարակները, աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

496. ՀՀ կառավարության 2012թ. մարտի 7-ի «ՀՀ աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությանը և աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N 281-Ն որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությունը և ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիրը: Ռազմավարությունը բխում է ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆՀ-37-Ն հրամանագրից և համահունչ է Հյոգոյի գործողությունների ծրագրի գերակա ուղղություններին: Ըստ ռազմավարության՝ աղետների ռիսկերի նվազեցման ոլորտի ընդհանուր ղեկավարումն

իրականացնում է ՀՀ կառավարությունը: Ոլորտը բաղկացած է ֆունկցիոնալ և տարածքային ենթահամակարգերից: Մարզպետարանները և տեղական ինքնակառավարման մարմինները աղետների ռիսկերի նվազեցման համակարգի հիմնական դերակատարներից են:

497. ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի և բնակավայրերի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների ներառման, արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ուղղված սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների նախատեսման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 7-ի N 261-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1351-Ն որոշման համաձայն՝ 2013թ. օգոստոսի 1-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագրում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների իրականացման հայտը, որը նախարարության կողմից վերցվել է հաշվառման: Հետագա աշխատանքների՝ մարզի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի կազմման համար պահանջվում է 10.0 մլն.դրամ և մարզպետարանն ակնկալում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աջակցությունը: Սահմանված կարգով կազմված և հաստատված Արագածոտնի մարզի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզը կներառվի Արագածոտնի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի տվյալ տարվա տարեկան աշխատանքային պլանի «Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն» բաժնի «Բնական աղետներ» մասում:

498. Արագածոտնի մարզի տարածքի վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման համար գործունեություն է իրականացնում «Էկոլոգիա ՎԿՀ-ի» ՍՊ ընկերությունը, որը մարզի բուժսպասարկման կազմակերպություններից՝ պայմանագրային սկզբունքով, հավաքում, տեղափոխում, պահպանում և վնասազերծում է ժամկետանց դեղորայքի, բժշկական կոշտ և հեղուկ, ինչպես նաև վիրահատություններից առաջացած թափոնները:

499. Աղետներին դիմակայելու մշակույթը բարձրացնելու նպատակով Արագածոտնի մարզային փրկարարական վարչության կողմից անցկացվող միջոցառումները՝ հրամանատարաշտաբային, շտաբային, ցուցադրական, հատուկ տակտիկական ուսումնավարժությունները լուսաբանող տեսանյութեր, դրանք են.

1) «Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում»
2) «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպում»

3) «Ջրածածկման վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպում»
4) «Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ռազմական դրության անցկացման ժամանակ»
5) «ՀԱԷԿ-ի ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում»
6) «Ուժեղ երկրաշարժի կազմակերպման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում»
7) «Բնակչության պատսպարման կազմակերպում»
8) «Բնակչության տարհանման կազմակերպում»:

500. Աղետների նվազեցման գործընթացին նպաստելու նպատակով աշխատանքներ են տարվում տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին և բնակչությանը քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավելու, ինչպես նաև մարզի բնակչության պատսպարման, անհատական պաշտպանության միջոցներով ապահովման և աղետներին դիմակայելու հարցում տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ:

501. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության կողմից ներկայացվել են առաջարկություններ՝ քաղաքացիական պաշտպանության և բնակչության պաշտպանության ոլորտների վերաբերյալ (աղյուսակ 14.1):

Աղյուսակ 14.1

հ/հ	Միջոցառման անվանում	Կատարման ժամկետ	Կատարողներ
1	ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների 2015-2018թթ. բյուջեներում ֆինանսական միջոցների նախատեսում՝ համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների իրականացման նպատակով	Մինչև դեկտեմբերի 1-ը	Համայնքների ղեկավարներ /համատեղությամբ/
2	Մարզի տարածքի գետերի և հեղեղատարների հուների համալիր ուսումնասիրությունների իրականացում, կանխարգելիչ միջոցառումների իրականացման համար առաջարկությունների ներկայացում	Յուրաքանչյուր տարի մինչև նոյեմբերի 15-ը	Համապատասխան մարզային հանձնաժողով, համայնքների ղեկավարներ /համատեղությամբ/
3	Տեղի ունեցած արտակարգ իրավիճակների, դրանց պատճառած վնասի չափի վերաբերյալ և հետևանքների	Յուրաքանչյուր ամսվա մինչև 4-ը նախորդ ամսվա	Համապատասխան մարզային հանձնաժողով, համայնքների

	վերացման ուղղությամբ կատարված աշխատանքների մասին տեղեկատվության տրամադրում	համար	ղեկավարներ /համաձայնությամբ/
4	Մարզի համայնքներում և կազմակերպություններում կապի և ազդարարման համակարգի զարգացման միջոցառումների պլանավորում և իրականացում, նորագույն սարքավորումների ներդրում, աղետի վաղ ազդարարման համակարգի զարգացում	Ամենամյա	«ԱրմենՏել» ՓԲԸ, համայնքների ղեկավարներ, /համաձայնությամբ/ մարզային փրկարարական վարչություն
5	Բնակչության պատսպարման պայմանների ապահովման նպատակով մարզում առկա ապաստարանների, հակաճառագայթային թաքստոցների վերանորոգման և վերազինման միջոցառումների պլանավորում և կազմակերպում	Ամենամյա	Մարզպետարանի քաղաքաշինության վարչություն, կազմակերպությունների և համայնքների ղեկավարներ /համաձայնությամբ/
6	Ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի կազմակերպությունների միջև տեղեկատվության փոխանակում, ստեղծված իրավիճակներում արագ արձագանքում	Յուրաքանչյուր ամսվա մինչև 4-ը նախորդ ամսվա համար	Մարզպետարանի համապատասխան վարչություններ, կազմակերպությունների ղեկավարներ, մարզային փրկարարական վարչություն /համաձայնությամբ/
7	Մարզային Ճգնաժամային կառավարման կենտրոնի հնարավորությունների զարգացման կազմակերպում, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելու պատրաստականության ապահովում	մինչև 2015թ. երկրորդ կիսամյակ	Մարզպետարան, մարզային փրկարարական վարչություն
8	Մարզում գործող հատուկ, կարևորագույն և ռազմավարական նշանակության օբյեկտներում հրդեհի և այլ արտակարգ իրավիճակների առաջացման տագնապի ազդանշանի փոխանցման ինքնաշխատ համակարգերի ներդրում	2015-2017թթ.	Կազմակերպությունների, օբյեկտների ղեկավարներ, մարզային փրկարարական վարչություն /համաձայնությամբ/
9	Համայնքային կամավորական փրկարարական շարժման ձևավորում, ուսուցում և զարգացում: Կամավորական ջոկատների ներգրավում փրկարարական գործունեության մեջ:	Ամենամյա	Համայնքների ղեկավարներ, մարզային փրկարարական վարչություն /համաձայնությամբ/
10	Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների կազմի և հագեցվածության ճշգրտում (ստեղծում) և համալրում, անձնակազմի ուսուցման կազմակերպում	Ամենամյա	ՔՊ մարզային ծառայությունների պետեր, մարզային փրկարարական վարչություն /համաձայնությամբ/
11	Շենքերի, շինությունների նախագծման, բնակավայրերի զարգացման ծրագրերում ինչպես դրանց հնարավոր անվտանգ վայրի ընտրության, այնպես էլ սեյսմիկ անվտանգության նախատեսման նկատմամբ հսկողության սահմանում	Ամենամյա	Մարզպետարանի քաղաքաշինության վարչություն, կազմակերպությունների և համայնքների ղեկավարներ /համաձայնությամբ/
12	Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքերում բնակչության կենսապահովման նպատակով անհրաժեշտ պարենային և նյութական միջոցների պահուստի համակարգի ստեղծում	2015-2016թթ.	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն, սննդարդյու-նաբերության և առևտրի

			կազմակերպություններ, մասնավոր հատված /համաձայնությամբ/
13	Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերով պատասխանատուների հետ սեմինար-պարապմունքների անցկացում	Յուրաքանչյուր եռամսյակ	Մարզային փրկարարական վարչություն

15. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

502. ՄԶԾ առաջընթացի վերլուծության և համապատասխան բարեփոխումների իրականացման տեսանկյունից չափազանց կարևորվում է իրականացվող միջոցառումների մոնիտորինգը և գնահատումը, որն անհրաժեշտ է նաև նպատակային շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապի պահպանման և նրանց տեսակետներն ու կարիքները հաշվի առնելու համար: ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման համակարգը մշակվել է 2014թ.-ին և իրականացվելու է 2015-2018թթ. ընթացքում՝ Տարեկան աշխատանքային պլաններով նախատեսված միջոցառումների առաջընթացի ուսումնասիրման և վերլուծության նպատակով: Ինչպես և ՄԶԾ-ը, այնպես էլ ՄԳ հայեցակարգը թույլ է տալիս չափել իրականացվող միջոցառումների և ծրագրերի արդյունքները, բացահայտել դրանց իրականացման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտները և դժվարությունները ու կյանքի կոչել այն հանձնարարականները, որոնք թույլ կտան բարելավել քաղաքականությունների պլանավորման և իրականացման գործընթացները:

503. Մոնիտորինգի և գնահատման հայեցակարգի մշակման, իսկ հետագայում նաև դրա իրականացման նպատակով 2009թ.-ին մարզպետարանի կազմում Մարզպետի կարգադրությունով ձևավորվեց համապատասխան վարչությունների 13 ոլորտային մասնագետներից բաղկացած ՄԳ խումբ, որի աշխատանքները համակարգվում են Արագածոտնի մարզպետի տեղակալի կողմից: ՄԳ համակարգով նախատեսված խմբի գործունեության արդյունքները ամփոփվում են Ծրագրերի բաժնի կողմից: ՄԳ գործառույթի ինստիտուցիոնալացման նպատակով 2009թ. Արագածոտնի մարզպետի կարգադրությամբ ՄԳ խմբի անդամների պաշտոնի անձնագրերում որոշակի փոփոխություններ կատարվեցին, որոնք ենթադրում են ՄԳ գործառույթի ամրագրում: Սա նշանակում է, որ եթե մինչ այդ մոնիտորինգի խումբը գործում էր մարզպետի կարգադրությամբ, սակայն աշխատանքային պարտականությունների շրջանակը իրականում չէր ենթադրում ՄԳ

գործառույթի իրականացում, ապա ներկայումս այս գործառույթը դարձել է նրանց առօրյա պարտականությունների մի մասը՝ ի պաշտոնե:

504. ՄԳ գործառույթի կենսունակությունն ապահովելու համար կարևոր էր նաև ՄԳ խմբի կարողությունների հզորացումը ՄԳ մեթոդաբանությունների և մեթոդների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, ՄԶԾ ՄԳ-ն մի պարզ համակարգ է, որը.

1) համապատասխանում է ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգին,

2) ապահովում է այնպիսի մի մոտեցում, որը թույլ է տալիս ուշադրության կենտրոնում պահել առաջնայնություններն արտացոլող ցուցանիշները, հանգեցնում է հուսալի արդյունքի, ինչպես նաև երաշխավորում է ներդրված միջոցների դիմաց ցանկալի որակ՝ հատկապես միջոցների սահմանափակության պարագայում,

3) ճկուն է ՄԶԾ-ի փոփոխվող կարիքների հանդեպ,

4) նպաստում է վճռորոշ ցուցանիշների համար համայնքային մակարդակի տվյալների ստեղծմանը,

5) թափանցիկ է և ապահովում է արդյունքների մասին լայն իրազեկումը:

505. ՄԶԾ-ի իրականացմանն աջակցելու, աշխատանքները համակարգելու, ինչպես նաև ՄԳ իրականացման համար պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները ամփոփ ներկայացնող փաստաթղթի առկայության նպատակով յուրաքանչյուր տարեսկզբին ՄԳ խմբի կողմից մշակվում է Տարեկան աշխատանքային պլան (ՏԱՊ):

ՏԱՊ-ի նպատակներն են.

1) Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:

2) Շաղկապել նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ների արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» օգնությամբ:

3) Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում:

4) Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումները իրականացնելու համար:

5) Որոշակիացնել միջոցառումների իրականացման ժամկետները՝ ըստ եռամսյակների:

6) Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

506. Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են մոնիտորինգի

աշխատանքները: Այս փաստաթղթում ներկայացվում է նաև ֆինանսական խնդիրների նկարագիրը, ինչպես նաև ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրների բացահայտման ռազմավարությունը: ՏԱՊ-ի բոլոր նախատեսվող միջոցառումները ամփոփված են Տրամաբանական հենքում: Տրամաբանական հենքը կառավարման հզոր գործիք է, որը պարզաբանում է առանձին ծրագրերի կամ միջոցառումների նախագծման պատճառահետևանքային կապերը և դրանց փոխկապակցվածությունը Ծրագրի խնդիրների, ինչպես նաև արտաքին միջավայրի հետ: Սա արդյունավետ ու ճկուն մեթոդ է ծրագրերի ու միջոցառումների պլանավորման, մոնիտորինգի ու գնահատման, ինչպես նաև հաշվետվականության հետ կապված խնդիրները լուծելու համար:

507. Այսպիսով, տրամաբանական հենքը օգնում է.

1) նկարագրել այն խնդիրները, որոնց իրականացմանն ուղղված է տվյալ միջոցառումը,

2) բացահայտել այն կարևոր նկատառումները, որոնք պետք է հաշվի առնել արտաքին գործոնների առումով, քանի որ դրանք կարող են ազդել դրված գերակա նպատակների իրականացման վրա,

3) սահմանել այն ցուցանիշները, որոնք կիրառվելու են տվյալ նպատակի իրականացումը չափելու համար,

4) բացահայտել, թե որ աղբյուրներից են ստացվելու յուրաքանչյուր ցուցանիշը չափելու համար անհրաժեշտ տվյալները,

5) հատկորոշել այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել, ինչպես նաև սահմանել այն ժամկետները, որոնց սահմաններում պետք է իրականացվեն տվյալ նպատակները,

6) բացահայտել անհրաժեշտ միջոցները և ներդրումները:

508. ՄԶԾ-ի մոնիտորինգի համակարգը համապատասխանեցված է ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգին և ներառում է այն կարևոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

509. Այդ ցուցանիշները դասակարգվում են ըստ հետևյալ բաղադրիչների.

1) Աղքատության կրճատում և բարեկեցության աճ,

2) Կրթություն,

3) Առողջապահություն,

4) Հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային հիմնախնդիրներ,

5) Քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն,

6) Բնապահպանական կայուն զարգացում:

510. Լինելով ճկուն ՄԶԾ մոնիտորինգի համակարգ, այն օժտված է ԿԶԾ ՄԳ համակարգի և նրանում անհրաժեշտ փոփոխություններն արտացոլելու բավարար ներուժով: Մարզային մակարդակով ԿԶԾ-ի հիմնական ցուցանիշների սահմանման հարցը քննարկման ընթացքում է: Մարզպետարանը համագործակցելու է ԿԶԾ-ի քարտուղարության հետ՝ ԿԶԾ-ի պարբերական վերանայումների և նրա հետագա կատարելագործման համատեքստում: Ավելին, ՄԶԾ-ներում նախատեսվում են մի շարք գործողություններ, որոնց իրականացումը պետք է ապահովեն հենց տարածքային կառավարման մարմինները՝ այդպիսով աջակցելով ԿԶԾ-ի մոնիտորինգի գործընթացին: Դրանցից են.

1) ԿԶԾ-ով նախատեսված մարզում իրականացվող միջոցառումների մոնիտորինգ, վերլուծություն ու գնահատում,

2) մարզի մակարդակով ԿԶԾ-ի ցուցանիշների մոնիտորինգ ու վերլուծություն,

3) պետական աջակցության կարիք ունեցող ընտանիքների ու խոցելի խմբերի մոնիտորինգ և գնահատում,

4) քաղաքացիական հասարակության կառույցների զարգացման ու ԿԶԾ-ում նրանց մասնակցության ընդլայնման մոնիտորինգ, և

5) ԿԶԾ-ի մասին հանրության իրազեկության աստիճանի բարձրացում:

511. Այս կապակցությամբ, 2010թ.-ին արդեն մարզպետարանը, համաձայն նախօրոք կնքված հուշագրի, UNISEF-ի օգությամբ իրականացրել է Devinfo համակարգչային ծրագրի փորձարկման աշխատանքները: Այս ծրագիրը թույլ կտա ոչ միայն մարզային մակարդակում ԿԶԾ ցուցանիշներ հավաքագրել և վերլուծել, այլ կդառնա մարզային ամբողջ տեղեկատվության կարևորագույն շտեմարան և հնարավորություն կընձեռի քարտեզագրելու համայնքային մակարդակի տվյալները: Սա կնպաստի ոչ միայն մոնիտորինգի գործընթացին, այլև ՄԶԾի առաջընթացի վերլուծությանը, թիրախների սահմանմանը և հետագա միջոցառումների ու քաղաքականության մշակմանը:

512. ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

1) քաղաքականության ուսումնասիրում,

2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում,

3) մասնակցային մոնիտորինգ և գնահատում,

4) ազդեցության գնահատում:

513. Քաղաքականության ուսումնասիրում: Քաղաքականության վերլուծության հիմքը ՏԱՊ-ի տրամաբանական հենքն է և ենթադրվում է, որ մոնիտորինգի այս տեսակի ժամանակ ՄԳ խումբը քննության կառնի նախատեսված միջոցառումների առաջընթացը (այդ թվում՝ հատկացումները և գնումների

ընթացակարգերն ու գործընթացները), կբացահայտի խոչընդոտները և կհետազոտի գալիք ամիսների անելիքները: Այս ուսումնասիրությունը կկատարվեն տարին երկու անգամ՝ ՏԱՊ-ում ներառված միջոցառումների նկատմամբ առաջընթացը չափելու նպատակով:

514. ՄԶԾ-ի ցուցանիշների և թիրախների վերանայում: Յուրաքանչյուր տարվա վերջում մոնիտորինգի տարեկան հաշվետվության համար ՄԶԾ-ի ցուցանիշների ցուցակը կթարմացվի: Այդ ցուցակը ներառում է ցուցանիշներ երկու աղբյուրներից. ՄԶԾ-ին հատուկ ցուցանիշներ՝ ՏԱՊ-ի տրամաբանական հենքից, և ցուցանիշներ՝ ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգից: Ցուցանիշները խմբավորված են ըստ ՄԶԾ-ի կարևորագույն թեմաների, այն է՝

1) տնտեսական զարգացում,
2) կենսամակարդակ,
3) ՓՄՁ զարգացում,
4) գյուղատնտեսության զարգացում,
5) առողջապահություն,
6) կրթություն,
7) սոցիալական պաշտպանություն,
8) համայնքային զարգացում,
9) շրջակա միջավայրի պաշտպանություն:

515. Մասնակցային մոնիտորինգ և գնահատում: Յուրաքանչյուր տարվա վերջում ՀԿ-ների կողմից կիրականացվի մասնակցային մոնիտորինգի և գնահատման միջոցառում՝ մասնակցային որևէ մեթոդաբանության կիրառմամբ: ՄՄԳ-ն որպես կանոն իրականացվելու է ՄԶԾ-ի ոլորտների համար ներկայացուցչական ընտրանքի միջոցով՝ հաշվի առնելով տվյալ ոլորտում ներդրումների ծավալը և միջոցառումների իրականացման ժամկետները:

516. Համայնքային գնահատման քարտեր-Համայնքային Գնահատման Քարտեր (ՀԳՔ) մեթոդաբանությունը զարգացել է վերջին տարիներին և համարվում է ճկուն, որակական, հեշտ իրականացվող տեղական մոնիտորինգի, արձագանքների ստացման և մասնակցային պլանավորման գործընթաց, որը կարող է օգտագործվել տեղական խնդիրները վեր հանելու և դրանք բարեփոխելու նպատակով: ՀԳՔ հիմնական նպատակներից մեկը մարդկանց ձայնը լսելի դարձնելն է, հատկապես խոցելի և աղքատ խմբերի, հանրային իրազեկության բարձրացումը, ինչը թույլ կտա կոլեկտիվ միջոցառումներ ձեռնարկել և ներքևից-վերև ճնշում գործադրել ցածրորակ ծառայությունների մատուցման դեմ:

517. Շահառուների գնահատում - «Շահառուների գնահատում» մեթոդաբանությունը առավելապես որակական տեղեկատվության ստացման միջոց

է, որն ուղղված է ծրագրի ազդեցության և օգուտների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանն ու վերլուծությանը, ինչը թույլ կտա քաղաքականություն մշակողներին ու պաշտոնյաներին բարելավելու ծրագրի մշակման և իրականացման ընթացակարգերը: Այս մեթոդաբանության առանձնահատկություններից մեկն այն է, որ այդ տեղեկատվությունը և վերլուծությունը բխում է ծրագրի շահառուների տեսակետներից, ընկալումներից և փորձից:

518. Ազդեցության գնահատում: Յուրաքանչյուր տարվա վերջում, մասնագիտական անկախ գնահատում իրականացնելու նպատակով, կազմակերպվելու է ՄԶԾ որևէ ոլորտի միջոցառումների ազդեցության գնահատում: Այս հետազոտությունները թույլ կտան.

1) անցկացնել քաղաքականության ուսումնասիրության ու ցուցանիշների մոնիտորինգի եզրակացությունների համադրում,

2) ստանալ ՄԶԾ-ի իրականացման ու արդյունքների խորացված պատկեր՝ ըստ առանձին կարևորագույն ոլորտների և ունենալ մի մեխանիզմ, որի շնորհիվ կարելի է տեղերից ստանալ ՄԶԾ-ի արդյունավետության վերաբերյալ կարծիքներ (ինչպես, օրինակ, աղքատների համար առանձին ծառայությունների մատչելիությունը):

519.Ստորև ներկայացվում են ՄԶԾ ՄԳ համակարգով նախատեսված աշխատանքները՝ տարեկան կտրվածքով:

1) ՏԱՊ-ի քաղաքականությունների ուսումնասիրում

2) ՄԶԾ-ի ցուցանիշների և ՏԱՊ-ի ոլորտային թիրախների վերանայում

3) Ցուցանիշների ցանկի և դրանց սահմանումների վերջնական ձևակերպում

4) Ցուցանիշների համար ելակետային տվյալների հավաքագրում

5) ՄԶԾ-ի ծրագրերի վերաբերյալ տվյալների հավաքագրում և մուտքագրում Devinfo (Armeniainfo) ծրագրում, այդ թվում նաև՝ համայնքային մակարդակի տվյալներ

6) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման իրականացում

7) Ազդեցության գնահատման անցկացում

8) Մոնիտորինգի միջակյալ և տարեկան հաշվետվությունների պատրաստում

9) Տարեկան սեմինար-խորհրդակցության կազմակերպում

520. Բացի վերոհիշյալ աշխատանքները՝ ՄԳ համակարգի կենսունակության ապահովման նպատակով մարզպետարանը համապատասխան քայլեր է ձեռնարկելու նաև հետևյալ ուղղություններով.

1) Մարզպետարանի մասնագետների կարողությունների հզորացմանն ուղղված դասընթացների պարբերաբար կազմակերպում:

2) ՄԳ բոլոր տարրերի լիակատար ու շարունակական իրականացման համար ֆինանսական ռեսուրսների հայթայթում, հատկապես ՄԳ արտաքին տարրերի համար:

3) Մասնակցային ՄԳ և Ազդեցության գնահատման բաղադրիչների իրականացման համար Տեխնիկական առաջադրանքների մշակում, այդ թվում՝ իրականացնողների ընտրության հստակ չափանիշների ձևավորում և մրցույթային կարգի սահմանում:

4) ՄԳ հաշվետվությունների հրապարակայնության ապահովման մեխանիզմների մշակում, իրագործում և դրանց կենսունակությանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորում մարզպետարանի ընդհանուր ծախսերում:

5) ՀՀ նախարարությունների և այլ կառավարման մարմինների, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում՝ ՄԳ համակարգի հետագա զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական և տեխնիկական աջակցությունն ապահովելու նպատակով:

6) ՄԳ լիարժեք իրականացման նպատակով՝ մարզում իրականացվող միջոցառումների, դրանց ծավալների և ֆինանսական ներդրումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացման համար, ճյուղային նախարարությունների և դոնոր հանրության հետ կապերի ամրապնդում:

7) Տեղեկատվական հոսքերի կայուն և թափանցիկ մեխանիզմների մշակում և իրագործում, տվյալների բազայի ստեղծում ARMINFO ծրագրում և դրա պարբերաբար թարմացում:

521. ՄԳ համակարգի առաջին և երկրորդ տարրերը կիրականացվեն մարզպետարանի ՄԳ խմբի կողմից: Այս երկու տարրերը կարելի է համարել ներքին մոնիտորինգ և գնահատում: Իսկ երրորդ և չորրորդ տարրերը համարվում են արտաքին ՄԳ տեսակ, քանի որ դրանք հիմնականում իրականացվում են քաղաքացիական հասարակության սուբյեկտների և անկախ մասնագետների կողմից՝ ապահովելով նաև ՄԳ համակարգի համապարփակությունը և չեզոքությունը: Բացի այդ այս տարրերի առկայությունը թույլ է կտա հանրության լայն շրջանակներին մասնակցելու և վերահսկելու մարզային մակարդակում զարգացման նախաձեռնությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացները: Կարևոր է նշել նաև, որ վերջին երկու տարրերը հնարավորություն են տալիս քանակական տվյալները համալրել որակական գնահատականներով, ինչն ամբողջական է դարձնում ՄԳ ընդհանուր պատկերը և օգնում բարձրացնել պլանավորման արդյունավետությունը:

522. Յուրաքանչյուր տարվա ընթացքում, սկսած հունվարից մոնիտորինգի տվյալները կօգտագործվեն ՄԶԾ-ի տարեկան վերանայման և ՏԱՊ-ի մշակման նպատակով: Ընդհանուր առմամբ, ՄԳ ցիկլը ենթադրում է.

1) միջանկյալ (կիսամյակային) ընթացիկ հաշվետվություն, որը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամսիներին և հիմնվում է քաղաքականությունների ուսումնասիրության վրա,

2) տարեկան հաշվետվություն, որը պատրաստվում է տարվա վերջում և հաջորդ տարվա սկզբին: Այն կազմվում է ՄԳ համակարգի բոլոր տարրերի վերաբերյալ առկա հաշվետվությունների ամփոփ վերլուծության արդյունքում,

3) մոնիտորինգի սեմինար-խորհրդակցություն, որը անց է կացվում հաջորդ տարվա մարտ ամսին, որի ընթացքում բոլոր ներգրավված կողմերի հետ միասին քննության են առնվում մոնիտորինգի տարեկան ընթացիկ հաշվետվությունը և սահմանվում են հաջորդ տարվա հիմնական խնդիրները:

523. Մոնիտորինգի միջանկյալ և տարեկան հաշվետվությունները պատրաստվելու են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից: Միջանկյալ հաշվետվությունը ներառում է տրամաբանական հենքի հիման վրա կատարած քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն մշակվում է ՏԱՊ-ի տարվա առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների առաջընթացի գնահատման արդյունքում: Միջանկյալ հաշվետվությունը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամիսներին:

524. Տարեկան հաշվետվությունը ամփոփում է տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ ՄԳ համակարգի չորս տարրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփ վերլուծությունները: Այն պատրաստվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին և ներառում է հետևյալ բաժինները.

1) ԿԶԾ-ի մոնիտորինգի պետական համակարգի ամփոփագիրը՝ շեշտը դնելով մարզին հատուկ հիմնախնդիրների վրա:

2) ՄԶԾ-երի շրջանակներում իրականացված միջոցառումները և դրանց գծով կատարված ծախսերը:

3) Տարվա ընթացքում իրականացված գնումները:

4) ՄԶԾ-ով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի ամփոփումը, քաղաքականությունների ուսումասիրության արդյունքները՝ տարվա կտրվածքով:

5) Տարեկան առաջընթացը՝ ՄԶԾ-ի մոնիտորինգի ցուցանիշների նկատմամբ:

6) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման ամփոփ արդյունքները:

7) Ազդեցության գնահատման ամփոփ արդյունքները:

8) Հաջորդ տարվա հիմնախնիդրներ, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծում:

525. ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կազմակերպվում է ՄԳ արդյունքները ամփոփող տարեկան սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցում են ինչպես մարզային խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր հանրության ներկայացուցիչները: Անհրաժեշտ է հրավիրել նաև ԿԶԾ-ի մոնիտորինգի բաժնի անձնակազմին, որպեսզի քննարկվեն նաև ՄԶԾ ՄԳ արդյունքների և եզրակացությունների ԿԶԾ-ի գործընթացին համահունչության հարցերը: Այդ սեմինարխորհրդակցության նպատակներն են.

1) ՏԱՊ-ի իրագործման առաջընթացի ներկայացում

2) ՄԶԾ ցուցանիշների նկատմամբ առաջընթացի վերլուծություն

3) ՄՄԳ արդյունքների եզրահանգումների ու հանձնարարականների ներկայացում

4) Ոլորտային ազդեցության գնահատման արդյունքների, եզրահանգումների ու հանձնարարականների ներկայացում

5) Հաջորդ տարվա խնդիրների իրագործման հետ կապված հարցերի քննարկում:

526. Տարեկան սեմինար-խորհրդակցությունը կարևոր իրադարձություն է, քանի որ այն կազմակերպվում է մոնիտորինգային գործունեության վերաբերյալ եզրակացությունների քննարկման և տարածման համար: Սեմինար-խորհրդակցությունը դիտվելու է նաև որպես կարևոր մի նախաձեռնություն քաղաքացիական հասարակությունը ՄԶԾ-ի մոնիտորինգի մեջ ընդգրկելու, ինչպես նաև ՄԶԾ-ի հաջողությունները ցուցադրելու և նոր դոնորներ ներգրավելու համար:

527. ԶԾ-ով նախատեսվող միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև ՄԶԾի ռազմավարական նպատակների կատարման առաջընթացը որոշելու համար անհրաժեշտ է մարզպետարանի կառուցվածքում ուժեղացնել մոնիտորինգի և գնահատման գործառույթը:

528. Մարզպետարանի կառուցվածքում ստեղծված է ՄԳ խումբ, որը բաղկացած է մարզպետարանի տարբեր վարչությունների և բաժինների մասնագետներից: Բացի այդ, նրանց պաշտոնի անձնագրերում արդեն իսկ ՄԳ գործառույթը ամրագրված է որպես անմիջապես պաշտոնից բխող պարտականություն: Մարզպետարանը պարբերաբար դասընթացներ է կազմակերպելու խմբի մասնագետների համար՝ ՄԳ նոր մեթոդաբանություններին և արդյունքների վերլուծության, ներկայացման մեթոդներին ծանոթացնելու նպատակով: Մոնիտորինգի խմբի աշխատանքներին պարբերաբար պետք է հետևի Մարզային խորհրդի կազմում ընդգրկված մարզային զարգացման հանձնաժողովը:

Նրա դերը վճռորոշ է մոնիտորինգի համակարգի կայացման և արդյունավետ գործառնության ապահովման գործում: ՏԶՀ-ն ներառում է շահագրգիռ կողմերի լայն շրջանակ (քաղաքացիական հասարակություն, ՀԿ-ներ) և նրանց կողմից վերահսկողությունը կապահովի մոնիտորինգային գործունեության հաշվետվականությունը և թափանցիկությունը:

529. Այս համակարգի կենսունակության և հետագա զարգացման երաշխիքը կլինի ՄԳ-ի՝ որպես մարզային զարգացման ինստիտուցիոնալ համակարգի, անբաժանելի մասի ամրագրումը ՄԶԾ մոդելի բաղադրիչների կազմում: Մարզում այս համակարգի արմատավորումը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել ԿԶԾ-ի ՄԳ համակարգը մարզային մակարդակում, բարձրացնել տարբեր դոնորների կողմից այս բնագավառում իրականացվող միջոցառումների հասցեականությունը, ինչպես նաև հստակեցնել ու միասնականացնել միջմարզային համեմատությունների անցկացման աշխատանքները:

15.1. ՄԶԾ մոնիթորինգի և գնահատման ընթացակարգը

Բաղադրիչը	Իրականաց-ման նպատակը	Իրականացման ընթացակարգը	Արդյունքը	Իրակա-նացնողը
Քաղաքակա-նության վերանայում	Տարին երկու անգամ՝ ՏԱՊ-ի նկատմամբ առաջընթացը չափելու նպատակով:	1. ՏԱՊ-ի տրամաբանական հենքով նախատեսված միջոցա-ռումների, դրանց արդյունքների և թիրախների վերլուծություն: 2. ՏԱՊ-ի իրականացման ընթացքում ծագած հիմնախնդիրների բացահայտում: 3. Հաշվետու հաջորդ ժամանակաշրջանում իրականացվելիք միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված հանձնարարականների մշակում: 4. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում:	Կիսամյակային հաշվետվություն	Մարզպետ արանի ՄԳ խումբ

		5. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:		
ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերլուծություն	ՄԶԾ-ի ցուցանիշների վերլուծություն և ցուցակի թարմացում	1. ՄԶԾ և մարզային մակարդակում ԿԶԾ առաջընթացը գնահատող ելակետային ցուցանիշների հավաքագրում: 2. Վերոհիշյալ ցուցանիշների թարմացում: 3. Ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ՄԶԾ ազդեցությունը գնահատելու համար: 4. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 5. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:	Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվություն	Մարզպետարանի ՄԳ խումբ
Մասնակցային մոնիտորինգ և գնահատում	ՄԶԾ-ի առաջընթացի վերաբերյալ հանրության կարծիքների և արձագանքների վերլուծություն	1. ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն 2. ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն 3. Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացա-կարգերի հստակեցում 4. Հետազոտող խմբի ձևավորում 5. Դաշտային աշխատանքների իրականացում 6. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 7. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում	Մասնակցային մոնիտորինգի և գնահատման հաշվետվություն	Քաղաքացիական հասարակության խմբեր, տեղական ՀԿ-ներ
Ազդեցության գնահատում	ՄԶԾ որևէ ոլորտում մասնագիտա-կան հետազոտու-թյուն	1.ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն 2. ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն 3. Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի	Ազդեցության գնահատման հաշվետվություն	Անկախ փորձագետներ

		հստակեցում 4. Հետազոտական խմբի ձևավորում 5. Դաշտային աշխատանքների իրականացում 6. Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում 7. Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում		

Գծապատկեր 5. Մարզպետարանի ՄԳ խմբի գործառույթները՝ ըստ ՄԶԾ ՄԳ տարրերի



Գծապատկեր 6. ՄԶԾ ՄԳ մարզային զարգացման պլանավորման և իրականացման ինստիտուցիոնալ համակարգը



Գծապատկեր 7. ՄԶԾ ՄԳ համակարգը



16. ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

530. ՀՀ Արագածոտնի մարզի զարգացման ծրագրի իրականացման համար պահանջվում է 81.283 միլիարդ դրամ: Ծրագրով ներկայացված հիմնախնդիրներն ըստ տարիների և ֆինանսավորման աղբյուրների կվերանայվեն և կհստակեցվեն՝ ելնելով տվյալ տարվա համար պետական բյուջեից և համայնքային բյուջեներից, ինչպես նաև ֆինանսական այլ աղբյուրներից համապատասխան ծրագրերի համար նախատեսված ֆինանսական միջոցների առկայությունից:

531. Առաջնահերթությունը տրվել է այն ոլորտներին և ուղղություններին, որոնց զարգացումը առավել կարևոր է մարզի սոցիալ-տնտեսական առաջընթացի վրա: Դրա հետ միասին տրվել են այն ոլորտների և բնագավառների զարգացման միտումները, որոնք հեռանկարներում կարող են դառնալ մարզի գերակա ուղղություններից մեկը: Հաշվարկները կատարվել են ՀՀ դրամով: Սակայն չեն բացառվում նաև արտարժույթի ներգրավումները: Այդ դեպքում ծրագրում անհրաժեշտ փոփոխություններ և վերահաշվարկներ կկատարվեն:

532. Արդյունաբերությունը մարզում զարգանալու է ՓՄՁ կառույցների միջոցով: Խոշոր արտադրությունների կազմակերպում մարզում չի նախատեսվում: Հիմնականում զարգանալու են առավել գերակա ուղղությունները: ՓՄՁ ոլորտի հատկացումները ծրագրավորվող 4 տարիների ընթացքում կազմելու են շուրջ 9 միլիարդ դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 11.1%-ը):

533. Սոցիալական ոլորտի ընդհանուր ֆինանսավորման համար կպահանջվի 34.8 միլիարդ դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 43.1%-ը), այդ թվում՝

- **Կրթության ոլորտի ընդհանուր ֆինանսավորման համար կպահանջվի 23.7 միլիարդ դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 29.4%-ը):**
- **Մշակույթին, սպորտին և երիտասարդության հարցերին** նախատեսված է 3.121 միլիարդ դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 3.8%-ը):
- **Առողջապահության ոլորտի** ընդհանուր ֆինանսավորման համար կպահանջվի 7,6 միլիարդ դրամ՝ (ծրագրի ընդհանուր 9.4%-ը):
- **Սոցիալական պաշտպանության ոլորտի** համար կպահանջվի 368.5 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 0.5%-ը): Այն նախատեսված է մարզի քաղաքներում թեք հարթակների կառուցման, սոցիալապես ծանր վիճակում գտնվող մարդկանց և ընտանիքների, հաշմանդամների, որբ երեխաների առողջական, սոցիալական և տնտեսական խնդիրների լուծման, հասարակության մեջ նրանց ինտեգրումն ապահովելու նպատակին: Այս բնագավառի հատկացումները կազմում են ամբողջ ծրագրի 0,45 տոկոսը:

534. Գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ծախսել 3 միլիարդ 260 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 4.0%-ը):

535. Բնապահպանության ոլորտին հատկացվող միջոցները կազմում են 485 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 0.6%-ը):

536. Նախատեսվում է **զբոսաշրջության ոլորտին** հատկացնել 682 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 08%-ը): Կբարեկարգվեն պատմական և բնության հուշարձանները, կբացվեն զբոսաշրջային նոր երթուղիներ, հիմք կդրվի ընտանեկան տուրիզմին:

537. Քաղաքաշինության բնագավառում նախատեսված է ֆինանսներ ծախսել համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, համայնքային կենտրոնների կառուցման, բնակարանաշինության նպատակներով: Դրա համար 4 տարում ծախսվելու է 2,04 միլիարդ դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 2.5%-ը:

538. Ենթակառուցվածքների զարգացման նպատակով նախատեսվում է 2015-2018թթ. ծախսել 28 միլիարդ 835 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 35.7%-ը)՝ այդ թվում.

- Ճանապարհաշինության բնագավառին նախատեսված է 23 միլիարդ 805 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 29.4%-ը): Վերանորոգվելու են հանրապետական, մարզային և համայնքային նշանակության ճանապարհներ, ապահովվելու է դրանց պահպանությունը և անվտանգությունը:
- Համայնքների գազաֆիկացման նպատակով նախատեսվում է կատարել 4,480 միլիարդ դրամի ներդրում՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 5.5%-ը): Կգազաֆիկացվեն մարզի բոլոր համայնքները և բնակավայրերի նոր թաղամասերը:
- Ջրամատակարարման բնագավառի ծախսերը կազմում են 550 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 0.7%-ը): Նախատեսվում է կառուցել նոր ջրագծեր, հիմնանորոգել եղածները, ջրով ապահովել նոր կառուցվող թաղամասերը և ապահովել խմելու ջրի մաքրությունն ու համակարգում ստեղծել անվտանգ սանիտարական պայմաններ:

539. Ծրագրով նախատեսված է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ հզորացում: Տեղական ինքնակառավարման մարմինների զարգացմանն ուղղվելու է 992 միլիոն դրամ: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կատարելագործման վրա կատարվող ծախսը կազմելու է ընդհանուր ֆինանսավորման 1,22 տոկոսը:

540. Ծրագրավորվում է բարելավել արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանվածությունը: Միջոցներ կհատկացվեն պատսպարանների կառուցման, պաշտպանական համակարգի հզորացման նպատակներով: Առավել արդյունավետ կկազմակերպվի պայքարի բնական և տեխնածին աղետների դեմ: Քաղպաշտպանության բնագավառին 2015-2018թթ. հատկացվելու է 689,5 միլիոն դրամ՝ (ծրագրի ընդհանուր ֆինանսավորման 0.9%-ը):

548. ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018թթ. ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի ֆինանսավորումն կազմելու է ըստ ոլորտների, ուղղությունների և աղբյուրների **80.860 միլիարդ դրամ**, որից՝

պետական բյուջե	**- 67.729 մլրդ.դրամ**
այդ թվում՝	
սեփական միջոցներ	- 66.33 մլրդ.դրամ
վարկային միջոցներ	- 1.39 մլրդ.դրամ
համայնքային բյուջե	**- 2.08 մլրդ.դրամ**
մասնավոր ներդրողներ	**- 9.66 մլրդ.դրամ**
այլ աղբյուրներ	**- 1.38 մլրդ.դրամ:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ